ՊԵՐՃ ՊՈՇԵԱՆՑ

ՍԿԻԶՔՆ ԵՐԿԱՆՑ

ՎԷՊ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“ Տ. ՆԱՋԱՐԵԱՆ

1893



ՍԿԻԶԲՆ ԵՐԿԱՆՑ

Զգոյշ լերուք ի խմորոյ Փարիսեցւոց եւ Սադուկեցւոց (Մատ. ԺԶ. 6.)

Ղակաին եւ այն ամենայն սկիզբն է երկանց (Մատ. ԻԴ. 8)։

Ա.

Աւքանազեան Ռուբէնի կեանքի պատմութիւնը շատ երկար չէ։

Նա Տաճկահայաստանի ղայմաղամանիստ փոքրիկ քաղաքներից մէկի ծնունդ է։

Ես ոչ նրա ծննդեան տեղն եմ տեսել և ոչ ուրքս Տաճկահայաստանի հողի վերայ եմ դրել. Ռուբէնի և իւր հայրենիքի մասին բոլոր գրածները լսողաց է, իսկ գալով լուրի ստուգութեանը՝ ոչինչ տեղեակ առաջարկելու կարիք չեմ տեսնում. գործող անձին հինգ մատիս նման ճանաչում եմ. ինքը Ռուբէնն է ինձ մի քանի գիշեր քնահատ արել։

Վերջը կը պարզուի, թէ ուր և որպէս և կամ ինչ առիթ է ունեցել Ռուբէնն իւր ծննդեան տեղի, ինչպէս և իւր ոտնատակ տուած երկրների անունների և տեղագրական նկարագրութիւնների մասին Զաքարէի պատանձումը պահել և յայտնել է միայն

այնքանը, որ պատմութեան թեզը և բացատրութիւնը չընդհատուի։

Եւ ուրեմն Ասքանազեան Ռուբէնի ծննդավայրից մեզ այսքանն է յայտնի, որ այդ քաղաքը, կամ աւանը կրում է իւր վերայ հին հին փառքերի թարգման մի անուն և այժմ թէպէտ իւր մեծափառութեան միայն ստուերն է նշմարուում, բայց նա այսօր և իւր նմաններըի մէջ. վերջին տեղը չի բռնում և բաւականին ակնահաճոյ դիրք ու շէնքեր ունի։

Քաղաքը գտնուում է մի ձորամիջի, երեք կողմից շրջապատած է բարձրադիր, ժայռոտ, այլ ջրաւէտ լեռներով, իսկ չորրորդ կողմը բնութիւնը յառաջ է բերել մի ոչ շատ լայնանիստ հարթայատակ հովիտ, որի ուղիղ միջակէտից մի բաւականին մեծ և արագավազ դետ համբոյրները տալով իւր ափերի մշտնջենական քարափներին և տեղ տեղ գալարագեղ տափարակ մարգաստանին, վազում է ջրելու ներքևն ընկած դաշտավայը գիւղերի հանդերը։

Գետն ամբողջացել է լերանց. շրջապատի հարիւրաւոր ականակիտ սղբիւրներից և պարզորակ ու անուշահամ աղբրակներից, որոնք խոխոջելով, կարկաչելով ներքև են թափուել քաղաքի տների բակերից ու փողոցներից և այդպիսով այդ բնակավայրը շինել են տարուան երեք եղանակներում մի երկրաւոր նոր Եդեմ։ Հաստատ կարելի է ասել, որ

եթէ հին Եդեմն էլ այս կողմերումը ցոյց տայինք, շատ չէինք մեղանչել ուրբ Գրքի ցուցմունքի դէմ։

Այս քաղաքի ազգաբնակութեան մեծագոյն և համեմատաբար ապահով վիճակի մէջ եղող մասը Հայն է. սրանց ձեռքին են նոյնպէս և տեղային բոլոր արդիւնաբերական ձեռնարկութիւնները։

Վաճառականութիւն, երկրագործութիւն, արհեստ, այս ամենի ներկայացուցիչը տեղացի Հայն է։ Հետևաբար և *ղայմաղամ* էֆէնդու և իւր բոլոր վարչական ստորադրեալ անդամների գլխաւոր յարաբերութիւնները հայերի հետ են անշուշտ։

Միւս սակաւաթիւ օտար քրիստոնեաները, մահմետական, Եզիդի, Զազա, Կրմանճի քրդերն և տիրապետող տարրը մարդահամարով երկրորդական և երրորդական տեղն են բռնում։

Տաճիկ ազգութեան աննշան մասն է մասնակից տեղական արտահանութիւններին և արդիւնաբերութիւններին. մնացածները պորտաբոյծ, դատարկաշրջիկ, օդ կուլ տուողներ, կամ վարչութեան անդամներ են։

Հայերը բոլորեքեան նախնաւանդ հայ-քրիստոնեաներ են, բարեբաղդաբար դեռ. ոտ չի տուն դրել այնտեղ մինչև օրս, կամ սուելի ճիշդը՝ մինչև Ռուբէնի հետ ծանօթանալու և իւր ինքնակենսագրութիւնը լսելս ազգապատակտումն։

Այս մասին պէտք է գոհ լինել տեղացի մի

քանի կարողութեան տէր աղաներից, որոնք թէև շատ մասում դատապարտելի են, բայց մարդասէր քարոզիչների ոտերիմ թշնամի և իրանց հայրենի եկեղեցուն ջերմ նախանձախնդիր։

Քանիցս բողոքական միսիոնարներն և եզուիդ պատերները ջանք են գործ դրել մի փոքրիկ բուն հաստատելու, կամ դպրոց բանալու, բայց աղաների ազդեցութեամբ՝ գայմաղամների շնորհիւ շալակել են իրանց ունեցած չունեցածը և յետ ու յետ դնացել։

Ա.հա մի այսպիսի քաղաքի ծնունդ էր պատմութեանս գլխաւոր հերոս Աւքանազեան Ռուբէնը, ուսուցել լաւ է՝ իւր իսկական անունովը կոչենք՝ Գասազեան Ղունկիանոսը։

Շատ չի տևիլ, մենք նրա անուանափոխութեան պատմութեան հետ նոյնպէս կը ծանօթանանք։

Դժուարութիւն չըկրելու համար՝ մենք Աւքանազեանի ծննդավայրը հայկական այբուբենի տառերից մէկով կնքենք։ Թող նա կոչուի Բ. քաղաք։

Ուրեմն Բ. քաղաքացի էր Գասազեան Ղունկիանոսը և քաղաքի առաջին հարուստներից մէկի Սեդրոս աղայի որդին։

Բ.

Ղունկիանոսի կրթութեան ասկմանը մինչև արբունքի հասնելը փոխասաց տիրացուութիւնից այն կողմը չի անցել. դրա հետ միասին այդտեղ վախ-

ճան է առել և ամբողջ քաղաքի կրթութիւնը։

Քաղաքումը կանոնաւոր ասած դպրոց, ինչպէս և Տաճկահայաստանի շատ տեղերում՝ դեռ չի եղել և չկայ։ Տեղական քահանաների մօտ այս և այն վաճառականի որդին երկու երեք տարի գզգզել է ժամագիրքը, Սաղմոսն ու Նարեկը և փոքր ինչ գրութիւն սովորել և ահա նա աւարտ տուեց իբր դիտութեանը և գնաց իբր հօր արհեստին տիրանալու և առևտրի ապառիկները խզբզելու։

Մի երկու ծերացած պատուելիք, ոչ բողոքականի քարոզիչները, այլ բուն Լուսաւորչու հարազատ հին ուսուցիչները, Պօլսից աղքատութեան ձեռքից փախած, այս և այն քաղաքում կամ մեծ գիւղերում, քունջ ու պուճախում ժողովել են մի քանի մանուկներ և աննշան վարձատրութիւնով քերականութեան մասունքը բերանացի սերտել տուել։

Ր. քաղաքում վերջիններիցս մէկի դպրոցում վարժուում էր Գաւազեան Ղուկիանոսը։

Նրա պատուելին կամ վարժապետը՝ նշան Փալչիկճեան մի ստորաքարշ շողոքորթ անձնաւորութիւն էր, որ անխտիր *էֆէնդի* բառով գերամեծարում էր ում հագուստը զանազանուում էր ժողովրդի ստորին դասակարգից, իսկ մինչև ծունկը հասնող գլուխ էր իջեցնում իւրաքանչիւր աշակերտի ծնողի, կամ ում որ լսում էր, թէ դպրոցական հասակին համապատշաճ որդի ունի։ Մանաւանդ ստորանում էր նշան պատուելին և մկան նման կծկուում և

հաճոյախօսում, եթէ մի որ և է տաճիկ ստորին ծառայողի էր հանդիպում։

Պատուելին ձեռքերը կրծքին խաչած՝ կանգնում էր այդ ժամանակ և սպասում մինչև տաճիկը գայ իրեն հասնի։

Ողջ մեկ է՝ ուշք դարձնէր էֆէնդին, կամ ոչ, մեր Պատուելին պէտք է խոնարհ երկրպագութիւն տար մինչև գետին, բարձր, բայց համեստ ձայնով տաճկերէն լեզուով ողջոյն տար և սպասէր մինչ դիմացինն անցնի, կամ ողջունին պատասխանել արժան դատի։

Պատուելուն այդքանը բաւ էր. սմեն մի հանդիպողի նա հրճուանքով պատմում էր այնուհետև, թէ ինչպէս այս ինչ հարկահանը, ոստիկանը և այլն իւր երեսին ժպտաց, իւր հետ խօսեց. իրան էֆէնդի կոչեց և իւր խորհրդին դիմեց։

Այս միևնոյն դէպքն առաւել պարծանքով պատմում էր իւր աշակերտներին, գովում և փառաբանում էր Օմար-բէյին, Օսման աղային և խրատներ ու յորդորներ էր կարդում մատաղ սերնդին՝ սմեն մի տաճկի յարգանք և հպատակութիւն մատուցանելու։

—Ի՞նչ ընելու է, զաւակնե՛րս, աւելացնում էր նա. „որում զհարկ՝ զհարկ, որում զպատիւ՝ զպատիւ“, „որք են՝ յԱստուծոյ կարգեալ են“ այն ձեռքը, որ չես կարող կտրել, համբուրի՛ր, դէր ճակատիդ,

Պատուելու դաստիարակութեան եղանակը շատ հաճոյ էր և քաղաքի ականաւոր հարուստներին. նոյն և մի դիրքն էին բռնել իրանք, նոյն ընթացքին էին հետևում տաճիկ պաշտօնեաների հետ վարուելիս, նոյնն էին խրատում և իրանց ժառանգներին։

Ս.հա մի այսպիսի պատուելու և այս ուղղութեան տէր հօր զաւակ էր Ղուկիանոսը։

Սեղբոս աղան, ինչպէս ասացինք, քաղաքի առաջին հարուստ վաճառականներից մէկն էր, ընդարձակ առուտուր ունէր շրջակայ գաւառների հետ և տեղական արդիւնահանութեան գլխաւոր ներկայացուցիչն էր։ Նրա և իւր նման մի քանիսի ձեռքին էր, համարեա, չորս կողմի գիւղացիների հոգին. վայ այն գիւղին և գիւղացուն, որ Սեղբոս աղաների խանութների հետ չունի իւր կապը, իւր գուտ առուտուրը, իւր ապառիկը, բայց և վայ նրան, ով այս աղաների ճանդի մէջ սեղմուել է. ամենից հաւանական նմանութիւնն է՝ աղուամազը դեռ չբթափած հաւի մի շաբաթական ձագը ուրուրի ճանգերի մէջ։

Իւր ձեռնարկութիւնները շարունակող էր պատրաստում Սեղբոս աղան Ղուկիանոսին. ուստի և տուել էր Փալչիկճեան պատուելու մօտ գրաճանաչ լինելու հետ և «ռախէմը» (թուանշան) սովորելու։

Դեռ չէր աւարտել Ղուկիանոսը Պատուելու աւանդած գիտութիւնները, որ նրա վերին շրթունքները սևացան, ձայնը կոշտացաւ և կերպա-

բանքը մանկականից առնականի փոխուեց։

—Տղան մեծանում է, քա՛, մի գիշեր ըզնչաց. Ղունկիանոսի մայրն անկողնում իր գլխի տէրը ամուսնուն և վճռուեց նշանելու հոգս քաշել։

Այր և կին խօսեցին, դատեցին, չափ ու ձև արին, քաղաքի բոլոր աղջիկներին կշռեցին և ամենից յարմարը գտան իւրեանց տան պատկից դրացի Սարգիս աղայի Արփիկ աղջկանը։

Շատերը չէին վստահանալ այդ յանդուգն քայլը անելու, ըստ որում Սարգիս աղան քաղաքի առաջին հարուստն և «Ղայմաղամ էֆէնդու» մտերիմ սիրելին էր, բայց Սեղբոս աղան էլ եթէ իւր հարևանից վեր չէր, ստոր էլ չէր, թող Սարգիսը լինի առաջինը, Սեղբոսն է երկրորդը. թէպէտ շատ անգամ ծածուկ տեղերում իւր հաւատարիմների մէջ Սեղբոս աղան պարծենում էր, որ Սարգիս աղան իւր „ըսպրուճը“ (կօշիկ) չարժէ։

Տիկին Գաւազեանն աւելի տեղիք ունէր Արփիկի վերայ կանգ առնելու։

Այդ քաղաքումը թէպէտ դեռ նահապետականութիւն էր թագաւորում, թէպէտ կանայքն ու աղջիկները այր մարդկանց երես չէին տեսնում, եւրիտասարդների կողմից ևս անամօթութիւն էր համարուում կանացի կարմիր ջուբբայի (հագուստ) վերայ աչք դարձնելը, բայց տիկինը մի քանի անգամ ակամայից ծածուկ վկայ էր եղել իւր Ղունկիանոսի և Արփիկի մնջկատակութիւններին։

Հանգամանքի բերմամբ՝ Գաւազեանց տունը, կարելի է ասած, նստած էր Արփիկենց տան գլխին. քաղաքի բոլոր տները նոյն դիրքն ունէին, մէկի տանիքը միւսին բակի տեղ էր պէտք գալիս. Ձորի յատակից մինչև լեռան կատարը տները միմեանց վերայ էին շինուած. Հարկաւ, Գաւազեանք ուզէին, չուզէին, պէտք է տեսնէին ամէն օր, ինչ կատարուում էր Սարգիս աղայենց բակումը. վերջինիս կտուրն իրանց բակն էր, հօ չէին կարող աչքները պինդ փակել։

Մօտ մի տարի էր, որ Պատուելին սկսել էր անգոհ մնալ Ղունկիանոսից. ուսուցիչը շարունակ յիշեցնում էր նրան իւր նախկին չանասիրութիւնը և կշտամբում նրա այժմեան ծուլութիւնը, պատիժների անունով սպառնալիքներ էր տալիս, բայց չէր իրագործում։

Անիրաւ Ղունկիանոսն իւր աշակերտութեան վերջին տարին մի օրինաւոր դաս չէր համար տուել և ուսուցչի „մարգարտաճորան“ խրատներին իւր ականջները խուլ էր պահել։

Խեղճ պատուելին ինչ հող տար իւր գլխին, ամենաշատը կամ պէտք է «գերամեծար» ծնողին գանգատուելու սպառնալիքով վախեցնէր մոլորեալ ոչխարին, կամ «մի արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզից» ասելով յոգւոց հանէր և թուքը կուլ տար. խելքը հացի հետ էր կերել, որ Սեղբոս աղայի որդու իշին չօշ ասէր, քմահաճութիւններին հակա-

ռակէը. նա լաւ գիտէը, որ նոյն օրն իսկ իւր հօցէ „Օրհնեալք եղերուքն“ ասաց։

Այս այն տարին էը, որ Ղունկիանոսի մայրը Մարիամ խաթունը յաճախ ականատես էը լինում իւր որդու և Արփիկի աչք ու ունքով սիրաբանութիւններին և լռում, հետևանքին էը սպասում։

Կարելի է դեռ շատ ժամանակ կըթագցնէը տիկին Մարիամը նորահասների հանաքները, եթէ մի օր չըլսէը իւր գառը զաւակի երգն և մատը չըկծէը։

Ահա, ինչ էը երգում Ղունկիանոսը.

«Ա՜խ եօթն օր, ախ եօթ գիշեր,
Շաղգամն ի գօտիս թռումշաւ, տնաւեր,
Եարս ի դունէն դուրս չեկաւ,
Յորթէ տինք (որ տալի) սիրտ մզի խովնար.
Վայլըմըն, Արփիկ, վայ։

—Էհէ, վաղն Արփիկի ծնողները կըլսեն սևեռնախս ձայնը և մեզ կըխայտառակեն, մոռածեց Մարիամ խաթունը, երկու տան անունն էլ հողի հետ կը հաւասարուի, աշխարհքի մէջ թքանքատեղ կը լինինք։

Այս լուրջ մտածմունքների հետևանքն էը, որ նոյն գիշերը Ղունկիանոսի մայրը մարդուն առաջարկեց որդուն նշանելու և հաճութիւնն առաւ։

Դժուարութիւններ և արգելքներ յառաջ չեկան. Չելէպեան Սարգիս աղան առաջին անգամից կամք տուեց և նոյն շաբթումը նշանադրութիւնը կատարուեց փառաւոր երեկոյթով։

Պատուելի Նշանի սրտին թէպէտ մեծ ցաւ էր այն աւետիքը, որ Սեղբոս ազան արժան տեսաւ իւր ծառայի ձեռքով տալ նրան և խնդրել որ շտապի որոշեալ օրը յարգել նշանադրութեան հանդէսն իւր շնորհաբեր այցելութիւնովը, բայց քաղաքագէտ Պատուելին Ստամբօլումն էր քաղաքակրթուել, գիտէր քաղաքավարութեան բոլոր նրբութիւնները. լսելուն պէս տեղից վեր թռաւ, ձեռք ու ոտքը շարժեց, ժըպտաց, բազուկները վեր բարձրացրեց դէպի երկինք, փառք տուեց Աստծուն, որ իւր աչքով իւր խնամած նորատունկ ծառի ծաղկելը տեսաւ. հաստածալ գօտկի ծալքերը քրքրեց, գրպանները տասն անգամ շուռէ շուռ տուեց, վերջապէս ծոցագրպանի խոր անկիւնումը մնացած վերջին դուրուշը ծառային ընծայեց, հետն էլ տասն անգամ ներողութիւն խընդրեց, որ ոսկի ու արծաթ չունի՝ այն իւր համար ամենասիրելի աւետեաց համբաւն իրեն տալու փոխարէնը հատուցանելու։ Մի խօսքով, չմնաց ուրախական արտայայտութիւն, որ Փալչիկճեանը գործ չդնէր Սեղբոս ազայի ծառայի մօտ. ապա խնդրեց որ իւր սրտալիր յարգանքը մատուցանելով հանդերձ՝ յայտնի իւր բերկրալիր պատրաստականութիւնը՝ իրեն սիրելի աշակերտի բարեբաղդութեանն արժանանալու։

Նշան պատուելին եկաւ և լաւ եկաւ, մի փառաւոր ներբողեան էր գրել, բերեց և կարդաց բազմականների մէջ, մինչև եօթներորդ երկինքը բարձրացնելով իւր „Ջանասէր, պարկեշտ, շնորհուն և

բարոյականութեան տիպար“ ա՛շակերտին, իւր սիրելի Ղուննկիանոսի յառաջադիմութիւնը և մեծ ընդունակութիւնը։

Ընթերցումն աւարտեց Պատուելին և խորին ակնածութեամբ, բարձր քաղաքավարութեամբ վարդով լցրած մի ափսէի վրայ մօտ բերեց Սեղբոս և Սարգիս աղաներին ճառը և ուսումնաւարտութեան մրցանակագիրը (վկայագիրը) կարմիր մելանով գլխատառերը ծաղկագրերով զարդարած։

Խոհեմ և խելօք էր պատուելին, Սեղբոս աղան ճառը վերցրեց և տեղը մի ոսկի մէջիդիէ դրեց, իսկ Սարգիս աղան վկայագիրը վեր առաւ և հանդիսականների ներկայութեամբ հանեց իւր թիկունքից սինջաւի մեծագնի մուշտակը և Պատուելուն ծածկեց։

Ժամանակը թէև գարնանային էր և եղանակը ջեր, բայց տաճկական սովորութեան համաձայն հարուստների մէջքից ամենաշոգ ամռան կիզիչ արեգակի տակ անգամ թանգագին երկնագոյն մահուդով ծածկուած մուշտակը վայր չէ դրուում։

Գ.

Նշանագրութիւնը կատարուած օրից Ղուննկիանոսի համար պատ եղաւ Արփիկենց բակին նայելը. ինքն Արփիկն էս կատուի ձեռքից հալածական մրկան նման փակուեց ընումն և կուչ եկաւ մնաց։

Հազար անգամ թող իրան կորատի, իւր միսը բարկութիւնից ծամի պատուելու աւարտավարժ սի-

բելին, թող դարան մտնի պարտիզում, վողջում, տանիքի վերայ, ծխնելոյզների ետևը, նրան բաժին և մխիթարութիւն մնացել են քաղցր հրագները, առաւել լաւ է՝ չը տրտմի, չը մաշուի, չը վշտանայ, ցորեկը գնայ իւր հօր առևտուրները սովորի, միտք զբաղեցնի, ֆիզիքական աշխատանքներով մարմնապէս յոգնի, որ երեկոյեան ընթրիքն անելուց յետոյ գլուխը բարձին դնի և մինչև որ առաւօտեան արշալոյսն իւր վերջին խաղը արեգակի ճառագայթների հետ չը կատարէ՝ նա չը զարթնի. ապա թէ ոչ, երկրի դիրքին հակառակել չի կարող, ոչ տարբ՚ներն են ներում և ոչ տեղական աւանդական սովորութիւնները. նշանադրութիւնից մինչև թագ ու պսակին արժանանալն երեք տարին անհրաժեշտ պայմանաժամ է։

Մօր օրօրոցը կրակ ընկնի՛, որին բնութիւնից վիճակուած է իւր որդւոց համար ծրը խաւարացնել. ինչ է արդարև մայրական հատուցումը զաւակների կողմից, որ ամենաերախտագէտ որդին աշխարհի առաջին օրից մինչև այսօր կարողացել է այդ սրտագորով, այդ քնքուշ էակի հոգեկան և մարմնական անթիւ վարանմունքների, անդադար հոգածութիւնների, անվախճան նեղութիւնների հազարերորդ մասին անգամ երախտահատոյց լինել. որքան խորամուխ ես լինում երկու սեռի բնաորոշ յատկութիւնների զննութեանց մանրամասնութիւնների մէջ, ծնողական պարտականարութիւնների լայնածաւալ

գործունէութեանց ամէն ճիւղերի մէջ, կնոջ մայրական գորովը գերակշռում է այլ մարդու հայրական ամենատեսակ հոգատարութիւններին. եթէ գգուանքի, կարեկցութեան, քնքշութեան, խնամոտութեան, սիրոյ և ամենատեսակ փափուկ զգացմունքների շտեմարանը սիրտն է, ապա անկասկած է, որ կինը— մայրը բոլոր մարմնով սիրտ է ու սիրտ:

Ե՛րբ կը դիմանար Մարիամ խաթունը, կարող էր համբերել Արփիկի մայրը, նրանք իւրեանց աչքով տեսնում էին իրենց զաւակների ներքին տառապանքները և դարման չէին գտնում սփոփելու:

Ղունկիանոսը թէև գնում էր հօր խանութը, բայց օրական՝ ես տասն անգամ ասեմ, դու կրկնապատիկը հասկացիր, այս ժամին տանն էր մի չնչին ապրիլով, այն ժամին հոտառու բարակ որսորդական շան նման պտոյտներ էր գործում Սարգիս աղայենց պատերի տակին:

Հայրն երբեմնապէս ներկայ էր լինում իւր տղայի շորահան լինելուն և քնելուն և դորանով ապահովուում էր, որ տղան հանգիստ քնած է, իսկ մօր սիրտը կտոր կտոր էր լինում, ինչ ժամանակ տեսնում էր, թէ սիրելի զաւակը՝ երբ հաւաստիացաւ, որ արդէն հայր ու մայր անուշ խոր քնի մէջ մրափած են, իսկոյն սուսիկ—փուսիկ շորերը ձեռաց շտապով հագնում էր ու գնում իւրեանց տանիքը բարձրանում, կամ Արփիկենց պատերը ափափելով

ջուհլակի նման հինած անում, այս կողմից գնում, այն կողմից դառնում։

Արեգակի պես պարզ էր Մարիամ խաթունի համար որդու հալումաշ ջանից ընկնելը և յառաջն առնելու ելք չէր գտնում. ինքն էլ Ղունկիանոսի հետ մաշուում էր քնահատ, աղիքը գալարում էր, ոչ ամուսնուն էր ուզում յայտնել, ոչ Ղունկիանոսին էր սիրտ անում լոյս ընկնել. մեկի սպառնալիքներից և կոպտութիւնից էր ակնածում, մեւսի սիրտն առաւել խոցելուցն էր երկմտում, ճարը կտրում էր՝ որդու ետևից ինքը ծածուկ հետեւում էր և հեռուից հեռու մութ խորշերից դիտում տղայի մորմոքները։

Մի ևնոյն ցաւերի մէջն էր Արփիկի մայրը, նրա աղջիկն էլ զգալի կերպիւ անհանգիստ էր լինում. օրիորդական ամօթխածութիւնն երբէք թոյլ չէ տուել աղջիկներին տղաների նման ամէն բանում չափն անցկացնել, բայց նրանք իրանց լուսութեամբն և դիւրազգացութեամբն աւելի ենթակայ են սրտամաշ տառապանքների։

Հաւ էր, որ Արփիկի անչափահասութիւնը փոքրը ինչ մեղմում էր նրա խանդաղատանքը, ապա թէ ոչ, որքան այժմ մտածում և հոգում է, եթէ իւր 14 տեսած գարունի վերայ երեքն էլ աւելացած լինէին, նա ինչ որ հիմա քաշում էր, եռապատիկը կը կրէր։ Արփիկն էլ նեղանում և մաշուում էր և այդ մայրը տեսնում էր։

Սկզբներումն երկու խնամի գրացի մայրերը միմեանցից կամենում էին թագցնել իրանց գործած մեծ սխալը, բայց վերջը բացուեցին և կամեցան ընդհանուր ուժով առանց հայրերին իմաց անելու՝ մի տեսակ թեթևութիւն տալու իրեանց զաւակների մտատանջութիւններին. ինչպես ասած է՝ սուտ կուրացան, չը տեսնել ձևացրին, չը հետևեցին նշանածների հետամտութիւններին, աղուէսաքուն տուին, որ նշանածները երբեմնապէս իրար տեսնեն։

Ըստ որում, թէև երկու մայրերից ոչ մէկը ոչինչ նկատողութիւն չէր արել իւրաքանչիւրն իւր զաւակին, բայց փայտը վերցնես, գող շունը կիմանայ. մեր գող շները գիտէին, որ իրանց արարքները՝ անգամ մտածմունքները գաղտնի չէ իրանց մայրերի աչալրջութիւնից։

Այժմ՝ երբ պատանիները պարզ տեսան մայրերի կողմից անուշադրութիւն, անմիջապէս հանգամանքից օգտուեցին և իրար հանդիպելու հնարքը գտան։

Դեռ յառաջ ու յառաջ մէկը կորից, միւսը բակից նշանացի ակնարկներով սկսեցին շարունակել իրեանց սիրաբանութիւնները, վերջը Դունկիանոսի յանդգնութիւնն այն տեղը հասաւ, որ երկու քար ոտքի տակ ամրացրեց, պատն անցկացաւ և իրան ձգեց Ալփիկենց պարտիզի հաստաբուն կաղամախի ծառի ստուերը։

Սկզբներումը նշանածների մտաւոր հաղորդակ-

ցուրթիւնները կատարուում էին կարճ խօսքերով և անկապ նախադասութիւններով. օրինակի համար՝ մեր կատուն էս օր մի մուկը բռնեց, մեր աքաղաղը ձեր աքաղաղի հետ կռուեց, մերը յաղթեց, մեր թուխսը տասը ձագ է հանել և այլն։

Սրանք էին լինում Արփիկի հաճոյախօսութիւնները, իսկ Ղունկիանոսը ծաղիկների, պտուղների, ճնճղուկների մասին էր դատարկաբանում և կամ իւր աշակերտական կեանքի դէպքերից էր խօսում։

—Ի՞նչ կը լինի՝ ինձ կարդալ սովորցնես, յանկարծ դուրս թռաւ Արփիկի բերանից, երբ Ղունկիանոսը ծաղրում էր պատուելի Փալչիկճեանի դասախօսելու և մատներով օդի մէջ տառեր գծելու ձևը։

—Շատ լաւ, անգիտակցաբար համաձայնուեց Ղունկիանոսն և վազեց ալբենարանի ետևից։

Այնուհետև պատանի ամոլները գտան իրանց պարապմունքի առարկան. Արփիկենց պարտիզի մեծ ծառի հովանին փոխուեց ուսումնարանի։

Հէնց այս եղաւ սիրահարների վերջին հարուածը. երկու խնամի մայրերը մի օր փոքը էր մնում Գաւազենց լուսամտից գլխիվայր գահավիժուէին։

—Հոդը գլխուս, ձիւնն արևուս, գոչեցին միաձայն խնամիքը և միմեանց մատնացոյց արին պարտիզի անկիւնում կատարուող տեսարանը։

Կանաչ խոտի մէջ նստած էին Ղունկիանոսն ու Արփիկը։ Ձախ ծնկնով չեներ էր աղջիկը նշանածի ծնկանն և աջ ծունկը ծալած՝ տետրակը ծըն-

կանը դրաճ՝ գիր էր գրում: Եւանդաշատ ուսուցիչն երեսն յառաջադէմ աշակերտուհու երեսին կպցըրաճ՝ բազուկը նրա աջ ուսով իջեցրել էր թղթի վերայ և Արփիկի ձեռքը բռնաճ՝ տառեր էր գծում:

Որքան պարզուհին, որքան քաղցր և սրտաշարժ անմեղուհին. երկնային սէրն էր այդ րոպէին թագաւորում անարատ մանուկների գրկախառնուհեան մէջ, երկու միամիտ հրեշտակներ էին նրանք, որոնց միտքն ու հոգին՝ ջինջ աղբրի պարզուհեամբ՝ չեն բծաւորուած որ և է կասկածելի արատիքով. հարազատ եղբայրը սիրելի քրոջը գիր է սովորցնում, կը մտածէր ամեն մի օտար աչք:

Այսպէս չը դատեցին զաւակասէր մայրերը.

—Ձի՛ւնը մեր տան կտերը, խնամի՛, միաբերան և միաժամանակ կրկնեցին նրանք, մենք աշխարհքի խօսելիքը դարձանք, սրա ճարը տեսնելու է:

Տիկիններըը մի քանի օր իրանց աճուսիններից ծածկեցին իրողութիւնը, բայց վերջն ստիպուեցին խոստովանել:

Հայրերը սրդողեցան, սպառնացին, վերջը լաւ դատեցին լռել և յառաջն առնելու ճարը մտածել:

Ո՞վ է մեղաւորը, իրանք իրանց ձեռքով զաւակներին անշղթայ մի քանտում քանտարկել են, դեռ կամենում են, որ երկու կալանաւորներն երեք շարունակ երկար տարի մէկմէկն իւր անկիւնից միւս անկիւնը աչք փակը և չը տեսնեը, ուզում են, որ ապագայ ծակիցները 1095 ցորեկ մթնաց-

նեն, նոյնքան գիշեր լուսացնեն և մէկը վերից ցած, միւսը ներքևից բարձր աչք չը ձգեն։

Հեշտ չէր, ի հարկէ, բայց և մեծ դժուարութիւն չէր լինել սրտի ձգտումը խեղդել, եթէ մինը քաղաքի արևելքումն և միւսը արևմտքումը բնակելուս լինէր, սակայն ծծումբը դրել են կրակի մօտ և բռնկելու չամար վշտանում. այս խելք է։

Յաջողակ դէպքն օգնեց Սեղբոս և Սարգիս աղաներին։

Վարագումը Խրիմեանը նոր դպրոց էր հիմնել։

Մի վեղարաւոր գիւղերն ու քաղաքներն ընկած՝ աշակերտներ էր ժողովում։

Ղունկիանոսին տանից հեռացնելու յարմար առիթ էր. խնամիքը խորհրդակցեցին և «Գիժ մոզու» ականջիցը բռնեցին, վարդապետի ձեռքով Վարագ ուղարկեցին։

Դ.

Դարուս երկրորդ կիսաշրջանի յառաջադիմական ճառագայթի մի ամենափոքրիկ հիւլէն և ս տաճկահպատակ Հայերի վերայ սփռուեց։

Սահմանադրութիւնն էր այդ հիւլէն, որ կապեց, միացրեց հայ ժողովուրդն իւր հոգևորականի և հարուստ դասակարգի հետ, սահմանադրական լուսաստիւռ յօդուածների շնորհիւ միմեանց հետ բարձակից բազմեցան խարձրաստիճան սրբազնազործ պաշտօնեաները, վսեմապատիւ ամիրաները, մեծահրա-

չակ վաճառականները, իմաստնափայլ ուսումնականները, հասարակ արհեստաւորները և ամենից արհամարհուած շինականները, հաւասարութեան սկզբունքը, պարտաճանաչութեան վեհ գաղափարը մակարդուեցին մեծի ու փոքրի, հարստի ու աղքատի, գիտնականի և տգէտի արիւնի հետ։

Այս միմեանցից անջատ երկու ծայրերի միաւորութեան իրագործումը խորթ և անսպասելի էր դարաւոր գերութեան ընտելացած հալի համար, բայց հետզհետէ արգելքները բարձուեցին, անսովորը սովորական դարձաւ, մեծը փոքրին ժպտաց, տէրը գործակատարի խորհրդին ամօթ չըհամարեց դիմել, ծառան որդիական վստահութիւն ստացաւ և միացեալ ուժով ազգային բարեկեցութեան և յառաջընթացութեան ասպարիզում գործելը կարևոր ճանաչուեց։

Ազգային սնդուկի մուտքն այլևս ծանրաբեռնուած չէր միայն վաճառաշահ ճոխերի պարանոցի վերայ, մեծատան ոսկու հետ չքաւորի լուման գըլուխ գլխի էին տուել, ձայն, քուէ, իրաւունք հաւասարապէս բաժանուած էր իւրաքանչիւր անհատի վերայ առանց խտրութեան դասակարգի և. ծագումի։

Կ. Պօլսի հայութեան կաթսայի տակ մոխրի մէջ խոր անթեղած հուրը յետ բացուած էր՝ ի շնորհս Սահմանադրութեան։

Թաղական խորհուրդները, թաղական դպրոցները, թաղական սնդուկները իւրեանց ծայրը միացրին կեդ-

ըոնական Համագումար Խորհրդի հետ։

Այս դեռ կատարեալ չէր, գաւառների միաւորութիւնն անհրաժեշտ էր, գաւառների կարիքն առաւել զգալի էր, բայց գաւառների ցաւերը դարմանելը դիւրին գործ չէր, տաճկահայ գաւառներն ազատ շնչելու իրաւունքից էին զրկուած, տգիտութեան տղմամուղձի ամպն և հարստահարութեան սպանիչ ծանր թաթը մեռցրել էին Տաճկահայաստանի բնիկ բնակիչների մէջ պարտաճանաչութեան նշոյլը. հայի պահած անբան անասունն իւր տիրոջից աւելի երջանիկ վիճակի մէջ էր, չորքոտանին մարդից առաւել իրաւունք ունէր իւր գոյութեան վերայ մտածելու, այլ և այս քնչ էր սպասելի այսպիսի մի թշուառ տարրից։ Պարզ էր ուրեմն, որ ուրիշների պարտքն էր գաւառների համար հոգալը, և այդ ուրիշը լինելու էր ոչ օտարը, այլ իրաւորը, այլ ընտանին, այլ արեւնակիցը։

Պօլսի հայերի նուիրական պարտականութիւնն էր իւրեանց թշուառ եղբօր փրկութեան վերայ լրջօրէն խորհել, եթէ չէին կամենում, որ ամբողջութեան մեծագոյն կիսի մահուամբն իրանք էլ շունչը փչէր։

Պօլսեցիք նախատեսեցին այս անհրաժեշտութիւնը, Սահմանադրութիւնը հեշտացրել էր ճանապարհը. մնում էր միայն էական միջոցները գտնել և Պօլսի ազգային խորհուրդը չդանդաղեց. գաւառացի հայի համաճարակ վէրքն ապաքինելու ամե-

նախկարար սպեղանին ինքնաճանաչութիւնն էր, որի բուսը գրագիտութիւնն էր, անհրաժեշտ էր ապաքէն, որ սահմանադրական վարչութեան հետ միասին այբուբենը ընդհանրացնէին, որ և արին։

Բուսան այնուհետև Կ. Պոլսի այս և այն թաղերում և գաւառական մեծամեծ քաղաքներում զանազան անուններով ընկերութիւնները—Դպրոցասիրաց ընկերութիւն, Կիլիկեան ընկերութիւն, Արարատեան ընկերութիւն, Համազգային ընկերութիւն, այլ և այլ մանր ու մեծ ընկերութիւնները, որոնց բոլորի նպատակն ազգային կրթական գործին նպաստելն էր։

Վերջումն այս բոլոր ընկերութիւնները ձուլուեցին *Միացեալ ընկերութեան* անունով և վայելեցին քաղաքական օրէնքի պաշտպանողութիւնը։

Ընկերութիւնն սկսաւ այնուհետև իւր հայթայթած միջոցներով գաւառներում դպրոցներ բանալու հոգացողութիւնը, ազդեցիկ անձինքներից տրնօրէններ նշանակուեցին, ուսուցիչներ ցրուեցին և ձեռնհաս եղած տեղերում կրթարաններ հիմնելու փորձեր կատարուեցին։

Այդ ժամանակն էր, ինչպէս վերն ասուեցաւ, որ Վասպուրականի Արծուին՝ հանրածանօթ Խրիմեանը, որին այսուհետև սովորական „Հայրիկ“ բառով ենք կոչելու, Վարագայ վանքումն իւր բուսը հաստատեց, Տաճկահայքի զանազան գաւառներից մանուկները ժողովեց և կրթական գործին ձեռնա-

մուխ եղաւ։ Հայկին էր յիշեալ միջոցները հայթհայթողների մէջ սկզբնապատճառներից մէկը։

Միաժամանակ դիպուածով Բ. քաղաքն եկան Արարատեան ընկերութեան տնօրէն Մ. Էֆէնդին իւր հետ բերած ուսուցչի հետ և Խրիմեան Հայկի կողմից ուղարկուած վարդապետը։ Առաջինը պարտք ունէր Բ. քաղաքում մի դպրոց հիմնել, երկրորդը մի ձադուկ էր ուզում Վարագեան բնի համար։

Դեռ այդ ժամանակը Միացեալ ընկերութիւնը չէր կազմակերպուել. ամենից գլխաւորն և Ազգային Սահմանադրական վարչութեան և օրէնքի հովանաւորութեան արտօնութիւնը վայելող համարուում էր Արարատեան ընկերութիւնը։

Մ. Էֆէնդին այս միջոցում Օսմանեան պետութեան ականաւոր հայ պաշտօնեաներից մէկն էր. նա տէրութեան կողմից ուղարկուած էր քննչական գործով գաւառի կառավարիչների գեղծումները արտայայտելու։

Թէպէտ ամէն աշխարհում ընդհանրապէս պաշտօնական անձինքների մասին ազգային պարտաճանաչութեան կարծիքներն աննպաստ են, բայց սակաւաթիւ անձնուէր անհատներ վայելել են և վայելում են շարունակ ազգային բարերարի անուն և ազգի ընդհանրութեան շնորհակալութիւնը։

Մ. Էֆէնդին վերջիններիս մէջ առաջիններից մէկն էր. ազնիւ ձգտումներով, լուսաւոր գաղա-

փարներով, ազգային պատմութեան ծուծը ծծած, հայութեան հոգւով տոգորուած մի երիտասարդ էր. նա և իւր քաղցր ու հանրամատչելի բնաւորութեամբը սիրելի էր թէ իւրայիններին և թէ իւր իշխանաւորներին։

Աւրարատեան ընկերութիւնն իւր կողմից շահաւէտ դատեց մի այսպիսի լիազօր իրաւատիրոջը դնել և խնդրել յանձն առնուլ գաւառական դպրոցական տնօրէնութիւնը։

Խոհեմ և հանճարաւոր էր Աւրարատեան ընկերութեան կարգադրութիւնը, Մ. Էֆէնդին ամենայարմար անձնաւորութիւնն էր ընկերութեան իղձը գլուխ տանելու և նա սիրով կատարեց։ Իսկ եթէ աւելացնենք, որ Պատրիարքարանն ևս իւր կողմից լիազօրութիւն էր տուել Մ. Էֆէնդուն վերահասու լինել եկեղեցականների հաշիւներին, վանքերի, վանահայրերի և վերատեսուչների գործողութիւններին, ակնյայտնի է ուրեմն, որ ամէն փակ դռները բաց էին Մ. Էֆէնդու առաջին։

Եկաւ Մ. Էֆէնդին Ր. քաղաքն և իջաւ Չելէպեան Սարգիս աղալի տանը։

Տասնաւոր տարիներ էր, որ Չելէպեան Սարգիսը քաղաքի եկեղեցականը, կամ մեր խօսքով երեցփոխն էր։

Խրիմեան Հայրիկի առաքեալն ևս հիւրընկալուած էր տեղական աւագադոյն ծերունի քահանայի մօտ։

Երեկոյեան ընթրիքի վերայ, Սարգիս աղայի սեղանին սպասաւորում էր մեզ ծանօթ Արփիկը՝ Ղուկասեանոսի նշանածը։

Մ. Էֆէնդուն հաճոյ թուեցաւ Արփիկի գեղեցկութիւնն և քաղաքավարի շարժումները։

Էֆէնդին չըքաշուեց օրիորդի իւր վերայ ներգործած քաղցր տպաւորութիւնը հօրը պատմել։

— Սա Պօլսոյ ամենահարուստ և լուսաւորեալ երիտասարդին կեանք կարող էր տալ իւր արտաքոյ կարգի գեղեցկութեամբն և արժանավայել վարմունքներովը, ասաց Մ. Էֆէնդին,— և խոստովանում եմ, ամենայն սիրով կը խնդրէի սորան եղբօրս հարսնացնել, եթէ արդէն նշանած չըլինէինք։

— Էֆէնդիմ, բարձրաստիճանութեանդ խոնարհ ծառալի դուստրը նոյնպէս նշանուած է և ստիպեալ եմ ասել, որ մեզի մեծ ցաւ դարձած է, պատասխանեց Սարգիս աղան, և նշանադրութեան ամէն մանրամասնութիւնները մի առ մի պատմեց՝ սկսած նշանի օրից՝ մինչև Ղուկասեանոսի հետամտութիւնները։

— Եթէ այդպէս է, խորհուրդ տուեց Մ. Էֆէնդին, շուտով ամուսնացրէք և ամէնին վախճան կը լինի։

— Ո՛չ, տէր իմ, նախ՝ երկուքն ևս դեռահասա են և երկրորդ՝ տեղական սովորութիւնը խիստ է։

— Ուրեմն պատանուն հեռացրէք մինչև ժամանակը գալը։

—Ո՞ւր ուղարկենք, ինչպես անենք, չգիտենք։

—Այժմ իսկ ամենայարմար և բարեբաղդ դեպք է, վրայ բերեց Մ. Էֆէնդին, Վարագայ նուիրակի ձեռքով ուղարկեցէք Խրիմեան Հայրիկին. երեք տարուց յետոյ դուք կունենաք ազնիւ համոզմամբ, լուսաւոր գաղափարներով մի պատուական զաւակ, որ պատիւ կը բերէ ազգին և իւր ծնողացը։

Այստեղ Մ. Էֆէնդին երկար ու բարակ բացատրութիւնները տուեց Խրիմեան Հայրիկի գործառնութիւնների արդիւնաւէտութեան և պիտանաւորութեան մասին և պահանջեց իւր խորհրդի կատարումը։

Սարգիս աղան թէպէտ խիստ դժկամակեց, բայց չըվստահացաւ յայտնի դիմադրել, ընդհակառակն՝ արտաքուստ, մեծ հաճութիւն ցոյց տուեց իր կողմից. եթէ միայն փեսայացուի հայրը՝ Սեղբոս աղան հաւանութիւն տայ։

Չելեպեանի պատճառաբանութիւնն առանց հիմունքի չէր. նա աներկմիտ էր, որ խնամին համաձայնելու չէր. ինչպես ինքը Սարգիս աղան, նոյնպէս և իւր խնամի Սեղբոսը նմանապէս և բոլոր կեղեքիչ ու հարստահարիչ հայերը—ժողովրդի աբիւնը ծծող այդ լալծուն տզրուկներից ոչ մէկն երբէք չեն սիրել և չեն սիրում ոչ Խրիմեանին և ոչ նրա նմաններին։ Բայց Սարգիս աղան սխալուեց. ինքն ու իւր խնամին մի սանտրի կտաւ էին. միա

օրը ճաշկերոյթի սեղանի վերայ Սեղբոս աղան չընդդիմացաւ Մ. Էֆէնդուն։

Մ. Էֆէնդին, կարծես, հասկացել էր երկու խնամիների խարդախութիւնը և դիտմամբ ճնշումն գործ դրեց նրանց վերայ ու համաձայնութիւնը դուրս կորզեց։

—Մինչև ինքս անձամբ ճանապարհ չըդնեմ տղային, ասաց նա հաստատապէս, քաղաքից ոտք դուրս փոխողը չեմ. ձեր զաւակը կ'առաջնորդուի իմ յանձնարարական թղթովը։

Սրանց սեղանակից էր այսօր և Ղունկիանոսի ուսուցիչ պատուելի Նշանը։ Սորան հրաւիրել էր ինքը Մ. Էֆէնդին՝ իբր դպրոցի մասին պատուերներ տալու։

Խրիմեանի մասին իբր յատագովութիւնները հաստատելու համար՝ Մ. Էֆէնդին շուտ շուտ դիմում էր պատուելի Նշանի վկայութեանը։

—Այո՛, տէր իմ, հանճարեղ է խորհուրդդ և իմաստուն կարգադրութիւնդ, վաւերացնում էր Պատուելին և բազմաբարդ խօսքերով գովասանքներ շռայլում Հայրիկի հասցէին։

Պատուելին մինչև այն աստիճան չափազանցացրեց, որ Խրիմեանին համայն աշխարհի առաջին աստուածաբանը համարեց, ըստ որում, ասաց նա, Խրիմեանն այդ գիտութիւնը սովորել է ձեր նուաստ ծառայէն, որ երկար տարիներ դեգերուել է մեծիմաստ Բաղդասար դպրի ոտքը գնալ գալով. ծառաներնիդ

բարերար, ազգասէր, իմաստնափայլ Հաղբասար դպրի յառաջադէմ աշակերտն էինք և նորա յօրինած տաղարանը բերան գիտէինք։

Մ. Էֆէնդին ընչացքի տակին ժպտաց, բայց յարմար չըդատեց դիմադրել։

Այսպիսով վճռուեց Խրիմեանի առաքեալի ձեռքով Ղուկիանոսին վաղ ընդ փոյթ ճանապարհ դնել դէպի Վարագ։

Ե.

Երեկոյ է, ժամանակը բաւական ուշ է, արևը լեռների ետևն է անցել, մութը սկսում է իւր թեւերը տարածել երկրի երեսին։

Գաւազեան Սեղբոս աղայենց տանը մեծ իրարանցում է, երկու ծառայ ձեռք ձեռքի տուած՝ բազուկների վերայ են առել թխուացքների համար շտեմարանի մի անկիւնում խնամքով պահուած բարակ աղացած ալիւրի պարկն և տնքալով բերում, վայր են ձգում թոնրատանը. երկու ջահել կին-արմատ կռնեքը կխսամերկ, բրդէ կարմիր ներկած գոգնոցը կապած՝ անթարու քղանցքը յետ ծալած, տնագործ գօտու մէջ ամրացրած՝ նաշիհ ալիւրի մաղը ձեռքին պատրաստ՝ սպասում էին պարկին։

Առանց ժամանակ կորցնելու՝ նրանք յետ քաշեցին պարկի բերանը. նրանցից մէկը բռնով ալիւրը մաղի մէջն էր լցնում, միւսը մաղում էր ահագին փայտէ տաշտի մէջ։

Թոնրատանը թոնիրը նոր կրակ են դրել, ա-նասուններուն չորացած աղբի ծուխն ամպացել, թանձ-րացել, բարձրացել է մինչև առաստաղն և վայր ի-ջել յատակին մօտեցել։ Տան մութը քաշելու համար բաւական չեն առաստաղի միջակէտումը բացած փոքրիկ երիկնն և դուռը, այդ պատճառաւ թոն-րատան պատերը, գերաններըը, կոճերն և սիւնե-րը սեւ են ներկուած։ Տունը համարեա մութն է, սիւնի վերայ ամրացրած միայնակ ձիթի ճրագի ա-ղօտ լոյսը միանգամայն նսեմացել է թանձր ծխի մէջ. աղախինները հազալով՝ մինչև գետինը խոնար-հած՝ դառը ծխից պատճառած մրմռացող աչքերի արտասունքը յաճախ դոգնոցի ծայրով սրբելով՝ մա-ռանից տուն և տանից մառան են ներս ու դուրս անում. մէկը մաշնակով իւղն է գրկել բերում, միւ-սը կողովով հաւկիթը, երրորդն աղի պուլիկը, չոր-րորդը ներքուստ մաքուր արծաթափայլ կլայեկած, իսկ արտաքուստ մխում ապուխտացած, սեւացած կաթսաները, սաներն ու ափսէները։ Ծողովում են ամեն բան ծխացող թոնրի շրթան մօտ նստած հրամաններ արձակող տիկնոջ առաջին։

Ինքը Մարիամ խաթունն է տիկինը, որին թէ-պէտ նստած լինելու պատճառաւ ծուխը չի նեղա-ցնում, բայց աչքերից դառն արտասուքը շարունակ կաթիլ-կաթիլ ցած է գլորւում և թաց անում աստ-նէգործ նկարչեն գոգնոցի լանջապանակը։

Երկու կին լուիկ նստած են Մարիամ խաթու-

նի մօտ և փետրահան են անում մորթած հաւերը։

Եւ ահա, մլմլացող թոնիրը յանկարծ որոտընդոստ դղրդիւնով դուրս պայթեց գալարուն ծխի միջից անհամար բոցեղէն լեզուներ. հազարաւոր կայծեր աննշատուեցին մայր բոցից և ծխի ամպը պատառելով, խաղալով՝ վեր բարձրացան մխի կոյտերի միջով դէպի օդահան երդիկը։ Կապուտ երկնակամարի սահանքումը փայլ փայլի տուող հեռաւոր մանրիկ աստղերի կատարեալ նմանատիպն էին ակնախտիղ պէճերը։

Երեկոյեան վերջնալոյսի վերջին արձակած ճառագայթներից յառաջացած մուգ կարմիր լոյսի լուսաւորութիւնն ստացաւ մխալից տունը բոցավառ հնոցի շնորհիւ։

Հետզհետէ ծուխը նօսրանում և պակասում էր, կորագլուխ ման եկողների գլխներն աստիճանաբար ուղղահայեաց դիրք էին բռնում։

—Էլ մի՛ ուշանաք, աղջիկնե՛ր, թոնիրն սկսում է իջնել, խաչ—երկաթները դրէք, կաթսաներն ու տապակները շարեցէք, քաղցրեղէնները շինուին վերջանան, տնօրինեց Մարիամ-խաթունը. դուք էս շուտ արէք, եղովի (իւղահաց, գաթայ) խմորը հունցեցէք, ձուն ու իւղն առատ արէք. մի՛ խնայէք զաւակիս ճանապարհի պաշարը համեղ անել, այսուհետև երեք տարի Ղունկիկիս բերանը մօր պատրաստած անուշեղէն այլ էս մտնելու չէ. կուրանա՛ն մօրդ աչքերը, Ղունկիանո՛ս, ամեն հինգ նաւակա-

տեսցը մեր տանը սովորաբար այս քաղցրեղէններն ու խմորեղէնները կըշինուէին և մեծ մասը դու կուտէիր, օրէս յետոյ՝ մենք այստեղ անուշներով ճաշելու, պատուելու ենք, իսկ դու օտար աշխարհում, օտար աստղի տակ, օտարութեան մէջ, օտարի ձեռքի պիտի նայես և, աւաղ ինձ, գուցէ տաք կերակրի կարօտ պիտի մնաս. չէ, քաղցրիկս, չէ, այսօրից քո մօր բերանը թխուածքներ ու անուշներ մտնելու չեն մինչև վերադարձդ, ուխտում եմ քեզ, գառնուկս, դուք ևս, Սալվի-բաջի, (քոյր), աղջիկները, վկայ եղէք աստուածանս։

Մարիամ-խաթունն աղջիկները անուանում էր մխա ծառայող կանանցը, իսկ Սալվի-բաջին իւր մօտ նստած երիցագոյն և ամենքից հասակն առած կինն էր։

Սա Սեղբոս աղայենց տանտիկինը, կամ քէյվանին էր, սրան էին ստորադրուած Գաւազեան տան կին սպասաւորները և սրա ձեռքին էին մառանների փականքները։

25 երկար տարիներ էր Սալվի-բաջին Սեղբոս աղայենց տանն էր, նրա ձեռքին էր ծնուել և սընուել Ղունկիանոսը, որին որդու նման սիրում էր Սալվին։

—Մեռնի՛ Սալվին Ղունկիս գլխուն, Խաթո՛ւն, ֆառանչ արձակից դայեակը, դու կարծում ես, թէ օրէս յետ մինչև Ղունկիս գալուստը իմ կոկորդովս համեղ պատառ պէտք է մտնի՛. ես երեկուանից՝ Տի-

ըոջս բերանից տխուր լուրն առնելէն հետէ, պահքս բռնել եմ. այսուհետև կերածս լինելու է պահոց կերակուր, իսկ պահքս խախտելու եմ տարեկան երկու անգամ՝ Զատկի և Ջրօրհնէքի նաւակատիկներին, այն պատճառաւ միայն, որ Հայուհիներից չըզըրկուիմ. այնուհետև իմ բերանս մտնող առաջին իւղեղէնը կըլինի այն անուշեղէնից, որ Ղունկիիս վերադարձած օրը ձեռքովս պիտի պատրաստեմ։

—Հոդն իմ նման մօր գլխուն, Սալվի-բաջի, որ այդքանը չեմ մտածել. եթէ այդպէս է, ես էս պահքս կըլուծեմ քեզ հետ միասին կրկին անգամ զաւակիս գրկած օրը, հեկեկաձայն լաց եղաւ Մարիամ-խաթունը։

Նրան ձայնակցեցին Սալվին և միւս կիները։

—Ամէն, բաւական է, դադարեցէք, աղջիկնե՛ր, արտասուքը սրբեց տիկինը, Ղունկիիս հօր ոտնաձայնը կըլսեմ, երեկ խիստ բարկացաւ վերաս, երբ որդուս գնալու լուրն ասաց և լացի։

Արդարև Սեղբոս աղան ներս եկաւ, պատրաստուիններին նայեց և ասաց. այս երեկոյ ամէն բան վերջացրէք, վարդապետը մտադիր է վաղը նախաճաշիկից յետոյ անշուշտ ճանապարհ ընկնել։

Թոնրատան կարգադրուիններն արեց Գաւազեանը, գնաց իւր առանձնասենեակն և դուռը ծածկեց։

Զ.

Մի քանի պտոյտները արեց մոմատալով Սեղբոս աղան սենեկի մէջ և մօտեցաւ անկիւնում դրուած երկաթեայ արկղին։

Նա հանեց գրպանից արկղի բանալին և բաց արեց։ Արկղի մէջ կարգաւ շարուած էին երեք կերպասեայ քսակ և բաւականին շատ արծաթեայ ոսկեզօծ զարդերը, կալին և երկու երեք հատ նեղաձայլ տետրակները, որոնց մէկի ծալքումը դասաւորած էին հաստակապ քառածալ փաթեթիներ։

—Այս մուրհակներից շատերի ժամանակը լրացած է, խօսեց ինքն իրեն Սեղբոս աղան՝ հանելով մատենի միջից պարտամուրհակի կապոցը, վաղն այս գրաւական արծաթեղենից շատերը վաճառ հանելու համար շուկայ տանելու է, նայինք՝ թէ որո՞նք են։

Գաւազեանը կամեցաւ թղթերի կապը քակել։

—Ինչո՞ւ համար դրամարկղս բացի, ինչ եմ անում, կապոցը տետրակի մէջ կրկին ամփոփելով ասաց Գաւազեանն և սկսաւ բանալ ամենից մեծ քսակի բերանը։

Քսակը լիքն էր Տաճկական անագախառն պղնձեայ աժանագին դրամներով։

Նա հանեց նրանցից մի քանի բուռը, առանց հաշուելու տեղաւորեց գրպանից հանած կապտագոյն թաշկինակի մէջ և դրեց գորգի տակը՝ ասելով. անկարելի է, վարդապետի ծառային և *ղաւուզին*

(ուղեցոյց, կարապետող) մի քանի դուրուշ ընծայ տալը հարկէ, ճանապարհին նրանք են որդուս դիւրութիւնները տուողը։

Ապա Սեղբոսը բաց արեց միջակ մեծութեամբ քսակը։ Իոլորն արծաթի դրամներ էին։

Նա վերցրեց մի բռնաչափ, համարեց և ասաց. վարդապետին աջահամբոյր պատշաճ է, և աւելացրեց. Դունկիանոսին չըտալ չի կարելի, տղայ է, թող մօտը ստակ ունենայ։

Նա հանեց գրպանից մի կապոտկտաւի քսակ, արծաթէ դրամները մէջը լցրեց, բերանն ամրացրեց և գրպանը դրեց։

Գաւազեանն ամենից վերջը յետ արեց փոքրիկ քսակի կապը, բայց առաջինների նման շուտ չըկարողացաւ բերանը բացանել։ Նա մի քանի անգամ գլխի բացասական և յուսահատական պտոյտներ արաւ, յոգնած հանեց և աչքերը քսակին յառած՝ անշարժ մնաց. երևում էր, որ ձեռքը չէր զօրում քսակին մերձենալը։

—Է՛հ, չեմ հասկանում, բաւական երկար ժամանակ տատամսելուց յետոյ փնթփնթաց նա, այս ամէն մի մուրհակից արիւն է կաթում, հազարաւոր տներ եմ քանդել և փող եմ դիզել, որ այսպէս հեշտ ու հանգիստ ցրուեմ. արածս մեծ լիմարութիւն էր, քնչ ժամանակն էր տղայիս նշանելու, կամ քնչ հարկ կար դրացու՝ այն էս քնձանից առաւելագատիւ դրացու աղջիկն ուզելը, մօրուքս

կնոջ ձեռք եմ տուել, իմ կինս ինձ ճանապարհից հանեց, եթէ ինձ մնար, կամ դեռ չէի նշանել և կամ քաղաքի մէս ծայրից հարսնացու կընտրէի. արու զաւակ ունենամ, թէ չէ աղջիկը հաղդադից կը բերէի, ասում է թուրքի առածը։ Այս Մ. Էֆէնդին որտեղից բուսաւ, ձեռքն օդի մէջ թափ տուեց Գաւազեանը, եկաւ ու որդիս ձեռքիցս խլեց, դեռ ստիպում է, որ միանուագ քսան ոսկի նուէը ուղարկեմ Երիմեանի նորահաստատ դպրոցին. ինձ համար՝ թող այսօր հինն ի վեր տապալուի այդպիսի դպրոցը, բայց ինչ արած, Մ. Էֆէնդու բարեկամութիւնը շահելը մեծ ապագայ շահել է նշանակում, ճար չկայ, պէտք է տալ։

Սեղբոսն արձակեց փոքրիկ քսակի բերանը։

Դեղին մէջիտիէների փայլն ելեքտրական հոսանք տուեց նրա ջղերի ցանցերի մէջ և նա ամբողջ մարմնով սարսռաց։

Նա աչ մատների պտղունցով հատիկ հատիկ վերցնում էր զգուշութեամբ ոսկիները և համարելով դարսում ձախ ձեռքի ափումը։

Դեռ տասը հազիւ էր վերցրել, որ յանկարծ նրա ականջին դիպաւ սենեակի դրան ճռնչիւնի ձայնը։

Շտապով յետ ածեց Սեղբոս աղան ոսկիները և մինչ արկղը փակում էր, մի մեղմ հազոց լսեց։

Փոքը մնաց, ձեռքն արկղի տակն էր թողնում. որպէս և իցէ, բանալին հանեց և դէպի դուռը նայեց։

Դրան առաջին ձեռնափայտին յենուած ծերուենի անձնաւորութիւնը մինչև ծունկը խոնարհ երկրպագութիւն իջեցրեց Գաւազեանին։

Վաղո՞ւց է այստեղ ես, կամ ընչո՞ւ այսպէս ուշ, հարցրեց Սեղբոսը։

—Մի երկմտիր, Տէր իմ, արկղն արդէն ծածկած էիր, որ նուաստ ծառայդ ներս մտայ, պատուիս վերայ կերդնում, ոչինչ տեսած՝ կամ լսած չունիմ, մեծութեանդ քաղցր ներողամտութիւնը կրկայեմ այսչափ անուգան և յանկարծակի այցելութեանս համար, անյետաձգելի հանգամանքն ինձի ձեր ոտքը քարշել է, յուսամ թէ մարդասիրաբար չէք սրդողիր։

—Ա՜խ, դո՛ւ ես, պատուելի Նշա՛ն, ճրագի շառաւիղն աչքերս խտտղեցրեց, քեզ գործակատարիս տեղ ընդունեցի, ներիր խնդրեմ, քաղցրացաւ Սեղբոսն, երբ բոլորովին ապահովուեց, թէ Փալչիկճեան պատուելին ոչինչ չի տեսել և լսել։

—Հրամմէ՛, հրամմէ՛ նստիր, պատուելի՛, թամաննահ 1) տուեց Սեղբոսը։

—Օ՜ֆ... խոր հառաչ քաշեց Պատուելին և մնաց տեղումն անշարժ կանգնած։

—Անշուշտ մի ցաւ ունիս, պատուելի՛, պատկերդ քեզ մատնում է, նստիր և պատմիր. միամիտ եղիր, քեզ քաջ յայտնի է, որ հրամանքիդ ոչ մի

---

1) Թամաննահը Տաճկական բարևի կերպն է. ալ ձեռքր տանում են դէպի բերանը, ապա դէպի աչքը և վերջը՝ դէպի գլուխը։

խօսքն ու խնդիրն իմ կողմանէ անկատար չի մնացել։

—Ի՞հ, էֆէնդիմ, ոչ Վոսփորի մրրկածուփ ալիքներն ի չիք դարձնելուն դարման կայ և ոչ իմ աղէկտուր վշտերիս փարատում։

—Ի՞նչ կայ, ջանմ, ստամդ պակաս է, աշակերտներդ կըյափշտակեն.—այդ է, այո՛, հիմա հասկացայ, Ս.րարատեան ընկերութիւնն ուղարկել է Մ. էֆէնդուն մեր քաղաքումը դպրոց հիմնելու, մենք ևս խօսք ենք տուել. ի հարկէ՝ ճերմակ շունը բամբակավաճառին վնաս է. մտածում ես, որ քո դըպրոցիդ վերջն է, այնպէս չէ։ Բայց մի վհատուիր, Նշան պատուելի, խրախուսեց Սեղբոս աղան, այդ նորամտութիւնն ինձ և Սարգիս աղային ընդդէմ է, և եթէ մենք արտաքուստ չէ չասացինք, այդ Մ. էֆէնդու պատուի համար էր. մարդը բարձրագոյն Դրան հետ սերտ կապեր ունի, Սէրասկէրը փաշայի մօտ ելումուտ է անում. տաճկերէն ասած է՝ սատանի իրեն տունն է, ներս էլ կը մտնի, դուրս էլ կըգայ, մենք չենք կարող այնպիսի նշանաւոր անձի կամքին հակառակ գնալ. ինքը Ղայմաղամ էֆէնդին Մ. էֆէնդու դէմ ոտքի է ելնում, աղուէսութիւններ է անում, մէթէ կըցանկալիը, որ մենք քո օգտին մեր հացից զրկուէինք։ Սակայն սրտիդ մի առնիլ, պատուելի, թող Մ. էֆէնդին մէկի փոխարէն տասը դպրոց բանայ, թող ամէն մէկի մէջ հինգ ուսուցիչ կարդէ ու գնայ, երկու շաբաթ չի

անցնիլ, մենք բոլորին էլ բոբիկ ոտքով մինչև Պօ-
լիս կըփախցնենք. բաւական է՝ որ երկու քրդի նը-
րանց դուռը ցոյց տանք։

Չէ, աղա, ես այդ մասին կասկած անգամ
չունիմ, ինձ յայտնի է, որ գերազնիւ Հրամանքնիդ,
մեծարոյ Սարգիս աղան և տիրապահ քաղաքիս Հա-
մակ *հողբաշիք*, նոյնպէս և Տաճիկ յարգելի էֆէն-
դիներն ամենեքեան անարժանութիւնս կը սիրեն
հոգւով և կը մեծարեն սրտով. իմին ցաւս իմ վար-
ժոցս չէ, ձեր խնամօք՝ այսօրուընէ մինչ աղցաւոր
կենցաղոյս հակիրճ ուղևորութեան ընթացքը լցու-
ցանելու վայրկեանն՝ մի ցամաք պատառ ամենայն
տեղ ինձնէ չի խնայուիր՝ ընչա՞ս պէտք այնպիսի
վարժոցը, որին մէջ դրած բազմամեայ ճգունքս և
աւանդած բարոյակրթութիւնքս Մարմաւեան ծովին
փրփուրին պղպճակին պէս դիւրավիրուն են և դէ-
պի սատանայի գիրկը կառաջնորդեն սաները. այլևս
ինձի պէտք չէ այդպիսի հոգեսպան հիմնարկութիւնն։
Վաղիւն իսկ՝ ցաւի սիրտ, արտօսր յաչս, անմռունչ գառ-
նուկներուս, հոգւոյս հատոր սանիկներուս վերջին
հայրական աղէտալի օրհնութիւնը պիտի ընձեռեմ
ու ցրուեմ. իսկ ինքս անյապաղ մի մաղախ և մի
աստանդականի գաւազան առած՝ երկրէ երկիր տա-
րագիր թափառելու եմ։

—Ընչո՞ւ, չա՛նմ, սիրելի Նշան պատուելի՛։

—Ասացի, որ իմին չորս տարուան աշխատու-
թիւնս փոշի եղաւ, յօդս ցնդեց, աղա՛, ինչպէս ու-

բեմն համբերել կարող եմ այսպիսի մահահրաւէր հարուածին. մ՚թէ, թող ներուի յանդգնութեանս, ազգիս ողջախոհութեան և սուրբ Հաւատոյիչ բաբայէ աւանդած կրօնքին նախանձախնդիր ճաղատ ծերունուս երակներուն մէջ մի կարգ սառնասիրտ ծնողաց պաղ արիւնը կը հոսէ։ Ես, թէպէտև՝ ատած եմ աշխարհիս անզուսպ ցանկութիւնքը, թէպէտ «զանձն իմ արարի ներքինիս վասն արքայութեանն Աստուծոյ, բայց „ոչ ապաքէն հոգի առաւել է քան զմարմին՚՚, ո՛վ հինգ, տասը զաւակաց հայր է, ես հազարաց հոգևոր ծնողն եմ, իմին ձեռնասուն սիրելի աշակերտքս այսօր տիրախնամ Կ. Պոլսոյ փառաւորութիւնն են ու պարծանքը, նոքա ազգիս թագն ու պսակն են. Բիւզանդեան մայրաքաղաքի վսեմաշուք և հայրենասէր ամիրայք, մեծափարթամ վաճառականք, սրբասուն, սևասքեմ վեղարակիր, արհի սրբազան և աստուածաբան ծայրագոյն վարդապետք, սրբազնագործ, ծոմապահ և աւանդապահ քահանայք բոլորեքեան իմ հոգեսնունդ զաւակունքս են, Համեստութեան և փառատեցութեան դրդիչ առիթներն ինձ ստիպեցին Պոլսոյ երկրային դրախտին գաղտնապէս փախուստ տալու, ապա թէ ոչ, ո՛ր խելառն իւր աչքը կոյր կը ցանկար և իւր աշակերտներէն մատուցած գորովալիր սիրոյն ու պատուոյն երես կըթեքէր։ Այսօր ևս կը լսեմ, որ սուրհանդակները համայն Փոքր Ասիա ետևս կըպտտին, տեղս գետել կըջանան։

—Ուրեմն ինչ է հոգսդ, պատուելի Նշան։

—Ի՞նչ անեմ, տէր բարեգո՛ւթ, ցաւս մեծ է, մի՛ մեղադրեր ինձ աղաչեմ, եթէ առնական ձիւնափայլ ալեաց մէջ կանացի գիծոտ սիրտ գաղեալ է և կրբաբախի. կին մարդն իւր վշտաց սփոփանքն իւր թափած արտասուքէն կառնու, իսկ այս հանգամանքին մէջ ես կին՝ և, ինչպէս ասացի, հոգևոր ծնող եմ, կարողութենէս վեր է բաց աչքով ականատես գտնուել հոգեհարազատիս ակնյայտնի գալթակղութեանն և կորստին և չըվշտանալ։

Պատուելին աչքերից արտասուքի փոխարէն, կարծես, աղբիւր էր հոսեցնում։

Նա այժմ ուղղակի դողդողում է, ձեռնափայտը ժամացուցի ճօճանակի նման ձեռքումն աջ ու ձախ է տարուբերուում։

Սեղբոս աղէն վախեցաւ Փալչիկճեանի վայր ընկնելուց, շտապով յառաջ շարժուեց, որ ձեռքը բռնի, բայց Պատուելին ժամանակ չըտուեց, ծնկի վերայ եկաւ և Գաւազեանի ոտքը պինդ գրկեց։

—Ոտքդ պագնե՛մ, Սեղբոս աղա՛յ, ողորմած Տէր, խնայիր չորս տարուան հոգածուխիւնս, զաւակիդ կորստեան պատճառը մի՛ լինիր, թախանձում էր Փալչիկճեանը։

—Ի՞նչ է, Պատուելի՛, բացատրի՛ մտքինդ, ոչինչ չեմ հասկանում, գոչեց Սեղբոսը, բարձրացնելով վարժապետին։

—Իրաւ վճռե՛ր էք, հարցրեց Փալչիկճեանը։

—Ի՞նչ։

—Իրաւ է, որ իմին հոգեսնունդ Ղունկիանոսին որոշած էք ձգել անաստուած անհաւատի կորըստեան բաւիղը։

—Չեմ հասկանում, Պատուելի՛, խօսքերդ։

—Կասեմ՝ Ղունկիանոսիս ազգավնաս Խրիմեանի դպրո՞ցը պիտի ուղարկէք։

—Մ՛թէ քեզ մօտ և քո խորհրդատուութեամբն ու քաջալերութեամբը չը վճռուեց այդ խնդիրը։

—Ուրեմն դու ամենէն քարասիրտ ծնողն ես, որ հալածատ մոլորեցուցիչ հերիւրիկոսին կը յանձնես։

—Ո՞վ է մոլորեցուցիչն ու հերիւրիկոսը, Խրիմեա՞նը։

—Հապա ի՞նչ կարծեցիր։

—Ի՞նչ ես ասում, պատուելի՛, դու չէի՞ր որ Մ. էֆէնդու ներկայութեամբը Խրիմեանին հայրենեաց փրկիչ անուանեցիր, դու չէի՞ր, որ նորա առաքինութիւնը հրեշտակներից վեր դասեցիր, դու չէի՞ր պարծենում, թէ Խրիմեանը քո ձեռնասուն աշակերտն է, դու չէի՞ր, որ խնդրում էիր ինձ ու Սարգիս աղային, որ Մ. էֆէնդու առաջարկութիւնն անպատճառ կատարենք։

—Այո՛, այո՛, բայց...

—Ի՞նչ բայց, մենք աւելի քո խօսքերից, քան թէ Մ. էֆէնդու յորդորանքից համոզուեցինք։

—Վայ ինձ, վայ հոգուս, „հարկ է գալ գայթակղութեան, ասաց Յիսուս, բայց վայ մարդոյն,

յոյը ձեռն գայցե, լաւ էր նմա՝ եթէ կախիցէր երկան իշոյ ընդ պարանոցն և արկանիցէր ի ջուր“։ Ուրեմն ես եմ արժանի ջրախեղդ կորսուելու։

—Չարմանում եմ, Պատուելի՛, ի սէր Աստուծոյ, հանիր ինձ այս տարակուսանքից, անցեալ օրուան ասածներդ այս աւուր գործողութեանդ չեն համաձայնում։

—Այո՛, այո՛, ես սևերես մեղաւոր եմ, Սեղբոս աղա՛յ, կըխոստովանիմ յանցանքս, սակայն ասա՛, այլապէս ինչ կը համարձակէի գործել, ինչ ձև խօսելու էի Մ. Էֆէնդու նման լիազօրին ներկայութեամբ. մէթէ դու ինքդ մի վայրկեան առաջ չասացիր, որ Մ. Էֆէնդին մեծ Եպարքոսին աչ աչքն է, դու չէիր, որ մինչև կեղծաւորութիւն հաճոյախօսութիւն կանէիր. իմին նման չնչին մուկը առիւծ Մ. Էֆէնդու առջև այլ ևս ինչ լեզու պիտի գործ դնէի. մի՛ կշտամբեր զիս, Սեղբոս աղա՛յ, գերայարգի Մ. Էֆէնդին այսօր պատրիարքարանի կողմանէ եկեղեցեաց և դպրոցաց ընդհանուր տեսուչ է կարգած, եթէ կամենայ՝ մի կաթիլ ջրի նման զիս կը գոլորշիացնէ հողագնդէս. Մ. Էֆէնդին ոչ միայն իմին պէս ապիկարներուն ահարկու է, խօսքը հրամանքիդ մօտ գաղտնիք մնայ, մեր գթառատ և բարեպաշտօն Զէյլէպեան չօրբաչի Սարգիս աղան, որ այս աստուածապահ քաղաքի առաջին ականաւորը և ազգասէր հայն է (ի հարկէ քեզնէ աղեկ չէ եա՛), երեկ կը խնկարկէր զՄ. Էֆէնդին և կը ճկէր ու կը խո-

նարհեը նորա մեծափառութեան առջև. ինչ առիթ դրդեալ գիտէք.—ըստ որում Սարգիս աղան եկեղեցական է, իւր ձեռքին է տեղիս ազգային սնտուկը և պարտաւոր է հաշիւ ներկայացնել Մ. էֆէնդիին։ Ի՞նչ ընելու է, բարերարդ իմ, Սեղբոս աղայ. «վան մեղայ իւրեանց խոնարհ եղեն յոյժ», կը գրէ սուրբ գիրքը, Եթէ մեծարգի Սարգիս աղան Մ. էֆէնդիին պատշաճաւոր յարգանքը չմատուցանէ, նա հաշուետեսութիւնն անաչառութեան կը կապէ և շատ պղտոր ջրեր կը պարզին. ինքս ևս նոյնպէս. եթէ ոգնիի նման չը կծկուիմ, չը շողոքորթեմ, համայն տաճկահայոց մէջ անօթի կը մեռնիմ։

—Տեսա՞ր, Մ. էֆէնդին այնքան ազնիւ գտնուեց, որ քեզ իրաւունք տուեց վարժոդ շարունակելու, միայն թէ իւր նոր հաստատութիւնք դպրոցին. ձեռընձիգ չըլլինիս։

—Ի՞նչ կը կարծես, տէր իմ, Մ. էֆէնդին այդ աստիճան գթասիրտ կը գտնուէր, եթէ իւր գովասանաճ ազգակործան, հայու հաւատին թշնամի, անարժան վարդապետին համար աննպաստ վկայ չէր։

—Եւ մթէ այդչափ վնասակար մարդ է Խրիմեանը, Պատուելի, հարցրեց Սեղբոսը, ես այդ վարդապետի մասին ամէն բերանից գովութիւն եմ միայն լսել։

—Կ՚աղաչեմ, Սեղբոս աղայ, ոտքդ կը լիզեմ, խոստովանահայրը եղիր, թող ամէն լսածներդ օրհնեալ յարկիդ չորս պատերէն դուրս չելլեն. եթէ

որդուդ բարիքն ինձի չըթելադրէին, գաղտնիքներս չէի մերկանար, բայց այժմ անհրաժեշտ հարկէ ըսելեալ՝ ճշմարտութիւնը պարզել ոչ ամօթ համարիմ, ընչու որ՝ զաւակիդ վերայ ջանք դրած եմ, քրտինք թափած եմ։

—Հաւատարիմ եմ անկեղծութեանդ, Պատուելի՛, և կը խոստանամ գաղտնապահ լինել, պատմիր այդ Խրիմեանի մասին բոլոր գիտեցածդ։

—Ի՞նչ պատմեմ, ջա՛նմ, ոչ Աստուած ունի, ոչ հաւատք ունի, ոչ բարեպաշտութիւն ունի, խռովարարին մէկն է, որդիքը կըստահակնցնէ ծնողաց դէմ, թեթևամիտ երիտասարդները կը գրգռէ բարեխնամ Տաճկի կառավարութեան դէմ, պահք խախտողին թողութիւն կը խոստանայ՝ միայն թէ իւր թիւր հասկացողութեան համեմատ՝ իրը ազգասէր լինի. Խրիմեանի լեզուով ազգասէր նա է, ով թողած ճարտասանութիւնը, տրամաբանութիւնն և աստուածաբանութիւնը՝ կուգանի և կուսուցանէ բնագիտութիւն, բնախօսութիւն, աստղաբաշխութիւն և նորելուկ, բազմատեսակ, հոգեկորոյս ուսմունքները. իւր աշակերտներէն կորզեր է Սաղմոս, Ծամագիրք, Նարեկացի և աշխարհիկ լեզուաւ վնասակար դիւրըմբռնելի գրքեր է տուեր. Քրիստոս կասէ. „որ սուր առցէ, սրով մեռցի“, այդ անխիղճը Քրիստոսի հակառակ սուր առնել կըքարոզէ. առաքեալը մարմնաւոր տէրերուն հնազանդութիւն կըպատուիրէ, այդ պատուիրսնազանցը Թերուս համբակներու սրտե-

րուն մէջ տէրատեղուքիւն կըսեր մանէ։ Ես սուտ չէի ասեր, որ Խրիմեանն իմ աշակերտ էր. ես ինչ գիտնամ, թէ սատանայի սերունդին մէջ ինչ չարութիւններ են բունած, վարդապետ էր՝ որ օրին մէկը դուռս բաղխեց։ Ելայ, իբրև սրբասնեալ կրօնաւորի ընդունեցի և կամեցայ աջը համբուրել. օծեալ Տեառն էր, մերին պարտքն էր. բարեբաղդ էի, որ Թոյլ չըտուեց իւր անարժան ձեռքին մաքուր շրթունքս մօտեցնելու, և դիմեց ինձի, որ իրեն իրաւունք տամ քովս յաճախել՝ Կովդինի տրամաբանութեան չորս հատորն ուսանելու և հոգեշահ խրատներէս օգտուելու։ Մեղայ Տեառն, ասացի՝ հայր սուրբ, ես անարժան եմ այդ շնորհացը, ազգիս վերջին հոգևորականին ոտքը մեր գլխէն վեր է, ինձ է անկ քեզնէ խրատ առնել։—Չէ, ասաւ ցխտուսի խօսքերով, «Թոյլ տուր այժմ, զի այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւն»։ Ինչ ընելու էի, կամայ ակամայ համաձայնութիւն յայտնեցի և խոստացայ ինքս իւր ոտքը գնալ, որ և կըկատարէի։ Քանիցս մօտն եղայ։

—Լսեցի, Մ. էֆէնդին ասաց, որ Խրիմեանն երբ քո փթած գաղափարներդ ստուգել է, երբ տեսել է՝ որ դու յամառի մէկն ես, նոր ուսում և գիտութիւն ատում ես, Տաճիկների ոտքը լիզում ես, լրտեսութիւն ես անում, այս ու այն Տաճկի դրուներումը գիշեր ժամանակները քալշ ես գալիս, այն օրից նա քեզ բացէ ի բաց արգելել է իւր մօտ գա-

լը և ամէնքին պատմել է քո ինչ լինելդ, որով և ծաղրատեղ ես դարձել Պօլսումն ու փախել։

—Կըտեսնեմ անիրաւը, իւր ստորաքարշութիւններով պարծեցել է եղել, հապա ինչ ընելու էի, իմ տէրս դաւաճանէի, այսօր ամենքնիս Օսմանցիին հացը կուտենք, ելնենք Իսլամին խէթ նայինք. այո՛, չեմ ժխտեր, ես ևս ի վրէժ ինքեան՝ օրին մէկը Խրիմեանին քարոզները եկեղեցու մէջ ծածուկ գրի առի և թարգմանաբար ոստիկանատունը ներկայացուցի. պէտք է ուղիղը խոստովանել, ես միայն չէի, ինձի հետ այս գործում համակից էին մի վեղարաւոր և երկու աշխարհական։

—Ուրեմն, Պատուելի՛, քո խորհուրդներդ անկեղծ չեն կարող լինել, դու Խրիմեանի հետ անձնական հաշիւ ունիս, պարզ ասեմ, այս անգամ ես քեզ լսելու չեմ, տղան իւր նշանածին շատ մօտ է, պսակաժամը երեք տարի է որոշուել, հարկաւոր է գալթակղութեան պատճառները մէջտեղից բառնալ. Մ. էֆէնդու ասութեամբ, Վարագն ամենից յարմար տեղն է, և ես Մ. էֆէնդիի խորհուրդն առնելի եմ գնահատում, քան թէ քո բամբասանքներդ։ Վճռուած է, վաղը տղային ճամփելու ենք Վարագ. այդ է և իմ խնամի Սարգիս աղայի կամքը։

—Ուրեմն իմ կողմանէ ևս որոշուած է՝ այս գիշեր ձեր քաղաքէն ինձ կը մնայ անհետ կորսուիլ, ցանկամ ձեզ ամենայն բարիք՝ ասաց Փալչիկճեան՝

և աչքերը սրբելով դողդոջուն քայլերով դեպի դուռը ուղղուեց։

—Ընչո՞ւ այդպէս յուսահատ ես, Պատուելի՛, յառաջը կտրեց Գաւազեանը։

—Որովհետև աներկմիտ եմ, որ վաղն իսկ Մ. էֆէնդին Տէրութեան գաբթիին (ոստիկան) մարաւաւն ինձ քաղաքէս պիտի արտաքսէ. նա Խրիմեանին մտերիմ աշակերտներէն է, իսկ դուք իմ անկեղծ խոստովանութիւնս նորան կը յայտնէք։

—Այժմ ես իմ պատուով եմ երդում, Պատուելի՛, որ քո ատած մարդին ինքս էլ ատում եմ, և եթէ տղայիս ուղարկում եմ՝ ինչպէս ասացի՝ Մ. էֆէնդիի կամքը հաճելու համար է։ Խրիմեանն երբէք չէ կարող մեր դասակարգի մարդկանցը դուր գալ, նրա կուսակիցներն են՝ անհեռատես երիտասարդները, անփորձ պատանիները և կամ խորամանկ խաբեբաները. վերին երկու կարգը գրաւուած են նրա փքուն բառերից եւ ճարտասան լեզուից, իսկ վերջիններն օգտւում են նորա դիւրահաւան բնաւորութիւնից, Խրիմեանի անունով իւրեանց քսակները են ծանրացնում։

—Լսել է՝ թէ ես ինչ ընելու եմ, ողորմած Տէր իմ։

—Դու գնա և ապահով քնիր, դու այս քաղաքի մշտական վարժապետն ես՝ քանի ես և Սարգիս աղան օդ ենք շնչում, իսկ իմ որդուս մասին անհոգ եղիր, ես իմ զաւակիս հինգ մատիս պէս

եմ ճանաչում, նա եթէ իմ որդին է՝ երեք չէ՝ 13 տարի էլ որ մնայ Խրիմեանի մօտ, չի խմորուիլ և. մոլորուիլ։

Պատուելին անընդհատ երկրպագութիւնները կրկնելով յետ յետ գնաց, հասաւ դրանը, դուռը բացեց և մթութեան մէջ անհետացաւ։

Է.

Յունիսեան պարզ ու աստղաճաճանչ խաղաղ գիշեր է. տարուան այս եղանակին յունիս ամիսն Անատոլիայի այլ և այլ տեղերում, զանազան կլիմաների տակ՝ տարբեր ներգործութիւն է անում մարդի վերայ՝ ընդհանրապէս ամէնն էլ հիացուցիչ, ամէնն էլ ոգեշնչուղ, ամէնն էլ զմայլելի։

Մենք Բ. քաղաքումն ենք, ուր բուսականութիւնն իւր կենսապարար գահոյքն է բազմացրել, ուր այն *վիլայէթութեան* ամենաբարեխառն տեղերից մինն է համարուած։

Ի՜նչ հոգեպարար է յունիսի հով ու զով գիշերը ծիրանեճաճան Արշալոյսի արևելքին ողջոյն տալու ժամերումն՝ այն երջանիկ քաղաքացու համար, որ իւր գործի առաջի օրուան յաջող ընթացքից ոգևորուած, երեկոյեան ուրախ ընթրիք է արել իւր սիրասուն ընտանիքի հետ և խաղաղ հոգւով, միտքը հանդարտ, սիրտն ուրախ՝ քնի Աստուծոյ գրկումըն անուշ անուշ մրափում է։ Քաղցր երազները մեղմիկ զեփիւռի թևերին նստած՝ ներս են մտել

բաղդատելով էակի պատուհանովն և սիրամարգի հազարերանգ հովհարով օրօր երգելով՝ նրա թևերը բռնած՝ առաջնորդում են դեպի բաղդի թագաւորութիւնը։

Ի՜նչպէս հոգեզուարճ են այսպիսի գիշերները այն կարաւանի համար, որոնք երեկոյեան դէմ խոտաւէտ ու ջրաւէտ դաշտերում իւրեանց գրաստն արօտի թողած՝ իրանք ևս իրանց յոգնած անդամներին են հանգիստ տուել, և Լուսաստղը գլուխն երևեցնելուն պէս՝ բարձել են բեռները ու միապաղաղ քայլերով, անասունների վզերից կախուած զանգակների ու զանգուլակների ղօղանջիւնի արած տրպաւորութեան ներքոյ՝ իւրեանց երկար ու ձիգ ճանապարհորդութիւնն են շարունակում։

Որքա՜ն կազդուրիչ ու սիրելի են յունիսեան գիշերները աշխատասէր ու ժիր երկրագործների համար, որոնք երեկոյեան մուխը գետինը կոխելու հետ միասին՝ իրանք էլ բազմավաստակ եզների սամոտէններն են քակում, սամին նրանց կոշտակալած պարանոցներից հանում են, քշում են նրանց ջահել հօտաղների ձեռքով դեպի հանդի արօտաշատ տեղերն ու վարած ցելի ակօսի առակումը գլուխը փափուկ հողի վրայ դրած՝ հանգստանում են։

Հօտաղները էլ քչքչան աղբիւրների ակների մօտ, կամ կանաչ դաշտի վերայ են քթերը ծաղիկների մէջ թաղել, փայտերը կողքներին դրել՝ խոլմփացնում։

Մէկ էլ յանկարծ՝ մի կողմից Արշալոյսի կարապետը՝ բարակ ու սուր քամին ծաղիկների հոտովն է քնով անցած հօտաղների քթածակերը գրգռում, մէս կողմից՝ խելացի, զգաստ ու պարտաճանաչ եզներն են հաստլիկ շրթունքներով ու ռնգունքներով նրանց գլխի, կողքի, ոտքի տակերի խոտերը դիւրաշարժ մասլի լեզուով բերանները քաշում և եղջիւրներով նրանց ոտքերը շարժում։ Ուզում են ասել, թէ ա՛յ անհոգ ջահէլներ, հանգստութիւնն ու աշխատանքն եղբայրներ են, ամէն բան իրան ժամանակն ունի, երկուսի սիրտն էլ հարկաւոր է շահել, հերիք է որքան հանգստացաք, վեր կացէք, աշխատանքի կացէք։

Հօտաղի հոգին զգաց, նրանք ական թօթափել զարթնեցին, երկու ձեռքով աչքները տրորեցին, քունը փախցրին, *քեաւլաշ* եզներին յառաջ վարեցին դէպի մաճկալն և գտան, որ առաւօտադէմի սառը հովը նրան նոյնպէս վեր է թռցրել։ Ջերմեռանդ մաճկալն արդէն երեսը դէպի Արշալուսի կարմրաշաղ գօտին դարձրած՝ իւր աղօթքն արել վերջացրել էր ու պատրաստ սպասում էր լուծը եզների վզին դնելուն և *հոռոլոն* սկսելուն։

Երկինքը բոլորովին անամպ է, հորիզոնի մի ծայրից մինչև միւսը միակերպ համատարած մթութիւն է, որի մէջից բիւրք բուրուց մանր ու մեծ աստղեր ու մոլորակներ գոյնզգոյն գոհարների ու ադամանդների պայծառ փայլեր ցոլացնելով՝ իւ-

բանց հազար ու մի խաղերն են կատարում։ Հասարակ մահկանացուի համար սովորական տեսարաններ են այս ամէնը, բայց բնութեան սիրահարն ամէն մի ակնթարթի մէջ նոր նոր հոգեզմայլ գործողութիւններ կը դիտէ և կը տեսնէ։

Ահա մի մեծ ու պայծառափայլ աստղի շուրջը բոլորել են անթիւ աստղիկները և մի փոքրիկ խմբակ են կազմել, կարծես՝ ոսկի մատանու ադամանդեայ խոշոր ական չորս բոլորքի կանաչ, կարմիր, դեղին, երկնագոյն, մանրիկ գոհարեղէնները են՝ ներդաշնակութեան համար շարուած. կամ թէ բազմաթերթ մայիսեան վարդի շուրջը փնջած են բազմաբոյր երփներանգ մանուշակ, յասմիկ, նարգիզ, համասպրամ, մեխակ, լիլիփար, նունուֆար, զանգակ, ճշնանօր, եօթն եղբօր կռան արիւն, լալագար, մեր-Մ՝այրամի ծաղիկ, հինի ծաղիկ, թօփ ծաղիկ, ձնծաղիկ, խնկան ծաղիկ, անթառամ ծաղիկ, դանդուռի ծաղիկ, սմբուլ, պուտ, կակաչ, բացուբենալուկ, բուլբուլի, օշօշ, խաշխաշի ծաղիկ, կուժկոտրուկ, աքլորի կատար, լեզուն ծոլծորակովը հանած հարսնածաղիկ, շուշան, շնագլուխ, տուղտ, գիւլսաբահի, դեղնածաղիկ, շաբօ, մախմուր ծաղիկ, գաթի ծաղիկ, սնձի ծաղիկ, խոտի ծաղիկ, ծառի ծաղիկ, ես ինչ գիտեմ անթիւ ու անհաշիւ մանր ու մեծ, հոտաւէտ ու անհոտ ծաղիկներ՝ ու որն իւր անուշ հոտովն է մարդիս հոգին պարարում, միւսն իւր գոյներովն ու շաւաղներովն է մեր աչքերը գրաւում։

Մի ուրիշ կողմն ես աչք դարձնում, և ահա մի քանի մեծ աստղեր քնարանման շարուածք, կարծես, քաջահմուտ երաժշտի դիւրաշարժ մատներին են սպասում, որ իւրեանց լուսաւոր լարերի վերայ հոգեթրթիռ եղանակները նուագի և սոխակի դայլայլիկը նսեմացնի։

Երրորդ տեղում, մի այլ աստեղախումբ խօսքը մէկ է արել, միացել և մարդի, առիւծի, թռչունի և ուրիշ մանր ու մեծ, թոյլ ու զօրեղ կենդանու նմանութիւն է առել։

Չորրորդ տեղում՝ շատ հեռու, շատ բարձրումը՝ մի բռնաչափ տարածութեան վերայ՝ աչքիդ երևում է մի մրջմի բնաբերան, որի միջից միլիոնաւոր մրջմիկ-աստղեր միմեանց հրելով, ղժվժում են, վեր ու վայր են անում. մէկ էլ յանկարծ սրում ես տեսողութիւնդ և ահա բոլորն անհետացան, ոչինչ չկայ։

Աչ ես գառնում, սարսափդ բռնում է, մի երկայն օձաստղ ծորելով դուրս է պրծնում երկնքի մթութեան մի կէտից և փռուում, դլխավերևովդ անցկենում, կարծում ես, թէ ահա, ահա որտեղ որ է՝ գլխիդ կընկնի, շնքովդ կը փաթաթուի, քեզ կը շանթի. բայց ոչ, նա գնաց ու հեռու մթութեան մէջ աներևութացաւ. դու՛ երեսիդ խաչ ես հանում ու մտքումդ՝ «Աստուած ողորմի» ասում նրա հոգուն, ում աստղն երկնքումը հանգաւ, ինքն աշխարհքիս իւր վերջին հրաժարականը տուեց։

Ձախ ես շրջում՝ մի կշիռ ես տեսնում երկրնքիցը կախ, որին միայն թաթերն են պակաս. իսկ եթէ հնար լինէր վերցնել հեռուստմը ձևացած կշռի բոլորակ աստեղային թաթերն և միացնել առաջինին, մենք կունենայինք մի անսչառ արդարութեան կշիռ։

Դարձիր յետ ու առաջ, աջ ու ձախ—այսքան բազմաստեղութեանց մէջ պայծառագոյն հպարտութիւնով գլխները ցցել, ձգուել են ու փայլում են մեծամեծ մոլորակներն՝ իբրեանց արբանեակների խոնարհ սպասաւորութիւնից զոհ, իսկ այդ ամէնի մէջ մի գիսաւոր սփռել է իր գիսակների փունջը տասնաւոր, հարիւրաւոր քայլեր և շատ շատ շառաւիղները արձակում։

Ի՞նչ է, մտածում ես, երկնքի երկրորդական լուսաւորների բուն էական նշանակութիւնը, արդեօք ուրախալի՞ անել իբրեանց աստղ եղբօր սիգաճեմ Լուսնթագի ուղևորութիւնը, որ կանուխ երեկոյից, մինչև կանուխ առաւօտ՝ երկնակամարի մի անկիւնից սկսում է իր ճանապարհորդութիւնն և շարունակում մինչև միւս ծայրը. թէ ամէնը միասին՝ դրանց հետ էլ իբրեանց թագուհի Լուսինը կարգուած են գուարճութիւն պարզևել Ամենակարողի բոլոր շնչաւոր ձեռակերտներին, կամ թէ՝ որ ամէնից հաւանականն ու ճիշդն է, նրանց բոլորի նպատակն է Աստուծոյ սիրելի և երես տուած արարածին՝ ապերախտ մարդուս յիշեցնել մեր պար-

տականուԹիւնը, մեր հօգին սլացնել դէպի վերնա-
լինը, դէպի երանաւէտը, դէպի Արարիչը։

Ո՞ր մէկն ասես, ո՞րը Ժողուս, հարիւրաւոր տաղանդաշատ, քանքարաւոր բանաստեղծները Ժող գրիչ առնեն միևնոյն ժամին, միևնոյն տեղից, միև-նոյն կէտից և նկարագրեն միևնոյն տեսարանը հա-ւատի եմ, որ մէկը միւսից բոլորովին տարբեր ու աննման կը կերպաւորի բնուԹեան Արարչի այս վսեմ ձեռագործը։

Բայց, ահա, արևելքում հորիզոնն սկսում է ո-րոշուել, բաւականին ընդարձակ երկայնուԹեան վե-րայ՝ երեկոյեան վերջնալոյսի կարմրագոյն ցօղը նո-ւիից Ժոյլ լուսաւորուԹիւն է սփռում. կարծես, լե-ռան ետևը հովիւները գիշերով կրակ են վառել՝ ցրտից քուցումած մատները տաքացնելու, կամ Ժէ հակառակորդի հօտից յափշտակած Ժխլիկ, հաստա-դմակ, մօր կաԹնով սնուած գառան գլուխը կորե-լու, փորոտիքը Ժափելու և տաք մոխրի տակին ողջ ողջ մորԹով Ժաղելու ու *քիւլըաստի* սաած հովուական ամենահամեղ խորովածը պատրաստելու։

Հետզհետէ կրակի մուԹ լոյսն սկսում է դեղ-նաժիրանի փոխուել և փայլերն աւելի հեռուն տա-րածել, վերջը միանգամայն դեղնում, սրփՀնում է։ Այդ Սրշալոյսն է, որ սարսափեց լուսաւորների Ժա-գաւորի շատ տուած սուր սուր տէգերի հարուած-ներից և գլուխ առաւ կորաւ. դորա հետ միասին Որփէոսի պաշտօնեայ անգործիք երաժիշտները սկը-

ան իբրեանց ներդաշնակ երգերը։

Առաւել համապատշաճ է ասել, թէ անմեղ արարածները—փոքրիկ երգիչները—նախշունիկ, խատուտիկ, երկնագոյն, մոխրագոյն, թխագոյն, կարմրագոյն, կանաչագոյն թռչնիկներն՝ իբրեանց առաւօտեան աղօթքն ու գոհութիւնն են թոթովում դէպի իբրեանց կերակուր ու կեանք պարգեւողը։ Սրբանցից շատերը, մանաւանդ մեր ամենամօտ դրացի, համաշխարհական ճնճղուկն օրական երկու անգամ է կատարում իւր գոհացողական համերգը. առաւօտն արեւածագին և երեկոյին արեւամտին։ Սաղարթախիտ մեծանիստ ծառերն են նրանց սուրբ տաճարները։ Չեմ ստիլ, եթէ ասեմ, որ հազարները միասին նստում են մի ծառի վերայ և ճկճկոցով վերն Աստծուն են ուրախացնում, վարը ծառի տակըն իւր համար նուիրական շինած երջանիկ զոյգին։

Խօսքս, կարծեմ, մեկնութեան կարօտ չէ. Ի. քաղաքի պարտէզներից մէկում, մի այսպիսի կաղամախի ծառ մեզ ծանօթ է, որի ոտները փուռել են դէպի ծառի շրջակայքն և ծայրերումը գլուխները խոնարհած՝ հովանի են արել տակի նստողներին ու նրանց թագցրել արտաքին տեսողութիւնից։ Այս ծառն է, որ քանի ժամանակից հետէ ուսումնարան է դարձել մեր յառաջադէմ աշակերտուհուն. Արփիկն է ուսանողը, Ղունկիանոսն է ուսուցիչը։

Յունիսեան առաւօտ է. աշակերտուհին դեռ չը կայ, ըստ որում շատ կանուխ է, իսկ վարժապետը

դպրոցումն է լսել աքաղաղի առաւօտ ասեղող ձայնը։

Մեզ յայտնի է, որ Մարիամ խաթունը նախընթաց երեկոյին վաղուան պաշարի պատրաստութեան հոգսերով էր զբաղուած։ Նոյն և մի հոգածութեան մէջ էր և Սարգիս աղայի կինը՝ Փամբուխ խաթունը։ Փեսան երկար ժամանակով հեռանում էր. հեշտ չէ ասելը, գոքանչի համար իւր նորափեսան, մանաւանդ դեռ նշանած ու չըպսակուած փեսան՝ տասը հազար արու գաւակից առաւել է և քաղցրութիւն է։

Մօր ու աղախիններէի հետ զբաղուած է և Արփիկը։ Խե՜ղճ աղջիկ, խօսքի իրաւունքից զրկուած ես, աղջիկ արարած ես, լեզուիդ տակին անելևուելթապէս ասեղներ ու սուր սուր փշեր կան ցցուած, որ եթէ յանդգնիս լեզուդ շարժել, կը ծակծկոտեն, կը քրքրեն քեզ.—հօր, մօր, եղբօր, իրաւունքի, օտարի անարգանքները, յանդիմանութիւնն ու բամբասանքներն են այդ ծակոտող գործիքները. ճարդ կտրել է՝ լուռ, գլուխդ կախ, տխուր երեսով, պէտք է հնազանդուիս ու ողջ գիշերն իւղեղէններ ու խմորեղէններ պատրաստող աղախինների կարգումը քարշ գաս։ Բայց չը կարծես, Արփիկ, թէ քո տըրտմութեան պատճառը հասկացող չը կայ, քեզ շըրջապատողները բոլորը զգում են ներսդ կատարուած ալեկոծութիւնն և կարեկցում են։

Փամբուխ խաթունն ամենից աւելի զգածուած էր. նրա սիրտը կտոր կտոր էր գալիս սիրելի դստեր տխրութիւնը տեսնելով, ուստի մօտ կանչեց և

յայտնեց, որ ինքն ու խնամի Մարիամ խաթունը խորհրդակցել են վաղը մի վերջին տեսութեան իրաւունք տալ նշանածներին։

Միամիտ կին, էլ չը կարծեց, թէ դորանով աւելի ամուրացրեց Արփիկի անհամբերութիւնը. խեղճի մի ոտքը թոնրատանն էր, միւսը դուրսը։ Շաբունակ համաստեղութեանն էր նայում. ինքը թէև հարստի աղջիկ էր, բայց ժամացոյցը փոքր քաղաքներումն ընդհանուր գործածութեան մէջ դեռ չէր մտել։ Իրաւ է, մի հատ բռնաչափ հաստ արծաթի ժամացոյց կար իրանց տանը՝ երեք պատեանների մէջ ամրափակած, բայց այդ միայն հօր հաստածալ գօտին էր ուռցնում. ո՛վ կը համարձակէր Սարգիս աղայից ժամերի որքանութիւնը հարցնելու։

Արփիկից աւելի ազատ էր Ղունկիանոսը։ Մարիամ խաթունն աւետաւոր լուրն իւր զաւակին նոյնպէս յայտնեց առաջի երեկոյին, և խնդրեց անկողին մտնել։

Որդին չըհակառակեց, հանուեց և պառկեց։

Մայր ու որդի խօսեցին, զրոյց տուին և դեռ երկար կըշարունակէին քաղցր խօսակցութիւնը, եթէ մէկին պաշարի պատրաստութիւնը չէր քաշել, իսկ միւսին՝ իւր թէ՝ քունը։

Երբ յօրանջոցն ու ճլմկոտոցը Ղունկիանոսի աչքերը փակեցին, տիկին Մարիամը զգուշութեամբ համբուրեց զաւակի ճակատը, խաչակնքեց նրան ու գնաց իւր գործին։

Ղունկիանոսը մօրը ճանաչում էր, գիտէր, որ մինչև մի քանի անգամ չէգայ, իրան ակը չէտայ, սիրտը չի հանգստանալ, ուստի մի ժամաչափ տեղումը տապ արեց՝ գլուխը վերմակի տակ կոխած, և երբ արդէն հաւաստիացաւ, որ մայրը միամտել է իւր կողմից, կարծելով թէ որդին խոր քնի մէջ է մտած, ինքը Ղունկիանոսը հագնուեց և սովորական պատանեաց կացաւ, իրան պարտէզը ձգեց։

Ոչ եղանակի քաղցրութիւնը, ոչ համաստեղութեան խաղերը, ոչ Արշալոյսի բոցը, ոչ թռչունների ու ծառերի համերգները, վերջապէս վերը նկարագրուած ոչ մի երկնային և երկրային տեսարանները նա չէր տեսաւ ու չէր լսեց. նրա համար յարմար էր ասել. աչք ունի, չի տեսնում, ականջ ունի, չի լսում, նա կաղամախի բունը գրկած՝ կանգնած է, նրա աչքերն անընդհատ սեւեռած են դէպի պարտիզի դռնակը, որտեղից ամեն անգամ դուրս էր գալիս Արփիկը։

Վերջ ի վերջոյ՝ արևի ճառագայթներն երբ լեռների գագաթները բռնեցին, դռնակը ճռռաց և *Ջուլբասի* քաղաքների խշշոցը լսուեց։

Ղունկիանոսը շարժուեց, նա կամեցաւ դիմաւորել նշանածին, բայց չկարողացաւ, ոտները մեխուել էին կանաչ խոտի վերայ, ձեռները փայտացել էին ծառի բներին փաթաթուած։

Ի՞նչ երկարացնեմ, ահա նա, որին ամբողջ գիշեր սպասում էր։

Նկաւ Արփիկը գլուխը խոնարհած, ձեռքերը սրտին դրած և անխօս կանգնեց նշանածից երկու քայլ հեռու։

Անտեղի էր, թէպէտ, նկարագրել վերջնական տեսակցութեան մանրամասնութիւնները, բայց մաքուր սիրտը, մաքուր խիղճն ուժմնից սէտք է երկիւղ կրի, ինչ թագցնելիք ունեն նրանք։

Ղունկիանոսը յաղթեց արգելքներին, ծառը թողեց, մի քայլ յառաջեց, և խոր հառաչեց ու սուս կացաւ։

—Այսօր գնում ես, այո՞, այնպէս չէ՞, առաջինը բերանը բաց արեց Արփիկը։

—Հայրս է ուղարկում։

—Լսել եմ, իմ հայրն էլ։

—Չա՛, քո հայրն ու իմ հայրը միասին են վճռել։

—Ուրեմն Աստուած հետդ, բարով երթաս, բարով գաս... բայց այդ ինչ է փէշիդ մէջ։

Ղունկիանոսը խոտի վերայ դարսեց մի քանի գիրք։

—Ո՛ր համար եմ բերել, լաւ տեղերը նշանուած են կապարէ գրչով, ասաց տղան, այս թղթերն էլ գրելու համար են, աշխատիր լաւ կարդալ-գրել սովորիս ու ինձ նամակ գրես. շուտ-շուտ գրի՛ր, երկար գրի, ամեն բան գրի. գիտես, երեք տարով եմ գնում, երեք տարին երեք օր չէ, օտարութեան մէջ առանց քեզ ինչպէս պէտք է համբերեմ, Արփիկս։

Ղունկիանոսը չկարողացաւ շարունակել, արտասուքն իրան խեղդեց։

Արփիկին մի առիթ էր հարկաւոր, նա՝ վաղուց ոչ սակաւ յուզուած էր, խոր ախ քաշեց ու քթածակերից փղձկանքը դուրս փնչացրեց։

Ղունկիանոսի ձեռքերն ինքնաբերաբար տարածուեցին դէպի սիրելին, աղջիկն իւր կողմից տեղիք տուեց բնական հակումին, նա ընկաւ փեսայացուի գիրկը։

Փարուել են կանգնած տեղը մխեանց պարանոցով և հեծկլտում են, ուզում են խօսքեր արտասանել, բայց թառանչքից՝ բառերը կոկորդների մէջ մաս-մաս են լինում, ինչպէս նորուս մանուկները վանկեր են հեգում, սրտերի տրոփմունքի հետ՝ միայն շրթունքներն են բաց ու խուփ լինում և իրար հանդիպում։

Նշանածներն իրանք չըհասկացան, թէ որքան ժամանակ՝ ինքնամոռացութիւնն երկարատև եղաւ. առաջին պատահումից ցայսօր՝ առանձնատեսութիւնները յաճախ էին կատարուել, բայց շրթնահանդիպումն առաջինն էր տեղի ունենում. համարձակ կարելի է պնդել, որ մինչև օրս նրանց տեսակցութիւնները մանկական բնատրութիւն էին կրում, իսկ այսօր պատանիների մէջ մի հոգեխառնութիւն կատարուեց. բարոյ և չարի գիտութեան ծառի պտուղը ճաշակած նախամօր գիտակցութեամբ՝ նրանց աչքերը բացուեցին և հիմի միայն զգացին,

որ իրանց մօտեցնողը սէրն է, որ իրանք հոգւոյ ամենայն նրբութեամբ սիրահարուած են։

Այս րոպէին Ղունկիանոսը տարփածու տպաւորութեան չէր. նա բնութեան գեղեցկութիւնների վառ սիրահար, մի քաջարուեստ նկարիչ էր, որ. դաշտ, տափ, ձոր, անտառ ոտնատակ էր տուել՝ երկնքի ամենագեղեցիկ կէտը գտնելու և կտաւի վերայ անմահացնելու՝ և ահա նա հասել է իւր փափագին։

Արդարև, պարզ երկնքի մանրանկարն էր այս վայրկենին Արփիկի հրաշագեղ դէմքը։ Նրա չորս մատնաչափ լայնութեամբ ճակատը մի ամենապայծառ շերտ էր՝ երկու վերջաւորութեամբ երկայնացած դէպի հորիզոնի երկու հակադիր ծայրերը. կամարանման թանձր յօնքերն երկու ծիածանիկներ էին, որ թխութեան մէջ ևս փայլում էին՝ ինչպէս սև ներկուած և խնամքով յղկուած հայելու շրջանակ. երկու կրակոտ, խոշոր և ծիծաղկոտ աչքերն երկու *արփիկներ*, կամ արեգակիկներ էին, որոնք իւրեանց երկայն ճառագայթներով—խիտ արտևանունքի սուր ծայրերով գրգռել են մեր նկարչի հոգւոյ նեարդներն և ելեքտրական հոսանքի աւիւնը նրա սրտի խորքն են լցրել. երկու կարմրաժեռ այտերն երկնքի ամենաջինջ տեղերն էին, որոնց վերայ ամենանուրբ, ամենաթափանցիկ ամպի կարմրագոյն մի շղարշ է քաշած, իսկ այդ շղարշի տակից՝ սուսուօտեան վարդակարմիր արևի ճառագայթների շնորհիւ՝ խորամուխ՝ աչքերը նկատում են երկնքի գիշերային զար-

դարանքները՝ այն բիւրաւոր աստղերը, որոնք թէև արեգակի լուսոյ մէջ՝ մեզ թւոյմ են, թէ անհետացել են, բայց նրանք սովորական աչքի համար անտեսանելի խաղում են երկնքի հաստատութեան վերայ։ Նմանօրինակ՝ Արփիկի կենսատու այտերի թափանցիկ մորթի տակից երևում էր նեբսը կատարող վարդագոյն արեան շրջանառութիւնը. նորա փոքրիկ բերանն Արարչի ամենամեծ տաճարի դէպի կեանք տանող դուռն է, որի աջ ու ձախ շեմքերին—երկու քնքոյշ շրթունքներին՝ հոգետուչը համբոյր է տալիս մեր ջերմեռանդ ուխտաւորը. կիսաբոլորակ փոքրիկ ծնօտը լեռան մի կտոր է, որ հորիզոնից մի պզտիկ տեղ է խլել ու ներս խցկուել բոլորակ երկնքի միակերպ ամբողջութեան գեղեցկութիւնը կատարեալ անելու. նրա փոքրիկ քթի ծայրը՝ սակաւ ինչ դէպի շրթունքը կորացած՝ մի ամպի կտոր է, որ յայտնի չէ, թէ ո՞ր քամին է կտրել և փախցրել կուտակուած ամպերի ամբողջութիւնից և կանգնացրել եթերային ջինջ տարածութեան վերայ, ոչ թէ նորա պարզութիւնը պղտորելու, այլ գեղահրաշ տեսարանի գեղն աւելի բազմակողմանի անելու։

Այո՛, Արփիկի սիրուն պատկերին երկնքի համեմատութիւնից աւելի ուրիշ յարմար նմանութիւն չէը կարելի տալ, իսկ այդ պատկերն անջինջ կերպաւորուեց Ղուննկիանոսի մտակտաւի վերայ, ինչպես և վերջինիս առնացի գեղեցիկ դէմքը պարարեց Արփիկի սիրտն ու հոգին։

—Ես ինչ կանեմ առանց քեզ, մինչև վերադառնալդ կըմեռնեմ, մըմնջաց վերջապես Աբփիկը։

—Կուզես՝ չըգնամ, ինչ պետք է անեն, շատ որ նեղեն, քեզ կառնեմ՝ սարերը կըննկնեմ։

—Կըգամ, աշխարհի մինչև միւս ծայրը ղուլիդ (ծառայ) պէս ուր քարշ տաս, ետևիդ կըվազեմ, բայց աւելի լաւ չէը՝ սրտապնդուէինք ու համբերէինք։

—Կարող ես դիմանալ։

—Կըմեռնէի, չէի տանիլ, եթէ առաջուայ պէս կարդալ գրել չիմանայի, բայց չէ որ դու ինձ գործ ես յանձնում, բերած գրքերդ շարունակ կը կարդամ, միշտ քեզ նամակ կըգրեմ։

—Այն ինչ երջանիկ րոպէ կըլինի, որ քո նամակդ ստանամ։

—Դեռ ևս, դու պետք է ինձ տեղդ ու հասցէդ յայտնես։

—Գնացած օրս չեմ մոռնացնիլ։

—Վախում եմ՝ մեր ծնողները իմանան ու արգելեն։

—Ոչինչ չեն իմանալ, արդէն գործը կարգի դրած է. իմ նամակներս քեզ կըբերէ իմ ընկեր Գառնիկի քոյրը, որ քո տիկնախաղի ընկերն է, քո նամակները ևս նրա եղբօր միջնորդութեամբ ինձ կըհասնի։ Վաննեցիք սովորաբար իջևանում են Գառնիկենց *խանի* (պանդոկ) մէջ։ Պանդոկապետի ձեռքով մեր թղթակցութիւնն անընդհատ կըշարունակ-

ուի, ասաց Ղունկիանոսն և մի երկարատև համբոյր փակեց երկուսի բերանը:

Լաւ էր, որ երկարատև եղաւ սիրոյ վերջին առհաւատչեան, ըստորում Սեղբոս աղայի կոչի ձայնը թուլացրեց սիրեկանների բազուկները և անպատրաստ գողերի նման մէկին աջ՝ միւսին ձախ փախցրեց:

Ը.

Մեծ չէր Վարագայ առաքեալի կաթսայը. մի թխամօրուք կարճահասակ աբեղայ, իր անբաժան սպասաւորը, վեց ապագայ դպրոցական տաներ, ձիապան վարձուորները, մի վանքի ձիաւոր ծառայ, որ *ղլաւուզի* (ուղեցոյց) դեր էր կատարում և մի ուրիշ պատանի, որ իւր տարօրինակ վարմունքով շարժել էր ամենքի նախ՝ կարեկցութիւնը, ապա՝ զարմանքը, վերջը՝ բարկութիւնը:

Սա նոյնպէս Վարագեան ճեմերի կարգը մրտնելու էր վերջրած, բայց դեռ տեղ չըհասած՝ ուղևոր խմբի մտածութեան առարկան՝ և խմբապետ հայը սուրբին գլխացաւանք էր դարձել:

Ձանապարհորդները ուղղակի չեն դիմում դէպի իւրեանց վերջնական կէտ նպատակին. նրանք օրական մի գիւղ, մի քաղաք, մի աւան հանդիպում են, ամեն տեղ մի օր, երկու օր հանգիստ են առնում, նոր աշակերտները ճարելու են հետամուտ

լինում, խօսում են, հետաքրքրուում են, պատմում են, իշևանում են, բայց այս ամեն նորանոր արկածքները, այսքան անճանօթ տեղերը, դալարազարճ մարգերը, սրընթաց ու յամրաքայլ գետերն ու գետակները, բնութեան անթիւ փոփոխութիւնները, ճանապարհի երկիւղն ու ապահովութիւնը, վերջապէս ճանապարհին տեղի ունեցած այլ և այլ դիպուածքները—ոչ մինը, ոչ մինը լիշեալ պատանու համար չեն, խմբի մէջ նրա ներկայութիւնն աննկատելի է։

Ձիաւոր խումբը ծանր է շարժուում. իւրաքանչիւր անդամ բեռն իւր ձիուն բարձած՝ սանձը թոյլ է թողել և խելացի գրաստին ազատութիւն է տուել՝ իւր միակերպ քայլերով հեռուից ղաւուզին հետևելու։

Կարաւանի ձին իւր քայլելու եղանակն ունի. քշիր, սաստիր, մտրակիր, կրնկիր, նա իւր ընթացքը չի փոխիլ. նա քեզ չի լսիլ. նրա աչքը կարապետող ուղեցոյցի ձիուն է տնկած, իսկ ականջն իւր ետևից ոտքով եկող ձիապանի հրամանին է սպասում։

Կարաւանի գրաստները իրանք ճանաչում են *ղաւուզի* ձիու իմացականութեան առաւելութիւնն և գիտեն, որ եթէ հարկաւոր լինի սովորական ընթացքը փոխելու, ղաւուզի ձին իւր նշանը կըտայ, ականջները կըխլշացնի, գլուխը կըթափահարի, կը փռնգտայ, վտանգը մեծ եղած տեղն՝ առաջի ոտ-

քերով ծլունդ-ծլունդ կըլինի և կտիպի ամենքին շտապել, կամ հարկ եղած զգուշութիւնները ձեռք առնել։ Եւ ի հարկէ, այդպիսի միջոցներում՝ ձիապանը հանգիստ սրտով ետևից չի քարշ գալ, նա իւր կարգադրութիւնները կանի։ Էլ ինչ հարկ կայ կարաւանով գնացողին ընդհանուր կարգից դուրս գալ, յառաջ գնալ, յետ մնալ, իրան էլ նեղացնել՝ նստած ձիուն էլ։

Մեր կարաւանի մէջ ամէնքը հեծեալները են՝ բացի մէկից, որին յատկացրած ձիու վերայ՝ վարձողի փոխարէն՝ ձիապաններն են կարգով հեծնում և *ողորմի տալիս ղաւուզից* անբաժան ոտքով գնացող երիտասարդի ետևը պորտին, որ ձի չընտելով՝ միջոց է տուել սրանց դէպքից օգտուելու։

Ոչ վարդապետը, ոչ ղաւուզը, ոչ կարաւանի շարժուելու, կանգնելու, իջնելու, հեծնելու ընդհանուր կառավարիչն է, չըկարողացան յորդորանքով, յանդիմանանքով, սպառնանքով ստիպել հետևակ անձնաւորութեանը ձի նստելու։

Նա ոչ պատասխան է տալիս, ոչ գլուխ է բարձրացնում, ոչ աչ ու ձախ է նայում, այլ միայն աշխատում է ղաւուզից յետ չըմնալ. ղաւուզը կանգնեց՝ նա կանգնում է, գնաց՝ գնում է։

Անձրև, արև, կարկուտ, փոթորիկ, որոնք ճանապարհորդներին ծածկուելու, բացուելու, զգուշանալու հոգսերի մէջ են դնում, պատանի հետևակի վերայ ոչինչ փոփոխութիւն չեն անում։ Ամէն

պատրաստուβիւն նախատեսուած է, նրա բեռի մէջ ճանապարհորդի անհրաժեշտ բոլոր պիտոյքները դրուած են, բայց նա ոչ մէկին չի մօտենում. ինչ հագուստով հայրական տանից դուրս է եկել, նրանով իւր ուղին շարունակում է։ Իւր համար դրուած առատ պաշարի համն անգամ չի տեսել. առաջին օրից իւր ուսած տոպած պայուսակը թեթևացնելու, իւր պաշարն սպառելու իրաւունքը նա տուեց ձիապաններին և չուզեցաւ իմանալ, թէ ինչ գնաց, ինչ մնաց, կերռւել է բոլորը, թէ խուրջի անկիւններումն իւր համար իւղահացերի, խմորեղէնների, հաւերի ու խաշած մսերի մի աննշան կտորը մնացել է։ Տանից դուրս եկած օրից՝ նա իւր իրեղէններին մօտ չէր գնացել։ Նա մտքումը դրել էր ղաւուզի ձիուց չբհեռանալ։

Հէնց որ կարաւանն իջևանում էր՝ նրա առաջին գործն էր լինում գիտել, թէ ղաւուզն ուր է կապում իւր ձին, կամ ուր է դնում իւր ծանրութիւնները, և նա գնում էր դէպի այն կողմը, նստում էր առանձին և աչքերը ղաւուզի ձիու վերայ տնկում։ Մի տիրասէր զգաստ շուն էր սա ղաւուզի համար։ Նոյնն անում էր նա և իջևաններումը. նրա հանգստանալու տեղն էր ղաւուզի ձիու մսուրքի առաջը։ Ո՛ւմ պարտքն էր, ուրեմն, այսպիսի հաւատարիմ շան հոգսը քաշել, եթէ ոչ՝ ղաւուզի։ Բայց ղաւուզն ինչ անի, մի կտոր ցամաք հաց է բերում, մօտն է դնում ու հեռանում

կուզի ուտի՝ կուզի աւելորդը ձիուն ուտացնի։ Ընչմով է մեղաւոր ղլաուզը. նա սկզբներումն ունեցած ամեն տեսակ պաշարեղէնից բաժին էր բերում վայրենի պատանուն, բայց սա բացի մի կտոր հացից՝ ամեն ինչ յետ էր շպրտում։ Եւ իրաւամբ, եթէ պատանին կամենար անուշ կերակուրներ ուտել, իրանն ընչի՞ կրվատնէր, ոմ պայուսակումը կարող էր մօր ու զոքանչի պատրաստած պաշարից համեղը գտնուիլ, որոնց ոչ մէկի համը չի տեսել մեր գիժ Ղունկիանոսը։

Սա էր ահա Խրիմեանի առաքեալի գլխին ցաւ եղած պատանին։

Տանից դուրս են եկել, նա ոչ ձի է հեծել, ոչ մէկի հետ շրթունքներն է շարժել և ոչ բացի ղլաուզի տուած չոր հացից՝ ուրիշ բան է կերել։

Բայց այսպէս չէ. նա ուտում էր և կուշտ էր. նրա քիմքը քաղցրացնող իւղահացի նման համեղն աշխարհիս ամենալաւ խոհարարը դեռ չի պատրաստել։

Մի փոքրիկ իւղահաց էր այն, որ նուիրական առաւօտն Արփիկն իւր ձեռքով նրա ծոցն էր դրել՝ ասելով. ինքս եմ իմ ձեռքով բացել, նաշխել և թխել։

Այս իւղահացն էր, որից ամեն առաւօտ մի փոքրիկ կտոր ատամով կտրում էր Ղունկիանոսը. և նա արդէն իրան կուշտ էր համարում։

Ձղջացել էր անշուշտ վարդապետն այսպիսի „աղէմաղաոշմազին“ (մարդամէջ չըմտնողին) ընդունելու համար, բայց չէր կարող չըվերցնել, նախ՝

որ յանձնարարողը Մ. էֆէնդին էր և երկրորդ՝ որ Վարագեան սաները բոլորեքեան ձրիաթոշակ էին, իսկ սա միայն էր բացառութիւն։

Աբեղան մի քանի դժուարութիւնները յառաջ բերեց Ղուկիանոսին ընդունելու ժամանակ. հասակն ամենայարգելի արգելքն էր. արդէն 17 տարու կէսն անցել էր և վերին շրջունքը մազակալել էր, բայց Մ. էֆէնդու մէջնորդութիւնը և Սարգիս ու Սեդրոս աղաներից ստացած առատ աջահամբուրը բացել էին Ղուկիանոսի համար Վարագի դռները։

Հիմա տեսանք, թէ ինչպէս էր գնում Ղուկիանոսն Արփիկից այնքան անակնկալ բաժանուելից յետոյ. նրա լեզուն ծակն էր մտել. ճանապարհի մեծ բաժինն անցել էին, և դեռ չէր բացուել։

Հայրն ու անեը մի քանի խրատներ տուին, հարցմունքներ արին, բայց խոնարհ երկրպագութիւնով, կամ գլխի վեր ու վայր, աջ ու ձախ շարժմունքներով հարցերին պատասխան էր տալիս. մայրըն ու զոքանչն էլ շատ աշխատեցին, բայց նրա բերանի փականքը յետ բաց անել չկարողացան։

Մայրը քարշեց նրան առանձին անկիւն, ստիպեց, խնդրեց, լաց եղաւ, կրծքին սեղմեց, թախանձեց, որ մի խօսք ասի, բայց Ղուկիանոսը լռեց ու մնաց։ Վերջը մօր աղիողորմ արտասուքները նրա բերանից մի բառ միայն կորզեցին։—Լաւ։ Այս էր մօր աղերսախառն պահանջի միակ պատասխանը։

—Խօսք տուր, խնդրում էր Մարիամ-խաթու-

նը, որ դու մինչև երեք տարին այնտեղ կըմնաս, հոգս չես անիլ, մեզ չես մոռանալ և ուսմանդ կը հետևիս։

—Ո՛չ մի պատասխան։

—Աստ, սիրելի Ղուննկի՛, կըկատարես իմ խընդիրս, այնպես չէ՞։

Տղան գլխով էր միայն համաձայնութիւն յայտնում։

—Ո՛չ, ոչ, մինչև լեզուդ չըշարժես, գո՛նէ մի բառ չարտասանես, կըմեռնեմ ու դուրս չեմ թողնիլ, ասում է և լալով որդու գլուխը կրծքին սեղմում մայրը։

—Աստ, թէ չէ կըմեռնեմ, հիմի ոտքիդ տակ հոգիս տալիս եմ, կըկատարես աստծներս, դարդ չես անիլ, լա՛ւ կըսովորես, յետ չես գալ. հա՞։

—Լա՛ւ։

—Ինձ չես մոռանալ։

—Լա՛ւ։

—Սուրբ Տիրամայր Մարիամը քեզ օգնակ՛ն, Վարագի սուրբ Նշանը քեզ պահապա՛ն, ասաց մայրը ու իրան չըկարողացաւ պահել, ուժասպառ գետին փռուեց։

Այս ժամանակն էր, որ հօր ձայնը կրկին կանչեց որդուն և ստիպեց շտապել։

Ղուննկիանոսի բազուկները թուլացան, մօրը թողեց աղախիններուն գրկին ու յետ-յետ նայելով փուլթաց հօր հրամանը կատարելու։

Բարեբաղդօրէն, տան շեմքից դեռ դուրս չը

գնացած՝ տեսաւ մօր ուշքի գալը, սիրտը փոքը հանդարտուեց, գնաց հօր ուսերոջ ձեռքը համբուրեց և իւր համար պատրաստած ձին թողած՝ ոտքով ուղի ընկաւ։

Հայրը քանիցս ետևիցը ձայն տուեց, հրամայեց ձին հեծնել, բայց Դունկիանոսը չլսել ձևացրեց ու խոտորափողոցի ծռանցումը հօր աչքերից ծածկուեց։

—Վնաս չունի, թող քիչ տեղ ոտքով քալէ, քաղաքից դուրս գանք՝ ես կընստացնեմ, ապահովացրեց վարդապետը, բայց մենք տեսանք, որ իւր խոստումն իրագործել չկարողացաւ։

Վարագ մտաւ Գաւազեանը հետևակ։

Թ.

Արևի վերջին ճառագայթները դեռ չէին անհետացել սարերի երկնախառն բարձունքներից, որ կարաւանը ներս մտաւ Վարագայ վանքի պարիսպը։

Վանքի միաբանութիւնը նոր էր աւարտել երեկոյեան ժամերգութիւնը։ Նրանք դեռ չէին ցրուել իրանց մենարանները. խումբ խումբ այս ու այն տեղ կիտուած՝ ասում էին, խօսում էին, դատում էին, անմեղ զուարճութիւնները, սրախօսութիւնները ու բամբասանքները էին անում։

Պարզ ու զով երեկոյ էր, մարդի սիրտ չէր տալիս տուն մտնել։

Եթէ մի քանի տարի յառաջ մտնէինք Վարագ, այսքան բազմութիւնի չէինք հանդիպիլ. ընդ ամէ-

նը հինգ վեց հօտաղ էին, երկու երեք ոտ ու ձեռքից ընկած վանքի հացով կեանքներն անցկացնելու դատապարտուած ծերունիք, մի Ս. վարդապետ միաբան և դրանց բոլորին կառավարող վերակացուն՝ Թալի (գիժ) կոչուած Սարգիսը։

Բայց այսօր հաւաքուել են Վարագումը մի քանի վարդապետ, երկու երեք այլի քահանայ, ե-րիտասարդ աշխարհականները, սարկաւագները, դպիր-ները, մշակները, գործող ձեռքեր և վերջ ի վերջոյ՝ 40—50 աշակերտ։

Սրանց ամէնքին համախմբել էր Խրիմեան Հայրիկը՝ ոմանց դպրոցական գործը յանձնելու, ուրիշ-ներին տնտեսական հոգսերը վարելու, մի քանիսին ժամ ասելու, աղօթք անելու և այլն։

Ահա այս բազմութիւնն էր, որ ժամից յետոյ ազատ օդ էր շնչում վանքի բակումը։

Եթէ չը հաշուենք հօտաղ մշակներին, երեկո-յեան սեղանի պատրաստութիւն տեսնող խոհարա-րին; սեղանապետներին ու այլ և այլ գործերով բա-ցակայող միաբանակիցներին, եթէ սրանց չը հա-շուենք, ասում եմ, ներկայ ընթրանքով զուարճա-ցողներն երեք խմբակի էին բաժանուած։

Ի հարկ է մարդահաշուում չենք առնում այդ կարգումն և աշակերտներին։

Անմեղ մանուկները հեռուումն իրանց հնա-րած «Քուրդ ու Հայ» անունով խաղովն են պա-րապած. գիւղ են դառնում, ոչխար ու հովիւ են

ձևանում, դիւղ են աւերում, հօտ են յափշտակում, ծեծում՝ ծեծկուռւմ են, յաղթուռթիւնն սկզբում դրդի կողմն է լինում, վերջը Հայկն է վիճակուռւմ և այլն։

Խմբերի բաժանուածները զուտ միաբանուռթիւնն է, որոնց խօսակցուռթիւններին արժէ ունկընդիր լինել։

Խմբակներից մինն անմեղ սրախօսուռթիւններով էր պարապած, դրանք էին ծերուռնի մահտեսիները և ժամկոչը, որոնք շրջապատել էին իրանց նման մի հնադարեան երկարաքղանց տիրացուի և զարմանում, թէ ինչպէս նա մի շնչում ասում է Սաղմոսի եօթն անայր տները։

Տիրացուին ընդդիմախօսում և գերազանցում է մահտեսիներից մէկը. նա ընդհանուր հարց է առաջարկում և ոչ ոք չի կարողանում գտնել, թէ Նարեկի մէջ *Աստուած* բառը քանի՛ անգամ ինչ հոլովով է կրկնած։ Վերջը ինքնուրաւական ազնիւ հպարտուռթեամբ մահտեսին ինքն է լուծում անլուծանելի խնդիրը։ Գնացէք, ասում է, Վանայ ծովի ափից մի բուռն աւազ վերցրէք ու մէկ մէկ համարեցէք, կը տեսնէք, որ Նարեկի ,,Աստուած'' բառերի թիւը հաւասար է աւազի հատիկներին։

Ամէնքը ծիծաղում և հաւանում են յաջող սրախօսուռթիւնը։

Այդտեղ ժամկոչի ինքնասիրուռթիւնն է գըրգռռւում. նա երեք ոտք չափում է գետնի վերայ

և ասում. ոտքս կոխած տեղն աշխարհիս կեդրոնն է, չըհաւատացողը թող չափի։

Սա էս արժանանում է խրախուսանքի։ Ընդհանրապէս՝ այս խմբի գրոյցները բուն վանքական հին միաբանութեան զուարճախօսութիւններ էին։

Լուրջ ուշադրութեան արժանի կարևոր խընդրով էր զբաղուած երկրորդ խմբակը։

Սրանք ընդամենը հինգ հոգի են, քաշուել են մի հեռու անկիւն և փոքրիկ շրջան կազմած՝ շատ ցած ձայնով խորհրդակցում են, այնքան ցած՝ որ իրանց ասածը միայն իրանք են լսում։

Սրանցից ամենից աւագը Վարագայ հին միաբան Ս. վարդապետն է, երկրորդը՝ նրա ժամանակակից Դալի Սարգիսը, որը թէև Խրիմեանի վանահայրութեան պաշտօն առնելուց յետոյ հեռացել է Վարագից և Վանումն է ապրում, բայց սիրտը չի դիմանում քաղաքումը մնալ՝ յաճախ գալիս գնում է, իւր բարեկամներին այցելում է։ Երրորդը՝ մի այլ քահանայ է՝ Խրիմեանի օրով միաբանակցութեան խոստում արած։ Չորրորդը՝ մի սարկաւագ է՝ նոյնպէս Խրիմեանի բերած, իսկ հինգերորդը մի ուսահայ երիտասարդ է՝ Խրիմեանի հետ Թիֆլիզից ուսանելու մտքով եկած։

Առաջինը խօսել սկսեց Դալի Սարգիսը.

—Գիտէք, բարեկամք, մեր մէջ բացի ինձանից և Ս. Հայր սուրբից՝ դուք երեքդ նոր մարդիկ էք՝ մեր վանքի ներքին և արտաքին հանգամանք-

ներին անճանօթ։ Անատօլիայի բոլոր վանքերի մէջ սուրբ Կարապետ, Աղթամարն ու մի երկու ուրիշ վանք չը հաշուած՝ մնացածներից հարուստը մեր Վարագն է. իմ օրովս վանքի բոլոր միաբանութիւնը՝ սկսած Ս. հայր սուրբից մինչև վերջին. մշակը՝ լիուքեան մէջ էին։ Իսկ հիմա քանի այս մարդն եկել է (խօսքը Խրիմեանի մասին է), ում աչքն է փարայ տեսել։

—Ո՛րտեղից պէտք է տեսնենք, եղբա՛րք, շարունակեց Ս. Վարդապետը, մեր Սարգսի վերակացուքեան ժամանակ՝ ունէինք չունէինք՝ մի Սարգիս էր ու ես. սա վերցնում էր, ես վերցնում էի. հիմի հարիւր հոգի ատամնաւոր են. սրանց կերցրածը բաւական չէը՝ մի կողմից էլ դպրոց է շինել, ծծկեր մանուկներն է մէջը ժողովել. այդ էլ քիչ էր՝ այն սատանայի մեքենայ տպարանի մամուլն է տուն ձգել, անհամ ու անալի թղթեր է մրոտում, *Արծուի Վասպուրական* անուն է տուել ու աշխարհը տարածում։ Այսքան զուր և ւեղլորդ ծախքերին ստակ կը դիմանայ։

—Ինձ համար անհասկանալի է, խօսեց քահանան, վանքին դպրոցն ընչո՞ւն է պէտք. Պօլսից սկըսած՝ մինչև սուրբ Կարապետ դպրոց կայ, Աղթամարայ հարուստ վանքումը դպրոց եղել է. այնտեղի կաթուղիկոսն ու իւր եպիսկոպոսներն ու վարդապետները դպրոց մտել են, տպարան տեսել են. մենք հոգևորականներ ենք, դպրոցի շեմք կոխել

ենք, Վարագ ո՛ւր, տպարանն ո՛ւր, Պօլիս ու Էջմիածին հերիք չէին եկեղեցական գրքեր տպելու համար...

—Ի՞նչպէս հերիք են, ջանմ, հեգնօրէն ընդհատեց Ս. վարդապետը՝ այսուհետև հոգևոր գրքեր հարկաւոր չեն, սուրբ գրքերը սատանայի հակառակ են. հիմա թագաւորութիւնը Բեհեղզեբուղինն է, նրա ճաշակի յարմար գրեանք են հարկաւոր, նրա ցանկութեան համաձայն զինուորները պէտք է պատրաստել և մեր Վարագն ամենից յարմար տեղն է։

—Ի՞նչ կարող ենք անել, հայր սո՛ւրբ, պատասխանեց սարկաւագը. այդ մարդն իր գործը շատ քաջ գիտէ, նա իր ոտքն ամուր հողի վերայ է հաստատել, նրա սիրաշահ լեզուն ու կեղծ և շինծու ազգասիրութիւնն իւր վահանն ու զրահն են, ողջ Տաճկահայքի սիրտը գողացել է՝ նրանց մանուկները որսալով։ Այս պարոնին հարցրէք՝ թէ ռուսահայերի մէջ քանի ժողովրդականութիւն է վաստակել։ Վաղը մի՛ւս օրը՝ տես՝ Տփխիսից Արծրունի Երեմիա աղէն որքա՛ն փող պէտք է ուղարկի. այս յարգելին աստւա՛մ է, որ 20000 մանեթի չափ ստորագրութիւն է եղել։ Հիմա Պօլիս աչք դարձրէք, այնտեղ իւր կողմն ունի քաշած Պատրիարքին, ամիրաներին, սահմանադրական վարչութիւնները, Քաղաքական և Ուսումնական ժողովները։ Սրան չը սիրողներն են միայն Կրօնական ժողովի փոքրամասնութեան սըրբազան անդամները, բայց սա ապահով է, որ նը-

ըանց խալֆոցի ծայրը բռնի է իրան ծակելու. սա իր գործն ամէն տեղ կարգի է դրել։ Ըստ իս՝ մենք կամ պէտք է համակերպինք Հայրիկին և կամ թողնենք ու հեռանանք։

—Շատ յուսահատ ես խօսում, սարկաւագ, խօսք առաւ ռուսաստանցին, նախ՝ ես թողլ չեմ տալիս, որ դուք այդ ինքնակոչ մարդին Հայրիկ անուանէք։ Խրիմեանի անհամեստութիւններից գլխաւորն այս է, որ ինքն իրան Հայրիկ ու Վասպուրական Արծուի է կոչել։ Թող ուրիշները քո արժանաւորութիւնների տեսնելով պատշաճաւոր տիտղոսը տան և ոչ թէ դու ինքդ քեզ այս ու այն կոչումը յատկացնես։ Այս թողունք, իմ կարծեօք, Խրիմեանի շէնքն աւազի վերայ է, նա իր բարձրութեան վերայ երկար չի կարող հաստատուն մնալ, շատ չի տևիլ՝ կը խախտուակուի, եթէ մինչև դուք նրան շրջապատողների կամենաք։

—Ի՞նչպէս, պարո՛ն, խօսքը խլեց Դալի Սարգիսը, այդ բերան չէ՝ տաճար է։ Խօսիր աղաչեմ, խօսիր։

—Սպասեցէք՝ Ռուսաստանում Խրիմեանին անուանարկելն ես ինձ վերայ եմ առնում. ես ինքս մէկն էի Տփխիսում դրա ճռճռան քարոզներով ոգևորուողներից. տեսնո՞ւմ էք՝ գործերս բոլոր թողի և եկայ, որ իրան աշակերտեմ, բայց երեք ամիս է գալս և ձեր պատմածներից հիասթափուեցի ու այսօր նրա ոխերիմ հակառակորդն եմ։ Մենք Խրի-

մեանին ուրիշ կերպով չենք կարող մրոտել, եթէ ոչ իւր աշակերտներին լաւ ուսումնասիրելով։ Մեր քաղդէց՝ իւր առաջին աշակերտների մէջ իրեն հաւատարիմները շատ ու շատ սակաւ են. ես գուշակում եմ, որ վերջը դրա անունին պակասութիւն բերողներն իւր այդ հասցրած պտուղներն են լինելու. վաղը միւս օրն այդ աշակերտներն իւրեանց վարդապետի պարզամտութիւնից օգուտ քաղելով, պէտք է ցրուեն Տաճկահայաստան և Ռուսահայաստան և ժողովրդին տզրկի պէս ծծեն, խաբեն, խարդախութիւնները անեն ու մի անջնջելի սև բիծ Խրիմեանի անուան վերայ դրոշմելով՝ քաշուին հեռանան։ Ուրեմն մեր անելիքը լինելու է՝ խօսքով ու անստորագիր թղթերով գաւառների հռչակաւոր աղաների մէջ կասկածներ ծնեցնել, և Խրիմեանի ժողովրդականութիւնը կը փլչի։

—Մեզ յայտնի է, որ Վանայ մէջ կան մի քանի աղաներ, որ այսօր պատրաստ են Խրիմեանի արիւնը ծծել, մէջ մտաւ տէրտէրը։

—Աղթամարի վանքն էլ նրան հակառակ է, վրայ բերեց Դալի Սարգիսը։

—Այս մօտ տեղերն ուրեմն անձամբ պէտք է գործել, իսկ Պօլիս, վիճակներն և Ռուսաստան թղթերով, կրկնեց ռուսաստանցին։ Ես այս գիշեր մի քանի նամակներ կը պատրաստեմ Տփխիս, Շուշի, Երևան, Ալէքսանդրապօլ և ռուսահայ քաղաքները

ղրկելու, թող տէր Հայրն ու սարկաւագը Պօլսոյ թղթակցութիւնը յանձն առնուն, իսկ պարոն Սարգիսը Վանումը գործէ։

—Հապա 20000 մանէթը, որ Երեմիա աղէն ուղարկելու է, թողնեմ՞ք որ Խրիմեանի ձեռքն անցնի, լաւ չի՞ լինիլ, որ գրէք Արծրունուն իմ անունով ուղարկի՝ իբրև Վարագայ նախկին վանահօրը, խօսքը կտրեց Ս. վարդապետը. ես Խրիմեանից շատ լաւ գիտեմ վանքի պակասութիւնն ու կարիքը. եթէ այնպէս անէք, որ այն ստակն ես ստանամ, կարգովս կերդնում, որ քեզ անմասը չեմ թողնիլ։

—Հապա մենք մարդիկ չե՞նք, մենք քո կուսակիցները չե՞նք, որ միայն դրան բաժին կը հանես, միաբերան շեշտեցին Դալի Սարգիսը, տէրտէրն ու սարկաւագը։

—Պարոնը պանդուխտ է, մեզ մօտ մնալու չէ, իսկ դուք իմս էք և ինձ հետ միասին կը վայելէք ամէն բարիք, միամտացրեց վարդապետն և աւելացրեց. ուրեմն անելիքները՞ նչ պիտի լինի։

—Այն՝ որ ես վաղուանից Վանի մէջ կը տեսնեմ Խրիմեանի հակառակորդ Մ. աղային, Ս. բէգին և ուրիշներին. իսկ եթէ նրանց մասնակցութիւնը հեռի՞ք չէ, Աղթամար էլ կը հանդիպեմ, Պ. վարդապետին կը խօսիմ, բաւական է, որ Պ. վարդապետը մի երկու քրդի ցեղապետի նշանացի անի՝ և դրա արևը կը մթնի։

—Լաւ կը լինէը, որ Տաճկի պաշտօնականների

մէջ կասկածները ծնեցնելու հնարքները մտածուէը և Տէրութեան աչքումն անհաւատարիմ ճանաչուէը, այն ժամանակը մեր սլաքները ամէն կողմից շեշտուած կը լինէին։

—Էդ գործը կը թողնենք Վանայ աղաներին, մատնութիւն անելու մէջ նրանք վարժ են, հարազատ եղբօրը չեն խնայիլ, մանաւանդ՝ եթէ անձնական շահը աչքի առաջ ունենան։

—Եթէ այդպէս է, ի գո՛րծ և ի վրէ՛ժ. թշնամուն զինաթափ անելու է, քանի նրա ոյժը տկար է, երդուեցէք սիրելիք և սկսեցէք, իսկ ես կաղօթեմ և ձեզ յաջողութիւն կը խնդրեմ Վարդայ սուրբ Նշանից, ասաց վարդապետը։

—Մի գլխաւոր պայմանն էս, մեր երդման միւս կէտն էլ անշուշտ գաղտնապահութիւնը պիտի լինի։

—Մա՛հ դաւաճանին, գոչեցին ամէնքը, երդուում ենք սուրբ Նշանով, որ միասիրտ և միահոգի գործենք, թող սուրբ Նշանը պատժէ եռանդով չաշխատողին։

—Ամէ՛ն, եղիցի՛, եղիցի՛, եթէ իմ արժանաւոր օրհնութիւնս բաւական չէ, սանդարամետք ձեզ թև, թիկունք ու աջակից, օրհնեց վարդապետն և խումբը ցրուեց։

Վէպիս ծաւալից դուրս լինելով վերոգրեալ բաբեմիտներին հետևելն՝ այսքանը միայն բաւ է։

Ի ցաւ սրտանց, պէտք է աւելացնել, որ այս

մարդկանց բոլոր խորհուրդները, վերջը մի բուռը փոշու նման ոչնչացան, գաղտնագործութիւնը թէ-սէտ ճիւղաւորուեց Վանայ աղաների, Աղթամա-րայ ճգնաւորական խցիկների, ոսկու փայլով շլացող Տաճիկ պաշտօնակալների և շատերի մէջ, բայց դեռ չարմատակալած՝ Խրիմեանը հրաւիրուեց Գլակայ վանքի՝ հոչակաւոր *Մուրատատու* սուրբ Կարապե-տի վանքը կառավարելու:

Երրորդ խմբի մէջ կանգնած էր վանահայրը՝ դալթակղութեան գլխաւոր խնձորը, կռուաճաղիկը՝ ինքը Խրիմեան Հայրիկն, և շուրջն առած՝ երիտա-սարդ վարդապետներին, սարկաւագներին ու իւր նորահաստատ դպրոցի աւագ սաներին՝ հոգեբուղխ զգացմունքով, ոգևորիչ բացատրութեամբ ցուցամա-տով օդի մէջ Հայ աշխարհի արևելքն արևմտքի հետ ուսումով կապելու, կամ հիւսիսը հարաւին լուսաւորութեամբ սահմանակից անելու մակարդակն էր ծրագծում:

Իարձրահասակ, շիկամօրուք, քաղցրահայեաց մարդ էր այդ անձնաւորութիւնը, որին ամէնքը որդիական վստահութեամբ զանազան հարցեր ա-նել չէին քաշուում. և նա իւրաքանչիւրին իւր տարիքին, դէրքին և հասկացողութեան համեմատ պատասխաններով գոհացնում էր:

—Կարաւ՛անը, կարաւ՛անը, յանկարծ գոչեցին մանուկները և խաղը մոռացած՝ վազեցին դէպի վանքի դուռը:

—Կարաւանը, ահա եկաւ Ղ. հայր սուրբը, Հայրիկ, կրկնեց այս խմբի միջից մէկը։ Ամէնքն անհամբեր սպասում էին Հայրիկի պատուէրին։

—Սիրեմ զձեզ, փութացէք դիմաւորեցէք մեր նորեկներուն, որոնք Ղ. արիաջան հայր սուրբի ճանապարհորդութեան արդիւնքն են, տեսէք, ո՛րչափ ուրախ են մեր սիրելի մանկունք, ասաց ժպտալով Հայրիկը՝ և ինքն էլ նրանց ետևից շտապեց դէպի կարաւանը։

—Սիրեմ զքեզ, սիրելիդ իմ հայր Ղ., բարի գալուստդ, պատասխանեց Հայրիկը ճանապարհորդ աբեղայի խոնարհ ողջունին և համբուրեց ճակատը, երբ վերջինս Տաճկաստանի հայ վարդապետի սովորական գլխարկը հանած՝ մօտեցաւ համբուրել Հայրիկի աջը։

—Հապա՛, ճետե՛րս, դուք նոյնպէս գրկեցէք ձեր նոր եղբայրներին ու տարէք սեղան կերակրեցէք, անօթի են անշուշտ, չը մոռանաք նոյնպէս ձեր ձեռքով ձեր անճանօթ եղբարց համար հանգիստ անկողիններ պատրաստել։ Մի քիթ բոլորեքեան վեց են մեր նորեկ ձագուկները, հայր Ղ., դարձաւ Հայրիկը ուղևոր վարդապետին, որքան կը լիշեմ՝ քո նամակիդ մէջ եօթն էին լիշատակուած։

—Հիմակ և՛ս եօթն են, Հայրիկ, մէկը բոլոր ճանապարհը մեզ հոգեհան աներէն վերջ, այժմ կուզէ ձեզ անհանգստութիւն պատճառել, տնէն դուրս եկած ժամէն՝ ձի չը կարողացանք հեծցնել,

ընկերութեան մէջ չը յաջողեցանք խառնել, անտաշին մէկն է. ահա դրան ետև կանգնել է, ներս չի մտնիր։

—Օ՛ն ուրեմն, սիրելի՛ք ս, ձայն տուեց Հայրիկը մանուկներին, փութացէք գրկել ձեր միւս եղբօրը, որ կերևի ձի նստելու անսովոր՝ ստիպուած է եղերը հետևակ քայլելու և յոգնել՝ դադար կառնու պարսպէն դուրս՝ դրան ետև։

Երեխայքը նորեկներին թողին և դուրս վազեցին։

—Բարի գալուստդ, սիրելի եղբայր, մօտեցաւ աշակերտներից մինն անկիւնումը կանգնած պատանուն. բայց հարկադրուեց կրկին յետ ու յետ գնալ։ Օտարոտի պատանին աչքերն ոլորեց, դէմքը խոժոռեց, յօնքերը մթնացրեց և ձեռքը թափահարելով՝ նշան տուեց չըմօտենալ իրեն։

Բոլոր մանուկները շրթունքներն ուռցրին և մնացին որոշ հեռաւորութեան վերայ կանգնած. նրանք աչքի պոչով խռոված երեխայի պէս՝ խորթ հայեացք էին ձգել իւրեանց կոպիտ ապագայ ընկերի երեսին և սպասողական դիրք էին բռնել։

—Հայրի՛կ, սա ո՞վ է, որ մեզ մօտ չի թողում, թոթովեց մի ութ տարեկան մանուկ՝ վազելով և գրկելով պարսպի դռնից դուրս եկող Հայրիկին. էնպէս քիթ ու մռութ է արել՝ կարծես մեր մեծ կատուն է, որ մեր շան հետ կռուում է։

—Սխալ ես, Ռշտունիդ իմ Թէոդորո՛ս, դա ձեզ-

նէ չի խռոված, դա կուզէ իւր առաջին համբոյրը իրեն սիրող Հայրիկին տալ, այնպէս չէ՞, գառնո՛ւկս, Ասքանազեան Ռուբէն, ասաց Հայրիկն և մօտեցաւ դէպի Ղուննկիանոսը։

—Գողտրիկ անո՛ւն, ներդաշնակ կոչո՛ւմ, շատ յարմար անուանափոխութի՛ւն, ձայն ձայնի տուին մանուկները։

—Այո՛, սիրելի՛քս, թող այսուհետև Ասքանազեան Ռուբէն կոչուի ձեր նոր եղբայրակիցը, ասաց Հայրիկն և ձեռքը ձգեց դէպի Գաւազեանը։

Ղուննկիանոսը շտապաւ գլխարկը հանեց, չոքեց Հայրիկի առաջին և իրեն տարաճաճ աչը բըռնեց, երեք անգամ ջերմ համբուրեց, ճակատին դրեց։

—Ել վեր, սիրեմ զքե՛զ, Ասքանազեան Ռուբէնիկս, ձեռքով բարձրացրեց Գաւազեանին Հայրիկը։

—Իմ անունս Ասքանազեան Ռուբէն չէ, խոնարհութեամբ պատասխանեց պատանին, այլ Գաւազեան Ղուննկիանոս։

—Գաւազեան Ղուննկիանո՛ս մեզի համար վերջո՛ւնաւ և եղաւ Ասքանազեան Ռուբէն, սիրելի՛ս, դու մեզի համար նոր աշխարհ եկած մանուկ ես և մենք քեզ մեր աւազանի մէջ մկրտեցինք։ Ահա, մանուկնե՛ր, Վասպուրականի ճետե՛ր, ես առաջին համբոյրը կը դրոշմեմ մեր նոր ձագուկի ճակատին, դուք ևս սիրեցէ՛ք ու գրկեցէ՛ք ձեր եղբօրն և գո-

չեցէք. կեցցէ Ասքանազեան Ռուբէնն, մեր թշուառ հայրենիքի ապագայ յոյսերէն մէկը։

—Կեցցէ, ճչացին մանուկները ու կարգով համբուրեցին Ասքանազեան Ռուբէնի, կամ մի վերջին անգամ էլ ասենք, Գաւազեան Ղունկիանոսի հետ։

Ընկերների սրտալիր ընդունելութիւնն արդեօք, թէ Հայրիկի անկեղծ հայրական գգուանքը մի րոպէի մէջ մեղմեցին բերտ Ռուբէնի կամակորութիւնը՝ աւելորդ է առարկելը, ըստ որում ով է այն տարօրինակ Ադամորդին՝ ինչ ազգից ու կոչումից, ինչ հասակի ու հասկացողութեան կուզէ թող լինի, որի բնաւորութեան վայրագութիւնը կրակի տաքութեան ենթարկուած մեղրամոմի փափկութիւնը չըստանայ՝ Հայրիկի ժպտաճիճաղ հայեացքի անուշ տպաւորութեան ներքոյ։

Այդ բնաորոշ յատկութեանն ենթարկուեց իւր ուղեկիցների հանգստութիւնը թունաւորող Ռուբէնը։ Նա տարիներով նախաճանօթ սիրելի և մտերիմ ընկերի պէս՝ ամէն մէկի հարցին կարճ բաւականութիւն տալով՝ Վարագեան աշակերտների ուղեկցութեամբ մտաւ վանքի բակը և գնաց վանքի դուռը համբուրեց։

Այդ ժամանակն էր, որ փոքրիկ զանգակի ձայնն ամէնքին հրաւիրում էր ընթրիքի։

Մի քահանայ կամ քերեղան տաքտաք թանապուրը խիստ դուր եկաւ յոգնած ու քաղցած Ռուբէնին։

Ժ.

Քարից էր շինուած Ռուբէնը. քանի օր է ճանապարհ են գալիս, ուրիշները ձի նստելով յոգնել են, իսկ սա թբրև թե երկու քայլ չըլինի արած։

Հէնց որ մի քանի ընկերի հետ իրան յատկացրած սենեկի մէջ նկատեց կաղամարն ու գրիչը, էլ քունը չըտարաւ. անկողնի մէջ գլոր-գլոր էր գալիս. երբ բոլորեքեան քուն մտան, նա նստաւ տեղի մէջ, ծոցիցը հանեց թուղթը, ծնկան վրայ դրեց և գործի կացաւ։

Ի՞նչ էր անում.

—Ոչինչ. գրում էր, գրում՝ կրկին ջնջում, ջնջում էր ջնջում՝ դարձեալ գրում։

Ժամերը սահեցան, աքաղաղը կանչեց, բայց նա դեռ թղթի առաջին երեսը չէր շրջել։

Ե՞րբ կարող էր շրջել, այն ինչ մի տողի վրայ երկու ժամ էր մտածում, այն էլ չէր աւարտում, նորից ջնջում էր։

Ճշմարիտ, ցաւալի էր ողբմելու դրութիւնը, երևում էր, որ կամ իրանում շնորհք չըկար, կամ մոլորուած էր և խելապատակը խառնաշփոթուած։

Ռուբէնի բաղդից էր, որ սենեկակից ընկերները յոգնած էին և չէին նկատում նորա արած յիմարական շարժումները, ապա թե ոչ, աղմուկ կըբարձրացնէին, վարչութեանը կը յայտնէին որպէս

գի իրանց գլխին մի փորձանք չըհանդիպի «խելքը կորցրած ընկերից»։

Ուրիշ ինչ անուն կարելի է տալ մի մարդի, որ ողջ գիշերը թղթի ու գրչի հետ կռիւս է տըւել, մազերն է քաշքշել, ճակատով յաճախակի սեղեկի պատին հարուստ է տուել, իր միսն է ճմկլթել, ատամներն է կրճտեցրել, երեսն է ծամածռել ու զարհուրելի կնճիռները կուտակել ողորկ պատկերին։ Ո՞ր մինն ասեմ. կատարեալ ցնորուածի շարժումները էին, որ կատարում էր Ռուբէնը չորս հինգ ժամ շարունակ։

Հէր օրհնուածի գրածն եթէ կարդայիք, ամենայն կասկած կըփարատուէր, կասէիք՝ գիժ է՝ որ կայ։

—Իմ սիրելի Արփիկ... ես...

—Ոչ, ես չեղաւ, գրիչը թղթին էր զարկում Ռուբէնն ու գրած բառերի վրայ մի հաստ գիծ քաշում։ Բայց տառերն երևում էին, գրածը կարելի էր կարդալ. պէտք էր իսպառ անվերծանելի անել. և նա թաթախում էր գրիչը մելանի մէջ ու գիծը հաստացնում։

—Չեղաւ, գրերի ծայրերն երևում են...

Այժմ գծի վերայ է ուղղահայեաց խազեր քաշում, յետոյ կոր գծեր է խզմզում դէպի ալ, ապա դէպի ձախ է գրիչը տանում բերում։ Այդ էլ չի հաւանում, լուռ քիթ է թափ տալիս գրածին, գրչի ծայրով թուղթն է ծակում։

—Հը՛... հը... լաւ եղաւ, առ քեզ։

Իբր թէ, սիրտը հովացաւ, թշնամուցը վրէժն առաւ, հեգնական դէմք է շինում նա ու մի երկու րոպէ հանգիստ առնում։

Նորից լուրջ գծագրութիւնը նրա կերպարանքի վերայ նշմարուեց, ձեռքը ճակատին դրեց և փիլիսոփայական տրամախոհութեամբ գտաւ ցանկացածը և շտապաւ գրիչը խաղացրեց թղթի երեսին։

Երեք չորս բառ գրուեցին։ Ռուբէնը գոհ է իւր ստեղծագործական հանճարից, նա կարդում է, այսինքն՝ չի կարդում, այլ միայն շրթունքներն է շարժում.

—Հոգուոյս հատո՛ր Արփիկ...

—Հա՛, լաւ է, շատ ներդաշնակ է, բառերը շատ ողորկ դասաւորուած են, շշնչում է նա և պատրաստուում՝ նշանածին գրելիք նամակի սևագրութիւնն անելու։

Բայց արի տես, որ այս տողն էլ առաջինի վճակին մատնուեցաւ, չի՛ք դարձաւ։ Գծերն այժմ ոլոր մոլոր կռմաններ են կազմում։

Սակայն, ահա ընկերներն անկողնումը շարժուում են, առաւօտադէմ է, զարթնելու ժամանակն է, Ռուբէնին հարկաւոր է նշանածին տեղեկութիւն տալ իւր տեղ հասնելու մասին։

Ի՛նչ եղաւ՝ եղաւ, ի գո՛րծ ուրեմն։

Ռուբէնը ճմռտեց, ճմլեց բռան մէջ փոստայի լայնադիր թերթը, գրպանը կոխեց և ծոցից երկ-

ըարդ թերթը հանեց, շտապով երկու տող գրեց, նամակի ձևով ծալեց, մաճուցիկ հացի թերթիկով կնքեց և հասցէն գրեց։

Ր. քաղաք, հասցէ գէրս *խանչի* (պանդոկապետ) ձանճակերենց Գալուստին, որ իւր ձեռամբը յանձնեսցէ պանդոկատիրոջ որդի Գառնիկին, իսկ նա իւր քրոջ ձեռքով հասուցանէ ըստ պատկանելոյն, Աստուծով, ամէն։

Հասցէն միջի բովանդակութենից երկար էր, բայց ինչ պէտք է արած, խեղճը ողջ գիշերն աշխատել էր և այնքանն էր գրչի տակից դուրս բերել. «Վարագ ենք, Հայրիկն անունս փոխեց, այսուհետև Ղունկիանոս չեմ, այլ Ռուբէն Աստքանազեան. ողջ լեր ի տէր. ամէն։ Պատասխան կուզեմ»։

Աւաւօտեան ժամը նոր էր արձակուել, որ Հայրիկի խուցը մտաւ մի պատանի և մօտեցաւ, այն առաւ։

—Ինչ է, զաւակս, քաղցրութեամբ հարցրեց Հայրիկը։

Պատանին անխօս դրեց Հայրիկի տաւաջ մի նամակ և գլուխը կախեց։

Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛...

Եւ Հայրիկը չէր կարողանում ծիծաղը զսպել՝ քանի նամակի հասցէին էր նայում։

—Շատ բարի, սիրեմ գքեզ, թող քո առաջին նամակդ այսպէս անփոփոխ տեղ հասնի. երկրորդ

անգամին դու կանոնաւոր նամակ կուղարկես։ Նըշանաճիդ կըգրես՝ այնպէս չէ՞։

Պատանին չըպատասխանեց. նա ամօթխածութիւնից շառագունեց։

—Այդպէս սպասելու էր, ծնողիդ այս անգամ ես կըգրեմ, թող երկմիտ չըմնայ. այսօր իսկ քո նամակդ Վան կերթայ՝ փոստատարին յանձնելու։ Ռուբէնը հայրիկի աչը համբուրեց և դուրս եկաւ։

ԺԱ.

Փալչիկճեան Նշան պատուելին մեծ իրաւունք է ունեցել անհանգիստ լինելու, նա իւր փորացաւն իմացել է։ Առաջին իսկ շաբաթը՝ առաջին ոտնամուտին Ասքանազեան Ռուբէնը որոշեց իւր նախկին Պատուելու ուսումնարանի և Վարագայ դպրոցի մէջ եղած անհուն տարբերութեան անդունդը։ Զըկան այստեղ նորա տեսած ոչխարի մորթու կտորները, որ գետնին՝ հողէ յատակին փռուած՝ գորգի տեղ էին ծառայում. այսօրուայ տեսածն աշակերտական նստարաններով սեղաններ են, կանոնաւոր շարուած տախտակամածի վրայ։ Դասարանի անկիւններում ջրի կժեր, *ֆալախայ* ու պատժական մահակներ չեն ի ցոյց դրուած՝ աշակերտների ոտքերը խոցոտելու և սառը ջրով ծեծուողի սիրտն ու վերքերը զովացնելու. այստեղ մի անկիւնում մեծ գրատախտակն է կանգնացրած՝ կաւիճն ու սպունգը վերան պատրաստ։

Ա.յնտեղ՝ իր հայրենի քաղաքում՝ Փալչիկճեան Պատուելու դպրոցի պատերի վրայ խոշոր տառերով աշակերտաց պատիժների թիւն ու չափն էր որոշած. տակերին էլ մի տող առանձին բոլոր գրերով գատած էր. „*կարդա ու դողա*“. իսկ Վարդի դպրոցի պատերը զարդարուած էին աշխարհագրական քարտէսներով։ Փալչիկճեանի դպրոցի ճակատին բրերի վերայ մի դարակ էր ամրացրած, վրէն փայլում էր Նշան պատուելու ամենասիրելին՝ ապակեայ ղայլոնը։ Ձիշտ ժամը մի անգամ ղայլոնին փաթաթուած երեք գազաչափ կաշուեայ աղիքը յետ էր բացուում, փոքրիկ ունելիքով կրակը շարուում էր ղայլոնի գլխին և բազմացնուում Պատուելու առաջին։

—Եօօ՛ֆ... կեանք է, կեանք, աշխարհէս ինչ լուր է տանելու դէպի յաւիտենականութիւն ղայլոնի դառն ծխի անմահական ճաշակէն զուրկ տխմարը. ինքնաբաւական, սրտի հրճուանքով արտասանում էր Փալչիկճեանն և ղղլացնելով ծուխը ծծում։

Իսկ Վարագում՝ դպրոցի ճակատին, ղայլոնի փոխարէն տարածուած էր դպրոցի սանների ձեռքով նկարուած երեք գազաչափ մի քարտէս „*Հայաստան*“ խորագրով։

Վարագում քարտէսի ներքոյ դրուած են ուսուցչական սեղանն ու աթոռը և վրէն նստած դասախօսում է մի երիտասարդ վարդապետ կամ քահանայ, դուրս կանչելով և դաս հարցնելով ժպտածի-

ծաղ. դէմքով Գարեգնին, Գագիկին, Վահանին և միւս հայ կոչումով և հայ անունով աշակերտներին։ Իսկ Բ. քաղաքումը՝ նոյն տեղը՝ Փալչիկճեանի հազար կարկատաններով ծածկուած քառանկիւնի փոքրիկ մահիճն էր ձգած, որի վրան երկու ծնկով չոքել է ինքը Նշան պատուելին ու առջևը չոքացրել «լիրը, անգամ, *ատէփսիզ* (անամօթ), շունին զաւակ» Մարտիրոսին, Գրիգորին և ուրիշ» ծոյլ, անշնորհք, Աստուծոյ երեսէն ընկած» աշակերտներին։

Ոչ ոք Ասքանազեան Ռուբէնին վարագի դպրոցի անուանափոխութեան պատմութիւնը չէր արել, բայց հէնց առաջին իսկ օրն ինքը հասկացաւ Հայրիկի դպրոցումն ընդունուած կանոնը։ Անհրաժեշտ է, որ Խրիմեանի դպրոցը ոտք մուտք դնողը մոռանայ իւր հօր տանից հետը բերած կոչումն և նոր անուն ստանայ։

Տօնացոյցից քաղուած օտարազգի սրբերի անունները Հայրիկը թողում էր եկեղեցումն յիշատակելու, հարևան ազգերից ներմուծուած այլազգական կոչումները Հայրիկը վերադարձնում էր իւրեանց տէրերին։ Նրանց տեղը փոխարինում էին հայոց պատմութիւնից քաղուած զուտ հայկական անուններ ու մականուններ։

Առաջին իսկ շաբաթում Ռուբէնը զգաց, որ ինքն այլևս նախկին կոպիտ Ղուկիանոսը չէր, որն իւր կողմից օրական տասն անգամ պղտորում էր խեղճ Ծերունի Փալչիկճեանի արիւնը. այստեղ

իւր անտաշ և բիրտ բնաւորութիւնը մեղմացել և չքացել էր՝ ուսուցիչների սիրաժպիտ նայուածքից ու գրաւիչ խօսքերից։ Արդարև, բաղդը խնդուած է եղել Թշուառ Փալչիկճեանից. անպիտան չալ աշակերտները՝ մինը հէնց մեր չարաճճի Ղունկիանոսը, որ այսօր Ռուբէնն է փոխուել, հոգին բերանն էին բերում Պատուելուն ու ամբողջ ամսով մի երկու տուն շարականը կամ ժամագիրքը բերանացի չէին սերտում՝ չընալեցեալ՝ որ ի պատիժ՝ օրական 5—10 անգամ ֆալախայ էին ուտում։ Իսկ հիմա Թշուառական Ռուբէնը մի ժամի մէջ անմոռ տպաւորում է յիշողութեան տախտակի վերայ աշխարհագրութեան, պատմութեան, թուաբանական չափերի ու բնական գիտութեան և այլ առարկաների դժուարարտասանելի անուններն ու կանոնները։ Եկեղեցական երգեցողութեանց ու ընթերցմունքների համար յիշողութիւնն աւելորդ է, երեկոյ առաւօտ ընկերների հետ կարգով եկեղեցի յաճախելով՝ նա մի քանի օրից արդէն անգիր երգում էր և իւր քաղցր ձայնով ունկնդիրներին բաւականութիւն պարգևում։

Մի խօսքով՝ մեր Ասքանազեանը թէև ինքն էլ գիտէր, որ Փալչիկճեան Նշան պատուելու գովասանական մրցանակագրին արժանի չէր, իրեն էլ յայտնի էր, որ Փալչիկճեանի շողոքորթ աղուէսութեան արդիւնքն էր իւր մրցանակագիրը, բայց հիմի իւր սեպհական կարծիքն անձնականի վերաբե-

րուքեամբ՝ փոխուում է Վարագում. այստեղ նա գտնում է, որ շատ պակաս էին Փալչիկճեանի ներբողեաններն ու յառաջադիմութիւն արտայայտող բառերը. բանից դուրս է գալիս, որ Ռուբէնը մեծ ընդունակութեան տէր է եղել։ Նատ չքաշեց՝ նա առաջինների կարգն անցաւ և օրինակելի վարք ու բարքով ուսուցիչների, ընկերների և Հայրիկի սիրելին համարուեց, բոլոր միաբանութեան մէջ նա հռչակ ստացաւ։

—Ընչի՞ն պէտք է վերագրել իմ մէջ կատարուած անակընկալ փոփոխութիւնը, մտածում էր մի քանի գիշեր Ռուբէնը. Փալչիկճեանի վարժոցի ծոյլ, անընդունակ ու վայրագ Ղուկիանոսն՝ Վարագայ դպրոցի չանասէրը, յառաջադէմ ու հեզ Ռուբէնի եմ վերածուել։—Ո՛չ, իմ շնորհքը չէ, վճռեց նա, իմ ուղղուելովս պարտական եմ այստեղի ուղղութեանը։

Մի՛ւս օր իսկ՝ նա երկրորդ նամակը գրեց Սրփիկին՝ դեռ չըստացած առաջին ինքնուրոյն բարեւագրի պատասխանը։

„Սիրելի Սրփիկս, գրում է նա, ես չըգիտեմ, թէ՞նչ հանգամանք դրդեց մեր ծնողներին ինձ քեզանից բաժանել։ Այդտեղ քեզ ոչինչ չէի ասում՝ սիրտդ չըվշտացնելու համար, իսկ իմ մէջ անիծում էի այն ժամն և րոպէն, երբ ծագել էր մեր ծնողների մըտքումն ինձ հեռացնելու դիտաւորութիւնը, այդտեղ միշտ հայհոյում էի մեր հայրերին խորհուրդ տուողին. ձեր տանն իջած Մ. Էֆէնդին ձեռքս ընկնէը,

արիւնը կըխմէի. մօրս բերանից փախաւ մի խօսք, նորա ասելով՝ ինձ հեռացնելու գլխաւորը պատճառը, այդ Մ. էֆէնդին է եղել. իսկ այսօր օրական հինգ անգամ եմ աղօթում Մ. էֆէնդու համար, որ իւր տուած օգտակար խորհրդով կարողացել է երկու կոյրի մի անգամից աչքեր տալ։ Այո՛, իմ աննման Արփիկս, մենք կոյր էինք և Մ. էֆէնդին մեր առաջին բարերարն է, որ ինքնաբերաբար մեզ լուսաւորելու հոգսը քաշեց։ Դու առ այժմ չես հասկանալ, բայց շուտով քո առաջին կըպարզուի իմ ասածները. դու այսօրուանից օրհնիր, եթէ ինձ սիրում ես, Մ. էֆէնդու կեանքը։ Այս անգամ բաւ է. Քո Ռուբէնդ եմ։ Նամակ գրիր անպատճառ“։

ԺԲ.

Առաջին նամակը, որ Ռուբէնն ստացաւ իւր նշանածից, շատ կարճ էր, բայց համառօտութիւնն ինչ նշանակութիւն ունի. սիրահարի սրտին այդքանը բաւական էր՝ օտարութեան մէջ յարատեւելու համար։

Ահա, ինչ է գրում Արփիկը.—Շատ ուշացրի պատասխանդ, չեմ տեսնում, որ ծալքերով թղթերը մրոտելուց ու պատառոտելուց յետոյ՝ դեռ ևս վարժ ու գեղեցիկ չեմ կարողացել գրել։ Մասամբ դու նոյնպէս մեղաւոր էիր, մի շաբաթ քաշեց՝ մինչ նոր անունդ ու ազգանունդ կարդացի. ինչ անուշ ա-

նուն, բայց թող ուրիշների համար լինի Ասքանազեան Ռուբէն, ինձ համար ես Ռուբիկ, որպէս զի հետը ներդաշնակ հնչուի—Արփիկ։

Յ. Գ. այսօր ստացայ երկրորդ նամակդ. վաղը կը սկսեմ պատասխանը գրել, երբ կը վերջացնեմ՝ չը գիտեմ։

Երկրորդ նամակի պատասխանն Ռուբէնին զարմացրեց. կարճ միջոցում որքան յառաջադիմութիւն, տառերը մարգարտի նման շարուած էին միմեանց ետևից։

Արփիկը գրում է, որ ինքը գիտէր Ռուբէնին վարագ ուղարկելու հանգամանքը, բայց չէր կամենում նորա սիրտը ցաւացնել։ Նա խոստովանում է իւր մտաւոր կուրութիւնը և խոստանում է լուսաւորուել։ Նա Ռուբէնի հետ միաբան սիրով օրհնում է Մ. էֆէնդու կեանքն ևայլն։

Այսպիսով՝ նամակակցութիւնը նշանածների մէջ անդադար շարունակուում է և աստիճանաբար խըտանալով՝ ուրիշ կերպարանք է առնում. վարժապետ և աշակերտ զգալի յառաջադիմում էին և կատարելագործուում։ Ռուբէնը Վարագումն ուսման հետ և աշխարհայեցողութեան մէջ հսկայական քայլեր անելով՝ նոյնը դասաւանդում էր նամակների միջոցաւ իւր ապագայ լծակցին։

Որչափ ուրախ եղաւ Ասքանազեանը, երբ մի օր կարդաց Արփիկի գրած հետևեալ տողերը.—եթէ ինձ սիրում ես, համօթ ինձ, որ *եթէով* եմ հետդ

խօսում), շուտ չըվերադառնաս, երկար մնա այդ լուսաւորութեան տանը: Նոր նոր եմ հասկանում Մ. Էֆէնդու մեզ պատճառած բարերարութիւնը: Որքան մեծ փոփոխութիւն իմ մէջ (խոստովանիր և քո մէջ) գնալու օրից մինչև այսօր:

Մեղքս ինչ թագցնեմ, սկզբներում քո բացակայութիւնն ինձ մաշում էր, գիշեր ու ցորեկ աչքերիս աղբիւրակները չէին ցամաքում, օրերը համարում էի, երեք տարին երեք դար էի կարծում, ցանկանում էի մի երկայն քուն, որի թօթափելուց յետոյ՝ դու լինէիր աչքիս հանդիպող առաջին առարկան. բայց, իհարկէ, քունս չանցնէր առանց սովորական դարձած քաղցր երազների:

Այսօր էլ գիշեր չի անցկենում, որ քեզ հետ միասին մեր պարտիզումը քո սիրած կաղամախի ծառի շուաքի ներքոյ չընստինք ու չըգրեինք: Այնուհետև գալիս է հեռանալուդ վերջին հրաժարականը: Պարանոցիդ չեմ պոկուում, մինչև մօրս յանդիմանիչ ձայնն ինձ չի զարթացնում. յիշո՞ւմ ես մեր դրկախառնութիւնը, հօրս կոչը քթներիցս հանեց: Սուտ չեմ ասում, երազն իրականութիւն է փոխուել. քո գնալու րոպէից ցայսօր մի անգամ չեմ զարթնել, մինչև մայրս ինձ շարժելով չի զարթնացրել: Մի ժամանակ մօրից շարունակ յանդիմանութիւններ էի լսում՝ վաղ վերկենալուս համար, մայրս ինձ *անվախտ խորոզ* էր անուանում, հիմա քնուկ մուկն է կանչում և նեղանում է, թէ ընչի համար

քնի մէջ շարունակ խօսում եմ և քո անունն եմ կրկնում։ Սև երեսի ձեռքից, (ասում է մայրս քո մասին) իւր այստեղ եղած ժամանակը հանգիստ չունէր, հեռացել է՝ աւելի է մեզ անհանգիստ անում։

Հաւատա՛ ինձ, Ռուբիկս, մայրս իրաւունք ունի ստուերիդ դէմ թոնթորալու (տրտնջալ)։ Քեզ յայտնի է, որ ես մօրս տնային գործերի օգնականն էի. այժմ քո գնալուց յետոյ՝ միանգամայն անպէտքացել եմ։ Ո՞վ է մեղաւոր. կարդալուց աչք թափո՞ւմ եմ, որ մօրս գործերին հասնիմ։ Մի օր այնտեղը հասաւ, որ մայրս կամենում էր հօրս գանգատուել իմ շատ պարապելուս համար, բայց մայրական սէրը խեղճին արգելք եղաւ. ախար ո՛նց յայտնեմ, ասաց, հօրդ, եթէ հայրդ տեսնի՝ ինչ որ ես առաջին անգամը տեսայ, բոլոր գրեանքդ կրակը կձգի և քեզ ծեծելով մահուան դուռը կհասցնի։

Հարցրու՝ ինչ էր խեղճ մօրս տեսածը.—ոչինչ, շատ հասարակ դէպք. պարտիզում խորասուզուած եմ եղել պարապմունքի մէջ, երբ մայրս շատ ձայն է տալիս ու ես չեմ լսում, ներս է մտնում ու մի ծառի տակից երկար միջոց դիտում իմ արարքս։ Այդ ժամանակ ես առաջին շարադրութիւնն էի գրում քեզ ուղարկելու, մօտս դրած գրքերն յաճախ խառնում էի՝ օրինակները և վկայութիւնները գտնելու համար։

Ներիր սիրելիս, մինչև այսօր սիրտդ չվշտացնելու համար՝ քեզանից ծածկել եմ մօրս արածը։

Նա յանկարծակի յարձակուում է. տետրակը ձեռքից յափշտակում, պատառ պատառ ճղոտում և շպրտում։ Այդ քիչ է, գրքերս ամբողջ պարտիզի մէջ ցաք ու ցրիւ է տալիս ու քո սիրած ծամերի երկայն հիւսերը կուռը փաթաթելով՝ քարշ աճում ինձ դէպի տուն։ Իմ կողմից՝ ո՛չ ճիչ, ո՛չ աղմուկ, ո՛չ ձայն, ո՛չ ծպտուն, ատամներս սեղմել եմ, շրթունքներս հուպ տուել ու սպանդանոց տարուող գառան նման՝ ետևիցը գնում։

—Տո՛, գրողի բաժինն, քեզ ո՞վ է կարդալ սովրեցրել, այն գրեանքն ո՞վ է քեզ համար բերել, ճչաց վրէս մայրս։

Ես ձայն չեմ տալիս։

—Ասա՛, ինչ ես պապանձուել, չլինի՞ թէ գետինը մտնելու Գառնիկն է իւր անզգամ քրոջ ձեռքով քեզ գլխահան մոլորեցրել, չլինի՞ գողի պէս իրանց միջնապատովը վեր է բարձրանում և մեր պատիւը հողին հաւասարացնում, ախմոր սովորել ես, քո փուչ նշանածն իրան օգուտ բան չի խրատ տուեց քեզ։

—Գառնիկը չէ՝ իւր Պատուելին էլ իւր հետ միասին շատ ուրախ կլինէին, եթէ իմ կիսկ չափ կարդալ-գրել իմանային, պարծեցայ ես և մի առ մի պատմեցի ամէն բան՝ սկսած այրը ճանապարհածդ վայրկեանից մինչև այն րոպէն։

Ի՞նչ ես կարծում, Ռուբիկս, մօրս բարկութիւնն իսկոյն իջաւ՝ նման եփման ջրի, որի վերայ մի կուժ ցուրտ ջուր աւելացնես։

—Ի՞նչքան լիմար ենք եղել, բացականչեց մայրս. ես ու Մարիամ-խաթունը—նշանաձիդ մայրն ամիսներով միտք ենք զբաղեցրել ու չենք կարողացել հասկանալ, թե ընչո՞ւ համար Ղուկիանոսը պետքէ տետրակը քո ծնկանը դնէր և ձեռքն աջ ուսովդ անցկացրած՝ գիր գրէր:

—Այո՛, ասացի, նա ինձ գրել էր սովորացնում: Այն օրից սկսած՝ քո բոլոր նամակներդ մօրս կարդում եմ, շատ անգամ իւր ձեռքով եմ իմ նամակներս Գառնիկին հասցնում:

Ուրախ ես, այնպէս չէ՞, որ մօրս մեր կուսակից եմ արել, մայրս ինքն էլ այժմ շատ ուրախ է այս մասին, բայց խեղճին հանգիստ չի տալիս եղբօրս՝ մեր Սւետիքի ապագան...

—Ո՛չ, ո՛չ, այս անգամ մնայ, եղբօրս մասին յետոյ կըգրեմ, այսքանը միայն իմացիր, որ շատ ժամանակայարմար էր անցեալ նամակիդ մէջ գործածած առածը՝ թէ «աշխատանքի սկզբնաւորութիւնը գործը կիսել է նշանակում»:

ԺԳ.

Ալպիսով Վարուգեան դպրոցը միաժամանակ անգիտակցաբար երկսեռ ուսումնարանի պաշտօն էր կատարում, աշակերտների գոյութիւնն ու պատմութիւնը յայտնի էր հիմնադրին, իսկ աշակերտուհեաց մասին ցուցակների ու մատեաններէ մէջ ո-

չինչ լիշողութիւնները չըկային, որովհետև իգական սեռի ներկայացուցիչը միայն մի հատ էր՝ այն էլ վարագուրի ետևը, Վարագից շատ հեռու։

Շատ չըքաշեց՝ Վարագայ սանների թուրումը մի նոր աշակերտ ևս աւելացաւ, բայց նոյնպէս Վարչութեանն անյայտ և Վարագից չորս հինգ աւուր ճանապարհով անջատուած։ Ուրեմն և սա վարագուրի ետևն է թագ կացած։

Այս տեղ կատարեալ ամերիկական սիստեմ էր, տղայ աղջիկ միասին էին ուսանում, կամ լաւ է ասել՝ աղջիկն ինքը պատրաստեց իւր համար մի ընկեր, որ իր գործը հեշտացնէ։

Պարզենք։ Մի օր Արփիկը գրում է Ասքանազեանին, որ իւր եղբայր Աւետիքն անսահման որդուն նման մոլորութեան ճանապարհից դարձ է եկել, որ ահա մի ամիս է՝ իւր մեծ եղբայրն իւր մօտ ուսանում է, լաւ ուղեղի և ընդունակութեան տէր է, մեծ յոյսեր է խոստանում և զգալի յառաջադիմութիւն է անում։

Աւետիքը հայերէն կարդալ չէր իմանում. Սարգիս աղան *ղայմաղամի* հրամանը կատարած լինելու և նրան հաճոյանալու դիտմամբ՝ Աւետիքին տուել էր Տաճիկ *ղաղու* մօտ ուսանելու։ Այնտեղ նա երեք տարի մնալով՝ քաջ կարդում էր արաբական լեզուով *ղուրանը* և ուսել էր մահմետական կրօնի սկզբունքները, որոնց ճշմարտութեան մասին մեծ ոգևորութեամբ շարունակ խո-

սում էր մօր և քրոջ ներկայութեամբ և հակումն էր ցոյց տալիս Իսլամական կրօնին յարգելու։ Այսքանով դեռ գոհ չէր Աւետիքը. նա աշխատում էր մոլորութիւնից իւր հետ միասին փրկելու ամբողջ իւրեանց տունը։ Իւր ասութեամբ՝ նա համոզուած էր, որ հայրը պատրաստ է ուղղափառ (մուսիւլման) կրօնը գրկաբաց ընդունելու, բայց ինքն Աւետիքը հօր փրկիչ լինելու յատկնութիւնը դեռ չունի. նա մտածում է այս ցանկալին հաւատափոխութիւնը կատարել իւր ուսուցիչ Ղադու ձեռքով, սակայն դեռ վաղաժամ է համարում։

—Երբ զգացի, որ նամակներիդ միջոցաւ կոյր աչքերս տեսնում են, ասում է Արփիկը, երբ ապահովուեցի, որ Հայրիկի ազգասիրական և քրիստոսասիրական հոգին քո ձեռքով իմ մէջս արմատական վերանորոգումն է արել, երբ հաւատացի, որ ներշնչուել եմ մի անընկճելի զօրութեամբ, ես առանձին խօսակցութիւնները սկսեցի եղբօրս հետ, և մի քանի օրուան վիճաբանութիւնից յետոյ՝ յաջողեցայ ոչ միայն արմատախիլ անել նրա ներսից ազգասպան և հոգեսպան սկզբունքները, այլ և մայրենի լեզուի ուսումը քաղցրացրի նրա համար։

Հայ գիրը, հայ գրքերն այնքան սիրեց եղբայրս, որ ծայրէ ի ծայր միասին կարդացել ու մարսել ենք թողած գրքերդ և այժմ ուրիշ գրքեր ենք ձեռք բերում ու կարդում։ Մեր ուսումնարանը, քանի եղանակները տաք էին, քո սիրած կաղամա-

ղի ծառի ներքոյ էր։ Աւետիքը երեկոները խանութէն վերադառնում էր թէ չէ, իսկոյն մխաին շտապում էինք պարտէզ՝ մինչև մութը գետինն առնելը։ Կիւրակի օրերը բացառապէս նուիրուած էին ընթերցանութեան։

Բայց այժմ ցրտերն ընկել են, ճրագի աղօտ լուսոյ տակը հօրս բացակայութեան միջոցին մօրս ներկայութեամբ ենք ուսանում։

Այս անգամ բաւականացիր Աւետիքիս ինքնաձեռագիր երկու տող ստորագրութեամբը, նա քեզ այժմ ինձանից ոչ պակաս սիրում է. (մի բարկանար)։ Նա առիթ կունենայ ոչ անագան իւր սիրոյ ապացոյցը ներկայացնելու։

—Ի՞նչ հետաքրքիր առարկայ է եղել աշխարհագրութիւնը, շարունակում է Արփիկը, ոչինչ դժուարութիւն չենք կրում, գրած դասերդ երկրորդ ընթերցումից՝ յետոյ ըմբռնում ենք, բաւականին ընտելացել ենք քարտէսներ ու հայրենագիտական մակարդակները գծելու հմտութեան մէջ։ Անշուշտ լաւ չիշում ես մեր թաղը՝ մինչև գետի ափը. այս իմ գծածն է։ Եղբայրս գծել է քաղաքի արևելեան մասը՝ դէպի լեռան կատարը բարձրանալով։ Երկուսդ էլ քեզ եմ ուղարկում, տես և կարծիքդ գրիր. ի հարկէ, իբրև ուսուցիչ՝ ուղղելու իրաւունքը քո անբռնաբարելի սեպհականութիւնն է։ —Չէ որ այդպէս ուղղելով իմ շարադրութիւններս՝ այսօր քիչ

ու շատ գրէչ շարժելու շնորհք ես տուել, իմ սիրելի ուսուցիչս։

—Որքան ուսանելու նիւթ է պարունակում իւր մէջ բնական պատմութիւնը, ինչպիսի քաղցր և դիւրըմբռնելի ոճով էլ կարողանում ես աշակերտներիդ սիրելի անել այդ վսեմ առարկան։ Դու գիտես, որ ինձ տանից դուրս գնալ չի լինել, իսկ մեր Աւետիքը այս ամառ օրուան մեծ մասը հիւանդութիւն կեղծելով՝ խանութից փախուստ էր տալիս և դաշտերն ու սարերը թափառելով՝ ժողովում ամենատեսակ միջատներ և բոյսեր։ Նա մի քանի քարացած խխունջներ էլ գտել է, նա բերում է՝ ես չորացնում եմ։ Ասիս՝ պահելու տեղ չունեմ, մօրս աղաչել ենք՝ մեր դարակներից մէկը դատարկել է։ Բանալին վրայից չենք հանում. վայ մեզ, եթէ հայրս իմանայ, բոլորը ոտնատակ կըտայ։

—Կարող ես երևակայել, թուաբանական գիտութիւնը դու առաւել մեծ դժուարութեամբ իմ ուղեղումս հալեցիր՝ քան թէ ես եղբօրս հասկացրի։ Այժմ միասին երկու աշակերտի հետ ես դու պարապում, տուած խնդիրներդ Աւետիքն ինձանից աւելի յաջողակ և արագ է լուծում. մթնուրտիւնները նա է բացատրում։ Ես չեմ տխրում, Աւետիքն աստում է, և ես ընդունում եմ, որ հաշուի գործի մէջ կանանց խառնուելը մեր ազգի համար շատ վաղ է։

Ընդհակառակն, ուղարկածդ «Մանկատածու-

թիւնը, ես սիրով կարդացի, իսկ Աւետիքը տհաճութեամբ մի քանի գլուխ լսեց և դուրս գնաց։ Անպիտանն ինձ կարմրեցրեց. այդ ձեր իգական սեռի գործն է, ասում է. ես ոչ ամուսնանալու դիտաւորութիւն ունիմ և ոչ մանուկ կրթելու հոգսը քաշեմ. նշանուել էք, ասում է, վաղը միւս օրը զաւակների տէր կըլինէք, օրին մէկը մայր պիտի դառնաս, հիմիկուանից պատրաստ եղիր։ Ինքն էլ հասկացաւ, որ ամօթխածական զգացմունքս վիրաւորեց։ Երբ աչքերս փակեցի և ամօթից գետին նայեցի, զղջաց ու ճակատս համբուրելով՝ ասաց.—Ներիը, սիրելի քուրիկ, այսուհետև խօսք եմ տալիս՝ սրտիդ քնքոյշ լարերը չը շարժել։

Աւետիքը պատասխանի չըսպասեց, հապճեպով հեռացաւ։

Մի քանի օր փշահան էի լինում Աւետիքի առջևը, Մանկատածուխեան գիրքը մէջ տեղից վերացրել էի, բոլորը քնում էին, ես ձիթի ճրագը մօտս էի դնում և զգուշութեամբ կարդում, որ եղբայրս չըզարթնի, տեսնի ու ծիծաղի։ Բայց նա խօսքը պահեց, առաջին և վերջինն էր. այդ առարկայի մասին երբէք խօսք չի բացել, և ըստ երևոյթին՝ չի էլ բանալու։ Ուղիղն ասած՝ շատ ափսոս, մեղքս քնչ ծածկեմ, ամաչեցի, բայց մէջս մի տեսակ ախորժանք զգացի՝ երբ Աւետիքը սրտիս մէջ անդադար յեղյեղած գաղտնիքս ինձ յիշեցրեց։ Ասում են՝ արջը 1001 առակներ ունի, բոլորը տանձի

մասին է, ինչ է՝ թե շատ է սիրում: Ճշմարիտ չէ, որ ամէն ոք իւր համար մի սիրած, փայփայած, նուիրական առարկայ ունի—տանձ է, խնձոր է, կենդանի է, անկենդան է, ծնող է, եղբայր է, քոյր է, ամուսին է, նշանած է, ինչ կուզի, լինի՝ միայն որ սրտի սիրածը լինի:

Դու էլ մի այդպիսի սէր ունիս, այնպէս չէ...

Արփիկդ.

Յ. Գ. Մի քանի օր էր հայրս մեր Աւետիքին շարունակ նախատում էր: Եղբօրս ուսուցիչ Դադու միջնորդութեամբ մեր քաղաքի գայմագամ Օսման Էֆէնդին եղբօրս իւր դիւանատունը *քեաթիբութիւն* (գրագրութիւն) էր առաջարկում. հօրս ոտքերն ուրախութիւնից գետնից կտրուել էին, որդին մեծ փառքի էր տիրանում: Բայց արի տես, որ Աւետիքը հակառակում էր, չէր ուզում գնալ:

Վերջն ես եմ համոզել. ահա երկու օր է, որ շարունակում է:

Նոյն:

ԺԴ.

—Ներեցէք, Հայրիկ, չեմ կարող վաղուան ուսումնական ուղևորութեանը մասնակցել:

—Այդ դո՞ւ ես, տղա՛ս:

—Զգիտեմ ընչո՞ւ մի նեղքին թախիծ ճնշում է սիրտս, ուշք ու միտքը կորցրած շուարուածի նըման եմ, դասերս անգամ դժուարութեամբ եմ պատրաստում:

—Տնէն եկած նամակներդ անմխիթար են։

—Ընդհակառակն՝ նշանաճս այժմ աւելի ուրախ է, ձեզ պատմեցի իւր եղբօրը ճանապարհի բերելը. երկուսով միասին էին պարապում և բաւականին յառաջադիմել են։ Այժմ վեց ամսից աւել է՝ եղբայրը *ղայմաղամի* մօտ գրագիր է։

—Ուրեմն իրաւունք չունիս վաղուան ուղևորութիւնից խոյս տալու, անցեալները ոտքով Աղթամար գնացած ժամանակներս՝ քո գծած քարտէզը մեծ լոյս է սփռել մինչև այժմ ուշադրութիւնից վախած մի քանի կարևոր կէտերի, այդպէս կըգրեն ինձ Պօլսէն. շատ գովութեան արժանացեր է նոյնպէս քո Վանայ ծովանկարը։

—Այս անգամ ոչ աշխոյժ ունիմ և ոչ ոյժ։

—Այժմեան ուղևորութիւններդ շատ հեռու չէ լինելու, մեր շրջակայ գիւղացիք քանից դիմել են մեզ, որ Վարագայ ճետերից երբեմնապէս իրանց այցելութիւն ուղարկեմ եկեղեցիներում երգելու և հոգեպէս մխիթարելու, իսկ դու երգելու և խօսելու մէջ առաջիններից մինն ես։

—Այս անգամ ոչ մինն ընդունակ եմ անելու և ոչ միւսը։

—Շատ լաւ, գնա գիշերս լաւ մտածիր, վաղն ևկ պատասխան տուր, այս անգամ դու քեզ չես նմանում, Հայրիկը բան հրամայէ և դու չըկատարես ։ Քանից քեզ պատուիրել եմ՝ տղայական ցընորքներէ ձեռք քաշել, բայց այդ քո մէջ մի պար-

բերական հիւանդութիւն է դարձեր. գնա, գնա, հերիք դիմադրես։

Որտաբեկ, անխօս դուրս եկաւ Ռուբէնը Հայրիկի սենեկից և գնաց գլխիկորճ ընկաւ իւր անկողնի վերայ։

Բաւականին ուշ էր, ընկերներից ոմանք քուն էին մտել, այլք պատրաստուում էին քնելու, և միայն մի քանի աւագները նստած ննջարանի մէջտեղը դրուած սեղանի առաջին՝ պարապած էին ընթերցանութեամբ։

—Էլի այծերը տուն են եկել, շշնչացին այս վերջիններն իրար հետ և ժպտալով իրանց գործին կացան։

Սուտ չէին ասում. առաջինը չէր՝ որ առանց շորահան լինելու՝ երեսի վերայ ընկած՝ գիշերներ էր լուսացնում Ասքանազեանը։

Սկզբներումը նրա տրտմութեան պատճառը միայն Արփիկն էր և ուրիշ ոչինչ, բայց գնալով գնալով՝ նշանածի մասին մտածմունքներին միացան աւելի մեծ ցաւեր, որոնք նրա զգայուն հոգու վերայ վշտերի խոր ակօսներ էին փորում։ Շատերը չգիտէին, որ Ռուբէնն իւր աչքով չըլսէր Վանայ շրջակայ գիւղերից Հայրիկի մօտ եկած Հայերի աղիողորմ հառաչանքները։

—Ոտքերուդ մատաղ, Հայրիկ, օգնիր, դու ես մեր պաշտպանը, դու ես անտէրների տէրը, քուրդը տներս կոխեց, ունեցածներիս կէսը փչացրեց՝ կէսը քաշեց տարաւ։

—Տանեն աչքները կոխեն, գոչում էր մի ուրիշը, թող լափեն՝ փորները պատուի, բայց Հայրիկ, նշանած աղջիկս յափշտակեցին, կնոջս քաշեցին...

Լալիս էին բոլոր լսողները և դառն արտասուք էին թափում, զգացուում և հառաչում էր Հայրիկն և ճանապարհ ընկնում դէպի քրդերի վրանը, կամ Վանայ փաշայի ոտքը։

Ռուբէնին առաջին անգամները զարմանք էր թուում, երբ, ըստ իւր կարծեաց, հասարակ հարբուտահարուբթիւններն ազդում էին իւր շրջապատողների և Հայրիկի սրտին. նրա համար այդ ամէնը Հայի ճակատագիրն էր, պէտք է կրէր։

Իրաւունք ունէր Աբգանազեանն այսպէս կարծելու. 17 տարեկան էր նա, երբ իւր հայրենի քաղաքը թողեց. նրա առաջին ամէն ժամանակ կատարուում էին աւելի ցաւալի դէպքերը, բայց այդ բոլորը նրան բնական էին թուում։ Նրան այդպէս էին հասկացրել։

Շատ անգամ էր իւր աչքովը տեսնում Ռուբէնը, թէ ինչպէս մի տաճկական ստորին *զաբթիէ* (ոստիկան) յանդգնաբար մօտենում էր մի նշանաւոր հայ վաճառականի խանութի և առանց սակարկութեան, կամ գինը վճարելու՝ փաթաթել էր տալիս ապրանքն ու կռնատակը դրած գնում։ Ռուբէնին թուում էր, թէ կարգն այդպէս է։ Նա ինքը բազմիցս ծառայել էր դիպուածաբար իւրեանց

դռնովն անցկացող քրդերի, որոնք նիզակը ճօճեցնելով փողոցումը՝ հանդիպել են իւր հօրն և կոպիտ հոյհոյական խօսքերով հրամայել կերակուր ուտացնել իրանց: Հայրը խոնարհ երկրպագութիւնով, առանց հակառակելու հիւրընկալել է քրդերին, ոտք ու ձեռք է ընկել, հաճոյախօսութիւններով պատուասիրել և ճանապարհ է դրել: Այս բաները ոչ հօրն են ցաւ թուացել և ոչ Ռուբէնին:

—Էհ որդի, ինչ կարող ենք անել, որ պատիւ չըտանք, քուրդ է, թուրք է, իրաւունքն ու ոյժը նրանց կողմն է, հայը որ կայ՝ ոչխար է, ոչխարը մսացու, մատաղացու է. մենք քրդի ու թուրքի մատաղն ենք:

Էսպէս է պատասխան տուել Ռուբէնի հարցմունքներին հայրը, էս է քարոզել դպրոցումը Նշան Փալչիկճեան պատուելին, էս էր լսել իրաւորից ու օտարից:

Բայց այժմ Ռուբէնը փոխուած է, նա այլ ևս Բ. քաղաքի տգէտ պատանին չէ, հայի ամենափոքր ցաւն անգամ նրա սրտին մեծ վէրք է պատճառում և նրա վրայ ազդում: Մտածում է նա, մտածում և ուրիշ սպեղանի չի գտնում, այլ միայն երեսի վերայ անկողնումն ընկնել և մինչև ի լոյս մտախոհութեան մէջ անցկացնել:

Մի քանի օր էր, որ Ռուբէնը սովորականից տաւել տխուր էր և ինքն էլ չըգիտէր պատճառը. ինքն էլ չէր հասկանում, թէ ընչի համար իւր մտած-

մունքը շարունակ կեդրոնանում է Արփիկի վերայ։

Դպրոցում դասի ժամանակ, սեղանատանը՝ճաշի վերայ, ազատ ժամերին զբօսանք անելիս՝ գիշերներն անկողնումը՝ նրա աչքի առաջին միայն Արփիկն էր։

Շատ օրեր չէին անցել, որ նա Արփիկից և Աւետիքից նամակներ էր ստացել։ Աւետիքի նամակները խիստ հետաքրքիր էին. նա Տաճկաց մէջլիսն էր նկարագրում. նա գրում էր, որ Ղայմազամի *քիխաըէի ըաշին*՝ Օմար էֆէնդին իրեն շատ սիրում էր։

Ուրեմն ինչն էր Ռուբէնի վարանմանց պատճառը՝—ինքն էլ չըգիտէր. ինքն էլ չէր հասկանում՝ թէ ընչո՞ւ է կարծում, որ իւր ապագայ ամուսնացուն, իբր թէ, ձեռքիցը խլուած է ու տեղատրուած մի քուրդ ցեղապետի, մի տաճիկ *միւդիրի*, Ղայմազամի, կամ հէնց Վալու հարեմումը։

Այսպէս չի լինիլ, մտածում էր այս գիշեր Ռուբէնը, գառս թողել եմ գայլերի ճանկումն ու ինքս անհոգ հեռուից զուարճանում, թէ ինչպէս քաղցած գազանները լափում են անուշ պատառը. վաղն իսկ կըյայտնեմ Հայրիկին իմ ցաւերս, Վարագն խալառ կըթողամ և կերթամ իմ նուիրական պարտականութիւնս կատարելու։

Այս մտածմունքներն իւր մէջ որոճելով, երկար ժամանակ անկողնի վերայ անշարժ մնացել էր Ռուբէնը։ Բաւական միջոց անցկացաւ։

Պարապող ընկերները իրանց դասերը վերջացրին ու պարկեցին։

Ամէն ինչ լուռ էր. միայն ննջող աշակերտների շնչառութիւնն էր պարզ լսուում։

Յանկարծ վերթռաւ Ռուբէնն և այս բացականչութիւնները արեց.

Օ՜, օ, օ՜, ես չեմ կարող համբերել, կըգամ քեզ մօտ, Արփիկս, կազատեմ գազանների ճանգից... Աղաչում եմ, Հայրիկ, հերիք համարի ինձ այստեղ բանտարկելը, թող տուր, որ ես րոպէին ճանապարհ ընկնեմ իմ պարտքս կատարելու։

Ռուբէնը չոքել էր, բազուկները տարածել էր, և աչքերը վեր բռնած՝ պատասխանի էր սպասում։

Նա արաւ իր պատասխանը. ցնորք չէր. նա ուղիղ խօսում էր Ամենեանի հետ։

Հայրիկը սովորութիւն ունէր քնելուց յառաջ անպատճառ մտնել աշակերտաց ննջարանները, գըլուխ քաշել, գիշերապահ ծառային պատուէրներ տալ և ապա հանգիստ սրտով անկողին մտնել։

Այս երեկոյ մի ուրիշ մտածմունք ևս աւելացաւ, նա Ռուբէնի մասին անհանգիստ էր և եկաւ այցելելու։

Բայց Հայրիկը նոր չի տուն մտաւ, 20 րոպէից աւելի է, որ նա կանգնած է Ռուբէնի անկողնի մօտ և լսում է, թէ ինչպէս է զառանցում Աքսանագեանը։

Այո՛, նա զառանցում էր, անկապ ու անհաս-

կանալի խօսքերն էր կիսատ—պռատ ցնորաբանում։

Միակ հասկանալի բանը՝ որ նա արտասանեց, վերջին խօսքերն էին, որ ուղղեց նախ իւր նշանածին և ապա Հայրիկին։

—Շատ լաւ, համաձայն եմ, սիրե՛մ զքեզ, վաղը քեզ ճանապարհ կըդնեմ, գնա՛ նշանածդ գտիր, քաղցրութեամբ պատասխան տուեց Հայրիկն անգիտակցաբար արտասանած խօսքերին։

Հայրիկի ձայնը զարթնացրեց Ռուբէնին։ Նա զգաց իւր դրութիւնն և տեղից կանգնեց։ Ներողութի՛ւն, Հայրիկ, կմկմաց նա...

—Ոչինչ, սիրե՛մ զքեզ, եկ փոքր ինչ նստենք այս սեղանի մօտ, ասաց Խրիմեանն և Ռուբէնի թևից բռնեց, մօտ տարաւ նստարանին ու նստացրեց իւր կողքին։

Այժմ ասա, Ռուբէնի՛կս, ի՞նչ ես լսել Հայրենի՛քեդ, ո՞վ է նշանածիդ խլող։

Ռուբէնը ձայն չի հանում, նա գլուխը կախ սուս է կացել։

—Մի՛ ամաչիր, սիրե՛մ զքեզ, յայտնիր ինձ ցաւը։

Ռուբէնը երդուեց, որ ինքն ևս չըգիտէ՝ թէ ընչո՞ւ վերջին օրերն անհեթեթ մտքերն իրան նեղում են։

—Այդ քո չափազանց սիրոյ հետևանքն է, ուրիշ ոչինչ, ասաց Հայրիկը, առաւել լաւ է՝ այս գիշերը մի նամակ գրես, հաստատ լուր առնես տանէն, և եթէ, արդարև, գնալդ հարկաւոր է, ինքս քեզ

ճանապարհ կրդնեմ։ Սակայն սիրտս կը վկայէ, որ ոչինչ չըկայ, դու ինձ լսիր, վաղն ընկերացդ հետ գնա մեր Վանքի շրջակայ գիւղերը մի պտոյտ անելու։

—Ձեր հրամանն ինձ համար սուրբ է, Հայրիկ։

—Ուրեմն, բարի գիշեր, նամակ գրիր ու հանգիստ քուն եղիր։

ԺԵ.

Վարագեան սանների ուսումնական ճանապարհորդութիւնը մերձակայ գիւղերի համար սիրելի սովորութիւն էր եղել. տրտմում էին գիւղականներն, եթէ ուշ ուշ էին կատարում այդպիսի այցելութիւնները։

Երեք երեք, չորս չորս, հինգ հինգ գործից ու դասերից ազատ օրերը վարժարանի աւագ աշակերտները թուղթ ու մատիտ հետներն առած՝ մի մի փայտ ձեռներին՝ առանց մի կտոր հացի՝ բռնում էին այս ու այն գիւղում և ուղղակի դիմում քահանայի տունը, գիւղի ռէյսի (գիւղապետ) ու առաջաւորների մօտ, աղքատի խրճիթը և իրանց հօր տան պէս դուռը բաց անում, բարև տալիս։

Ո՛վ էր նա, որ այսպիսի թանգագին հիւրից երես թեքէր, շներն անգամ ճանաչում էին Վանայ շալի *անթարին* (վերնահագուստ) հագին երիտասարդներին։

—Հապա՛, Սհօ եղբա՛յր, մարէ, քուրիկ, հարսիկ, հիւր չէ՞ք ուզեր։

—Մեր գլխի՛, մեր աչքի՛ վերայ, բարով հազար բարի՛, ձեր ոտքը մեր դունչին անպակա՛ս։

Տնտես տանտիկնոջ պահած համեղ սերոցքները, արաժանը, անարատ մածունը, իւղն՝ երեսին կանգնած պանիրը, տապակած հաւը, սխտորով ու մածնով ձուաձեղը, ամէն հազուագիւտ կերակուր անխնայ բաշխուում էր Աստուծոյ հիւրերին։

Դեռ հացը չը ժողոված՝ գիւղականները նրանց գլխին կիտուում էին, կարծես թէ հոտով էին իմանում վարագեանների գալուստը։

Առաջին սովորական ողջոյնատուութիւններից յետոյ՝ խօսակցութիւնն ընդհանուր էր դառնում։

—Ի՛նչ կայ, խուրբան ձեզի, տիրացունե՛ր, կո՛ւռ է, դինջութի՛ւն է, սո՛վ է, լիութի՛ւն է, դրսի՞ն՝ ներսի՞ն, Ֆրանգի՞ն՝ Ինգլիզի՞ն՝ ինչ խաբրիկները կան։

Եղած տեղեկութիւնները նրանց հասկացողութեան համեմատ հաղորդուում էր հետաքրքիր շինականներին։

—Հապա՛, խուրբան ձեզի, գիրն ինչ կասի՛, մեզի անօրէնների ձեռքէն փրկութի՛ւն կա՛յ, դեռ շա՛տ պիտի մեր ձեռով մեր խոզեհաններուն ուտեցնենք, գիրցնենք, որ ելլեն՝ մեզ կոտորեն։

—Այդ այն օրը կըվերջանայ, երբ որ գիւղերը վարժարաններով կըլցուին ու գիւղացին կըճանաչի իւր պարտականութի՛ւնը։

Եւ վարագեանները ժամերով խօսում էին հալի սրտին մօտ խնդիրների մասին։

—Ժամանակ է ժամ կանչելու, արեգակին նայում էր վերջապես քահանան և գլխով վեր կենալու նշանը տալիս։

Գիւղի տները դատարկուում էին, այդ երեկոյ եկեղեցումը տեղ չէր մնում, այդ օրն այդ գիւղի համար հանդիսաւոր օր էր։ Ժամը զընգզընգում է։

—Ջան, ջան, մեռնի՛մ հրեշտակի ձէներուդ, մեր գլխէն անպակաս եղնի՛ք, շատանան ձեր պէսները, գեղջկական պարզութեամբ բազկատարած արևշատութիւն էր խնդրում ամէն բերան քաղցրաձայն երգիչներին։

Ժամն ահա վերջանում է, բայց ոչ ոք աւետարան համբուրելու պատրաստութիւն չի տեսնում, ընդհակառակը բոլորեքեան նստոտում են։

Քահանան ինքն էլ նստեց իւր ոտքի տակ ձգած փալասի կտորի վերայ։

Վարագեաններից մինն ատեան կանգնեց։ Նա քարոզ է խօսում Աստուծոյ խօսքին կարօտ ժամատրին։ Աստուածասիրութիւն և ընկերասիրութիւն, գիր և աշխատութիւն, ազգ և եկեղեցի. այս են նրանց քարոզների նիւթերը։

Ժամում թեղի թողածը լրանում է ամառաւան գիշերները՝ կալերումը, իսկ ձմեռները՝ քահանայի կամ *ռէյսի* տաք օդումը։

—Վաղն ո՞ւր պէտք է գնաք, կամ ինչ պիտի անէք, տիրացու եղբայրք, հարցնում է բարի գիշեր մաղթելուս քահանան։

—Առաւօտեան ժամից յետոյ՝ ձեր գիւղի և հանդերի պատկերը պիտի նկատենք, բայց դեռ Զանան մարիկին տեսնելու փափագ ունինք։

—Գիտեմ, գիտեմ, էլի գիւղի սովորութիւնները պէտք է գրի առնէք։

—Ես էլ կըգամ ձեր սիրած հեքիաթները ու մեր գիւղի հին հին պատմութիւնները կանեմ։

Հետաքրքիր և կարևոր տեղեկութիւններով բեռնաւորուած՝ վարագեանները մատիտները սրում էին և գիւղի ու իւր շրջապատի մակարդակը գծում, քարտէսը քաշում, սահմանները որոշում և անցնում ուրիշ գիւղ։

Խրիմեան Հայրիկի բարերար կրթադրութիւնները երկու օգուտ էր բերում, աշակերտները դրպրոցումը տեսականապէս ուսածը գործնականապէս իւրացնում էին, որով ինքնաճանաչութիւնը սակաւ ատ սակաւ մուտ էր գործում իւր սաների ոտք դրած կողմերը։ Վանի շրջակայքն ամէն տեղից շուտ պարզաճանաչ եղաւ։

ԺԲ.

—Լսեցէք։

—Այո՛։

—Զարմանալի և զարհուրելի բան. ահա մէկ էլ, ահա երկրորդ, երրո՛րդ, չորրո՛րդ։

—Բայց շների հաչոցը հրացաններից պակաս զարհուրելի չէ։

—Շտապենք։

Վարագեաններն արագացրին քայլերը։ Նրանք գնում էին ուսումնական ուղևորութեան. այսպէս էին կոչում նրանք իրանց պարբերական շրջանառնութիւնը։

Դեռ նոր էին մօտենում գիւղին։

—Ի՞նչ է այն. նայեցէք, նայեցէք։

Բազմաթիւ կանայք ու մանուկները, գլխաբաց, ոտաբոբիկ, ճիչ ու հրոցով դաշտն են լցուել և անկարգ ու աննպատակ փախչում։

—Եամանն, մարէ, յուշիկ գնա, լալով ճչում է մանուկը մօրը։

—Ջա՛ աբի, գրողի խեղդած հա՛րս, ինչ կը մնաս։

—Ի՞նչպէս գամ, տղոց մէկը գրկիս, միւսը ձեռքիս, ինքս լէ էս օրիս, լալով պատասխանում է յղի մանկամարդ հարսն անխիղճ սկեսրօջը։

—Տօ ճժե՛ր, էնատեղ իշկեցէք, խիմի էլ ուրիշ քրդեր չոմբախն (գաւազան) ի ձեռն, թըխ մեզ (դէպի մեզ) կը վազեն։

—Վա՛յ, վա՛յ, վա՛յ, զարկեցին, նա՛նէ։

—Ո՛չ ո՛չ. մարի՛կ, քուրի՛կ, կը սխալուի՛ք, մենք քրդեր չենք, Վարագի ճեաեըէն ենք, ձեր եաևէն եկող չը կայ, պատմեցէք՝ ինչ է պատահել։

Վարագեաններըը սրան են դիմում, նրան են հարցնում, բայց ոչ մէկից ուղիղ պատասխան չեն ստանում։

—Եամանն, Աստծու սիրո՛ւն, փախէ՛ք, յետ փախէ՛ք։

—Ո՞ւր, ո՛ւր վախչենք, մարիկ, ասացէք, ինչ կայ։

—Չէք ուզեր դառնալ, գնացէք ձեր աչքով տեսէք, մեր սև օրը լացէք, կցկտուր պատասխաններ էին տալիս պառաւները ու փայտը քարշ տալով դէպի գաշտը շտապում։

—Ջրդեր զմեր ուխտ սպանին, զաղջիկ քաշեցին, զտէրտէր վիրաւորեցին։

Այսքանը հազիւ դուրս կորզեցին Վարագեաններըը վախստականների բերանից։

—Էլ ո՛ւր գնանք, տղա՛ք, հինգ հոգով ինչ անենք, մեր գլուխն էլ այնտեղ կը թողնենք, լաւն այն է՝ յետ գնանք, Հայրիկին բօթ տանք, խորհեցին և խորհուրդ տուին Վարագեաններից երկու հոգի։

—Ամաչեցէ՛ք, կնամարդի՛կ, գոչեց Ասքանազեանը, ձեր արարքը պատիւ չի բերում ոչ ձեզ և ոչ ձեր վարդապետին, դուք Հայրիկի կեղծ ուսուքեալներն էք, եթէ կուզէք, բոլորդ էլ վերադարձէք, երկչոտնե՛ր, ես ահա գնացի։

Ռուբէնն արագ արագ փութաց դէպի գիւղը։

Ընկերները մի րոպէ կանգ առան ու անգիտակցաբար հետևեցին նրան։

Լերդապատառ վազում էր Ռուբէնը. նա գիւղն էր մտել և ուղղակի դիմում էր դէպի շների հաչոցը։ Նրան պատահեցին մի քանի երիտասարդ հա-

յեր, որոնք մի փողոցով փախչում էին։ Նրանց մի երկաւսի ձեռքին հրացան կար։

—Կացէք, տղայք, գոռաց Աւքանազեանը և· ինքը գնաց դէպի փախչողները։

—Ի՞նչ կենալու ժամանակ է, ձեր քարոզները ձեր համար պահեցէք, գլուխներդ ազատեցէք՝ եթէ չէք ուզում մեր ռէսի օրն ընկնել։

—Սպասեցէք, սիրելիք, ասացէք, ո՞ւր էք փախ· չում, չէք տեսնում, որ այստեղ ձեր ետևիցն եկող չկայ, առաջները կտրեց Ռուբէնը։

Փախստականները շշկլած յետ նայեցին. նրանք երբ տեսան հեռուից յառաջացող Վարագեաններին, կանգնեցին։

—Ի՞նչ կայ, վրդովուած հարցրեց Ռուբէնը։

—Էլ ինչ պիտի լինի, քրդերը ռէսի աղջկանը քաշեցին, իրան սպանեցին, տէրտէրին վիրաւորեցին։

—Ո՞ր կողմը գնացին։

—Ի՞նչ էին շտապում, ռէսի տունը Վանայ ծովն է, մինչև կէսը չը դատարկեն՝ ընչո՞ւ կերթան։

—Դեռ այնտեղ են։

—Մինչև ռէսի եղած-չեղածը ժողովեն, ժա· մեր կը քաշի։

—Շատո՞ր են։

—Զորս հոգի են։

—Ընդ ամէնը։

—Սէյիդ կուզէիր. այն ժամանակը գլուղը կա· վէրէին։

—Չրահաւորուածծ եմ։

—Հապա առանց զէնքի գիւղ կը կոխեն։

—Իսկ դուք զէնք չունիք։

—Հապա այս հրացան չէ՞, ասաց մէկն և մէկնեց փողը դէպի Ռուբէնը։

—Ձեզ պէտք է գնդակահար անել, ենպիտաններ, ճչաց Աբդանազեանը. նա հրացանը տղայի ձեռքից խլեց և ինքը վազեց ասելով.

—Հետս եկէք, քանի ուշ չէ, Արսէն, Գարեգին, Տաճատ, Համլեակ, ձայն տուեց Ռուբէնն իւր ընկերներին, վերադարձէք այդ թշուառականներին և քամակից հասէք։

Մեծ դժուարութեամբ Վարագեանները յաջողեցրին դարձնել շինականներին։

Քանի յառաջ էր գնում Ռուբէնն, այնքան շատանում էին փախստականների բազմութիւնը։

Աբդանազեանը չէր դիմադրում, մի քանի կարճ խօսքերով ամէնքին հրամայում էր իրան հետևել, և չապաստաճ պատասխանի՝ ձայն էր տալիս ընկերներին, որ պատահողին յետ բերեն ու ինքը յառաջէր գնում։

Այդպիսով Ռուբէնին յաջողեց մի մեծ խումբ իւր ետևից քարշ տալ։

Գիւղականներից և Վարագեաններից կազմուած մի ստուար բազմութիւն, որն ատրճանակով, որը հաստ մահակներով զինուորուած՝ յառաջանում էին դէպի գիւղապետի տունը։

Ռէյսի տունը գտնուում էր գիւղի մէջնավայ-

բումը. առաջը լայն հրապարակ էր։

Առաջին շունչ կենդանին, որ հանդիպեց Ռուբէնի աչքին, մի գունատ, բայց գեղեցկատեսիլ օրիորդ էր։ Նա ընկած էր պատի տակին. նրա ոտք ու ձեռքը պինդ կապած էին։ Աղջիկը չէր լալիս, ձայն չէր հանում, երևում էր, որ խղճալու ձայնը կտրուել էր. նրա կրծքի բաբախումից և թախիծից դէմքի վրայ տեսնուում էր ներսը կատարուած ալէկոծութիւնը։ Ամէն ոք կարող էր գուշակել, որ կամ լալուց օրիորդի ձայնը կտրուել է, կամ թէ սպառնալիքը նրա լեզուին փակ էր դրել։

Երկրորդ անձը, որ տեսաւ Ռուբէնը՝ խոժոռ դէմքով մի պնդակազմ քուրդ էր, որ ձիու սանձը քաշելով՝ մօտենում էր աղջկանը։

Քուրդն երեսը յետ շրջած ունէր դէպի տան բակը և այս կարգադրութիւնն էր անում.

—Բաւական է, ուշանալն օգուտ չի բերիլ, բեռները բարձեցէք, թող ձեզանից մէկը գայ աղջկանն իմ գաւակիս կապի, ես ահա ձի եմ հեծնում։

—Ի՞նչ ես անում, անիծուած անօրէն, գոչեց Ասքանազեանը և հրացանի փողն ուղղեց դէպի խօսող քուրդն ու հրացանի ոտքը վեր քաշեց։

Քրդի խօսքը բերանում սառած մնաց. նա եթէ գլուխը չէր թեքել, գնդակն ուղեղը ցրուում էր։

—Գեավուր, սրանք որտեղից դուրս եկան, կակազեց քուրդն ու մոռանալով աղջկանը, ոտքը դրեց ասպանդակի մէջ՝ ուզում էր թռչել ձիու վրայ։

բայց նա չը կարողացաւ։ Փոքը մնաց՝ վայր էր ընկնում. շփոթմունքն և ձիուն բարձած բաւականին մեծ բեռը նրան արգելք եղան։

—Ա՛յ, դու նզովից արմատ, գոչեց Ասքանազեանն ու յառաջ վազեց, միանգամայն մոռանալով որ հրացանը դատարկ է և բացի իւր ճանապարհորդական գաւազանից՝ ձեռքին ուրիշ զէնք չունի։

Քուրդն խսպառ իրան կորցրել էր, ապա թէ ոչ, նա իւր պատենից հանած սրով փոխանակ բեռան պարաններըը կտրատելու և ծանրութիւնը վայր ձգելու, Ռուբէնին միւս աշխարհքը կ՚ուղարկէր։

Ձակատագիրն այսպէս էր տնօրինել, քուրդը թռաւ ձիու քամակն և սանձը թողեց։

Բայց աւերիչը զրկուեց իւր սրից. դեռ նոր էր ասպանդակներով ձիու կողերը խշտում, որ Ասքանազեանի մահակի հարուածը թուլացրեց իւր բազուկը։ Սուրը քրդի ձեռքից վայր ընկաւ։

Մինչ Ռուբէնը գետնից կը վերցնէր քրդի սուրը, անօրէնն արդէն մի ասպարէզ գիւղից հեռացել էր։

Շատ օգուտ չը սարան քրդի միւս ընկերները։ Նրանք լսելով հրացանի ձայնն և բարձրացած աղմուկը, աւարները թափեցին, ձիանքը հեծան և հալածուեցին գիւղապետի միւս դռնով։

Փախչողներին տեսաւ Ռուբէնն իւր աչքով, նա սուրը ձեռքին՝ ներս ընկաւ տանուտէրի բակն և բաց դռնով դուրս նայեց։

Կողոպտողները շատ հեռու էին, մինչև կը հասնէը նրանց ետևից հրացանի գնդակը, որ չուննէը Ասքանազեանը։

Նա գլուխը պտըտեց, յոգուց հանեց և արտասուեց։

Ռուբէնն այլևս ներս չը մտաւ ռէյսի տունը, նա դուրս եկաւ հրապարակ, ուր հաւաքուած էին իւր ընկերները և գիւղացիք։

Ամբոխն երեք խմբի էր բաժանուել. մի մասը ժողոված էր աղջկայ գլխին. օրիորդի ձեռք ու ոտքն արդէն արձակուած էին. Ռուբէնի ընկերները կտրատել էին կապանքը։ Միւս բաժինը ձեռքները ծնօտներին՝ գլուխները խոնարհած՝ նայում էին սպանուած ու գետնին տարածուած գիւղապետի դիակին և չէին վստահանում մօտ գնալ։ Իսկ երրորդ խմբակը դիակից ոչ հեռու՝ վիրաւոր քահանային օգնելով էին պարապած։

Եւ ահա այսպէս, աղջիկն ազատուեց, քահանան խնամք տարուեց և ռէյսի տան կողոպուտը յետ պահուեց։

Ասքանազեանի ընկերները խորհուրդ էին տալիս գիւղացիներին՝ աղէտի մասին, առանց յետաձգութեան, տեղեկութիւն տալ Վանայ վաշտին, բայց Ռուբէնը չը թողեց։

Դեռ այդ մնա՛, կարգադրեց նա, դեռ գնացէք, ժողովեցէք ձեր ցրիւ ընկած ընտանիքը։

Երբ մեծ ու փոքր, այր ու կին, հարսն ու

աղջիկ խմբուած էին գիւղապետի դրանն և ուշի դիակը տեսնելով գլխները ծեծում էին, Ռուբէնն յառաջ եկաւ և դողդոջուն, բայց բարձր ձայնով մի ժամաչափ նրանց հետ խօսում էր։

Խօսեց, խրատեց, փաստը մատնացոյց արեց։ Նա խօսում էր և արտասուում։

—Հայեր, գոնէ այսուհետև պատրաստ եղէք, ձեր ընտանիքի պատիւն ու երեխաներին պաշտպանեցէք։ արիւնի հոտը վարդահոտից գերադասեցէք, մեռէք ու ձեր սիրելիներին թշնամուն կեր մի տաք։

Ես չեմ ասում, որ ինքներդ յարձակողական դիրք բռնեցէք, այլ միայն ձեր տան հսկողութիւնն առաջին պարտականութիւններդ համարեցէք։

Ամբողջ խօսակցութիւնն այս նիւթի վրայ էր։

Այս դէպքից յետոյ Ռուբէնն էր օրուայ հերոսը. Վանայ փաշայութեան մէջ՝ բոլոր տեղերը նրա անունն էր կրկնուում։

Վարագայ ուխտաւորները կրկնապատկուեցին, այս անգամի ուխտի առարկան Ռուբէն Ասքանազեանն էր, բոլորը ցանկանում էին հետը տեսնուել, խօսել։

Ամէն բերան գովաբանում էր ծակ ու ծուկերումը գլուխը թագցնող համեստ երիտասարդին, իսկ նա խիստ տխուր էր. հետը խօսել չէր լինում։

Երկու շաբաթ էր անցել և Ռուբէնն իւր նամակի պատասխանը չունէր։

ԺԷ.

—Ահա ուզածդ, երեսիդ կնճիռները թող անհետանան։

Ռուբէնը խլեց, քան թէ ստացաւ Հայրիկի ձեռից հաստածալ փաթեթին և դուրս թռաւ։

Նա էլ ուշք չդարձրեց Խրիմեանի իւր ետևից արձակած քրքիչներին։

Հայրիկի ծիծաղը բռնեց Ռուբէնի անգիտակցական գլուխ իջեցնելու վերայ, կատարեալ գժի շարժում էր արածն և ոչ երկրպագութիւն։

Սրտին կպցրած թանգագին գիւտը՝ նշանածի նամակը՝ նա ներս ընկաւ ննջարան։

Ննջարանը դատարկ էր, աշակերտները դասարանումն էին։

Դողդոջուն ձեռքերով նա պատռեց ծրարն և մի ծալք թղթեր կիտեց իւր անկողնի վերայ։

Նրա փափագածը բարակ փոստի թղթի վերայ հատ հատ գրուած մարգարտաշար նամակն էր, որ անյագաբար կարդում էր։

Երկու վայրկեանում թերթը շրջեց։

—Վա՛հ, բացականչեց զարմացած Ռուբէնն և Արփիկի նամակի չորս երեսն էլ նայեց։

—Այսքա՞ն միայն, գոչեց նա։

Աւքանազեանն աչքերին չէր հաւատում, նամակը շատ կարճ էր, մէս եղեսի միակ տողից յետոյ՝ Արփիկի ստորագրութիւնն էր։

—Մինչև այսօր ճըշ է իւր սիրուհին կարճ նամակ գրել, որ հիմա մի քանի տողով վերջացրել է. չէ, երևի, էլի կըլինի, երևի, Աւետիքի երկարաբանութեան մէջ է։

Ռուբէնը քրքրեց անկողնի վրայի թերթերի ծալքերը, իւրաքանչիւր երեսն ուշադրութեամբ դիտեց։ Ուրիշ նամակ չըկայ՝ բացի իւր կարդացածից։ Եւ հէնց բովանդակութիւնից յայտնի է, որ ուրիշը չը կայ։

Ա.րփիկը համառօտապէս իւր սիրալին զգացմունքը յայտնելից յետոյ՝ առաջարկում է նշանածին բաւականանալ իւր կարճ նամակով և ուշադրութիւն դարձնել եղբօր գրած հարցասիրական նկարագրութեան վերայ։

—Կարծել է, թէ կըճանճրանամ, կամ շատ կարդալով աչքերս կըցաւեն, չէ, հոգեակս, չէ, դու որքան կարող ես՝ շատ գրիր, որ շատ ուրախանամ։

Մի քանի անգամ համբուրեց Աստղանազեանն *Արփիկ* ստորագրութիւնը, նամակը խնամքով ծալեց, ծոցագրպանը դրեց՝ ասելով. այդ է քո տեղը, հանգստացիր, որպէս զի քո մերձաւորութիւնով հանգիստ բաբախի այդ մի բռնաչափ մսի կտորը, որին ամէնքը *սիրտ* են անուանում, իսկ ես՝ *սիրոյ տուն*։

ԺԸ.

—Ներիր, սիրելի, այսօր ես ուզում եմ գլուխդ

ցաւացնել իմ պաշտօնատեղում կատարուած սովորական ծանծկագործութիւններով։

—Մեր *դայմանում* Օսման էֆէնդին մօտ 50 տարեկան մի տաճիկ է։

Այսպէս է սկսում Աւետիքն իւր նամակը, կամ տեղեկագիրը։

—Վաղուց է, որ Օսման էֆէնդին ծառայում է մեր Բ. քաղաքում *դայմազամութեան* պաշտօնով։ Սրա օրով մի քանի վալիներ և փոխ վալիներ (նահանգապետ) եկել, գնացել են, և սա ամէնքին իւր պաշտօնումն ընդունել և իւր տեղից ճանապարհ է դրել։ Հաւասարապէս սիրուել է իւր բոլոր մեծաւորներից։

Նայելով սրա մեծաթիւ ընտանեացն և ստացած աննշան ամսականին՝ սրա ապրուստն ինձ համար մի հանելուկ է։ Ամէնքն ինձ հետ կարող են հաստատ համոզուած լինել, որ սա կամ հայրենական հարուստ ժառանգութեան տէր է, կամ մեծ պարտքերի ներքոյ ծանրաբեռնուած։ Իսկ եթէ աւելացնենք, որ Տաճկական կառավարութիւնը, շնորհիւ իւր անկուշտ պաշտօնակալների, ամիսներով ու տարիներով յաճախ անվճար է թողնում իւր պաշտօնեաների ռոճիկը, այն ժամանակ բոլորովին զարմանալի կըթուի Օսման էֆէնդու կենցաղավարութեան գաղտնիքը։

Եւ իսկապէս, քնչպէս է ապրում և տուն պահում մեր էֆէնդին, երբ գանձարանից ուղարկուած՝ ռոճ-

կի երեսը չէ տեսնում։ Ղալմաղամ էֆէնդին իւր բարեսրտութեամբը նախապէս խնդրել է վալի փաշայից, որ ուճիկին ստացուելուս նեղութիւն չքաշի իրան ուղարկելու, թող բաշխէ նա իւր ստորադրեալ ծառաներին՝ ումն ինչ չափով արժանն կըդատէ իւր Ողորմածութիւնը։

Դորանով Օսման էֆէնդին գիտէ, թէ ինչպէս ընդմիշտ ամրացրեց իւր տեղը նորեկ նահանգապետի մօտ։ Հէնց այդ է ամուր պատնէշը, որին ղալմաղամը յենուած՝ շարունակում է իւր կենցաղավարութիւնը։

Եւ ապրում է Օսման էֆէնդին շատ շուայլութիւնով ու անհաշիւ։ Քաղաքի առաջին հոյակապ կացարանը նրանն է, ամենքից նշանաւոր հարեմը, գեղեցիկ հարճերը, սանձակոտոր թանգագին արաբական նժոյգները, տասնաւոր սպասաւորներն ու հարեմի աղախինները Օսման էֆէնդունն են։

Ես ինքս անձամբ ականատես չեմ եղել, բայց իմ պաշտօնակից ականատեսները պատմում են, որ Օսման էֆէնդու տանը կեանքի պիտոյքներին խնայողութիւն չըկայ. դորա հետ անբաժան՝ նորա քսակը չի թերատուում։ Ընդհակառակն, յաճախ յաճախ արծաթի դրամները ոսկու են փոխուում և քսակ քսակի վերայ աւելանում ու Օսման էֆէնդու երկաթակապ դրամարկղի մէջ կարգ կարգ տեղաւորուում։

Ասում են՝ որ այդ քսակներից մէկ-երկուսը

ժամանակ ժամանակ տեղերիցը շարժուում են և Օսման էֆէնդու հաւատարիմ տան կառավարչի ձեռքով բարձր պաշտօնատարներին՝ վալուն, իւր օգնականին, մինչև Պօլիս անգամ՝ բայրամների օրերը շնորհաւորական նուէրներ ուղարկուում։ Բայց տեղերի դատարկութիւնը շատ չի աչքի ընկնում, միւս օրն ուրիշն է առաջինի տեղը բռնում։

Օսման էֆէնդու մէջլիսն ու իւր բնակարանը մի յարկի ներքոյ է. նրա առանձնասենեակը գրտնուում է իւր կացարանի և մէջլիսի միջակէտումը։

Նրա սենեակից երեք դուռն է բացուում. մէկը մտնում է մեր դիւանատունը, ուր մի քանի *քեաթիբներ* (գրագիր), նրանց հետ և ես, ծննկներիս վերայ մատեաններըը դրած՝ գրում ենք՝ ինչ որ կոտրած սեղանի առաջ նստած *քեաթիբբաշի* (քարտուղար) ժանգոտ Օսմար էֆէնդին է հրամայում։ (Ափսոս, նամակս երկարում է, ապա թէ ոչ, այս մարդի կենդանագիրը խիստ հետաքրքիր է։)

Երկրորդ դուռը բացուում է դէպի ղայմաղամի գրասենեակը, որ օրերով դատարկ է ընկած և ձևի համար մի սեղանի վերայ մի քանի հնադարեան անկատար թղթեր փռուած են։

Առանձնասենեակի անհրաժեշտ կահ կարասիքի և գործնական ընթացիկ թղթերի թուում անբաժան են նարգիլէն և ղալֆէի ֆինջանը։ Առաջինի գալարուն ծխրանի ծուխը վերջինի թափանցիկ

ամպանման գոլորշուն խառնուած՝ սենեակ մտնողի հոտառութեան գործարաններին մի ամբոս են շնչում։ Տաճկական անուշահոտ թամբաքուի ծուխը մի ախորժելի թմբիր է զարթնացնում ղայմաղամի այցելուների մէջ։

Օսման էֆէնդու առանձնասենեակն երրորդ դռնով կապուած է ղայմաղամի բակի ու այնտեղից փողոցի հետ և այս դուռն է առաւել գործածականը։

Դիւանատուն մտնող դռան նիգը միշտ ներսից պինդ փակուած է, մինչև քէթիբէչիբաշին տասն անգամ դողդողալով զգուշութեամբ չբաղխի, չի բացուիլ, իսկ նիգը փակուում է՝ երբ այցելու է լինում։

Մի քանի կարգի մարդիկ են երրորդ դռան շէմքերը մաշողը. դրանք են խնդրարկուները, հիւրերն և Օսման էֆէնդու սեպհական գործակալները։

Խնդրարկուներից նրանք են երրորդ դռնով մտնում, որոնք ձանձրացել են մեր դիւանատունը ելումուտ անելով, որոնք տարիներով իզուր տեղն իւրեանց քսակները դատարկում են մեր գրագիրների և քէթիբէչիբաշու գրպանումը։ Նրանք վերջն երբ զգում են իրանց մեծ սխալը, երբ հասկանում են, որ ըստ տաճկական յայտնի առածի՝ «հարիւր մարգարէի ա-ղաչելուց աւելի ձեռնտու է միակ Աստծուն դիմելը» վճռական քայլն են անում և ղայմաղամի երրորդ դռնովը ներս մտնում, լիքը քսակն անխօս

վալը դնում և անխօս դուրս գնում։

Պատիւ մեր ղալմաղամի ազնուութեանը, առ առաւելն երեք օր այնուհետև՝ և խնդրարկուն բաւականութիւն է ստանում մեր դիւանատանից։ Արի ու բաւականութիւն մի՛ տալ, քեաթիբչիբաշուց ըսկսած՝ մինչև վերջին *քեաթիբը* շամփուրն է քաշում ղալմաղամն ու խորովում։

Ղալմաղամի առանձնարանի բուն հիւրերը պատահական են. նրանք կարճ միջոցով մտնում են Օսման էֆէնդու առողջութիւնը հարցնելու և դուրս են գալիս։

Նրանք քաղաքում գտնուած երևելի հարուստ Տաճիկներն են։ Նրանք իրանց հաշիւն ունին. իւրեանց այցելութիւնով նրանք կամենում են Օսման էֆէնդու հետ կապ պահպանել, որ տեղին օգտուին ձրիաբար։ Նրանց ընդունելութիւնը Օսման էֆէնդու կողմից սիրալիր է լինում, ինքը երբեմնապէս կարօտում է նրանց միջնորդութեանը. վալիներն ընդհանրապէս նրանց յարգում են։

Սեպհական գործակալները ունի Օսման էֆէնդին երկու տեսակ. առաջիններըը տաճիկ են և ըստորին դասակարգից։ Սրանք բոլորը ղալմաղամի շընորհիւ են մարդամէջ մտած, *զաբթիութեան* (ոստիկանութեան) կամ *դաւազութեան* (տասնապետ) պատուին հասած. մի խօսքով՝ սրանք են ղալմաղամի հացկատակները։

Սրանք ուղարկուում են այս, կամ այն երկրոր-

դական հարուստներին սպառնալիքները տալու, որ Օսման էֆէնդուն չըմոռանան, կամ թէ ուղարկուում են քաղաքի գիշերապահներին, կամ ճանապարհ կտրող աւազակների գլխաւորների մօտ։

Այդ լինում է այն ժամանակն, երբ վէրջիններիս կողմից տուրքն ուշանում է։

Երկրորդ կարգի գործակալներն են մեր հայ *հոդաջինները* ու առաջաւորները։

Սրանց մասին, սիրելի Ռուբէնն, առ այժմ լռում եմ, երկրորդ նամակիս նիւթ թողալով՝ այն էլ՝ եթէ քաջութիւն ունենամ գրելու։

Թէ ընչո՞ւ. յետոյ կիմանաս։

Աւետիք։

ԺԹ.

Աւգանապետեանի յանդիմանութիւնները, երևի, ազդել էին Արփիկի վերայ։

Հետևեալ անգամին երկու մեծադիր թերթ լի նամակը հինգ անգամ կարդաց Ռուբէնն և դեռ էլի գոհ չէր, դեռ քիչ էր համարում։

Նա բնաւ չէր մտածում, որ նամակի պարունակութիւնն անբովանդակ սիրաբանութիւններ էին։ Արփիկի նախկին իմաստալից փիլիսոփայութիւնները և այս նամակը, կարծես, միևնոյն անձի գործ չէին։

Ընչո՞ւն է պէտք, իւր սիրուհու գրածներն են, և հերիք է. նա այսքանով գոհ էր։

—Հիմա քեզ հետ խօսենք, սիրելի Աւետիք,

փափագը լցնելուց յետոյ՝ Ռուբէնը ձեռքն առաւ իւր ապագայ աներձագի նամակը։

—Եթէ յիշում ես, գրում է Աւետիքը, անցեալ նամակիս վերջաբանը մեր ղայմաղամի երկրորդ կարգի գործակալների մասին անելիք նախաբանն էր։

Խօսքս քաղաքիս հայ *հորթաչինների* և առաջաւորների մասին էր։

Դրանք մի ստուար խումբ են, բայց ես բոլորին թողած՝ մէկի գործողութիւնների հետ պէտք է քեզ ծանօթացնեմ։

Հարկաւոր չէ այս բարեհոգու անձնաւորութիւնը նկարագրել. ինչ պատկերի, հասակի ու տարիքի կուզէ՝ թող լինի, ինչ անուն կուզես՝ յատկացրու։ Վարդան, Վահան, Վասակ, Մեհրուժան՝ բոլորն էլ հայի անուն են. բայց թէ Վարդաններից մէկը հայի սէրն է իրան գրաւում, միւսն ատելութիւնը, Վասակներից մէկն անէծք և միւսն օրհնութիւնները է տարել, անուան չնորհքը չէ այդ, անունը կրողի գործերի հետևանքն է այդ։

Այդպէս է և իմ այս նամակիս հերոս *հորթաչի* հայը։ Ինչ անուն կրում է նա, միևնոյն է, և դու մի հետաքրքրուիր, թէ ո՛վ է. հերիք է, որ հայ է և մեր քաղաքումը լաւ դիրք ունի։

Ձևականութեան համար բարեկամիս անունը դնում եմ *հորթաչի* Կիրակոս էֆէնդի։

Եւ այսպէս, Կիրակոս էֆէնդին ղայմաղամի գիշերային այցելուներից մէկն է։ Հայերն ընդհան-

բապէս գիշերը ժամանակն են սիրում դայմաղամի տեսակցութիւնը վայելել։ Օսման էֆէնդին սրանց աւելի է կարօտում, քան իւր միւս այցելուներին, նա սրանց մեծ անհամբերութեամբ է սպասում։

Մուրթը գետինն առել է, ամէն ոք իր ընտանիքի հետ իւրայիններին ողջանում է, քաղաքի երթևեկութիւնը խաղաղուել է, բայց դեռ այնքան ուշ չէ։

Անվտանգ մանգալու ամենայարմար ժամանակն է։ Տուն կտրողներն ու գիշերաշրջիկները դեռ նոր են իրանց պատերը ծակելու և փականքները կոտրելու գործիքները պատրաստում։ Այս ու այն լուսամտից դեռ ճրագի լոյսը չի հանգել, ուրեմն շատ տներում դեռ արթուն են։

Գողի ամենալաջող ժամանակն առաջի քնի երկրորդ կէսն է. այդ ժամանակ քնածն ու մեռածը մէկ է։

Ահա մեր Կիրակոս էֆէնդին զգուշութեամբ հատ հատ ընդհատելով՝ բաղխում է դայմաղամի բակի դուռը։

Ոչ ոք բացանող չըկայ։

Բաղխելը մի քանի րոպէից յետոյ նոյն մեղմութիւնով կրկնուում է։

Կրկին լռութիւն։

Երրորդ անգամին ներսի կողմից մի կոպիտ ձայն է լսուում.

—Ո՛վ ես։

—Բա՛ց, Նազիմ աղայ, համեստօրէն և ցածր ձայնով յայտնում է Կիրակոս էֆէնդին իւր անունը։

—Ի՞նչ ես այս կէս գիշերին մարդի անհանգիստ անում, դուք հայերդ եթէ ամէն գիշեր չը ձանձրացնէք, Ղայմաղամ էֆէնդին իւր ժամանակին քուն կըմտնի, մենք էլ մի փոքը հանգիստ կունենանք։ Չեմ հասկանում, ի՞նչ գործ ունէք այս ժամանակ և ի՞նչ էք խօսում, տրտունջ է յայտնում *ղաիմուչի ըաշի* (դռնապան) Նազիմը։

—Այդ քո հասկանալի բանը չէ, սիրելի Նազիմ աղայ, քաղցրութեամբ յանդիմանում է դռնապանին Կիրակոս էֆէնդին, քո փորացաւանքը մի քանի փարայ է, դրան էլ կըդիմանանք. ահա ստացիր և գնա՛ յայտնիր իմ մասին։

—Ցայտնելու կարիք չըկայ, դու մեր համար թանգագին հիւր ես, խոնարհութեամբ առանձնաբանի դուռն է ցոյց տալիս Նազիմն և աւելացնում. մեր ղայմաղամ էֆէնդին հայերի մէջ ամենից աւելի քեզ է սիրում։

Ոտքի մատերի ծայրերի վերայ զգուշութեամբ մօտենում է Կիրակոսն Օսման էֆէնդու առանձնասենեակին և մի բարակ հսկից յետոյ՝ եղունգով շատ կամաց դուռն երեք անգամ զարկում։

—Ներս արի՛, լսուում է ղայմաղամի ձայնը։

Մեր հայ իշխանն ամենայն երկիւղածութեամբ ոտն է մտնում և դռան տակից խոնարհ երկրպագութիւն մատուցանում։ Ապա Օսման էֆէնդու

հրամանին համաձայն՝ նոյնպէս ոտքի թաթերի վերայ մանգալով՝ գնում է իւր սովորական տեղը գորգի վերայ չոքում:

Երեք անգամ ծափահարութիւն:

Ներս է վազում ծառան:

Նարգիլէ ու ղահուէ չորքաջի Կիրակոսին:

Սպասաւորն իւր պարտքը կատարում, դուրս է գնում, իսկ հիւրի և տան տիրոջ մէջ սկսում է խորհրդաւոր խօսակցութիւնը:

—Ի՞նչ արիր. աչքի ծայրը գլխի հետ դէպի փողոցի դուռը թեքելով՝ հարցնում է զայմաղամը:

—Ո՛ւ Մեծութեանդ մի չնչին խօսքը ծառայիդ գլխից վեր է, գլուխ եկած գործ էր:

—Պատմիր:

—Կանչեցի մօտս Էհրամճի օղլի Գասպարին, (այս նոյնպէս կեղծ անուն է); սրտացաւ բարեկամ ձևացայ և ասացի՝ որ, իբր թէ, չըգիտեմ ում բերանով Մեծութիւնդ տեղեկացել ես, որ ինքը Էհրամճին մի քանի տեղ Օսմանցուի դատաստանը վատաբանել է:

—Է՜... է... է... շատ լաւ ես սկսել, շարունակիր, շարունակիր, հետաքրքիր է, ծիծաղելով ասաց զայմաղամը:

—Ծառայդ, Ողորմածութեանդ շնորհիւ, գիտէ խօսելու եղանակը, շողոքորթ ժպիտով պատասխանեց չորքաջի Կիրակոսն և շարունակեց.

—Խեղճ մարդի գոյնը տուեց, երկիւղից լեզուն

փորն ընկաւ, երդում—հաւատ արեց, որ իւր բերանից երբէք այդպիսի խօսք չի դուրս եկել: Այ, եղբայր, ասացի նրան, ընչո՞ւ համար դու զղջում չես. մոռացել ես, որ անցեալ շաբաթ իմ ներկայութեամբ Օսման էֆէնդու վերայ մի քանի պակասութիւնները շարադրեցիր: Ես, իհարկէ, լինելով քո բարեկամդ, ասածներդ քամուն կըտայի, ինչպէս որ տուի, բայց չէ որ ամէն ոք ինձ պէս սրտացաւ չի լինիլ քեզ, ձեռաց՝ տեղ կըհասցնեն:

—Ես միայն քեզ մօտ մի խօսք ինձ թոյլ եմ տուել բերանից դուրս թողնելու, ուրիշի մօտ բընաւ չեմ լիշում, թէ ինչ և իցէ խօսեցած լինիմ, պնդում էր Էհրամճին:

—Ինձ մօտ, ասացի, իբրև բարեկամի, կարող ես սրտիդ ցաւերն ապահով արտայայտել, բայց, կերևի անհեռատեսութիւն ես արել, խօսքը տեղ է հասել և այսօր գլուխդ փորձանքի է մատնուում:

—Շատ լաւ, շատ խելօք, խրախուսեց դայմաղամը:

—Սպառնալիք տուի, շարունակեց Կիրակոսը, որ վաղը պէտք է Ողորմածութիւնդ իւր խանութը ցրիւ տաս և իրան շղթայակապ, իբրև քաղաքական յանցաւոր, Վալի փաշային ուղարկես:

—Եւ կանեմ, դու սուտ չես ասել, այդպիսի վնասակար մարդկանցը հարկաւոր է ոչնչացնել, որ իրանց չար լեզուովը չըպղտորեն միամիտ ժողովրդի սիրտը, սպառնաց Օսման էֆէնդին:

—Նախ՝ մբթէ ես մեռած եմ, որ ժողովրդի մէջ Օսմանլուի գահի դէմ չար խորհուրդները յղանան, այն էլ ո՛ւմ մէջ—մեզ նման ճանճ ու մժեղ ազգի մէջ, որին Աստուած ստեղծել է ձեր ոտքի հողն ու մոխիրը լինելու, կծկուելով լեզուն ծամծմոտեց չորբաչի Կիրակոսն, և երկրորդ՝ Էհրամճին երբէք այդպիսի խօսք չի ասել:

—Այդ միևնոյն է, մինչդեռ այդպիսի խռովարար մարդիկը շունչ են քաշում, ամէն բան ըսպասելու է. փա՛ռք Աստծոյ, դու ինքդ եկար ինձ յայտնեցիր, ուրիշներն ինձ ոչինչ չեն ասել:

—Ես Մեծուրթեանդ հաւատարիմ ծառան եմ, հրամանքդ ինձ ընդունում, պատուում ես, և ես պարտական եմ գլուխս ոտքիդ տակին մատաղ անել, դու ինձ հրամայել ես լսածներս քեզ յայտնել, և ես կատարում եմ:

—Շատ շնորհակալ եմ, ինձ քաջ յայտնի է քո հաւատարմութիւնը, դու մեզ բարեկամ ես, բայց այդ փուչ Էհրամճինների ոտքը պիտի կտրել:

—Էհրամճինները, ծառայ եմ, հարկաւոր մարդիկ են, սխալուեց, մի լիմար խօսք բերանից թըռցրեց, այսօր յանցանքը քաւում է, աւելին ինչ կուզես՝ մի դատարկ խօսքը Մեծուրթիւնիդ ահա այսքան օգուտ տուեց:

Չորբաչի Կիրակոսը գրպանից մի քսակ ոսկի հանեց և դրեց Օսման էֆէնդու առաջը՝ ասելով.

—Այսուհետև Էհրամճին գլուխը քարովը կը

տայ, լեզուն փորը կըքաշի, զգույշ կըլինի, և ո՛չ թէ ապերախտ Տաշճի օղլի Կարապետի նման ամէն տեղ Ողորմածութիւնդ կըբամբասի, որ, իբր թէ, իւր դաստը տեսնելուց առաջ՝ փողերն ստացել կերել ես և իւր հակառակորդի օգտին ես գործը վճռել։

—Ա՛յ... էրմէնի՛ *) կրակ կտրուեց բարկութիւնից Ղայմաղամը, նա համարձակուե՛ իմ վերայ խօսել, ես նրան հողի հետ կըհաւասարացնեմ, հէնց այս րոպէիս երեսի վերայ քարշ տալով՝ արևի լոյսից կըզրկեմ։ Է՛...է...էյ... բարձրաձայն գոչեց և մի անգամ ծափահարեց Ղայմաղամն ու կամենում էր ծափը շարունակել։ Զորբաչի Կիրակոսն իսկոյն վեր թռաւ տեղից ու Ղայմաղամի երկու ձեռքը պինդ բռնեց և ծափահարութեան շարունակութիւնն արգելելով՝ ասաց.

—Հանգստացէ՛ք մի րոպէ, էֆէնդիմ, աղաչում եմ, երկու խօսք, և եթէ նուաստիս խնդիրը Տէրութեանդ հաճելի չըլինի, նորից ծառաները կանչեցէք և տնօրինեցէք՝ ինչ որ ձեզ հաճելի է։

Այդ խօսակցութեան մէջ էր, որ դռան ետեւից մի թեթև բաղխիւն լսուեցաւ։

Ղայմաղամի ծառան էր նա, որ իւր տիրոջ կոչին պատրաստ՝ սպասում էր երեք անգամ ծափահարութեան, որպէս զի տուն մտնի։

---

*) Անարգ անուն է, որ տաճիկները հային տալիս են։

—*Իստէմ՛զ* (հարկաւոր չէ), ձայն տուեց Ղալմաղամն, և ծառան ներս չեկաւ։

—Այժմ խօսէր ասելիքդ, տեսնենք, դարձաւ Օսման էֆէնդին դէպի Կիրակոսը։

—Տաշճիներն անատամ շներ են, տէր իմ, տեղը նստելով՝ ասաց Կիրակոսը, կըհաչեն, կըհաչեն ու շուաքներումը կըպարկեն։ Դու երբէք մի՛ նեղանալ, վաղն այս ժամանակ մի ոլդպիսի քսակ ևս նրա կողմից քեզ պարտական լինեմ. բաւակա՞ն ես։

—Վնաս չունի, ժպտալով պատասխանեց Ղալմաղամը. գործ դիր՝ որքան շնորհք ունիս, ապա թէ ոչ, ուղիղն ասեմ, վրադ բարկացած եմ, և եթէ մեր սիրելի չորբաչի Կիրակոսը չըլինէիր, այս երեկոյ քեզ ընդունելու չէի։

—Ի՞նչ կայ, ողորմած Տէր... ոտք ու ձեռքը դող ընկած՝ կակազեց Կիրակոսը, ես քո դռան շո՛ւնը... քո ոտքիդ հողն ու մոխիրը... երդուո՛ւմ եմ...

—Ոչինչ, ոչինչ, մի՛ նեղանալ, չորբաչի, կատակ էր արածս, խօսքդ շարունակիր։

—Ի՞նչ պիտի շարունակեմ, Տէր իմ, մի քանի րոպէից փոքր ինչ ոգի առնելով, բայց նոյնպէս դողդոջուն ձայնով ասաց Կիրակոսը, ոչ գլխիս մէջ խելք մնաց, ոչ մարմնիս մէջ կարողութիւն։

—Եթէ այդպէս է, բարի գիշեր, գնա, հանգստացիր, վաղն երեկոյին քեզ կսպասեմ Տաշչուն չըմոռանաս։

—Բայց ես չեմ հանգստանալ, մինչև բարերար

տիրոջս բարկութեան պատճառը չիմանամ:

—Ակքիս վերայ, խոստանում եմ, անպատճառ վաղն այս ժամանակ ամէն բան քեզ պատմել. այսքանը միայն միամիտ եղիր, որ ես իբրև ներողամիտ մարդ, ամէն ինչ մոռացութեան եմ տուել և քեզ առաջուան պէս իմ բարեկամն ու հաւատարիմ սիրելին եմ ընդունում. բարի գիշեր, ապահով կարող ես քնել:

Զորբաչի Կիրակոսը մի քանի անգամ գլուխ տուեց ու հեռացաւ մտամոլոր:

—Զընեղանաս, սիրելի Ռուբէն, եթէ գլուխդ ցաւացրի մեր դիւանատան մէջ շարունակ կատար ուող ներքնագործութիւններից մի երկու էջը քեզ հաղորդելով, հետևեալ նամակովս թոյլ տուր չորբաչի Կիրակոսի երկրորդ երեկոյեան տեսակցութիւնով ընդ միշտ դադար տալ այսպիսի զզուանք յարուցանող թղթակցութիւններին:

Այսպէս էր վերջանում Աւետիքի նամակը:

Ի.

Անհանգիստ էր Ասքանազեանը. մի շաբաթ էր քնահատ էր: Նա անհամբեր սպասում էր առաջիկայ կիւրակէին: Այդ նրա սպասած օրն էր: Նրա թղթակցութիւնները կարգի են ընկել. ճիշտ տասն օրը մի անգամ սիրելուց նամակ է ստանում. սպասած կիւրակէն այդ ցանկալի օրն էր:

Բայց այժմ նրա մտատանջութեան առարկան ոչ այնքան Արփիկի նամակն է, այլ նրա եղբայր Աւետիքինը։

Զօրքապետ Կիրակոս էֆէնդին Ռուբէնի սրտին մի ծանր քար է դարձել և իրան ճնշում է. ուզում է անպատճառ վերջապէս իմանալ, ինքն էլ չգիտէ՝ թէ ընչո՞ւ։

Վերջապէս կիւրակէն հասաւ և Ռուբէնը հաստատած ծրարը ձեռքն առաւ ու քաշուեց մութն անկիւնն։

Նա ուրախացաւ, երբ իւր սիրելին մի քանի տողով միայն յայտնում էր իւր առողջութիւնը՝ վերջացնելով այս խօսքերով.

—Բաւական է, որ առողջութեանս մասին ապահովացար. թող շարունակութիւնն Աւետիքն անի, նրա գրածն աւելի հարցասիրական է։

Եւ արդարև, Արփիկի կարճ գրութիւնից յետոյ՝ նոյն թերթի վերայ սկսուում էր Աւետիքի նամակը։

—Երկրորդ երեկոն է. այսպէս է սկիզբն առնում Աւետիքի գրութիւնը, նոյն դռնաբաղխումն, նոյն նազիմը, նոյն փարաները, նոյն երկրպագութիւնը, նարգիլէն, ղալիքն։

Կիրակոս էֆէնդին իւր տեղը չոքած է։

—Ի՞նչ կայ, չորբաչի՛, սառը ժպտում է Օսման էֆէնդին։

Կիրակոսն անխօս հանեց երեկուանից կրկնապատիկ մեծ քսակ և դնելով ղայմաղամի առաջ՝

հազիւ լսելի ձայնով շշնչաց. Տաշչի օղլու ընծան է։

—Ախէրիմ չորբաչի Կիրակոս, խօսքիդ տէր ես։

—Յոյս ունիմ, որ ՄեծուԹիւնդ էլ քո անսուտ խօսքը կըկատարես, սրտամնացուԹեանդ և արդար բարկուԹեանդ պատճառն անարժան ծառայիդ չես ծածկիլ։

—Մի պայմանով, որ սիրտդ ամուր բռնես, ինձ չընդհատես և վերջն՝ ասածս կատարես։

—Ես, կարծեմ, միանգամ ընդ միշտ ՄեծուԹեանդ յայտնել եմ, որ քո խօսքդ ինձ հրաման է։

—Ուրեմն լսիր։ Դու անցեալ օրը՝ ձեր եկեղեցու բակումն Էհրամչի օղլու հետ խօսեցածդ ժամանակ ինձ շուն ես անուանել։

—Ը՛... ը՛... ը՛... ճս... այդ... մտքով...

—Մի ընդհատիր, հասկանում եմ, դու օրինակ ես բերել, ասել ես՝ շան բերանը ոսկը պետք է ձգել։ Եւ ճշմարիտ, միսն ինքդ ես կերել, ոսկրն ինձ բերել. դու Էհրամչուց ստացածիդ երրորդ մասն ես ինձ բերել, այնպէս չէ՞։

—Տէր իմ...

—Ոչ արդարացիր և ոչ հետաքրքրուիր իմանալ, Թէ դու երեկ ինձ մօտ դեռ չեկած՝ ես որտեղից գիտէի։

—Ես եմ լիմարը, տէր իմ, գիտեմ, որ Թշնամի է, բայց բարեկամի տեղ եմ ընդունել և հետն ազգակցուԹիւն եմ ուզում հաստատել։

—Այս հաշիւների մէջ էլ դուցէ սխալ ես.

չըգիտեմ՝ ո՛ւմ ես յայտնել գաղտնիքդ, կամ ո՛ւմ վերայ ես կարծիք տանում, գուցե և իրաւունք ունիս անհաւատարիմ բարեկամներդ վերայ տըրտունջալու, բայց ես միայն մի տեղից չեմ խմացել, ամէն մի քայլափոխդ ինձ յայտնի է, այն էլ գիտեմ, թէ եկեղեցուց մինչև տուն գնալդ քանի՛ մարդի հետ ես խօսեցել, ո՛ւմ ես ողջոյն տուել, ո՛ւմ վերայ ես մատդ թափահարել, ո՛ւմ ես հետդ մինչև ձեր տունը տարել ու այնտեղից մի մարդի մօտ բանագնաց ուղարկել. վերջապէս նոյն մարդի տուած բացասական պատասխանն էլ գիտեմ։

—Սակայն այդ բոլոր իրողութիւնները ես միայն մի մարդի եմ յայտնել, որի անպիտանութիւնը թէև գիտէի, բայց կարծում էի, թէ բարեկամ է, գաղտնիք կըպահի։

—Ձո ակնարկած բարեկամիդ ես չեմ ճանաչում, նոր խնամուցդ թէպէտ ինքդ գանգատաւոր ես, սակայն նրա վատութիւնն ես միայն քեզանով գիտեմ. երեսանց ճանաչում եմ, իսկ հետը յարաբերութիւն չունիմ, նա երբէք մօտս չի յաճախում և ոչ արժան կըտեսնեմ թոյլ տալու։ Այլ բան է, եթէ դու սրտանց սիրէիր և միջնորդէիր, բայց չէ՞ որ ինքդ ես միշտ ասում, թէ խնամիդ իր առուտուրովն ու հայերի մէջ վայելած պատուովը քո համար մի սպիտակ շուն է, որ բամբակ ծախողին վնասում է։

—Ո՞վ է ուրեմն։

—Աւելորդ հետաքրքրութիւն. դու այսքանն ինձ ասա, ճշմարիտ է, թէ ոչ. ուղիղ խոստովանիր, ճշմարիտ է և այն, որ Տաշչի օղլուց բերածդ այս ծրարի մէջ 25 ոսկի էր և հինգը քո քսակն է մտել: Ի՞նչ երկար ենք խօսում, որպէս զի ասածս սուտ չըլինի, ահա քո առաջևդ համարում եմ:

Մինչ Օսման էֆէնդին ոսկիները համարում էր, Կիրակոս էֆէնդու երեսին մահուան դալուկն էր թագաւորում:

Ղալմաղամն աչքի պոչով տեսնում էր նուաստ հալի շփոթմունքն ու իւր մէջ փառաւորուում էր:

Այժմ Կիրակոս էֆէնդին իւր ամենահպատակ և կոյր գործիքն էր. չորբաչուս հոգին իւր ճանկումն էր:

—Տասն ոսկի. տասն ու հինն, այս էլ քեզ քսան, իմ սիրելի չորբաչի Կիրակոս էֆէնդի, բարձրաձայն շեշտեց Ղալմաղամը, ուղիղ է, սխալուած հօ չեմ, կուզես՝ ինքդ համարիր:

—Տէր իմ, հեկեկաց Կիրակոսն և չոքէչոք մօտեցաւ, երեսի վերայ վայր ընկաւ Ղալմաղամի առաջին ու գրկել էր նրա ծնկները:

—Վեր կաց, սիրելի չորբաչի Կիրակոս էֆէնդի, վեր կաց, միամիտ եղիր, երեկ քեզ ասացի, որ ես ներողամիտ մարդ եմ և գիտեմ գնահատել իմ հաւատարիմների փոշետեսակ սխալանքները, հոգ չէ, մեղր ծախողը մատը կըլպստի, մինչև քո քսակիդ պատիւը չիմանաս, իմիս համար մտածել չես կարող:

—Բայց, Տէր իմ, զրպարտանքները են, թշնամիները շատ են, մեկը հնգով բազմապատկած՝ գալիս Մեծուհեանդ առաջ ինձանից չարախօսում են։

—Հոգ չէ, ել սիրելիս, ել, իմ փորս անհուն ծով է, շատ բաները կուլ են գնում այս փորի մեջ ու մարսուում ոչնչանում։ (Ղայմաղամն երկու ձեռքով իւր փորին զարկեց)։ Ես հարիւրաւոր աչքեր ունիմ, հազարաւոր ականջները, ամէն բան տեսնում եմ, ամէն խօսք լսում եմ, բայց մեկին ուշադրութեան եմ առնում, միւսը մոռացման պարկի մեջ ամփոփում, ինչպէս և արհամարհեցի սորանից մի ժամ յառաջ քո տեղդ նստած մի պատուական հայի քո մասին արած ծանր զրախօսութիւնները, որոնց եթէ քառորդը ճշմարիտ լինէր և եթէ ես քեզ վերայ հայրական խնամք չունենայի, դու կորած էիր։

—Ողորմածուհիդ օրհնուած բերանովդ վկայեցիր, որ զրախօսութիւն է, բարերար Տէր, իմ միակ յանցանքն այն է, որ քո սիրոյն արժանացել եմ, և այդ մեծ ցաւ է իմ թշնամի ազգակիցների նախանձոտ սրտին։

—Եւ հէնց դորա համար նեղացած եմ քեզանից. դու ինքդ քաջ գիտես իմ անչափ սէրս դէպի քեզ, գիտես, որ հարստութեանդ գլխաւոր աղբիւրներն այնքան քո առուտուրդ և ազգիդ մեջ վարած պաշտօններդ չեն, որքան իմ շնորհիւ և իմ անունով ստացած եկամուտդ է. այս ամէնը գիտես, ասում եմ, և չես ուզում ինձ մխիթարած պահել։

—Ինչ հրաման ունիս, տէր իմ, կեանքս քեզ զոհել պատրաստ եմ։

—Կեանքդ ափսոս է, դու իմ համար շատ ապրիս, դու ոչ մի *ալչաք* (ստորաքարշ) հալի նման չես։

—Ուստ չէ, տէր իմ, շատ յարմար անուն է, որ *իսլամները* տալիս են մեզ հայերիս. մեր հայն եթէ *ալչաք* չըլինէր, պէտք է ուրախանար ձեր շնորհքին արժանանալու բաղդաւորութեանս համար, և ոչ թէ կոյր նախանձից դրդուած՝ աշխատէր Տէրութեանդ աչքից ձգել ինձ։

—Այո՛, ճշմարիտ ես ասում, *ալչաք* խօսքը հալի վերայ չափած, ձևած է, շատ լաւ են յարմարացրել մեր պապերն և մեզ կտակել, որ հալին *ալչաք* անուանենք, բայց դու ուրիշ հայերի չափ *ալչաք* չես, և եթէ իմ մի առաջարկութիւնս, որ հիմի պիտի անեմ, կատարես, իմ ամենասիրելին կըդառնաս։

—Տնով, տեղով, զաւակներով քո գերին, քո մատնաղը, ասա՝ ինչ որ կամքդ է։

—Եթէ այդպէս է, դու պէտք է քո փողովդ այս քաղաքում մի այնպիսի մզկիթ շինես, որ բոլոր եղածներից գերազանցէ իւր շքեղութեամբը։ Ես մի գեղեցիկ հարսնացու աղջիկ եմ ընտրել, ուզում եմ նրան իմ հարեմիս ծաղիկների վարդը շինել։ Նա մի փոքր անչափահաս է. մինչև քո մզկիթի շէնքը վերջացնելը՝ նա կատարելահասակ կըլինի։ Ուխտ եմ արել,

կամենում եմ *գիւզէլիս* (գեղեցիկ) հետքէդին կտրել (պակուռել) հալի ձեռքով շինուած մզկիթի մէջ։ Չը գիտեմ՝ այս ինչ տարօրինակ ուխտ է, բայց մի անգամ սրտիցս ըղխել է, ուխտադրուժ չեմ կարող լինել. իսկ քեզանից լաւ հայ ես ո՞վը կարող եմ ունենալ։ Սրանով քեզ շատ չի պակասիլ, քո հարըստութիւնից 2000 ոսկի վերցնելը մի և նոյն է՝ թէ ծովից մի կաթիլ ջուր. այն էլ՝ ես խոստանում եմ՝ միջոց տալ քեզ լրացնելու։

—Իմ աչքի, իմ գլխի վերայ, ողորմած Տէր իմ, վաղն և երէ հիմքը փորել կըտամ։ Ամենից յարմար տեղն իմ տան առաջի մեծ հրապարակն է, ուր, թէպէտ, հայերս մոտիկը էինք եկեղեցի շինել, եղածը խախտուել է, փոքրութիւն է անում և անպատշաճ տեղում է շինուած, բայց ինչ վնաս, մզկիթին աւելի արժանավայել տեղ է հարկաւոր, մենք յետ ընկած անկիւններումն էլ կաղօթենք։

—Շնորհակալ եմ, Կիրակոս էֆէնդի, արժան տեսաւ *թամաննահ* անել (շնորհակալութիւն անել) Ղայմաղամը, քո բարեպաշտական ձեռնարկութեան համբաւը վաղ առաւօտ կըհաղորդեմ Վալի փաշային և մեծ Մուֆթուն։ Աստուծով, երբ տաճարն իւր մինարէյով պատրաստ կըփայլի արեգակի տակին, Վալին ու Մուֆթին կըգան, բացման հանդէսը կը կատարեն և մօտ ճաշելու պատիւը կանեն քեզ։ Այն օրը քո հռչակը ողջ *ալէմ ղիւնեան* (աշխարհը) կըտարածուի, Օսմանլուի հողի մի ծայրից մի-

սը կըհասնի, մինչև Փաղիշահի գահի ոտքը կը բարձրանայ։ Դրանից այն կողմը լինելիքը պահում եմ յետոյ։

—Անարժան եմ այդքան շնորհքին, տէր իմ, էգուցուանից մշակները գործի կըդնեմ։

—Ուրեմն, բարի գիշեր, վաղուան անելիքդ յետ թող, մինչև ես մեր Ղազու և տեղական մուֆթու հետ խորհրդակցեմ, չափ ու ձևի վերայ մտածեմ, այնուհետև քեզ իմաց կըտամ։

Կիրակոս էֆէնդին ոտք ելաւ, սեղմուելով մօտեցաւ, Օսման էֆէնդու քղանցը համբուրեց և յետ ու յետ գնալով դուռն իւր երեսին ծածկեց։

—Այսուհետև ես ձեր կերակուրը կեփեմ, ոտքիս տակ դարան փորողնեը, բոլոր կարողութիւնս կըդնեմ և ձեր ո՛վ լինելը կիմանամ, դո՛ւք՝ որ աղուէսի խորամանկութեամբ ներս էք սողում Ղայմաղամի մօտ միս ծամելու՝ դուք ամէնքդ դողացէք ձեր ահեղ ու վտանգաւոր թշնամու առաջ։

Այս ապառնալիքն էր որոճում Կիրակոս էֆէնդին՝ Ղայմաղամից վերադառնալուս։

Յանկարծ նա մի տեղ կանգ առաւ։ Նրա աչքերը չռեցան, ճակատը խորշոմակեց և շրթունքներն յետ բացուեցին։ Այս այն դրութիւնն է, երբ մարդի մէջ մի սարսափելի միտք է ծագում և նա ափշում, մոլորուում, ուշքը լարում է մտքի մէջ ծագած բանի վերայ։

—Չէ, չեմ կարծում, խնամիս այդպէս բան չէ

անել, Ղայմաղամն ինքն էր ասում, որ հետը յարաբերութիւն չունի... Բայց եթէ հէնց նա լինի, եթէ խորամանկ Օսմանցին գլխիս տակը բարձ է դնում, եթէ տակս փորողը նոր խնամիս է... եթէ մի ժամ յառաջ Օսման էֆէնդու մօտ գտնուած. հայը դու ես, իմ սիրելի նոր խնամի... օհ, դողա, դժոխքի կատաղիքը չեն կարող քեզ իմ ճանգերից խլել, վերջացաւ այնուհետև մեր արեւնակցութիւնը, թուրքի կըտամ, քրդի կըտամ աղջիկս և քո դէնից ներս չեմ թողնիլ։

Կիրակոս էֆէնդին շտապ շտապ քայլերն ուղղեց դէպի իւր տան կողմը։

Մի տեղ նա յանկարծ կանգնեց և մի տան վերայ ցուցամատը լուռ սպառնանքով թափ տուեց։

Իւր հարևանի, իւր նոր խնամու տունն էր այդ։

Երկու օրից յետոյ՝ բոլոր հայերը զգուանքով տեսան Կիրակոս էֆէնդու անարգ գործը, տեսան, թէ նա ինչ աստիճան փծնի կերպիւ Ղայմաղամի և տեղական Տաճիկ գլխաւոր հոգևորականի ներկայութեամբ՝ հայ եկեղեցուն յատկացրած հրապարակի վերայ վազէ վազ էր անում և մզկիթի տեղը չափչըփում։

Բոլոր հայերը տեսան և սրտաբեկ յետ գնացին, ոչ մէկը չըվստահացաւ թթու երես ցոյց տալ Կիրակոս էֆէնդուն։

ԻԱ.

Տրտում է Հայրիկը, քանի օր է նորա դէմքի վերայ ուրախ ժպիտ չի նշմարուում, երկու խօսքով իւր տնօրէնութիւնները անում է և մտնում Վարագայ սանների համար որոշած հիւանդանոցի սենեակը։

Շատ ժամանակ չէին ի գործ ածուում այս սենեկի երկու մահճակալները, որոնք պատրաստ դրուած էին հիւանդ աշակերտների համար։

Վարագայ օդն ու ջուրը, Վարագայ պարզ, սննդարար և դիւրամարս կերակուրները, այն տեղի հայրական խնամատարութիւնը հազուադէպ երևոյթ էին անում ամենատեսակ տկարութիւն։

Վարագայ աշակերտաց կայտառ ու վըշնած դէմքի գծագրութիւնը ոչնչով չէր նմանում իւր ժամանակի, և թէկուզ ներկայիս, աշակերտական նիհար, սփրթնած և հիւծուած ու մաշուած արտաքին կերպարանքին։

Այդ իսկ պատճառաւ, երբ միաբաններից մէկը հիւանդանում էր, ամբողջ եղբայրութեան վերայ մեծ և անախորժ տպաւորութիւն էր անում։ Հայրիկը մանաւանդ՝ իւր գլուխը մոռանում էր։

Այսօր ինքնամոռացութիւնն ընդհանուր է, դաշտ գնացող մշակը վաղ առաւօտուն եզները գոմից հանում էր ու դեռ իւր համար օրուան պաշար չըվերցրած՝ նախ վազում էր դէպի հիւանդա-

նոցի դուռը, մէկն ու մէկից հարցնում էր հիւանդի դրութիւնն և ապա երեսը դէպի սուրբ Նշանը դարձրած՝ անսեթևեթ խօսքերով հիւանդին արևշատութիւն էր մաղթում և յետոյ իւր հացն ու պանիրն ստանում, վարոցը ձեռքն առնում ու տխուր տրտում եզներն յառաջ վարում։

Այսօր դպրոցի աշակերտի սիրտը չի քաշում դաս սովորելու, ուստի էլ բերանից խօսքերը դժուարութեամբ են դուրս գալիս, ամէնքին մի ծանր թախիծ, կարծես, խեղդում է, որովհետև աշակերտական հիւանդանոցում, մի շաբաթ է, դժուար հիւանդ կայ և ամեն մէկը ցանկանում է հիւանդապահի դեր կատարել, իւր կողմից հիւանդ եղբօր կարիքին հասնելու պարտքը լցնել։

Բայց այդ քաղցր պարտականութիւնն ամէնին անմատչելի է, այդ պաշտօնը հերթով կատարում են վանքի միաբան աշխարհական մահտեսիները ու տիրացուները, միւսներին չի թոյլատրուում ամէն ժամանակ ներս մտնել և հիւանդին նեղութիւն պատճառել։

Կայ միայն մէկը, որի առաջին փակ դուռը չը կայ։ Նա ժամերով հիւանդի գլխավերևից չի հեռանում և դիտում է տկարութեան բնաւորութիւնն և յաճախակի կատարուած փոփոխութիւնը և կարևոր կարգադրութիւններն անում։ Նա բժիշկ չէ, բայց բժշկում է։ Նրա հրամանաւ մէկը ջուր ու քացախ է բերում, միւսը թաց քաթան է դնում

այրուող ճակատին, երբորդը ոտքերն է ծածկում և այլն։

Վերջապէս սառը թրչոցները ցանկալին ազդեցութիւնն արին, իմաստուն բժշկի հմտութիւնը չերմութեան աստիճանը մասնաւորապէս պակասցրեց. հիւանդն աչքերը բաց արեց, աչքը դէպի խնամատար ու ճարտար բժիշկը դարձրեց ու շշնչաց.

—Հայրիկ, դո՛ւ ես։

—Ես եմ, սիրեմ զքեզ, Աստքանազեանդ իմ Ռուբէն. ինչ կուզես։

—Կուզեմ, որ հետս գաս, գնանք մեր քաղաքը։

—Շատ աղէկ, սիրեմ զքեզ, կուգամ, ժպտաց Հայրիկը, առողջացիր, կերթանք։

—Բայց գիտես, Հայրիկ, թէ ընչո՞ւ համար պէտք է գաս հետս։

—Ոչ գիտեմ, սիրելիս, և ոչ իմանալ կը ցանկամ, հարկաւ, կարևոր է իմ գալուստ, որ հետդ կը տանես։

—Այո՛, շատ կարևոր է, Հայրիկ, դո՛ւ միայն անել դրութեանը մի հնարաւորութիւն կը տաս, ես անզօր եմ առանց խոհուն խորհրդատուի պարտքս յաջողապէս կատարել, կացութիւնը ծանր է, հերիք չէ անձնազոհութիւնը, խոհեմութիւն է հարկաւոր վտանգի առաջն առնելու։ Եթէ չես հաւատում, ա՛ռ, կարդա և տես։

Ռուբէնը մահճի տակից հանեց մի ծրար և տուեց Հայրիկին։

—Նշանաճիդ է, այնպէս չէ՞։

—Այո՛։

—Ուրեմն դեռ մնայ, կառողջանաս, ինքդ կը կարդաս, բովանդակութիւնն ինձ կը յայտնես, նշանաճիներուն գաղտնիք երբորդին գիտել անթոյլատրելի է։

—Ոչ, Հայրիկ, դու պէտք է գիտենաս, որ ցաւը դարմանես, եթէ գնահատում ես կեանքս, կարդա՛, եթէ կուզես որ առողջանամ։

Հայրիկը բացեց նամակը, կարդաց, սրտայոյզ բայց անխռով ծալեց և իւր ձեռքով հիւանդի բարձի տակը դրեց։

—Հիմի ես կարո՞ղ եմ առողջանալ, Հայրիկ, ասա՝ դու ինչ կանէիր իմ փոխարէն։

—Կը ցաւիմ վրադ, Ռուբէն, պատասխանեց Խրիմեանը, երբորդ տարին է Վասպուրական Սրճուրին ճետն ես, ամէն օր աչքիդ առջև նմանօրինակ աղէկտուր տեսարանները կը կատարուին և նոցանէ ոչ մին քո սրտին կամ չեն ազդեր և կամ շատ սակաւ զգացեր ես։

—Ես զգացել եմ և սիրտս կտոր կտոր է եղել, ուէյսի աղջկայ դէպքը քանիցս ինքդ ես կրկնել։

—Ուրեմն ընչո՞ւ այս աննշան դէպքէն այդչափ յուսահատ ես։

—Ի՞նչպէս չը յուսահատուիմ, վաղն իմ նշանաճին դայմաղամի հարեմն են կոխելու։

—Ո՛չ, կը սխալուիս, Ասքանազեան, նա՝ որին դու մի անզօր կին կը կարծես, առաւել հերոսական

սիրտ է ունեցած, քան թէ իւր անփորձ և դեռ մանուկ ամուսնացուն. դու նշանածիդ կոխոտած հողը չարժես, նա առիւծասիրտ կտրիճի մը թագուհւոյ պատկն արժէր լինելու և ոչ մի լալկան և երկչոտ նապաստակի կենակից։

Հայրիկի յանդիմանական խօսքերը հիւանդին փոխանակ վհատեցնելու, առաւել զգաստացրին։

Ռուբէնն աչքերը Խրիմեանի երեսին յառած՝ զննում էր նրա գծագրութեան փոփոխութիւնը։

Հայրիկը մինչև օրս այսպէս բարկացած ոչ մի անգամ չէ եղել, իսկ այժմ նրա երեսի խորշոմները աւելի մեծանում են, ճակատի կնճիռները ստուարանում և հաստանում են, աչքերի բբերն անհանգիստ լողում են սպիտակուցների վերայ, ջղերը ձգուել, լարուել են, և, կարծես, ուզում են ճարճատուիլ ու կտրատուիլ։

Ամէն ոք կը սպասէր համբերատար և հեզադէմ Հայրիկին առաջին անգամն այսպէս տեսնելով, բայց Ասքանազեանը սպասողական դիրք առած՝ հետեւանքին էր մնում։

Հայրիկն էլ չը խօսեց, վեր կացաւ և կամեցաւ գնալ։

Նա արդէն դրան մօտ էր։

—Հայրի՛կ, ձայն տուեց ետևից Ռուբէնը։

—Ի՞նչ է, անարժան որդեա՛կ։

—Խնդրեմ յետ գաս։

—Ասա՛։

—Ընչո՞վ արժանացայ արհամարհանքիդ։

—Ջեզի նման ճետեր չեն պէտք Արծուին։

—Ինչ է յանցանքս։

—Շա՛տ մեծ։

—Խնդրեմ, շնորհ անես յայտնելու, մի մոլորուած ոչխարի գիւտն աւելի ուրախութիւն պատճառեց իւր տիրոջը՝ քան չը կորած իննսունն և իննը։

—Այժմուս դարձեալ սիրեցի և հարազատս կը տեսնեմ, դարձաւ Հայրիկն և խոնարհեց, համբուրեց Աստքանազեանի արդէն հովացած ճակատը։

—Ուուբէնիկս, ասաց Հայրիկը, դու Վասպուրականի ճետերէն ամէնէն երջանիկն և ոչ ապաբաղդն ես՝ մինչ վիճակուած է քեզի նամակիս հեղինակին նման ընկեր։ Իրաւ է, փառքն ու պատիւը նորա ուսուցչինն է, քոյդ է, որ կարողացեր ես հեռուէ հեռու այնպիսի լծակից պատրաստել քեզի համար, բայց նա ամբողջ գլխով բարձր է իւր ուսուցչէն։ Երկիւղ կրելով նշանածիդ անձնական ապահովութեան առթիւ, փոխանակ ելքի մը հնար մտածելու, ինքդ մերձ ի մահ անկողին կը մտնես ու չես ուզեր սիրոյդ վսեմ գործերէն օրինակ առնուլ։ Թոյլ աղջիկը կը լսէ իւր ականջով անագորոյն հօր համաձայնական վճիռը՝ զինքը տաճիկ պատառապետին գիրկը նետելու՝ և առնական սառնութեամբ գօտեպնդուած՝ մայրը կը մխիթարէ, իսկ դու մտամոլոր կը տապիս, կը տառապիս զառանցանքներու մէջ։

—Բայց եթէ բռնութիւն գործ դնեն վրան, ինչ կարող է անել, Հայրիկ։

—Իւր անելիք նա արդէն գրած է քեզի, կը կանչէ, որ իրեն գործակցիս։

—Նա իրաւունք ունի, վաղն ևեթ կառնեմ հայրական օրհնութիւնդ և կը փութամ, ուր կանչում է ինձ պարտականութիւնը. ես այժմ ինձ բոլորովին առողջ եմ զգում։

—Ո՛չ, դու այդքան շուտ չես երթար, Արփիկդ թէպէտ ժամ և ժամանակ է որոշած, թէև դեռ մի տարի ունիս, բայց ինձ կը մնայ քեզ ճամփելու օրը նշանակել. այդ շատ չի տևեր, քանի մ՚օրէն յետոյ դու ուղի կանկանիս, ճանապարհին կատարելիքդ քեզ կսպասէ։ Այդչափ շուտ մտադիր չէի, բայց ժամանակ է, գայս պարտ է առնել և գայն չը թողուլ։

—Հնազանդ եմ որդեսէր Հայրիկիս պատուէրին։

—Համբուրիր հօրդ ձեռք, մի՛ ելներ անկողնէդ, մինչ իսպառ չը կազդուրուիս։

—Հայրիկն իւր աչը տարածեց դէպի Ասքանազեանը։

—Այժմ ինչ պատասխան տամ այս նամակին։

—Ինչ որ տեսար և լսեցիր, ասաց Հայրիկն և դուռը հիւանդի երեսին ծածկեց ու դուրս գնաց, ասելով՝ մինչև կատարեալ չառողջանաս, մօտդ չեմ գար։

ԻԲ

Հայրիկը խօսքին տէր էր. նա՝ որ Ռուբէնի հիւանդութեան օրից շարունակ նեղս ու դուրս էր անում, երկրորդ օրն է՝ տուն չի գալիս:

Սաքանազեանը կարծես ոգևորուեց. Հայրիկը համաձայն է իրեն ուղարկելու, պայմանը միայն իւր առողջութիւնն է. ընչո՞ւ ուրեմն հոգս անել, մտախոհութեան մէջ վհատուիլ. առաւել լաւ է՝ սիրտ առնել և առողջանալ:

Արդարև, երրորդ օրը Ռուբէնը բաւականին առողջ է զգում իրեն: Հիւանդապահի պէտք էլ չը կայ. նա ինքը խնդրեց բոլորեցուն՝ միայն թողնել իրեն: Նա բացեց նամակն և նորից կարդաց:

Նա կարդում էր բարձրաձայն:

—Շտապիր, գլուխդ այդ տեղ թաց արա, այստեղ գերծել տուր, հասիր՝ քանի ուշ չէ:

Այսպէս է սկսում Արփիկն իւր նամակը: Ապա աւելացնում է.

—Ո՛չ, մի՛ գալ, մի՛ ճանապարհ սովրեցրու տանել այս խաչը:

—Տեսնում եմ, որ Աւետիքի գրածից շատ քիչ բան ես հասկացել. քեզ վերայ միայն ազդել են հայ աղանների ստորաքարշութիւնները, դու միայն զգուանք ես յայտնում գործողութեան դէմ, առանց գործողի անձնաւորութիւնը ճանաչելու հետաքրքրութեան:

Այդ պատճառաւ այս անգամ առանց Աւետիքի

գիտութեան շտապում եմ ուշքդ դարձնել դեպի Կիրակոս Էֆէնդին:

Բայց դեռ չասած՝ թէ ո՛վ է այն ցած արարածը, որ բռնակալի կոյր գործիքն է դարձել, ես քեզ մտաւորապէս հրաւիրում եմ մեր քաղաքումը մի հարստի տուն և թագցնում եմ ծալքատեղը, վարագոյրի տակ, որտեղից պարզ երևում է տան տիրոջ սենեկի ներսը:

—Տես, ահա նստած են սեղանի շուրջը մեր քաղաքի տաճիկ պաշտօնեաները, ահա, իրար ետևէից դատարկուում և մաքրուում են համեղ կերակուրների պնակները, տես, մեծ Մարգարէի հարազատ և ուղղափառ զաւակները ինչպէս խիղճը հանդարտ ծծում, ցամաքեցնում են ոչ թէ շաքարով քաղցրացրած վարդաջուրը (շերբէթ), այլ բացարձակապէս արգելուած, իսկ մթնախորշերում և *զեավուրների* ծածկի տակ թոյլ տրուած խաղողաջուրը, կամ գինին, և նորա հետ քաղցրախում հեղուկի ոգին— դառնախում օղին, որին սովորաբար *ասլանի կաթն* անուն են տալիս: Լսի՛ր, թէ ինչ ստորութեամբ տան տէրը շողոքորթում և հաճոյախօսութիւններ է անում նստած Ղադուն, մօլլային, ոստիկանին, քէթխէդին: Զզուանք ես զգում չէ՞, Ռուբիկս, երբ շուտ-շուտ կրկնուում են քո ազգի հասցէին *զեավուր* և ուրիշ անարգական խօսքերը. հաւատում եմ թքում ես այնտեղ ներկայ միակ ստուերի վերայ, որ

սառնութեամբ տանում է իւր անձին և աբեղակից-ներին ուղղած հայհոյանքները։

Մտիր իմ դրութեան մէջ, Ռուբիկս, խղճա՛ ինձ, ցաւիր վրաս. տաճիկների ոտքերը լիզող, իւր հացը շներին ձգող այդ ստոր էակը—տանտէրն՝ ինձ կեանք տուող ծնողն է։

Այո՛, սիրելի Ռուբիկս, մեր հացն է, որ անկշտօրէն լափում են *իսլամի* աւանդապահները։ Այս գործողութիւնը մի օր չէ, երկու օր չէ, հինգ օր չէ. իմ կուրանալու. աչքերս յաճախակի են վկայ լինում վերոյիշեալ նողկալի տեսարանին։ Օր չի լինի, որ մեր սեղանի շուրջը մի քանի Օսմանցի չը բոլորուին։

Բայց գիտե՞ս՝ ինչն է ամենից հոգեմաշը։

Իմ պատուական հայրս, որ տաճկի առաջին չնչին մկան նման սողում է, մի և նոյն սենեկում, մի ժամ յառաջ առիւծ էր կտրուած. գոչում, մռընչում և յոխորտում էր դիմացի կանգնողների վրայ։ Հայ վաճառականը, հայ իշխանը, հայ գիւղացին էին այդ մարդիկը, որոնց պատիւն անզուսպ և անպատկառ ոտնատակ էր տալիս հայրս։ Նրանցից մէկի առևտրին վնասել, մի-սին բանտումը փթթեցնել, երրորդին հողից հոգի կորցնել էր սպառնում Ք. քաղաքի առաջին հայ իշխան չորքաչի Հիրակոս Էֆէնդին, կամ որ նոյնն է՝ Զէյէբեան Սարգիս աղան՝ անարժան նշանածիդ հայրը՝ քեզ անպատուութիւն բերող աներդ։

Հա՛, Ռուբէնիկս, հա՛, Աւետիքի նկարագրած գիշերաշրջիկ հալը՝ Կիրակոս Էֆէնդին՝ Աւետիքի հարազատ ծնողն է։

Իմ աղնիւ Աւետիքս դիտմամբ վաստերը յեղաշրջում էր, կամ ուրիշից լսածի պէս էր պատմում։ Սուտ է, նա ինքը մի քանի գիշեր իրանց դիւանատան դրան ճեղքից իւր աչքով տեսել և ականջով լսել է քեզ պատմած դէպքերը։

Անբա՛ղդ իմ եղբայրը, անցեալ շաբաթ նա անխոհեմութիւն ունեցաւ հարևանցի նկատողութիւն անել հօրս իւր արարքների մասին։

Ի՞նչ ես կարծում, Ռուբէնիկս, կատաղի մարդը մի այնպիսի ապտակ խփեց եղբօրս երեսին, որ ուշքամաղ գետին փռուեց։

Անգութ ծնողը գազանի նման յարձակուեց իւր թոյլ որսի վերայ և աքացու հարուածներով ուզում էր սպանել։

Լաւ էր, որ ես ու ջրատար մայրս մէջ մտանք, ընկանք Աւետիքի վերայ և մեր մարմնով ծածկեցինք անշունչ դիակը։ Ի՞նչ վնաս, թէ կօշկի երկաթի պայտերը մեր կողքերն ու ոսկրները էին վըշըրտում։

Անխիղճ և անսիրտ մարդ, դեռ կամենում էր ծառաները կանչել և կիսամեռ եղբօրս բանտն ուղարկել։

Եւ կանէր հայրս, եթէ ես վեր չըթռչէի եղբօրս վրայից, դուռը չըկոտրէի և շեմքի մօտ իւր ոտքերը չըգրկէի։

Թող չըցաւէ սիրտդ, Ռուբրիկս, աքացիից պատճառած գլխիս բացուածքն այժմ ծածկուել է և ես ինձ կատարեալ առողջ եմ զգում։

Աւետիքս էլ շուտ ուշքի եկաւ, ջուրը նրան շունչ տուեց. այժմ նա ևս լաւ է և խելքի է եկել, սուսիկ-փուսիկ ձայնը կտրել է և իւր պաշտօնը շարունակում է։

Այժմ քեզանից ծածուկ չէ, Ռուբրիկս, որ մեր քաղաքի հրապարակի վերայ բարձրացող տաճկական աղօթատունը շինուում է իմ հօր ծախքով։

Անշուշտ լսած կըլինիս. այդ տեղը յատկացրած էր հայ եկեղեցու համար։ Մզկիթը դեռ չըհիմնարկուած՝ հայրս պատճառ եղաւ հինգ հայ իշխանի կորստեանը։ Մեր քաղաքի առաջնակարգ վաճառականներից մի քանիսն յիմարութիւն ունեցան մզկիթի հիմքը չափ ու ձև անելու օրը գալ մեր տունն և հօրս համոզել, որ յետ կենայ իւր չար նպատակից, և գործակցի իւրեանց հետ եկեղեցու հիմքը դնելուն։

Ես լսեցի, թէ ինչպէս ճչաց նրանց վերայ հայրս և սպառնաց, իւր որդուց գլխովն երդում արաւ՝ ամէնքին բանտ կոխել։

Ի՛նչ ես կարծում, սիրելիս, արեգակի շառաւիղը դեռ չէր թռել արևմտեան հորիզոնից, երբ մեր տանն եղած հայերից հինգը կալանաւորուեցին։

Ազատուողները նրանք էին, որոնք խոհեմութիւն ունեցան կրկին վերադառնալ մեր տունն

և իրանց լիքը քսակը հօրս առաջին դատարկել։

Այդ ամէնը շատ գեղեցիկ, բայց արի տես, որ սիրտս բարակել է, վախենում եմ, թէ չկարողանամ համբերութեամբ կրել ծանր հարուածը։ Եւ չէի տանել, եթէ Աստուած չըխղճար ինձ, Աւետիքիս կորստեան ճանապարհից իմ գիրկը չըդարձներ։ Այսօր եղբայր ու քոյր իրարու սիրտ տալուց յետոյ՝ երկուսով միասին մեր թշուառ մօր արտասուքներն ենք սրբում։

Ֆաջութիւն ունեցիր, Ռուբէնիկս, լսելու մի նոր դէպք, աղաչում եմ, սիրտդ պինդ պահիր, արիացիր և փոխանակ կանացի թուլասրտութեան՝ քո կողմից մի խորհուրդ տուր։

Այսօր առաւօտ, ըստ սովորականին, մայրս պատուէր է ստանում հօրից մեծաճոխ ճաշ պատրաստել՝ քաղաքիս Մուֆտու և եղբօրս իշխանաւոր բաշքեաթիբ Օմար Էֆէնդու պատուին ու կոչմանը վայել։ Յարգոյապատիւ հիւրերը սեղան են նստած, Աւետիքը ոտքի վրայ սպասաւորում է։

Ես քեզ մտաւորապէս թագցրած ծալքատեղումը նստած՝ վարագոյրի տակից նայում եմ։

Ցանկարծ Մուֆթին Օմար Էֆէնդուն աչքով է անում և Աւետիքի վերայ է դարձնում *քեաթիբի* ըաշու ուշադրութիւնը։

—Մի քանի րոպէ առանձին թող մեզ, ներս չըգան՝ մինչև քեզ չըկանչենք, իշխանաբար հրամայում է եղբօրս իւր մեծաւորը։

Աւետիքը հնազանդուեց և դուրս եկաւ։ Ի՛նչ լաւ եղաւ, որ դուռը բոլորովին չբծածկուեց, երկու մատնաչափ արանքից ես ամէն բան տեսնում էի։

—Սարգիս էֆէնդի՛, սկսեց Մուֆթին, ի՛նչ երջանիկ աստղի տակ ես ծնած, որքան բաղդաւոր ես։

—Փառք Աստծու, տէր իմ, ձեր շնորհիւ, մեր ողորմած Ղայմաղամ էֆէնդու շնորհիւ, ոչինչ պակասութիւն չեմ զգում և բաղդաւոր եմ, պատասխանեց հայրս։

—Դու մեր Ղայմաղամ էֆէնդու աչքի լոյսն ես, նրա շնորհիւ մեր մեծ Մարգարէի օրհնութիւնը ժառանգեցիր հաւատացեալների տաճարը շինելով *չէննէթումը* (դրախտ) ուղղափառ իսլամների կարգումը տեղ ունիս, և եթէ մեր մեծապատիւ Ղայմաղամի երկրորդ առաջարկութիւնն էլ կատարես, դու այս աշխարհումս բոլոր ուղղափառների շնորհակալութիւնը կըվայելես։

—Հրամայիր, տուրք հայր, որ լսի քո խոնարհ ծառան, ժպտում է հայրս։

—Քեզ յայտնի է, որ մեր ողորմած Ղայմաղամ էֆէնդին ուզում է քո հիմնած մզկիթի վերջանալու օրն ամուսնանալ մի *զիւզէլի* (սիրուն) հետ, այնպէս չէ՞։

—Այո՛, մեր տէրն արժանի է տեսել այդ մասին իւր սրտի ցանկութիւնը հաղորդել իւր նուաստ ծառային։

—Բայց նա չի յայտնել քեզ իւր սիրոյն արժանա-

ցած, իւր քաղցր ուշադրութիւնը գրաւող *Զիւզէլի* անունը։

— Չետաքրքիր եր այդ երջանիկ բիւլբիւլին ճանաչելու բնրերգաղդութեանն արժանանալ, բայց ես ջվստահացայ թափանցել նորա իմաստուն սրտի խորքը։

— Այսօր մենք բերել ենք քեզ այդ արտօնութիւնը, եկել ենք Ղայմաղամի սրտի գաղտնիքը քեզ յայտնելու։

— Ուրախ կըլինեմ և իմ կարեաց չափ մի պատուական ընծայ կըպատրաստեմ, որ Ղայմաղամ Էֆէնդին իւր ձեռքով նուիրի իւր սիրուն Թուչնիկին։

— Ո՞ր ընծան բիւլբիւլիկն ինքն է, որ ոսկի վանդակի մէջ դալլալում է։

— Խօսքդ փոքր ինչ մութն է, ասաց հայր։

— Խօսքս շատ պարզ է. Ղայմաղամ Էֆէնդին վաղուց լսել է քո աղջկայ գովքը, նա բարեհաճել է քո դատերն իւր հարեմի գլխաւոր գարդերից մինը շինել և ուխտել է այդ շնորհքը քեզ անել քո մըզկիթի վերջացած օրը. ես ինքս իմ օրհնութիւնով պէտք է ամրապնդեմ երջանիկ ամուսինների սուրբ կապը։

— Չարմանում եմ, Ռուբէնիկս, իմ քաջասրտութեան վերայ, ուրիշն իմ փոխարէն ուշագնաց կըլինէր, բայց ես միայն մի սարսուռ զգացի և կարողացայ սառնասրտութեամբ լսել հօրս տուած դրական պատասխանը։

Ֆարաիբտ ծնողս առանց սասանելու և խըղճահար լինելու՝ առաջին անգամից ուրախությամբ համաձայնությունն յայտնեց և խոստացաւ մինչև մըզկիթի շինությունը վերջանալը՝ փոքր առ փոքր նախապատրաստել ինձ այդ մեծ փառքին հասցնելու։

Ես այլ ևս չըմնացի ծածկարանում, թէքեցի հօրս ստուերին և փութացայ պատմել մօրս և եղբօրս։ Խեղճ կինը կաթուածահար էր լինում՝ եթէ ես և եղբայրս չըմխիթարէինք։

Մայրը և որդիք խորհրդակցեցինք ընդհանուր ուժով դիմադրել դաւաճանին։

Վճռեցինք մի առ ժամանակ չըգրել քեզ, բայց ես ուխտադրուժ գտնուեցի, չըկամեցայ քեզանից ծածուկ պահել. սիրով լծակցուածներին յանցանք է իրարից գաղտնիք ունենալ. ինձ ինչ, թէ դեռ միայն նշանածներ ենք. նշան դրած օրից՝ ես քեզ գլխիս տէրն եմ համարել։

Մի յուսահատուիր, սիրելիս, և մի շտապիր գալ, մզկիթի բացման հանդէսը կատարուելու է միւս մայիսին, որ դեռ մօտ մի տարի կայ. մինչև այն օրը՝ դեռ շատ ջրեր կըպղտորուին ու կըպարզուին։

Մայրս խորհուրդ էր տալիս քո հօրը յայտնել ցաւալի համբաւը, ես ևս ընդդէմ չէի, բայց Ասեոտիքը նորածիլ ընչացքի տակից ժպտաց և հակառակեց։ Եղբայրս իրաւունք է ունեցել, քանից դուրս է գալիս, որ Վասակը միայն իմ հայրս չէ, Ռուբէնիկս, եղիշէի ասածին պէս՝ «Այս Վասակն իրան գործակից

գաւառ միւս Վասակին՝ մեծամեծ չարիքների մէջ, որի համար և միաբանուեցին երկուսն էլ։

Միւս Վասակը քո հայրն է եղած, Ղայմաղամի ակնարկած երկրորդ մատնիչն իմ ապագայ սկեսրայրն է, Աւետիքն իւր աչքովն է տեսել Ղայմաղամի ընդունարանի բանալու ծակից. գիշերները պարապելու պատրուակաւ նա գնում էր հայերի գիշերագործութիւններին ներկայ լինելու։

Երկու Վասակները միմեանց հետ միացած՝ քանդեցին մեր քաղաքը, հայի արիւնը վամբիրի նման ծծում են։

Նրանք արտաքուստ սերտ սիրով բարեկամ և կամակից են, բայց ներքուստ, ինչպէս տեսնում ես, իրար էլ չեն խնայում։

Թէ ընչո՞վ կլուծուէր երկու բարեկամների վտանգաւոր խաղը, չգիտեմ։

Այսօր չէ, մի քանի օրից, ի հարկէ, ծածուկ չի մնալ և Ղայմաղամի նշանագրութիւնը, թուրքերն իրանք կըհրատարակեն հայերին վիրաւորելու համար և կամ հայրս պարծանք կըհամարի հռչակելը։

Այն ժամանակն աշխարհը սասանելով հանդիսատես կըլինի վայրագ ցլերի ճակատ ճակատ եղջերահարութիւններին։

Է՛հ, ինչ կուզի, թող լինի, ես քոնն եմ և կը լինեմ միշտ և հանապազ։ Արփիկդ։

Յ. Գ. Չգիտեմ՝ ատակի ներկարօտութիւն ունես թէ ոչ, բայց չըբարկանաս, եթէ ասեմ, որ մեր Ա-

Լեոնիքի գլուխը մտաւ իւր ոճկի մի աննշան մասը՝ հարիւր դուրուշ քեզ ուղարկել։ Երբ մայրս ապեցաւ իւր հոգեպահուտից նոյնպէս 100 դուրուշ, ես նախանձեցի և ցանկացայ իմ կողմից էլ մի քանի փարայ խառնել քեզ սիրողների սիրոյ գրաւականի հետ։

Ներիր, Ռուբիկս, պարզասիրտ և անկեղծ խոստովանութեանս. ես փող չունէի, քեզ յայտնի է, որ աղջիկ արարածը փողի մասին գաղափար ունենալու իրաւունքից զրկուած է. ինչ արած, անպատճառ ուզում էի իմ լուման խառնել հարազատներիս գումարի մէջ։

Ունէի, չունէի, մի հատ կէս լիրանոց կանթած ոսկի ունէի. մայրս անցեալ տարի հանեց իւր մանեակից և ինձ ընծայեց շապկի կոճակ անելու. այն օրից շարունակ կրծքիս վերայ կախ էր։ Ցեցը մտաւ մէջս, փոքրիկ ագնիւ մետաղը տասը հոխանոց քարի ծանրութիւն արեց պարանոցիս, չըհանգստացայ, մինչև չազատուեցի։

Գիտես՝ ինչ դժուարութիւն կրեցի, հալումաշ եղայ, կարմրեցի, սփրթնեցի, գոյն տուի, գոյն առայ, մինչև որ սրտիս վառ ցանկութիւնն Լեոնիքին յայտնեցի։

Իմ սրտակից ու ագնիւ եղբայրս, կեցցէս դու. հաւանութիւն տուեց սրտիս բորբոքին, մօրիցս ծածուկ ոսկին վերցրեց ինձանից, տարաւ ստակ շինեց և խառնեց ընդհանուր գումարի մէջ. բոլորը կայացաւ 300 դուրուշ։

Երեք սրտի անկեղծ սիրոյ արտայայտութեան այդ աննշան առհաւատչեան Աւետիքն այսօր ուղարկեց Վան Գառնիկենց պանդոկապետի եղբայրը Բրսոյի անունով, որ պանդոկապետ է Վանում Հաջի Մնէի պանդոկում։

Բրսոյին պատուիրած է իւր ձեռքով ստակը քեզ բերել։ Սատցիը և մի վիրաւորուիր։

Կարող ես երևակայել. այժմ պարանոցիցս մի աւելի մեծ ոսկի է կախուած։

Մայրս նկատեց կոճակիս պակասութիւնն և հարցրեց ոսկու մասին. չարաճճի Աւետիքս, իսկոյն գողութիւնս յայտնեց։

Ես կարծում էի, թէ մայրս կըբարկանայ. բայց ինքս եմ անպիտանը, որ իմ պատուական մօր մասին աննպաստ կարծիք եմ ունեցել. ծիծաղեց, ճակատս համբուրեց, մի քանի կաթիլ ուրախութեան արտասուք աչքերից ցօղեց և անխօս ներս մտաւ արդուզարդի սենեակը, մի հատ կանթած լիրայ կտրեց իւր զարդերից ու իւր ձեռքով վզիս կախեց։

Արփիկդ.

Կրկին Ց. Գ.

Մինչև այժմ ոչ մի նամակումս ինձ թոյլ չեմ տուել համեստութեան սահմանից անցնել։ Այսօր առաջին անգամն եմ գրում. սեղմում եմ քեզ իմ արդէն բարձ-

բացած օրիորդական ստինքներիս, որոնց միջև պէտք է իւր հանգիստը գտնի քո մտատանջ գլուխը։

Արփիկդ։

ԻԳ.

Երկու օր է Ասքանազեանը Վանումն է. նա իջած է քաղաքի բազմամարդ պանդոկներից մէկում։ Այս պանդոկի կառավարչին էր ուղղած Աւետիքի կողմից Արփիկի յիշած 300 դուրուշը։

Ռուբէնը տացել է իւր փողերը։ Իւր ասութեամբ՝ նա Վանումը մնալու դիտաւորութիւն չունէր, բայց երկրորդ օրն է, և նա դեռ ուշանում է։

Նրան այստեղ կապողն է մի ուրիշ անծանօթ երիտասարդ, որ առաջին անգամ պանդոկը մտնելուս՝ գրաւել է Ասքանազեանի ուշադրութիւնը։

Անծանօթը օտարական է. նորա տարազից և երեսի գծագրութիւնից ակնյայտնի է, որ նա տաճկական հող ու ջրի ծնունդ չէ։

Երիտասարդը բարձրահասակ էր, բայց գեղեցիկ կազմուածքով, շիկակն, խարտեաշ և շագանակագոյն մազերով։ Նա հագած ունէր ուղտի բրդից գործուած չուխայ, նրա կրծքին երկու կողմից շարուած էին եօթնական արծաթեայ *վազմաներ*, կամ *մասրէք*,

որ մի ժամանակ վառօդաման են և Չերքեզի չուխայի անհրաժեշտ զարդարանքը։

Արծաթի գօտին, արծաթի երախակալով, լայն ու երկայն երկասյրի դաշոյնը, կողքից կախուած վեցաձիգ ատրճանակը, արծաթապատ Չերքեզի թուրը, երկայնավիզ ճանապարհորդական կօշիկները, սպիտակ նոխազի երկայնամազ չերքեզի գլխարկը, այս ամէնը մխասին երիտասարդին ընծայում էին լեռնական Լեզգու կերպարանք։

Կատարեալ Լեզգի էր նա, եթէ անձանօթի տարազի ներդաշնակութեանը չըվնասէին նորա ընչացքն և գերծած երեսը։ Քթածակերից սկսած՝ աստիճանաբար սրանում էին նրա հաստ ընչացքի ծայրերը, որոնք նրա դէմքին տալիս էին քաջ տղամարդի ինքնավստահ արտայայտութիւն։

Տաճկաստանցու համար դժուար էր որոշել երիտասարդի ազգութիւնն ու ծննդավայրը, իսկ Կովկասեցի վարժ աչքը կըճանաչէր Ղարաբաղցի հային։

Ասքանազեանն երեկուանից գիտէր օտարականի հայութիւնը. պանդոկապետը գոհացրել էր նրա հարցասիրութեան այդ մասը, բայց Ռուբէնն այդքանով գոհ չէր. նա ինքն էլ չէր կարողանում հաշիւ տալ իրան, թէ ընչո՞ւ համար մտադրուել է չըհեռանալ Վանից՝ մինչև մօտ ծանօթութիւն չունենայ անձանօթի մասին։

Պանդոկապետը օգնեց գործին, նա փոխեց Ասքանազեանի իջած սենեակն և պատից դրացի արաւ։

Պանդոկի սենեակների արտաքին մուտքը չը հաշուած՝ միմեանց հետ կապուում էին միջնադրուներով, որոնք երկու կողմից ամուր փակուած էին երկաթեայ ազատաակտուց կոչուած կարճաձև նիգերով և բացուում էին, եթէ սենեկակիցները ցանկալին միմեանց հետ հարևանութիւն անել։

Երեկոյ է, մուրթը գետինն առել է. ամէն ոք մտել է իւր տունն և դուռը ներսից փակել։ Ռուբէնն էլ հետևել է ընդունուած սովորութեանը, բայց չեմ կարծում, թէ պանդոկաբնակներից մէկն ու մէկը Ռուբէնի արածն անում էին։

Մի ժամից աւելի է, որ նա կանգնած է երկու սենեակները միացնող դրան մօտ. և ճակատը դրանն է կպցրել։

Մկան աչքի չափ մի ծակ կայ դրան մէջ. Ռուբէնն աչքը դրել է ծակին և լրտեսում է դրացու կացարանը։

Ի՞նչ կարող է նա տեսնել օտարականի սենեկում՝—և ոչինչ։ Ռուբէնն իր տեսածովը գոհ է։ Օտարականը շարունակ գնում գալիս է իւր անշուք խցիկի մէջ։ Անցուդարձին՝ ճրագի աղօտ լոյսը լուսաւորում է անծանօթի երեսը։ Հէնց վերջինիս երեսին էլ նայում է Ռուբէնը. նա կամենում է արտաքին կերպարանքի մէջ իրան հետաքրքրութիւնը գրգռող անձի ներքինն իմաստասիրել։

Եթէ լոյս լինէր և եթէ կարողանայինք մենք տեսնել Ասքանազեանի պատկերի վերայ ցոլացող ու-

բախ ժպիտը, կըգուշակէինք անշուշտ, որ նա հասաւ իւր փափագանացը։

Այդ այն րոպէն էր, երբ նա լսեց օտարականի բերանից մենախօսած քաղցրաբան ծեր Նահապետի նուագած բանաստեղծութեան առաջին տողերը.

„Հայոց աշխարհիկ, գարունդ է հասել,

„Ահա գեղեցիկ գարուն քո եկել...

—Էլ երկիւղ չունիմ, մտածեց Ռուբէնն և բաղխեց դրացու դուռը։

—Ո՛վ էք, ինչ էք կամենում, ձայն տուեց անծանօթը։

—Թոյլատրութիւն եմ խնդրում մի քարի րոպէ անհանգիստ անել ձեզ, պատասխանեց Ռուբէնը։

Օտարականն արձակեց իւր կողմից ապահաւակտուցը։ Ռուբէնն էլ նոյնն արեց։ Դուռն ինքն իրան յետ բացուեց։

—Խնդրեմ նստել, Ռուբէնի ողջոյնն ընդունելուց յետոյ՝ հարցական հայեացքով սառնութեամբ ասաց անծանօթն իւր հիւրին՝ ոտից գլուխ նրան աչքով չափելով և այս հարցն առաջարկեց.

—Խնդրեմ ասացէք, ո՞ւմ քաղցր ուշադրութեանն եմ բաղդ ունենում արժանանալու։

—Ձեր նուաստ ծառայ Ռուբէն Աբգանագեան՝ Վասպուրական Արծուի ճետերից մէկը։

—Ես, ի հարկէ, ո՛չ Վանեցի, ժպտալով շեշտեց օտարականը *վանեցի* բառը։

—Ոչ Վանեցի, այլ Բ. քաղաքացի։

—Շատ ուրախ եմ։ Այժմ ասացէք, թէ ինչ ծառայութիւն կարող եմ մատուցանել յարգութեանդ։

—Կրնդրէի գոհացնել իմ փոքրիկ հետաքրքրութիւնը՝ արդեօք ռուսահայ չէք դուք։

—Հասկացայ, կամենում էք Ռուսահայքի տեղագրութեան հետ ծանօթանալ, անշուշտ ուղևորում էք դէպի սուրբ Էջմիածին։

—Ո՛չ, որքան և իւրաքանչիւր հայի նուիրական պարտքն է Սրարատեան Մայր Աթոռի քարեբը համբուրել, բայց ես առ այժմ ժամանակ և յարմարութիւն չունիմ, ես գնում եմ իմ հայրենի քաղաքն ամուսնանալու, ինձ սպասում է նշանածս։

—Այժմէն իսկ շնորհաւորելով ձեր նոր և երջանիկ կեանքը՝ համարձակուում եմ ասել, թէ այլ ևս կարիք չեմ գտնում տեղեկութիւն տալու ձեզ՝ Ռուսահայքը, թէ Պարսկահայքն էր իմ ծննդավայրը։

—Ես տեսնում եմ, որ դուք թերահաւատութեամբ էք վերաբերուում դէպի ինձ նման մի յանդուգն երիտասարդը, որ թոյլ է տալիս իրեն գիշեր ժամանակ խանգարել ձեր խաղաղութիւնը, և, խոստովանում եմ, իրաւունք ունիք. բայց ինչ արած, երեկուանից՝ ձեզ առաջին անգամը տեսած րոպէիցս՝ մի տեսակ նեբքին զգացմունք ձգտում է ինձ դէպի ձեզ, և, ուղիղն ասեմ, հանգստանալու չեմ, մինչև ձեզ հետ մօտիկ ծանօթանալու շնորհը չընդունեմ ձեզանից։

—Մեծ պատիւ է ինձ յարգութեանդ կողմից, ը

գիտեմ՝ ընչով արժանի եղայ ձեր մտերմական համակրանքին, բայց և այնպէս... ը՜... ը՜... ը՜...

Անծանօթը խօսքը ծամծմոտեց։

—Տեսնում եմ, տեսնում եմ, որ հաւատ չէք ընծայում անկեղծութեանս, բայց և այնպէս, յանուն գաղափարական ազնուութեան երդուում եմ, որ խօսքերումս կեղծիք չկայ։ Մեր հանրագորով Հայրիկն իւր գողտրիկ բառերով այնպիսի քաղցր զգացմունքներ է ներշնչել իւր սաների մէջ մեր ռուսահայ եղբարց մասին, որ նշանաձիս չափ ցանկալի եր կաթոգին համբոյր տալ վերջին ռուսահային։

—Խրիմեան Հայրիկի սրտաբուղխ գգուանքը դէպի ամէն մի հայ, քաջ յայտնի է ամէնքիս, բայց ցաւած սրտով պիտի չընծածկեմ, որ նրա անունն և նրա անսահման գթոտութիւնը շատ ու շատ արկածախնդիրների ձեռքին մի երկսայրի զէնք է...

—Հասկանում եմ և գիտեմ. այդ խաբեբաների անարգ վարմունքը վիշտ է և Հայրիկի սրտին. ամէն մի վանեցի կամ օտար ճարպիկ գրագետ գնում է Ռուսահայք և Հայրիկի կողմից զանազան շինծու յանձնարարականներով կեղեքում է Հայրիկի անունն յարգող ռուսահային։

—Ձեր ասելով, ուրեմն, խարդախներից և ոչ մէկը Հայրիկի աշակերտ չէ՞, կամ յանձնարարականը Խրիմեանի ինքնաձեռագիր ստորագրութիւնը չէ՞։

—Ձեմ ժխտում, կան և Հայրիկի սաներից, նոյն-

պէս և մի քանի յանձնարարութիւնները կրում են իւրեանց վերայ Հայրիկի մատերով տողած Հայրիկ ստորագրութիւնը։

—Ուրեմն տեսնո՞ւմ էք...

—Եւ տեսնում եմ և տեսել եմ, թէ. ո՛րքան է վշտանում մեր ազգասէր Վարդապետն, երբ լսում է իւր թերուս սանների ոմանց շահամոլական խաբեբայութիւնը, սակայն ինչ կարող է օգտել, վարդն էս առանց փշի չէ։ Փրկչի տասներկու աշակերտներից մէկն իւր տէրոջը մատնեց, միւսն երեք անգամ ուրացաւ, միևնոյն դաշտը բուսուցնում է և դժնիկ փուշ և անուշահոտ ծաղիկները։

Մի թէ մի քանի անպիտանը պէտք է մոռացնեն Վարագայ դպրոցի տուած բեղմնաւոր արդիւնքը։

Խոնարհ խօսակիցդ Խրիմեանի տորին և յետին աշակերտներից տրուպն եմ. ինչպէս չըթագդրի, գնում եմ նշանաճիս ազատելու Ղայմաղամի մագլներից, նա կամենում է հայ գեղեցկուհուն իր հարեմը քարշել. տաճիկ բռնակալի և փճնի հայ իշխանի մէջ երկուստեք համաձայնութիւն է կայացել, անպիտան հայրն իւր նշանած դստերը Ղայմաղամի կանանոցում մաշել է խոստացել, բայց աղջկանը համոզելու և գործը գլուխ բերելու համար՝ մօտ մի տարի ժամանակ է որոշել։

Ինձ հարկաւոր էր, թէպէտ, շտապել, բայց ապագայ ամուսինս օր յառաջ ազատելու պարտքից մի ուրիշ աւելի մեծ և վսեմ պարտականութիւն

քարշում է ինձ դեպի այլ ճանապարհ, ուր ուղղում է ինձ Հայրիկի պատուէրը։ Եթէ կըբարեհաճէք, ես կըբացատրեմ ձեզ և դուք կըհամոզուէք, որ ամէն մի „տէրտէր կոչողը չէ Քրիստոսի աշակերտը, այլ ով կատարում է Նրա կամքը“։

—Բայց նախապէս այս ասացէք ինձ, ընչո՞ւ Հայրիկն իւր ստորագրութիւնը տալիս է բաղդախնդիրների ձեռքը։

—Այդ միակ պակասութիւնը քաջ գիտէ և գթասրտութեան ճշմարիտ տիպար Խրիմեանը։ Նա գիտէ, այո՛, մարդկանցից շատերի անպիտանութիւնը, գիտէ, որ ճշմարտութիւնը մի ճանապարհ միայն ունի, իսկ ստութիւնը հազար ու մի, բայց և այնպէս չի կամենում չքաւորութեան անունով իւր գթասրտութիւնը հայցող անհատին մերժած լինել. նա իւր մեծ Վարդապետի պատուիրանապահ աշակերտն է. „որ հայցէ իքէն տուր և որ խնդրէ իքէն, մի դարձուցաներ զերեսս“։ Հայրիկը սրբութեամբ կատարում է վերոգրեալ հրամանը, թէև քաջ գիտէ, որ մի ծաղկից մեղուն մեղր է պատրաստում, օձը թոյն։

—Երջանիկ էք, ուրեմն, պ. Ասքանազեան, որ անձամբ ներկայ և վերահասու չէք եղել խաբեբաների հասցրած չարիքներին, բայց թողնենք այս բաները և դառնանք ձեր պատմութեան թելին. եթէ կարևոր և տեղի էք համարում, ես պատրաստ եմ լսելու ձեր ուսուցչի և ամենեցունց Հայրիկի տուած պատուէրները։

—Շատ չի քաշել, Վարադայ աւարտավարժ սանները պէտք է ցրուին Տաճկահայ գաւառները և ուսումնասիրեն հայ ժողովրդի կեանքը։ Այդ աշակերտներից մինն էլ նուաստուհիս է, որին ընտանեկան ձախող հանգամանքները անջատեցին իւր ընկերներից. բայց որովհետև, ինչպէս ասացի, առաջս դեռ ժամանակ կայ, Հայրիկի պատուէրին համաձայն՝ ես գնում եմ Խիզան գաւառը միայն պտտելու, տեղեկագիրը կազմելու և Հայրիկին ուղարկելու։ Այս չափով լցուցած իմ պարտքս՝ պիտի փութամ, ուր կանչում է ինձ մի թոյլ արարածին տուածս խոստումը։ Այժմ էլ, յարգոյ պարո՛ն, դեռ չէք հաւատում ասածներիս և չէք յայտնում ձեր ո՛վ և ո՛րտեղացի լինելը. եթէ կամիք, ես բերեմ ձեզ Վարագեան դպրոցից ստացած ուղևորութեանս ծրրագիրը, եթէ երկմտում էք, ահա և նշանածիս վերջին նամակը։

Ռուբէնը ձեռքը ծոցը տարաւ և հանեց Արփիկի նամակը։

—Պահեցէք խնդրեմ, պարոն Ասքանազեան, ձեր սրտի գաղտնիքը. ես բոլորովին վստահ եմ անկեղծութեանդ և այլ ևս չեմ երկմտում յայտնել ձեզ իմ անձնաւորութիւնս։ Ինքս ռուսահայ եմ Արցախու նահանգից, անունս է Գարեգին Մելքիսեդեկեան. ես ևս բարեբաղդ եմ մի երկրորդ Հայրիկի աշակերտը լինելով. խնդրեմ նստեցէք և ես պատմեմ ձեզ, թէ ո՛վ է այն մեծ մարդը։

Գարեգինն իւր հիւրին նստացրեց:
Ահա, ինչպէս սկսեց նա իւր խօսակցութիւնը:

ԻԳ.

—Նոր չէ հիմնուած Թիֆլիզի Ներսիսեան դպրոցը. նա քսան-սկան թուերի ծնունդ է:

Աշտարակցի Ներսէս Արք-եպիսկոպոսը՝ Թիֆլիզի առաջնորդութեան պաշտօնն ստանձնած օրը՝ խորհեց Վրաստանի բազմահայ մայրաքաղաքը համայն Կովկասեան հայերի լուսաւորութեան կեդրոնը շինել:

Ջերմ ազգասիրի հեռատես քաղաքագիտութեան արգասիքն էր այս:

Վաղուց էր մտմտում վառվռուն երիտասարդ գործունեայ Հոգևորականը սուրբ Լուսաւորչի և Հուժկու Տրդատի Աթոռների կեդրոնական նշանակութեան վերայ հրաւիրել տիեզերքի երեսին ցրուած տարաբնակ հայ մարդկանց խորին ուշադրութիւնը:

Ոչ մի ժամանակ Հայ մարդն իր պանդխտութեան մէջ չի մոռացել Վաղարշապատն ու Էջմիածինը, բայց և ոչ մի րոպէ նրա աչքերի աղի արտասուքը չի ցամաքել՝ մինչդեռ հայութեան այդ սիրտը խոցոտուած և շամփրոտուած է եղել օտար բռնակալների սրից և սուինից:

Ի՞նչը կըհանգստացնէը Հային, մինչ Վաղարշապատը մի կիսաւեր գիւղ էր, մինչ մեծ Գրիգորի

մարտիրոսական յաղթանակով կանգնացրած կենդանարար Խաչը Մահմետականութեան կանաչ դրօշակով սքօղուած էր։

Հալի սիրտը կրծող այս վէրքն էր կամենում բուժել, ապաքինել մեծին Ներսիսի անուանակիցը, Վաղարշապատն ու Էջմիածինը պարսկական ծանրադիր լծից ազատելն էր անձնադիր հովուի հոգածութիւնը։

Այս իսկ դիտաւորութիւնով իւր վարդապետութեան օրից՝ Էջմիածինը կառավարող, Էջմիածնականներին պաշտօնները բաժանող Ներսէսն ինքը ցանկացաւ պաշտօն ունենալ և ընտրեց իւր համար Վրաստանի առաջնորդութեան պաշտօնը։ Այս դիտաւորութեամբ նա մօտեցաւ Վրաստանը հովանաւորող պետութեանը, այս նպատակով նա հիմնեց Ներսիսեան դպրոցը։

Իմաստուն քաղաքագիտի սրտի ցանկութեան մի մասը կատարուեց, երբ Իջման տեղի գլխի քառաթևը պայծառ փայլեց։

20 թուականների ռուս-պարսկական պատերազմը, որի առաջին խաչը ձեռքին ընթանում էր նոր Ղևոնդ երէցը, պարսկական սահմանաքարն Էջմիածնից ընդ միշտ հեռի տնկեց, Էջմիածնի շրջակայքը՝ հայութեան ամայացած կեդրոնավայրը հայերով լցրեց։

Բացուեցան այնուհետև Տփխիսի Ներսիսեան

դպրոցի դռները ամբողջ Կովկասեան հայ մանուկների առաջին։

Արդարև, հեռացաւ մի երկար ժամանակաշրջան Թիֆլիզի լուսաւորութեան տաճարի լուսատու լուսարարապետը, երբ է, 14 տարի Ներսիսին վիճակուեց Կովկասեան սարերի միւս երեսին բնակած Հայերի ղեկավարը լինելու, բայց դորանով նրա վառած ճրագն իսպառ-սպուռ չըհանգաւ, պատրոյգը թէև առկայծեալ, լոյսը թէև աղօտ, բայց լուսաւորում էր։

Շատ հաւանական էր, որ ձախորդ հանգամանքներից լապտերի ձէթը կարող էր ցամաքիլ, եթէ Նախախնամութեան հզօր Աչը Ներսիսեան դպրոցի հիմնադիր Ներսիսին Կովկասեան բարձրաբերձ լեռների այն երեսից այս երեսը չըթռցներ։

Ազգի միակամ հաճութիւնն իրագործուեց, Ներսէսը նստեց իւր ազատած Աթոռի վերայ. նա բարձրացաւ Լուսաւորչի գահը, նա կրկին համբուրեց Վաղարշապատի փլատակները։

Եկել էր օրը, Ներսիսեան դպրոցը պէտք է ծառայէր իւր հիմնադիր Ե. Ներսիսի ծրագրած նպատակին, դպրոցի չորս պատերից պէտք է դուրս ցոլար լոյսը և սփռուէր շատ հեռու. դպրոցի սանները պէտք է մի մի ջահեր դառնային և լոյս տային Ռուսիոյ Հովանաւորութեան ներքոյ մտած բոլոր Հայերին, ճշմարիտ ազգասիրութեան տարրը

շաղկապուելու էր ճշմարիտ քրիստոնէական առաքինութեան հետ։

Այս վսեմ գաղափարը գլուխ բերելու համար՝ երկու բան էր հարկաւոր՝ Ներսիսի անմիջական հսկողութիւնը՝ և քրիստոսա-ազգայնութեան հոգւով տոգորուած մի խոհական տեսուչ։

Սրատես արծուի աչք ունէր Ներսէսը, նա իւր սուր տեսողութիւնը լարեց աշխարհի չորս կողմը և Ռուսիոյ մայրաքաղաքումը գտաւ իւր ցանկացած անձնէնը։

Պետրոս Սամուէլեան Շանշեանցն էր այդ հայը, որին Ազգի Հօր Հայրապետական կոնդակը փոխադրեց Թիֆլիզ։

50-ական թուականներին Ներսիսեան դպրոցը բարեբաղդ եղաւ առաքինի, աստուածասէր, ազգասէր, եկեղեցասէր, գիտնական Շանշեանցի տեսչութիւնը վայելելով։

Դպրոցի ոսկի դարն էր այդ տարիները։ Դպրոցի կիսաշէջ լապտերները վերստին պայծառ փայլեցին և լոյս տուին յայսկոյս և յայնկոյս Կովկասի բոլոր հայութեանը։

Երասխի, Ախուրեանի, Թերեքի, Կուբանի, Րիոնի, Սև ծովի, Կասպից ծովի ափերից՝ ընտգատառ հայ, ռուսահայ, չերքէզահայ, ուտիահայ մանուկները ժողովուեցին Կուր գետի ջուր խմելու, Ներսիսեան դպրոցում Շանշեանցի դաստիարակչութեան տակ կրթուելու, Շանշեանցի հոգւով հոգի ստանա-

լու, ճշմարիտ քրիստոնեայ և ճշմարիտ հայ լինելու։

Ծամանակի երջանիկ պատանիներից մինն և ես էի։ 14 տարեկան էի, երբ Ներսէս Ե.-ի հրամանով քահանայ հայրս ձին հեծաւ, ինձ իւր գաւակն առաւ և բերեց Ներսիսեան դպրոցը։

Անմոռանալի է իմ համար այն օրը, սարերումն եղջիւրների եռևից հրացանը ձեռքիս վազող գիւղական, անտաշ պատանիս խրտնեցի, յետ դարձայ և հօրիցս յառաջ էի դուրս թռչում, երբ տեսայ ինձ շրջապատած բազմաթիւ սևազգեստ մանուկներին։

Շատ շուտ փուքս նստեց, թափս կոտրուեց, երբ դուռը դրսևից բացուեց և աչքիս երևաց սև աչքերով, սև յօնքերով մի գեղեցկատեսիլ, հեզադէմ երիտասարդ։

Այն ինչ հայեացք էր, որ ոտքերս կաշկանդեց։ Վիզս ճկած, գլուխս թեք, ձեռներս խաչած մնացի դրան առաջին կանգնած։

Նա ժպտաց, ձեռքով գլուխս շոյեց, կուռս բռնեց, յետ տարաւ և մի քանի քաղցր խօսքերով սարերի որդուն գրոց գաւակ արեց։

Այդ սրտագրաւ երիտասարդն ինքը Շանշեանցն էր։

Ո՛րպիսի քաղցրութիւն, որքան սէր, ինչ չափ գօրովանք էր, որ ունէր նա դէպի իւր սիրելի սաները։

Այդ ժամանակը դեռ 35 տարեկան էր մեր տեսուչը։ Ինչ եմ ասում, և՛ տեսուչը, և՛ ուսու-

ցիչը, և՛ ընկերը, և՛ եղբայրը, և՛ հայրը։ Չեմ քաշուում ասել և՛ մայրը։ Կանացի սեռին յատուկ անչափ մայրական գգուանքը, խանդաղատանքն ու հոգատարութիւնն ի բնէ տրուած չէ այր մարդին, բայց Շանշեանցը մի բացառութիւն էր։

Ոչ մոռացել եմ և ոչ մինչև մահս կըմոռանամ, դեռ յաւիտեանս յաւիտենից հանդերձեալ կեանքումն էլ կըյիշէ անմահ հոգիս այն հոգեբուղխ ազգասիրական խրատները, որ Աւետարանի բնաբանից առած, Աւետարանի վկայութիւններով ապացուցուած՝ խօսում էր Շանշեանցը՝ դասերից ազատ ժամերին՝ իրա շուրջը մակաղուած գառներիս, իրան շրջապատած որդեգիրներիս։

Այո՛, իրան շրջապատած։ Այն օրը մեր համար օր չէր. այն խաղը մեր համար տանջանք էր, եթէ չըխօսէինք մեր հօր հետ, եթէ չըխաղայինք նրա ներկայութեամբ և շատ անգամ հէնց նրա հետ միասին։

Դասարանումը տեսականապէս բոլոր ուսուցիչներից սովորածներս մենք գործնականապէս իւրացնում էինք դասարանից դուրս։

Շանշեանցն էր գործնականութեան ուսուցիչը։

Կրօնագիտութեան դասատուն Շանշեանցն ինքն էր։ Քրիստոնէական կրօնի պահանջած առաքինութիւնները նա իւր անձնական օրինակով, իւր առաքինի գործերով էր տպաւորում մեր սրտերումը։

Օր չէր անցկենում, որ Աւետարանի Սամարա-

ցու նման՝ Շանշեանցը չըմխիթարէը նեղացած չքաւորներին ու կարօտեալներին. նրա շնորհիւ՝ գործ, աշխատանք էին ճարում անտէրութիւնից յուսահատուածները, արհեստի ոչը էին դառնում անարհեստները։

Այսօր էլ աչքիս առաջևն է մի ոտքը կորցրած, փայտեայ ոտքի վերայ կենուած, մուրացիկ պատանին։

Շանշեանցն իւր ընկեր Դ. Մ..եանցի հատ ըզբօսնում էր իւր կացարանի տանիքի վերայ, որ գտնուում էր դպրոցի հանդէպը։

Մուրացիկը փողոցից նկատեց երկու պարոններին և ձեռքը տարածեց։

Մ..եանցը ձգեց մի արծաթի դրամ։

Շանշեանցն այդ չափով չըբաւականացաւ. նա էլաւ կտրից և իւր հետ վայր բերեց Մ..եանցին։

Անդամնալոյծը միայն ոտքերով էր անդամնալոյծ, նորա ձեռքերը քաջառողջ էին. նա ընդունակ էր նստած գործելու։ Նա խլուեց մուրացկանութեան կորստաբերութիւնից։ Նոյն օրը նրա ցնցոտիները փոխուեցին և մուրացկան անդամնալոյծը տրուեց դպրոցի կօշկակարին աշակերտութեան։

Զրկալին, համարեա՛, այն ժամանակ դպրոցում ֆիզիքական ժողովածուք։ Շանշեանցը բնութեան մէջ էր ցոյց տալիս մեզ բնական պատմութեան հետաքրքիր ճշմարտութիւնները։

Գարունը բացուելուն պէս՝ Թիֆլիզի շրջակայ

լեռները, դաշտերը, ձորերն ու թփուտները էին մեր զբօսանատեղիքը։

Առաջ իւր հետ բնական պատմութեան և ուրիշ առարկաների ուսուցիչներին՝ Շանշեանցն ամէն մի բոյսի, մի քարի, մի խխունջի, մի որդնիկի, մի աւազի հիւլէի մէջ էր մեր դասերը սովորցնում։

Դասարանում սուրբ Գրքի հիմունքների վերայ աւանդած Աստուածգիտութեան ճշմարտութիւնները բնութեան ծոցումն էր նա ամրապնդում մեր սրտերումը։

Իւր դասաւանդած աւետարանական վարդապետութիւնները քարոզի էր վերածել տալիս մեզ, և մեր մանկական թոթովանքներով՝ Ներսիսի բարեհաճ հրամանով՝ սուրբ եկեղեցու բեմից հայ ժողովրդին մատակարարում։

Արդ՛արև, գործնական վարժապետ, ոչ միայն Ներսիսեան դպրոցի սաներիս, այլ և Թիֆլիզի բոլոր հայութեան համար։

Հայոց պատմութիւնն և այլ պատմական առարկայքը մեր մէջ մշտնջենաւորելու դիտմամբ՝ Շանշեանցը դիւրըմբռնելի յօդուածներ էր գրել տալիս մեզ այդ նիւթերի վերայ և շաբաթ օրերը ճաշերից յետոյ՝ դպրոցի դահլիճում ժողոված Թիֆլիզաբնակ հայերի ներկայութեամբ կարդալ տալիս։

Այդպիսով հայ խօսքն անզգալի կերպով ընդհանրանում էր վիրահօս Թիֆլիզի մէջ, այդպիսով

ազգայնութեան գաղափարը հասարակաց սեպհականութիւն էր դառնում։

Այն ժամանակը գիւղերում և գաւառական քաղաքներում հայ դպրոցներ չկային, գիւղական հոգևորականութիւնը տգէտներից էր բաղկացած։

Զըգիտեմ, մեծիմաստ Ներսէսն իւր նախաձեռնութեամբը, թէ Շանշեանցի խորհրդատուութեամբ հրաման արձակեց, որ Ղազախի, Շամշադնի և Վրաստանի գիւղ ու գաւառներից չափահաս քահանայացու տիրացուքը ժողովուին Ներսիսեան դըպրոցը։

Առանձին սենեակները յատկացան մազով—միրքով, կնոջ տէր, որդուց տէր այդ աշակերտների համար։

Հայոց լեզուի, կրօնի և եկեղեցական երգեցողութեան դասերին դասարանների մուտքը բացուեց նրանց առջևը՝ ոչ իբրև աշակերտներ, այլ իբրև կամաւոր ունկնդիրներ։

Բայց նրանք դաս առնում էին։ Կրօնն ինքը Շանշեանցն էր առանձնապէս աւանդում, իսկ հայերէնը՝ դպրոցի վերին դասարանի յառաջադէմ աշակերտներն էին ուսուցանում։

Ես ինքս դեռ 17 տարեկան պատանի, դեռ շրթունքս չմազակալած՝ Աւետարանն էի թարգմանում հօրս չափ աշակերտներիս և ազգային հոգի էի ներշնչում։

Զարմանալի յառաջադիմութիւն արին այս մար-

դիկը, օր ու գիշեր հանգիստ չունէին, անդադար աշխատում էին. այդպիսով կարճ միջոցում գերազանցեցին իրանց հայրենիքի բոլոր քահանաներից. դրանցով գաւառները ունեցան օրինակելի քահանաներ։

Սակայն Ներսիսեան դպրոցի պայծառ հորիզոնն երբեմնապէս ամպոտում էր։

Ֆաջահմուտ զօրապետն իւր յաղթութեան դաբնին առանց պատերազմի չըքաղեց։

Բազմադիմի արգելքներ լեռնանում էին Շանշեանցի առաջին և նրա ճանապարհը դժուարացնում։

Մարդելոյզ հացկատակները անձնական շահի համար սկսան իրանց թակարդները լարել։

Բաւական չէր, որ Ներսիսի ականջների թըմբուկներն էին գրգռում, ժամու և տարաժամու ներս էին սողում մեծ Հայրապետի մօտ և Շանշեանցի գործողութիւնները պարսաւում։ Այսքանով չը կշտացան նախանձոտները, նրանք դպրոցի տարեգիրն էլ խարդախեցին։

Դպրոցի օրագրութեան մէջ էջեր կան մտցրած՝ առաքինի և հայասէր Շանշեանցին անուանարկելու չար միտումներով արձանագրած՝ որ ժամանակակից ականատեսի մաղերը կըքստմնեն, այնպիսի արատիքներ և պակասութիւններ են բարոյրուած Շանշեանցի անձի և կատարած գործերի վերայ, որ եթէ անաչառ պատմութիւնը չըմրոտէ, չըսևացնէ ցածհոգի վատթարներին, եթէ բանսարկուների մթնա-

գործունեությունները չլայտնագործուին ու չլխայտաուակուին, Նանշեանցն ապագալի տատամսուլեան և տարակուսուլեան առարկան պիտի դառնալ:

Ինչ տեղ հասցրին անպիտան չարամիտները. Նանշեանցի գլխով երդուող Ներսիսի մաքուր սիրտն այն աստիճան պղտորեցին, որ գուցե նրա կոնդակների մէջ ևս մտած լինին ընդդէմ Նանշեանցի և իւր գործողունեությունների հրամանները:

Պարզ էր ապաքէն, որ իրերի այս դրունեությից յետոյ՝ Ներսիսեան դպրոցը պէտք է զրկուէր իւր լուսաւոր տեսչից:

Այդպէս էլ կատարուեց: Ներսիսի յանկարծական և բազմակէտ մահից յետոյ՝ չարունեությունն իւր յաղթանակը տարաւ. Նանշեանցը թողեց Թիֆլիզը:

Մի քանի ժամանակից յետոյ՝ նա կանչուեց Ղարաբաղը լուսաւորելու:

Այստեղ էլ նոյն ուղղունեությունը, նոյն հոգին, նոյն սկզբունքը: Ափսոս, նոյն չարամիտների ոտնհարունեությով այստեղ էլ կարճատև եղաւ Նանշեանցի կացունեությունը: Բայց և այս կարճ միջոցում մեծ գործ կատարուեց:

Որոմնացաններն ուշ գլխի ընկան, նրանց աչքից փախան շատ սերմեր և բեղմնաւորուեցին:

Բացի արական սեռից՝ Ղարաբաղի քնքոյշ մանուկ սեռն ևս վայելեց Նանշեանցի և իւր աշակերտ-վարժապետների դաստիարակչունեան շնորհքը:

Ուսուցչական փոքրիկ խմբակի և իւր առաքի-

նի ու ազգասէր Վարդապետի նախաձեռնութեամբ և ջանասիրութեամբ, նոյնպէս և Ղարաբաղի հայ տիկիններուն գործակցութեամբ՝ Շուշուայ մէջ բացուեց առաջին անդրանիկ աղջկանց դպրոցը։

Տիրամայր Մարիամու անուանը նուիրուած օրիորդական դպրոցի անմիջական խնամակալուհին եղաւ Շանշեանցի հոգւով ներշնչուած տիկին Մարիամ Հախումեանցը։

Հասան 60-ական թուականները, ընդհանուր զարգացողական հոսանքը հեղեղեց և Կովկասը։

Շանշեանցի աշակերտներն էին, որ առաջինն օգտուեցին այդ հոսանքէից։ Հայ լրագրութեանց մէջ մասնակցողները, հայ թատրոնական բեմ հաստատողները, հայ ուսուցիչները, հայ երգը տարածողները, աշխարհաբարով հայ գրականութիւնը ճոխացնող մըշակները՝ ամէն տեղ Շանշեանցի աշակերտներն էրան։ Չափն անցրած չեմ լինիլ, եթէ ասեմ, որ 60-ական թուի հայ կեանքի մտաւոր վերակենդանութեան առաջին խմորը Շանշեանցի աշակերտները շաղախեցին, Ռուսահայոց լուսաւորութեան երկանց սկիզբը Շանշեանցի մէջ մարմնացաւ։

Ա՜հա՛, պարոն Աբգանազեա՛ն, ձեր առաջին կանգնած է Շանշեանցի աշակերտներից, մինը, ըստ ձեր, ամէնից տրուպը։

Իմ սկզբնական կրթութիւնը, իմ մայրենի դաստիարակութիւնն ստանալով Շանշեանցից, ես դէպքի բերմամբ կատարելագործուեցի Ռուսիայի մայրա-

քաղաքի բարձրագոյն բազմաբուեստեան դպրոցում։

Կամենալով իմովսանն կատարել իմ մեծ վարժապետիս՝ Պետրոս Շանշեանցի հոգեշնչած պարտականութիւնս, ես ընկել եմ երկրէ երկիր։

Այժմ տեսնում էք, որ սուտ չէի ասում, թէ մի երկրորդ Խրիմեան Հայրիկի աշակերտ և ճետ էլ ես եմ։

Հայի կեանքը, հայի անցեալն ու ներկան ուսումնասիրելն էր անդադար շեշտում մեզ մեր մրտքի առաջնորդը։

Թափառականութեան մէջ ես մտադիր եմ ծանօթանալ իմ հայրենիքին, իմ մերձաւորներին, արեւնակցական և ցեղական կապերով ինձ հետ առընչութիւն ունեցողներին։

Հասկացաք այժմ, թէ ով եմ ես և ինչ մարդ եմ, պարոն Ռուբէն։

—Եւ հասկացայ և սիրեցի։

Եթէ այդպէս է, այստեղ վերջակէտ դնենք գաղափարական խօսակցութիւններին և մեր մարմինը կազդուրելու հոգսը քաշենք։ Եթէ դուք շնորհ անէք իմ ցամաք հացիս ափը վտրելու, ինձ հետ մի՛ անպաճոյճ ընթրիք անելու, ես խոստանում եմ ամբողջ գիշերը նուիրել ձեր հարցասիրութիւնը լուսցանելու սիրայօժար պարտականութեանը։

Հետս ունիմ Թիֆլիզեցու սիրած *խաւիար* ու *զուրզակ*. Էջմիածնի շրջակայքի հայերի աղը դրած Գեղարքունի Ծովակի իշխանաձուկն ու կողակ, և

Ձեր աշխարհի համեղ պանիր տառեխ կ՚ըլլա։ Այս կըվայելենք և վրան մի երկու բաժակ Արագածի ջրով ուռգուած՝ Աշտարակի մարսեցուցիչ գինի կը-դատարկենք։

Մի կտոր հաց կուտենք մենք, Աստծուն փառք կըտանք և քաղցր քաղցր ըզոյց կանենք։ Այո՞։

—Ուրախութեամբ։

—Կեցցես ուրեմն, ասաց Մելքիսեդեկեանն և իւր պաշարի պայուսակը բաց արեց։

ԻԵ.

—Եւ այսպէս։

—Եւ այսպէս, պ. Ասքանազեան, պատասխանեց ընթրիքէն յետոյ Մելիքսեդեկեանը Ռուբէնի հարցին, ես մեր և Ձեր վարդապետների ուսման մէջ համանմանութիւն և միատեսակ ուղղութիւն եմ գտնում։

—Եւ ես նոյնը կըկնում եմ։

—Վասպուրականի սրահայեաց Արծուին ես անձամբ բաղդ եմ ունեցել տեսնելու և մօտից ճանաչելու. ճիշտ 60 թիւն էր այն բարեյաջող տարին։

Արծիւը թևերի վերայ առած իւր անդրանիկ ճետերից երկուսին՝ հիւր էր եկել Տիխիսեան Կռունկին։

Տարագնաց երկայնակտուցն իւր բոյնը Թիֆլիզում հաստատած՝ իւր ձագերի բերանով իւրաքանչ

հայերից խապրիկները էր աւետում նրանց տարաբնակ պանդուխտ եղբայրներին։

—Ասածդ, հարկաւ, «Կռունկ Հայոց աշխարհին» պատուական և իմաստալից ամսաթերթին է, որ 60 թուին սկսուեց հրատարակուիլ Տփխիսում. ես կարդացել եմ այդ հանդէսը, մեր Վարագի մատենադարանի մէջ առաջնակարգ տեղ է բռնում «Կռունկը»։

—Հէնց այդ «Կռունկի» աշխատակիցների մեծամասնութիւնը Շանշեանցի ձեռնասուններն էինք, խմբագիրը թէև օտարական էր, բայց Շանշեանցի ուղղութեանը գաղափարակից էր. նոյնն էր և հրատարակիչը։ Մեր խմբագրատունը ձեր Հայրիկի սիրելի այցելարանն էր, հրատարակչի և խմբագրի դռները յաճախակի ուրախութեամբ բացուում էին Թիֆլիզի թանգագին հիւրի առջևը։

Այդ ժամանակը Թիֆլիզից բացակայ էր մեր տեսուչը, որի մասին շատ էր ափսոսում Վարագեան Արծուին, բայց նա ուսուցչի կարօտը լրացնում էր աշակերտների ներկայութիւնով։

—Հայրիկը մեզ պատմում էր Ռուսաստանում գտած սրտագորով ընդունելութիւնը, ամէն տեղ՝ գլխաւորապէս Տփխիսում՝ նորա հոգեզգած քարոզները մեծ բաւականութիւն են պատճառել քարոզածարաւ ժողովրդին, այնպէս չէ՞։

—Ես ինքս նրա մշտական ունկնդիրն էի. եկեղեցասէր հայն իւր հոգևորականի բերանից առա-

ջին անգամն էր լսում և զգում կենդանի խօսքի էական նշանակութիւնը. մինչև այդ օրը հալի լսածը մեծ պասի սովորական քարոզներն էին, Ադամ ու Եւայից և Խիկարի առակներից այն կողմը չէին անցնում, իսկ այժմ աւետարանի վկայութիւններով համեմած՝ նրա կեանքի պայմաններն են պարզուում իւր առաջին, յաւիտենական երջանկութեան ճանապարհը մտաւոր լուսաւորութեան գիտակցութիւնովն էր հարթուում։

—Մեծ բազմութիւն էր ժողովուում։

—Քարոզի մէջ Հայրիկն ինքն էր աւետում հետևեալ կիւրակէի քարոզելու տեղը։ Այսքանը բաւական էր։ Այնուհետև տներում, զբօսավայրերում, վաճառանոցներում ուրիշ խօսակցութիւններ տեղի չէին ունենում, Հայրիկի անցեալ քարոզն էին որոճում և առաջիկայ կիւրակէին տեղ-խլուկ անելու վրայ էին մտածում։ «Տէր ի բազումին» ասեղ ձգէիր եկեղեցումը՝ գետին չէր ընկնիլ, ձկան ծըւարի նման իրար գլխի կիտուած էր բազմութիւնը, ոչ ճնշուելուն և ոչ շոքին էին նայում։

—Եւ այդ դրութեամբ ժողովուրդը կարողանո՞ւմ էր քարոզ լսել։

—Հայրիկի մի խօսքը հերիք էր մեռեալ լռութիւնը թագաւորացնել. նստեցէք, սիրե՛մ զձեզ, ասում էր սեղանի բեմից Հայրիկն և բերանը բաց անում։

Բաւական չէր, որ Խրիմեանի խօսքերը մարգարէի հատիկների նման խլուում էին իւրաքանչիւր

ունկնդրից, Շանշեանցի աշակերտներից մի արագագիրն էլ բոլորը գրի էր առնում՝ „Կռունկի“ մէջ տպագրելու համար։ Ափսոս, այն քարոզները „Կռունկի“ կողմից ամենաթանգագին խապրիկները պէտք է կազմէին, բայց... բայց ամէն բարի ցանկութիւն չի իրագործուում... Սակայն ինչ փոյթ, Խրիմեանի գալուստից յառաջ՝ սերմնացանը նոյն սերմերը ցանել էր մասնաւորների սրտերում, «Կռունկի» չը կատարածը նրանք տպագրումը կատարեցին։

—Կարծեմ *սերմնացան* խօսքով Շանշեանցին էք ակնարկում, պ. Մելքիսեդեկեան։

—Իսկ և իսկ. զարմանալի համանմանութիւն կայ այդ երկու մարդի տարածած գաղափարների մէջ. Շանշեանցի ուսումը Քրիստոսի քարոզած մարդասիրութիւնն էր՝ ազգային անհատականութեան այլ ու բնից սկիզբը դրած. նոյնը և Խրիմեան Հայրիկի բերանից լսեցինք։ Ձեր Վարդապետը Հային մի գրչով Աւետեաց երկիրն է հրաւիրել և միւսով Արարատեան երկիրը. խօսքս Խրիմեանի երկու մեղրածորան աշխատասիրութեանց մասին է «*Հրաւիրակ յերկիրն Աւետեաց եւ Հրաւիրակ յերկիրն Արարատեան*»։ Նոյն աւետիքները մեզ դաստիարակում էր մեր վարդապետ Շանշեանցը։ Իմ կարծեօք, երկու վարդապետները միատեսակ են ըմբռնել Աւետարանի վսեմ գաղափարը։

—Խրիմեանի և Շանշեանցի մէջ միակ զանազանութիւնն այս եմ գտնում, ասաց Ռուբէնը. ա-

ռաջինն իբրև հոգևորական, բացի մասնաւորապես իւր աշակերտներին ուսուցանելուց, նա իւր առաքելութեան պարտքը կարողանում է բարձրաբարբառ ամէն տեղ և ամէն ժամանակ կատարել. եկեղեցում, հրապարակներում, ճիսակատարութիւնների ժամանակ հոգևորականն ազատ է ժողովրդին խրատներ կարդալու. իսկ Շանշեանցը գրով աշխարհական՝ զուրկ է վերոյիշեալ արտօնութիւններից և միայն իբրև ուսուցիչ՝ դպրոցի պատերի ներսն է իւր աշակերտներին պատրաստում բարի հայ-մարդ և բարի հայ-քրիստոնեայ լինելու։

—Ուղիղ է դատողութիւնդ, ինչպէս ուղիղ է և այն, որ Շանշեանցը ոչ միայն լռութեամբ է ուսուցանում, այլև շատ մեղմիկ, շատ ծանր և շատ ցած է խօսում։ Նա երբէք իւր ձայնը չէ բարձրացնում, իւր կեանքում բնաւ վշտացած և բարկացած չէ, իւր հակառակորդին սառն երես չէ ցոյց տուել, ներողամիտ է, համբերատար է, հեզ է, քաղցր է, յոռետես չէ, յուսահատ չէ, շտապող չէ, հեռատես է, նախատես է, քաղաքագէտ է և խոհեմ է։

—Եթէ մի կողմը թողնենք Հայրիկի հոգևորական կոչումը, նրա ազդու և խրոխտ ձայնը, նրա պերճախօս բեմբասացութեան մեծ ձիրքը, թուածդ բոլոր յատկութիւնները սեպհական են և Խրիմեանին, վրա բերեց Ասքանազեանը, կարծես մի համեղ խնձոր՝ երկուսի կիսած, որի մի կտորը հայասէր հա-

յի Աստուածը տաճկական հայերին է պարգևել և միայն ռուսական հայերին շնորհել։

—Ես կաւելացնեմ, որ խնձորի կարմիր երեսը դէպի ձեր կողմն է, մերի գոյնը սպրծնած է։ Ինչ և իցէ, գոհութիւն երկնային Նախատեսութեանը, որ այսօր երկու վարդապետների երկու ձեռնասունների՝ մէկիս Վասպուրական լեռներից, միւսիս Արցախու ժայռերի միջից հանդիպեցրել, մի յարկի տակ է մտցրել։ Մենք երկոքեանս էլ բեռնաւորուած մեր վարդապետների պատուէրներով միատեսակ նպատակի ենք դիմում, գնում ենք ուսումնասիրելու տգիտութեան խաւարում թաղթափող ճնշուած ու հարստահարուած մեր եղբայրների վիճակը։ Դուք ընտանեկան անյաջող պարագաների հարկեցուցիչ դրդմամբ՝ ստիպուած էք միայն Խրզան գաւառը հետազօտելու։ Այնպէս չասացի՞ք, պ. Աբգանազեան։

—Աւելացրու և նրանց մարդահամարը կազմելու, նրանց կեանքի պայմանները, կենցաղը, շրջակայ դրացի քրդերի, Շէյխերի և տիրող պետութեան պաշտօնակալների հետ ունեցած լաւ կամ վատ յարաբերութիւնները հասկանալու, տեղեկագրելու և Հայրիկին ուղարկելու։

—Իսկ ես քաջ ճանաչելով և ոտնատակ տուած լինելով ռուսահայքն ու պարսկահայքը՝ եկել եմ այժմ մեր տաճկահայ եղբայրներին մօտից ծանօթանալու և եթէ հնար է, իրարից անջատ մի հօր հա-

բազատ զաւակների մէջ մի մտերմական կապ, մի սէր մխուրթեան և մի բարոյական շաղկապ հաստատելու։ Այս դեռ բոլորը չէ, յաւելացրեց Մելքիսեդեկեանը, ես գծած ունիմ իմ շրջած կողմերի քարտէսը, մտադիր եմ կազմել մի լիակատար և ամփոփ աշխարհացոյց երկրագնդի այն մի կտորի, որին նախնիքը Հայաստան անունն են սեփականացրել, իսկ վերջերումը քաղաքական հանգամանքները նրան Տաճկաստան, Քրդստան, Պարսկաստան կոչմամբ են վերամկրտել։

—Միայն սեննեկի զարդ աներու համար, անշուշտ, յուսահատ ժպիտ արտայայտեց Աւքանազեանը։

—Սխալուում ես, բարեկամ, և՛ իզուր յուսահատուում, այդպէս չէր դատում մեր Շանշեանցը։ Նրա աստուածամբ՝ հեռու չէ ժամը, երբ լուսաւորեալ քրիստոնեայ պետութիւնները պէտք է միասիրտ և միահոգի ընդլայնեն իրանց մարդասիրական զգացմունքը, շատ չի քաշիլ, նրանք կըտեսնեն և կըհոգան իրանց քրիստոնեայ ճնշուած ու հարստահարուած կրտսեր եղբայրների տառապանքներն և կարեկցական ձեռք կըտարածեն։

—Այդպէս է յուսատրում և մեր Հայրիկը. և երբ մեւնոյն կարծիքին են մեր ուսուցիչները, մենք իրաւունք չունինք երկմտելու, սակայն խոստովանում եմ, ես փոքր ինչ թերահաւատ եմ։

—Ի՞նչ էք ասում, եղբայր, պայծառ արևի պէս պարզ է տաճկահպատակ մի քանի քրիստոնեայ

մանը ազգութիւնների ապագան, քաղաքական յոդդողդ դրութիւնը գուշակում է մօտալուտ փոփոխութիւնները, ըստ իս, շուտով Ռուսիան իւր դրօշակը կըծածանէ համասլաւոնական նախանձախնդրութեամբ, շատ չի քաշիլ՝ Բալկանեան քրիստոնեաները իրանց հզօր պաշտպանին ապաւինած՝ ոգի կառնեն, անշուշտ Խաչի ազատութեան սուրը գործում անմասն չեն մնալ եւրոպական խաչապաշտ պետութիւններից շատերը, և ոչ ապաքէն խաչապաշտներից անդրանիկը հայն է։

—Ձեր ասելով, ուրեմն, հայն էլ անկախութիւն կըվաստակէ։

—Ես չիմար պէտք է լինեմ, եթէ այդպիսի անհեթեթ մտքեր այսօր իմ ուղեղումս անժամանակ ծըննեցնեմ. առ այժմ հային շատ բաւական է, եթէ նրա վրից վերացուին տաճիկ կաշառակերը և տգէտ կառավարիչները, եթէ քրիստոնեայ մեծ պետութեանց խընամակալութիւնը զսպէ վայրագ քրդերի հրոսակութիւնը, եթէ օսմանեան օրէնքները քրիստոնեայ կուսակալների ձեռքով գործադրուին և հաւասարութեան սկզբունքը, որ վերջին լուսամիտ սուլթանների օրէնքների էական կէտն է, արդարասէս կատարուի։ Ես թէպէտ դեռ միայն Ալաշկերտն և Կարնոյ մի քանի գաւառներն եմ այցելել, բայց ամէն տեղ տեսել եմ, որ ճնշուածը ոչ միայն հայն է, այլ և Տաճիկ հասարակ ժողովուրդն է հեծում ու հառաչում իւրեանց արեւնակից շահամոլ ու ան-

կուշտ, անբարոյական դատաւորների պատճառած նեղութիւններից. գազան քուրդը միապէս նեղում է և՛ հային և՛ տաճկին, կենսական ապահովութիւնից զուրկ է և՛ հայը և՛ տաճիկը և՛ նոյն իսկ վայրենի քուրդը, որովհետև տգիտութիւնը համատարած է և չկան այդ խաւարը փարատող հզօր խելացի կառավարիչները, չկան առաջնորդողները, որոնք երկրի բնական հարստութիւնը ժողովրդի ձեռքով արդիւնաբերէին։ Տաճկահայքի բերրի երկրից, նրա լեռների ու ձորերի ծոցումը թագցրած անթիւ գանձերի անհատնում ամբարներից օգուտ չի ստանում նոյն իսկ տաճիկը։

—Կընշանակէ, որ այդպիսի պետութեան ժողովրդի վախճանը մօտ է։

—Ո՛չ, բաւական է եւրոպական տէրութեանց հովանի աչքը և բոլոր տաճկահպատակ ազգերի քաղաքական վիճակի հետ նիւթական և կենսական վիճակն էլ կըբարւոքուի։ Այսքանն այժմ տուր հային և մի քանի տարուց յետոյ նրան չես ճանաչիլ։

—Հային, որի քահանայքն իլանց անունն ստորագրել չգիտեն, հային, որի շաղախած խմորի մէջ շատ յաճախ ջրի հետ իւր որդու արիւնն է խառնուում, հային, որին քրդի մի լամուկը սաստանացնում է, հային, որի գէնքը իւր գաւազանն է։ Եւ ուրիշ գէնք էլ աւելորդ է, հայի ձեռքը եթէ հրացան տաս, նա անգիտութեամբ փողովակի բերանը կուղղի դէպի իւր սիրտը։

—Իրաւունք ունիս, այսօրուանից պէտք է աշխատել հալի մէջ գրագիտութիւն և գինավարժութիւն մտցնել. քաղաքական անդորրութիւնն առանց ինքնաճանաչութեան և ինքնապաշտպանութեան շատ ուշ կարող է նպատակին ծառայել, իսկ ինքնաճանաչութեան շարժիչ մեքենան այբուբենն է, կամ աւելի ճիշտը՝ հասարակ գրագիտութիւնն է, նոյնպէս էլ ինքնապաշտպանութեան գլխաւոր սպեղանին գինավարժութիւնն է։

Հայն եթէ գիր գիտենայ, նա կատարելապէս կըմբռնի իւր նշանակութիւնը, հայն եթէ զէնք ունենայ և գործ ածելն իմանայ, քուրդը նրա դրան հաւատարիմ շունը կըդառնայ։

—Շատ քիչ բան է պակաս, այնպէս չէ։

—Այո՛, քո կծու երգիծանքների դէմ ես պնդում եմ լրջմտօրէն, որ շատ սակաւ բան է պակաս, եթէ քեզ նման մի քանի թափառաշրջիկ ուսուցիչներն և ինձ պէս տասնեակ գլխից ձեռք քաշած քոչ գինավարժները գաւառները ցրուէին և գլխաւոր գիւղերումը մի շաբաթ, երկու շաբաթ մնային, նրանք իրանց սերմերը կըցանէին և իրանց հետևորդները կունենային։

—Ինձ տուր քեզ տամ, գետնից ես բուսցանո՞ւմ, թէ՝ երկնքից ես իջեցնում այդպիսիներին, և եթէ հրաշքով, դիցուք, յառաջ բերիր՝ ո՞ւր է այնքան զէնք և ո՞ւր գրքեր։

—Եղբա՛յր, ինչ յոռետեսն ես, ռուսահայոց

բոլոր տարրական դասագրքերը դիւրըմբռնելի աշխարհաբառ լեզուով են, նոյնն է, կարծեմ, և Պօլսում ու Տաճկաստանի մեծամեծ քաղաքներում, բաւական է Խրիմեան Հայրիկի մի գրաւոր յորդորը՝ և հազարներով կըլցուին Տաճկահայաստանի գիւղերը մայրենի լեզուի դասագրքերով և այլ ընթերցանութեան մանր տետրակներով։

—Իսկ գէնք։

—Գէնք ես շատ տեսայ Կարինում և այստեղ Վանում, լսեցի, որ բաւականին հմուտ զինագործներ էլ կան այս կողմերը. վերջապէս, իմ կարծեօք, եթէ հայ գիւղացին հաւաստիանայ, որ հրազէնն իւր կացութիւնն ապահովում է քուրդ աւազակի յարձակմունքից, նա ինքն իւր բերանի պատառը կըկտրի, գէնքի կըտայ։

—Այդ մէկն ուղիղ է, նոյն իսկ Տաճիկները ու քրդերն իրանց ունեցած գէնքերը կըծախեն, եթէ լաւ գին տրուի։

—Հապա տեսաք, ուրեմն յուսահատելու չէ։

—Բայց դուք չըցոյց տուիք և ոչ մի նախաձեռնող առաքեալ։

—Երկուսի տեղը ես գիտեմ, թող այդ երկուսն ակսեն, և հաստատ յոյս ունենան, որ իրանց օրինակին հետևողները կըշատանան։

—Եւ ո՞ւր են նրանք՝ այդ ճակատը բաց անձնազոհները։

—Դրանցից մինը կարճ ժամանակի համար,

դուք՝ իբրև գրագիտութիւն տարածող, ձեր հետեւողներն արդէն ասացիք վարագում պատրաստ են, երկրորդը՝ խոնարհ ծառայդ՝ խօսակիցդ՝ իբրև յաչողաձեռն գինավարժ։ Ինձ հետևողներ էլ ինքս կը պատրաստեմ տեղացիներից։

—Ուրեմն դուք արդարև լաւ գէնք գործ ածել գիտէք։

—Դուք մոռացաք, որ ես Արցախի սարերի ձագ եմ, բռնած Սիւնեաց լեռներից՝ Ղարաբաղը, Շուշին, Գանձակը, գալ հասնի մինչև Ղազախը, Շամշադինն ու Բօրչալուն, բոլորի ձեռքին գէնքն այնպէս է, ինչպէս արագագիր դպրի մատների ծայրում գրիչը, մեր մանուկների խաղալիքը գէնքն է, մեր կերածը եղջերուի ու վայրի ոչխարի միս է, մեր խմածն աւազակ թուրքի արիւնն է. ոչ մի տեղ թուրքն այնպէս խեղճ ու խաղաղ չէ, ինչպէս մեր աշխարհումը, որովհետև գիտէ՝ իւր դրացի ազգի ոյժը, մեր աշխարհի մահմեդական տարրը ուրիշ աշխարհների սարսափն է, իսկ մեր ծաղրի առարկան։

Ես իմ աչքերովս տեսայ այս կողմերում, թէ ինչպէս քրդի փոքրիկ մանուկը ոչխարը քշել էր հալի արտն և ուտացնում, այդ ետին մեր լեռնոտ աշխարհում պատահէր, այն էլ ոչ թէ ջահել երեխայի կողմից, այլ քաջ տղամարդի յանդգնութեամբ արած, այն գլուխը կորցրած յիմարի արևը կը-խաւարէր և նրանց գլուղից հնգապատիկ վնասը յետ կառնէինք։

—Երջանիկ էք ուրեմն դուք։

—Երջանիկ կըլինէք և դուք, եթէ մեր ընթացքը բռնէք։

—Ես հաւատացած եմ, որ հայն ամէն տեղ հայ է՝ եթէ միայն գիտակցութիւն ունենայ և կամենայ։

—Ի՞նչ անի Տաճկաստանի դարերով ճնշուած թշուառ հայը, որի մէջ արիւնը ջուր է կտրուել, որի մէջ կեանքի ստուերն է մնացել, որի արտը կիսավար է մնացել, ըստ որում քուրդը նրա գուրթանի տասարն է տարել։

—Փրկութեան ճանապարհն ես ասացի, եթէ կամենաս, փորձենք։

—Շատ բարի, ես պատրաստ եմ շարունակ ութն ամիս ձեր ուղեկիցը լինելու՝ ուր և շրջէք, այնուհետև ինձ ներիր գնալ դէպի միւս պարտականութիւնս, յուսով եմ, որ իմ ընկերներս կըլրացնեն իմ թերին։

—Շատ և շատ գոհ եմ։

—Բայց մի բան կայ. դիցուք ես և ընկերներս էլըև տաճկաստանցի՝ դժուարութիւն չունինք գիւղէ գիւղ ոտքով քարշ գալ, իսկ դու ամէն քայլափոխում արգելքի կըհանդիպես և աչքի կընկնես։

—Ո՛չ, ես այդ կողմից միանգամայն ապահոված եմ։ Իմ սեպհական գործս այս րոպէիս վաճառականութիւնն է. իմ ընտրած առևտրի ճիւղն է հովկասի, Պարսկահայքի և Տաճկահայքի տեղական կենդանինների և թևաւորների մորթավաճառութիւ-

նը. այդ մի շահաւէտ ձեռնարկութիւն է, Եւրոպական թանգարաններում այս ապրանքի մեծ կարօտութիւն կայ, ահագին գումարներ են ծախսուում այդ նպատակի համար։ Երկու տարի է, ես այս գործովն եմ պարապում. ինքս լինելով քաջ որսորդ՝ լեռների ծերպերում ու ձորերի խորքերում սպանում եմ ամենատեսակ կենդանիներ, անձամբ պատրաստում եմ մաշկն և ուղարկում Եւրոպա։ Ես ձեռք եմ բերել տիրող պետութիւններից արտօնագրեր, իրաւունք ունիմ ամէն տեղից իմ ծախքով ուղեկիցներ և առաջնորդողներ վերցնել։ Կովկասում և Պարսկաստանում վերջացրել եմ գործս, իսկ Տաճկաստանից միայն Ալաշկերտից և Կարնոյ գաւառից մի քանի տեղական կենդանիների մորթեր երկու շաբաթ յառաջ Տրապիզոնով Անգլիա ճանապարհեցի։

Մելքիսեդեկեանը ցոյց տուեց Ռուբէնին իւր արտօնագրերը։

—Ուրեմն դանդաղելու չէ, ասաց Ասքանազեանը, կազմենք մեր ճանապարհորդական ուղեցոյցը և էգուց Աստուծոյ անունը տանք, ճանապարհ ընկնենք։

—Այս գիշեր բաւական է այսչափը. մնացածը վաղուան թողնենք. շտապող կինը տղայ չի բերիլ, ասում է առածը։

Երիտասարդ բարեկամները միմեանց բարի գիշեր մաղթեցին։

Իջ.

Ա.նուշ է օդը, քաղցր է եղանակը, հոգեպարար է երեկոն։

Ա.մառուան այն երեկոներից մինն է, որ յուլիսեան ցերեկուայ հրաշունչ տաքութիւնից յետոյ քրտնախաշ եղած աշխատասէր երկրագործի քընտինքն է ցամաքեցնում, ծառերի հովերում, կամ պատերի ստուերների տակ օրուան մեծ մասը քնով անցնող դանդաղ ծոյլերին է կազդուրում։

Ա.յսպիսի երեկոյի է սպասում քաղաքացի նազիկ-մազիկ գեղեցկուհին, որ հոգնի իւր շղարշէ թափանցիկ շրջազգեստն և զբօսավայրերում երևեցնի մեղրամոմից սպիտակ, նուրբ, հոլանի իւր քազուկները, մարմարոնեայ լանջը և փողոսկրեայ պարանոցը ու քարշ տայ իւր ետևից երիտասարդ երկրպագուների մի ստուար խումբ։

Ա.յս ցանկալի երեկոն և իւր բերած հովիկ-մովիկ քամին են հարկաւոր՝ վաղ առաւօտից սկսած արեգակի տակ տապակուող կալուորին։

Նա վերջացրել է կասելը, թեղ է դրել դալմանախառն ցորենը և աչքը հիւսիս դարձրած՝ անհամբեր մնում է իւր դառը քրտնքի պտուղը քաղելուն։ Քամին է գեղջուկի աշխատանքը պսակողը, անուշիկ հովը փչելուն պէս՝ նա առնում է իւր եղանն ու հորսելին և քամում է կալը։

Ո՞ւմ սիրտն այնչափ անխարդախ ուրախ կա-

րող է լինել այդ րոպէին, ինչպէս մեր բազմավաստակ գիւղացու սիրտն է։ Տարին բոլոր նա ինքը, իւր կինը, իւր եղբայրը, իւր երեխան, իւր եզը ցուրտ ու տաքի դիմանալով, հողի հետ խաղացել է, վարել է, փոցխել է, ջրել է, հնձել է, կասել է, իւր ընտանիքի ու անասունների առաջիկայ ողջ տարուան ապրուստը հաւաքել է իւր աչքի առաջևը և սրտատրոփ սպասում է մի մեղմ հովիկի։

Կալւորի սիրտը դող է ընկնում, երբ երկնքումը մի կտոր ամպ է յառաջ գալիս. նա աղօթում է Աստծուն խնայել իւր աշխատանքը, ցրուել ամպերը, հեռացնել անձրևը։

Մալիս ամսին սպասած՝ երկնքից ցօղած այդ ցանկալի հիւրն այսօր գիւղացու աչքի կոյր գրողն է. քամի տուր նրան այսօր քամի, թող փչէ՝ այդ քամին և գիւղացին մի երկու ժամում շեղջի սերսուռ ցորենը ամբարն է ժողովում, ոսպպղան յարդը մարագն է լցնում։

Գեղջուկի սիրտը տեղն ընկաւ. նա այժմ կարող է հանգստանալ. օրանի դիզից ցորենի խրձները քանդում է նա, փռում է, մի խուրձն էլ գլխատակն է դնում և շորերը հագին կալի մէջտեղը սարկում, անուշ քուն է մտնում, իւր խաղաղ սրտի հետ իւր յոգնած անդամներին հանգստութիւն տալիս։

Այսպիսի երեկոներն են մի ոտքը գերեզմանի դրան սպասող ծերերին ուժաւորում, փայտը ձեռքները տալիս և իրար մօտ ժողովում՝ անցած գնա-

ցածների չիշողութիւններով մխիթարուելու։

Ս.յսպիսի երեկոներն են մանուկները քշում դէպի ընդարձակ դաշտը, իրար հետ խաղացնում, իրար հետ կռուացնում, իրար հետ հաշտեցնում։ Ի՞նչ շատ դլխացաւանք աներ, տօթի ձեռքից մեռելութեան մէջ մրափող բնութիւնը կենդանութիւն է առնում ամառուան հով երեկոները։

Ձիշտ վերոգրեալ անուշիկ և մի սքանչելի երեկոյ էր, որ մի բարձրահասակ հոգևորական, մի հինաւուրց մենաստանի պարսպից դուրս՝ կանաչ խոտի վերայ ծունկը ծալած՝ նստած էր։

Հոգևորականն աննպատակ չէր նստած, նա միայն օդ ծծելու չէր դուրս եկել. նրա աջ ծնկան վերայ մի լայնադիր գիրք կար և գրքի վերայ թուղթ։

Մէկ աչքը ձգում էր նա դէպի ընդարձակ հորիզոնը և մէկ էլ նայում էր սպիտակ թղթին։

Ձեռքին բռնած կապարեայ գրիչը՝ երբեմն դադար էր առնում և դարձեալ արագավազ շարժուում թղթի երեսին։

Գրողը շատ ոգևորուած էր. այդ պարզ նկատելի էր նրա երեսին արտափայլած յաճախակի փոփոխութիւնից. մերթ խոժոռում էր նա, մերթ տրխրում էր, մերթ զարմացական շարժումներ էր անում և երբեմն ժպտում ու քաղցրանում էր։ Բանաստեղծին յատուկ հոգեկան թրթիռները խաղում էին հոգևորականի իւրաքանչիւր շարժումների մէջ։

Եթէ բանաստեղծը չըլինէր հոգևորական և

մէջին տարբեր մարդ, կարելի էր կարծել, թէ նա մի սիրավառ երիտասարդ է, որ իւր սիրուհու ալբոմի համար սիրաշարժ յանգաւոր տողեր է շարադրում։ Բայց դու Վանականի տարազից ու տարիքից մի խաբուիր ու մտամոլոր լինիր, ընթերցո՛ղ, գրողն իսկապէս սիրահար էր։

Այս առաջինը չէ, որ այդ աշխոյժ ֆարաջաները գովեստներ ու ներբողներ է յօրինում իւր սրտանուէր սիրուհուն, առաջին օրը չէ, որ *Լաւրի էշխով* թերախորով եղած *շայիրի* նման նա հատորներ է լցնում իւր գաղափարականին։

Սիրտ գրաւելու ունակութիւնը չէ տուած միայն Ադամի բերանով *Լեանը* անունը սեպհականացրած քնքոյշ արարածին։

Գաղափարական սիրուհին աւելի սրտազրաւ է, երկնայինն իւր յաւիտենական անճառելի երանութիւնով, մարդկութիւնն իւր վսեմ նշանակութիւնով, հայրենիքն իւր հող ու ջրով, մի հայրենիքի զաւակներն իրանց ազգ ու արենակիցներով դրանցից իւրաքանչիւրը մի մի սիրուհի են գգայուն մարդի համար։

Վերևն Աստուած, ներքևն իւր ազգը. այս երկուսն էին բանաստեղծ հոգևորականին ոգի տուողները։

Խրիմեան Հայրիկն էր մեր հանդիսաւոր հոգևորականը, Վարագայ Վանքն էր մեր ասաւծ մենաստանը։

Հայրիկը ձեռքից չէր փախցրել ոգեշունչ երե-
ան և զով եղանակը. Գրգուռ ու Նեբրովթ լեռները
րանց գագաթներով ու սքանչելահրաշ տեսարան-
ներով, դաշտ ու հովիտները իրանց արծաթափայլ
ղբիւրակներով, Բգնունեաց կապուտակ ծովն ի-
ևրայ լողացող մակոյկներով, քաղցրանուագ թըռչ-
իկները իրանց ճռուողիւններով ու ծլվլոցով՝ ազգի
իրոյն սիրահար Վարդապետի աշխատասիրութիւն-
ների հատորները էին հաստացնում:

Հայրիկի դրիչը բանդ ընկաւ, բառը կիսատ
նաց, երբ նորա ականջին հասաւ հայ մարդի՝ հայ
Վարդապետին տուած՝ սովորական ողջոյնը:

—Աստուած օգնական, Հայրիկ:

Մի դեռահաս երիտասարդ էր անծանօթը: Նա
ղջոյնի հետ միասին ցած թռաւ հաստալանջ նը-
ոյզից, բայց թողեց քաջավարժ երիվարի սանձը և
արձակուեց, քան թէ մօտ վազեց Խրիմեանին,
ափշտակեց նրա աջն և ջերմաջերմ կաթոգին հա-
այրները դրոշմելուց չէր դադարում:

Երիտասարդը միայն չէր. նա իւր հետ մի
իւղացի ուղեկից ունէր ճանապարհ ցոյց տուող.
ա իսկոյն վազեց, ձին բռնեց:

Ուրիշ նմանութիւն չեմ ուզում յարմարացնել՝
անծանօթ երիտասարդն իւր վաղակատ սիրուհուն
տես էր: Խրիմեանի աչն էր այդ սիրուհին, որի
ևրայից տղայի շրթունքները չէին պոկուում:

—Աստուած քեզի օրհնէ, զաւակս, բարի ես

եկած, պատասխանեց Վարդապետն և աւելացրեց. սակայն գլուխդ վեր բարձրացրու, մենք ալ ճանաչենք ու համբուրենք մեր սիրելին։

Սուր էր Հայրիկի յիշողութիւնը, մի տասնամեայ շրջան բոլորուել էր, բայց նա մի հայեացքով ճանաչեց «Կռունկի» աշխատակից, իւր նախկին բարեկամ Գարեգին Մելքիսեդեկեանին և գրկեց։

Գրկախառնութիւնը կարօտակէզ Հօր ու որդու էր։

Գիրն էլ մոռացուեց, դրիչն էլ։

Ձին դարմանուեց, ձիաւորը մեծարուեց, հիւրասիրութեան պալտքը լրիւ կատարուեց։

Խորին կէս գիշեր էր, բայց հիւրի և հիւրասիրող տանուտիրոջ մէջ մտերմական խօսակցութիւնը դեռ շարունակուում էր։

Մելքիսեդեկեանը պատմեց իւր ճանապարհորդութեան նպատակը. նա յայտնեց, որ ինքը միայն չէ, որ ինքը Վանում մի ընկեր է ճարել, որի հետ մտադիր են Տաճկահայքի մի քանի գաւառներն այցելել։

Այդ ընկերին մենք և՛ն ճանաչում ենք, դա Աւքանազեանն էր, որին Գարեգինը ճանապարհ էր դրել դէպի Խիզան գաւառը։

Երկու ընկերները միասին չըպիտի ուղևորէին. Ռուբէն Աւքանազեանը Կարապետ—Յովհաննիսի դերը պէտք է կատարէր. նա պիտի շաբաթներով յառաջ այցելէր գաւառները, զրագիտութիւնը տա-

րածէը և հայ ժողովրդին նախապատրաստէը Մելքիսեդեկեանին ընդունելու։

Աւքանազեանին Վանայ շրջակայքը պտոյտ անելու կարիք չկար, նա Վարագեան սաների հետ քանիցս եղած էր այն տեղերում. այդ պատճառաւ հէնց Վանից նրանք բաժանուեցին. Ռուբէնը Խիզան գնաց, Գարեգինը Վանայ գիւղերն ընկաւ, գիւղերը շրջեց, վերջացրեց և սուրբ պարտք համարեց Վարագ չբբարձրացած՝ Հայրիկին չըտեսած՝ Հայրիկի խորհուրդը պաշար և ուղեցոյց չառած՝ չը հեռանալ դէպի Խիզան, ուր գտնելու էր իւր ուղեկցին։

Տնօրինուած էր՝ Ռուբէնն իբրև տաճկաստանցի, Վարագեան դպրոցի հագուստով հետևակ էր ման գալու, իսկ Մելքիսեդեկեանը՝ իբրև ազատ օտարահպատակ, ձիով էր շրջան անելու։

—Ի՞նչ տեսար, քնչպէս գտար մեր Վանայ չորս բոլորտիք, հարց տուեց Գարեգնին Հայրիկը։

—Ես գտայ, որ մեր ուսուցիչների կողմանէ ինձ և ընկերիս յանձնարարած ծրագրի մի մասը Վանայ շրջակայ հայաբնակութեան մէջ արդէն ի կատար է ածուած, միւս մասին էլ մեծ կարօտութիւն չկայ։

—Ի՞նչ խրթին ոճերով կըխօսիս, սիրե՛մ զքեզ։

—Ասածս շատ պարզ է. Վարագեան Աբծուի հեռատես հոգածութեամբ՝ վաստրականում գործ կատարելու ինձ և Աւքանազեանին կարևորութիւն

չըկայ. մենք դիտաւորութիւն ունինք գրագիտութիւնն և զինավարժութիւնն ընդհանրացնել. առաջինն ես տարաճուճաճ գտայ Վանի շուրջը, իսկ երկրորդի համար նոյնպէս նուազ կարիք կայ. ձեր շրջապատի հայերի կենսական պայմանները համեմատաբար առաւել ապահով և յաջող վիճակի մէջ են, քան շատ տեղերինը:

—Սխալուաճ չես:

—Ժողովուրդը վկայում էր և այլապէս էլ ըսպասելու չէր. հայրենասէր հօրդ հովանի աչն ու անքուն հսկողութիւնն է ցանկալին արդիւնքն յառաջացրել:

—Այո՛, Վարագի մօտակայ գիւղերը Վարագեան սաներուն ապագայ կոչման համար վարժեցուցիչ դպրոցք են, մեր տղաք շարունակ այցելութիւնները կրկատարեն այդ գիւղերը, կրմխիթարեն և կրդաստիարակեն ժողովուրդը. մենք ալ երկրիս կառավարիչներուն ու քիւրդ ցեղապետներուն հետ բարեկամութիւն պահելով՝ յաջողուաճ ենք, ըստ կարելոյն, նպաստաճ լինել հայու բարեկեցութեանը: Իմ խորհուրդս այս է, որ դուք մեր սիրելի Ռուբէնին հետ ձեր առաքելութիւն հեռուն կատարէք:

—Այդպէս իսկ վճռել ենք. մենք շրջելու ենք Խիզան, Սղերդ, Մուշ, Բալու և Խարբերդ: Այսքանը պտըտելուց յետոյ՝ Ասքանազեանի հետ միասին պիտի գնանք նրա ապագայ ամուսնուն տաճիկ Ղայմաղամի ճանգից ազատելու: Թէ այնուհետև

ինչ կըլինի, չըգիտեմ, բայց ամէն բան մանրամասնութեամբ յաջորդաբար կըհաղորդենք Հայրութեանդ։

—Այդչափը կըզօրէ համայն Տաճկահայք անձնապաշտպանութեան խմորով խմորելու, ձեր սկըսուածք կըլինի սկիզբն երկանց, ձեր թեերին կըլցուցանեն Վարագեան ճետերէն մի քանին, որոնք մօտ օրերս աւարտած իւրեանց դասընթաց՝ կուղարկուին տաճկահայ երկիրները՝ կրթական գործին սպասաւորելու. այդ մասին մեր Ռուբէն, կարծեմ պատմած է Ձեզ։

—Այո՛։

—Դասագրոց պակասութիւն մենք արդէն նախամտածած ենք, դիմած եմ Արարատեան ընկերութեան, խոստացած են պէտք եղած դիւրութիւնները չըխնայել. այժմուս՝ վաղիւ քեզի հետ կարող ես առնուլ մեր քով գտնուած սակաւաթիւ այբուբենարանք, այնուհետև կըկարգադրենք, որպէս զի դաւառական քաղաքներին մէջ դուք ամէն տեղ ունենաք պատրաստի գրեանք։

—Ուրեմն, բարի գիշեր և բարեաւ մնացէք, արշալոյսը չըբացուած՝ ես պիտի ճանապարհ ընկնեմ, ասաց Մելքիսեդեկեանն և համբուրեց Հայրիկի աչը։

—Թէպէտև դու ինձնէ վաղ չես կարող արթնանալ. սակայն և այնպէս կ'օրհնեմ ճանապարհդ և կըցանկամ յաջող ողջերթ։ Մի մոռանաք ամփոփ և մանրամասն վիճակագրութիւն կազմել և մեզի

ճամփել, ապագային այդ մեզի խիստ կարևոր է. քարտէս երկու հատ գծեցէք՝ մին ձեզի՝ և մին մեզի. փոքրիկ գիւղերէն չբխորշիք, լոկ տնահամար գրելով չբբաւականանաք, մարդահամար ճշտութեամբ իմացէք. տուն կայ, որի մէջ 40—50 հոգի կբբուներն. ի վերջոյ՝ ամենայն ընելիք ձեր խոհականութեան կբթողում։

Եւ Հայրիկը նորից գրկեց իւր աչը լիզող Մելքիսեդեկեանին։

Արդարև, միւս առաւօտը՝ լոյսն ու մութը նոր բաժանուելուս՝ ծէգը չբձագաճ՝ Գարեգինը դարձեալ արժանացաւ Հայրիկի համբոյրին։

Խրիմեանը Վանքիցը դուրս սպասում էր ճանապարհ դնելու իւր հիւրին։

ԻԷ.

Մհաւ Աստանազեանը Խիզանու գաւառն և ապշեց ու զմայլուեց։

Մի լայնաճաւալ դաշտ տարածուած էր իւր առաջը, առողջարար և թարմ օդ, սրավազ գետակներ ու առուներ, ծառազարդ գիւղեր, հերկուած ու խոպան արտեր, անդ ու անդաստան, կամ հանդ ու հանդաստան, դալլալող թևաւորիկներ՝ ճանապարհորդի ուշքն ու հոգին էին գրաւում։

Քանի մի օր է Ռուբէնը թափառում է Խիզանու գաւառումը, բայց ո՛վ զարմացք. ուր գնում

է, ո՛ր գիւղին մօտենում է, հանդիպողները քրդեր են: Խիզանի մասին նա թէպէտ Հալբիկի աստւածիւնից մի մռայլ և աննպաստ գաղափար կազմել էր, բայց այս դրուքեան մէջ լինելը չէր երևակայում:

Հարիւրաւոր գիւղեր են ցրուած Խիզանու դաշտումը, բայց ինչպէս ասացի, բոլորը քրդեր են. Խիզան քաղաքը, որի բարեշինուքեանն էր սպասում Ռուբէնը, կիսաւեր հողակոյտի մէջ, իրար վերայ թափուած քրդի որջեր է նա տեսնում. այստեղ կար միայն մի տուն հայ, երկրորդ գիւղում՝ երկու տուն, երրորդում՝ հինգ տուն, տասը տուն, ամենաշատը քսան տուն: Ս.հա ճիշտ տների թուահամարը. բայց այդ բոլոր քրդաբնակ գիւղերում աւերակների մէջ մնում էին կանգուն, կիսականգուն, աւեր և կիսաւեր եկեղեցիները, որից յայտնի էր, թէ մօտիկ անցեալում այստեղ հայեր են բնակուել, թէ տաճարներումը մի օր ժամասացութիւնները են եղել, սակայն աւա՛ղ, այսօր ոչ ժամ օրհնող կայ, ոչ ծուխը դնող. քրդի ոչխարն է առաւօտադէմ դուրս գալիս Ս.ստծու տանից, քրդի լամուկներն են սրբութեան յարկը ապականութեան տեղ շինել:

Իսկ այդ եկեղեցիքն ու վանքերը, կարծես, մնացել են վկայ լինելու, թէ այս չարաբաստիկ երկիրը մի օր հայութեան կենդրոն է եղել:

— Սակայն չէ՞ որ հայերը այնու ամենայնիւ կան Խիզանումը, հարցնում է ամեն ոք.—կալին այո՛, և

հէնց այդ մնացածների մասին էր կամենում տեղեկագիր կազմել Ռուբէնը։

Եւ ահա՛ ինչ է նա իւր յիշատակարանումը համառօտ նշանագրում. „Տեղիս հայերը, թող Աստուած հայ համարի, ոչ լեզուներն է հայի, ոչ հագուստը. արևախանձ, երեսը սևացած, մորթը կոշտացած, բոկոտն, թափառական լեռնաբնակ քրդերի նմանութիւն են առել, հագուստ բոլորովին չունին, ունեցածները քրդերի ցնցոտիներ են։

„Վարում են այս մարդիկը, ցանում են, այգի են տնկում, ծառատունկ են մշակում, բայց ոչ մէկն իւրեանցը չէ. հայ մարդը, հայ կինը, հայ երիտասարդը, հայ աղջիկը քրդերի անվարձ մշակներն են, քրդերի հաճոյքների առարկաներն են“։

—Այս ինչ նորութիւն է՝ մինչև այսօր չեղած, չլսած, հարցնում է ամէն տեղ Ռուբէնը, ի բնէ լեռնաբնակ, խաշնարած, վրանաշրջիկ քուրդը խիզանումն այգու, արտի տէր է դարձել, հաց ունի, դուքան է պահում, լծկան եզներ ունի, իսկ հայն իւր պապական հողերն է ձեռնաթող արել և քրդին հօտաղ է մտել։

—Այդ մեզ հարցնելու չէ, պատասխան է առնում նա մեծ ու փոքրից, բաւական է, որ Պէյթամեցի Մուրատի տան պատմութիւնն իմանաս և դու կրզգաս մեր ցաւը։

Շատ չի հետաքրքրուում Ռուբէնը Մուրատ անուն անձը գտնելու և ոչ կարիք է տեսնում իւր

գաղափարի և նպատակի մասին ում և ինչ, ուր և ինչ խօսք բանալու։ Ում ինչ ասի, օրական հացի կարօտ գերի ստրկին երբ ժամանակ ունի ինքնաւարշտպանութեան վերայ մտածելու։

Ս.աքանազեանի սրտիցն արիւն է կաթում. նա այն էլ մեղք է համարում, որ գիւղերում հիւրասէր հայն երեխի բերանի ցամաք պատառը բաժանում է իւր հետ։ Հաց չէ, որ նրա կոկորդիցը ստամոքսն է իջնում, թոյն է, որ նրա արիւնի մէջ է խառնուում։

Վերջապէս նա չըտարաւ աղեկտուր հոգեմաշ վիշտը, չըկարաց Խիզանու բոլոր գաւառը շրջագայել, մի քանի գիւղեր միայն այցելեց առանց ոչ ոքի ոչինչ ասելու և եկաւ գաւառի ծայրի գիւղերից մէկում սպասելու Մելքիսեդեկեանին։

Ս.յդտեղ էր տեսակցութեան ժամադրեալ վայրը։

Գիւղը, ուր Ռուբէնը սպասում էր ընկերին՝ միայն ութ տուն բնակիչ ունի, որոնցից եօթը քուրդ են և միայն մինն է հայ։

Ս.յդ հայի հիւրն է Ռուբէնը։

Միայն Ս.աքանազեանը չէ խեղճ հայի ընտանիքի բաժինն յափշտակողը, մի ուրիշն էս կայ։

Ս.ատծու տուաճ օրը, ճիշտ կէս-օրին՝ մի զառամեալ ծերունի՝ փայտի վերայ յենուաճ՝ դողդոջիւն անդամներով, յարաշարժ գլխով, անխօս մօտենում է հայի տանը, անխօս թիկնում է փայտին ու անխօս կանգնում է դրան առաջին։ Նա գալիս է գիւ-

դափնով՝ առանց գիւղը մտնելու և վերադառնում է նոյն ճանապարհովը. դառնում նա է իրան յատկացրած սև հացի կտորն ստանալից յետոյ։

Ոչ մարդ է ուշք դարձնում թշուառ արարածի վերայ, ոչ գիւղի շներն են հաչում, ոչ հարցնում են՝ ո՞րտեղից եկար, ո՞ւր ես գնում, և ոչ էլ ինքն է իւր կողմից մի խօսք արտասանում, կամ ողորմութիւն տուողին շնորհակալութիւն յայտնում։

Ո՞ւմնից գոհանար ողորմելին, ո՞ւմ ինչ ասէր. հացի կտոր բերողը չորս տարեկան մի աղջիկ է, ո-րի հագուստը մի հին փալասի կտոր է, որ երկու ծայրերից այծի մազից հիւսուած դերձանով վրան ամրացրած է. այդ ծուէնքը ծածկում են երեխայի փոքրափորից մինչև ծնկները։

Երեխան համբուրում է ծերի չորացած ջղոտ ձեռքը և հացն իրան տալիս։

Ծերունին մի քանի վայրկեան մնում է կանգնած, մինչև որ երեխան աչքից հեռանում է։ Այդ ժամանակ նա ինքն էլ քաշում է իւր *փասափուսէն*, վերադառնում, գնում է։

Զըգիտեմ՝ նկատել են ուրիշները էլ, թէ ոչ, բայց *Ռուբէնը* նշմարեց, որ երեխայի ձեռքից հացն առնելիս՝ ծերի ցամաքած և կուչ եկած աչքերի աղբրակներից երկու կաթիլ արտասունք միշտ գլորուում էր և նրա շրթունքները շարժուում, իբար էին դիպչում։

Այս օտարոտի դէպքն առիթ տուեց մի օր

Ռուբէնին տան տիրոջից հարց ու փորձ անել ծերունու մասին։

—Խնդրեմ չըհարցնես, տիրացու, կարճ կտրեց տանուտէրը, պատասխանելու չեմ քեզ։

—Ընչո՞ւ համար։

—Ծերունին ինքն այդպէս է ցանկանում։

—Ի՞նչ։

—Որ ես քեզ չասեմ, թէ ո՛վ է ինքը։

—Ե՞րբ եղաւ ձեր մէջ այդ խօսակցութիւնը։

—Ամէն օր։

—Ես, համարեա, միշտ ներկայ եմ լինում, երբ նա գալիս է։

—Հէնց քո ներկայութեամբ էլ կրկնում է նա իւր խնդիրը։

—Այսօր էլ։

—Այսօր էլ։

—Այսօր նա քեզ ոչինչ չասաց։

—Լեզուով, այո՛, չասաց, բայց նրա սառած աչքերն ինձ շատ բան հասկացրին։

—Նրա աչքերը շարունակ գետնին է յառած. նա երբէք իւր գլուխը չըբարձրացրեց։

—Հէնց այն կորացած աչքերը մի-մի գիրք են, գիտեցողը շատ բան է կարդում մէջը, իսկ ինձ նման տգէտը, կամ քեզ նման անփորձը ոչինչ չի տեսնում։

Էլ չըհարցրեց Աբգանազեանը, ըստ սովորակա-

նին, ուսն առաւ իւր ճանապարհորդական պայուսակն և ուզեց գնալ։

—Ընչո՞ւ այսօր այսպէս անժամանակ, հարցրեց տան տէրը։

—Գնամ ծառերի հովում փոքր ինչ պարապիմ, գրելիք ունիմ, ասաց Ռուբէնը։

—Հասկանում եմ, դու ծերի քամակից ես գնում, բայց զուր է աշխատանքդ. ապառաժ քարից եթէ խշխշան աղբիւր կբղխի, ալևորի բերանից էլ խօսք դուրս կըգայ, սակայն վնաս չունի, գնա և փորձիր։

Տան տէրն, իրաւ որ, հասկացել էր. Ռուբէնն աչքով պահելով ծերունուն, հեռուից հեռու նրան հետևում էր։

Գիւղից բաւականին հեռի՝ մի թփոտ ձորակ էր իջնում, որի յատակում հոսում էր մի փոքրիկ վտակ։

Ծերունին մտաւ ձորակը։

Ռուբէնը կանգնեց ու մոլորուեց, տերևալից մացառուտները ծածկեցին ալևորին նրա տեսութիւնից։

Աստքանազեանը նստեց շլորենոնց մացառների մէջ և ցաւում էր իւր կորուստի մասին։

Յայտնի չէ, որքան ժամանակ էր նստած, կամ դեռ որքան պէտք է մնար նոյն դրութեամբ, մէկ էլ՝ ուրէնը տեսաւ մի ոչխարի շուն։

Շուն չէր այդ, գայլից մեծ մի ահագին գազան էր։

Իւր ժամանակին դժուար էր անծանօթին գայլ-

խեղդ ոչխարապահի ժանիքներից ազատուել, բայց կենդանին գլուխն անգամ չըբարձրացրեց։ Ոչ մռմռաց, ոչ հաչեց։ Ասած է՝ „շունն իր շնութիւնը կանի“, բայց ուժից ու զօրութիւնից ընկած, բուրդը տուած, ատամները թափած, կաշի ու ոսկր մնացած *քաւթահած* գազանին մենք ընչի՞ պէտք է շուն հաշուենք. տարիները իրանց անողոք կնիքը դրել էին մեր տեսած ալևոր մուրացկանից աւելի զառամած գամփռի վերայ։

Կենդանին հոտոտեց, հոտոտեց ու երեսը շըրջեց Ռուբէնից և ծանր քայլերով մտաւ թփուտների մէջ։

Ասքանազեանի ուղեղում մի միտք ծագեց։ Նա վերկացաւ և շանը հետևեց։

Ձորակի յատակում, ջրի ափից ոչ հեռու, մի քարայր երևեցաւ։ Այնտեղ մտաւ շունը։

Ռուբէնը յառաջեց դէպի այրը, բայց շան նըման միանգամից համարձակ ներս չըմտաւ։ Այրի մուտքի առաջին կանգնել մտածում էր նա։

— Ինչ կըլինի, թող լինի, վճռեց նա և ներս մտաւ։

Քարայրի խորքումը՝ չոր խոտի վերայ նստած էր ալևորը։

Նրա առաջին դրուած էր ջրով լիքը մի կաւեայ սլնակ, կամ քերեղան։ Իւր բերած հացի կտորի մի մասը ջրի մէջ թրջած՝ լմլմալով ծամում էր

ծերունին. միւս մասը՝ նոյնպէս ջրում թաթախած՝ ծամծմում էր գամփռը։

Իրաւ որ՝ „շունն իր շնութիւնը կանի“. Ռուբէնի բարեւին ծերն աչքերով պատասխան տուեց, շունը մռմռալով։ Գազանը մտադրուեց յարձակում գործել անժամանակ և անկոչ եկաւորի վերայ, բայց տիրոջ ցուցամատով արած լուռ սպառնալիքը խելացի կենդանու դիտաւորութիւնը խափանեց։

Նա պոչը ամբոմբացրեց և շարունակեց իւր ճաշն անել։

Ծերունին ձեռքով նշանացի արեց իւր հիւրին նստել և հետը սեղանակից լինել։

Ռուբէնը նստելը նստեց, բայց ճաշելուց հրաժարուեց։

—Հիւրասիրութեան պարտքը, ծերունի հայր, իսպառ կատարած կըլինիս, ասաց նրան Աստանազեանը, եթէ շնորհ անես ինձ քո կեանքի պատմութեան հետ փոքր ի շատէ ծանօթացնել։

—ԸՆչիդ է պէտք, հազիւ լսելի ձայնիւ շրջաց ալեւորը։

—Պէտք է և շատ կարևոր, մի քանի օր է՝ ես քեզ շարունակ տեսնում եմ՝ ինձ և քեզ պատուասիրող յարգելի տան տիրոջ դրանը՝ և փափագում եմ հետդ ծանօթանալ։ Տան տիրոջից էլ յաջողեցրի խօսք դուրս քաշել, դու արգելած ես եղել և նա քո հրամանդ սրբութեամբ պահել է, իսկ այժմ ինքդ պէտք է գոհացնես իմ հարցասիրու-

թիւնս, աղաչում եմ, հայրիկ, մի խնայիր մի օտարական հայ երիտասարդի խնդիրը կատարել։

Ռուբէնը մօտ գնաց, բռնեց ալևորի ձեռքն և համբուրում էր։

—Թէև աւելորդ էր, բայց թող քո ցանկութիւնդ կատարուած լինի, ասաց ծերն և այսպէս սկսեց իւր գլխի անցքի նկարագիրը.

ԻԸ.

—Մի հարցնիլ, թէ ո՛վ եմ ես, կամ ինչ անբաղդ, կամ բաղդաւոր մարդ եմ, հետաքրքիր օտարական, այլ ցանկացիր իմանալ, թէ ընչո՞ւ Իւզան գաւառը չի նմանում Օսմանցուի ձեռքի տակ եղած մեւս երկիրներին։

—Ի՞նչ կողմանէ ես ուզում համեմատութիւն անել, հարցրեց Ասքանազեանը ծերունուն։

—Այ, ինչ կողմանէ։ Տաճկաստանի ո՛ր կողմերը գնաս, ո՛ր անկիւնն այցելես, հայ ու քուրդ եղած տեղերում՝ մի բան ամենից շուտ աչքի է ընկնում. այս է՝ որ Հայը դաշտայինն ժողովուրդ է, իսկ քուրդը լեռնայինն։

—Իրա՛ւ է։

—Ես ինքս մի անգրագէտ, աշխարհիս հետ իմ հաշիւը վերջացրած, փշրած ալևոր եմ, բայց իմ կարճ խելքով գտնում եմ, որ այս պատահմուն-

քի հետևանք չէ, կամ տէրութիւնների կամքով կարգադրած գործ չէ։

Ինչպէս երևում է, երբ Աստուած քրդին ու հային ստեղծել է, մտիկ է տուել երկուսի պատկերին, տեսել է, որ քուրդը գազանի կերպարանք ունի, իսկ հայն եզան նման խոնարհ է։ Որպէս զի արենխում գազանն ու աշխատասէրը կենդանին միասին չը մնան, մէկին սարերն է ձգել, միւսին դաշտերն է բաժին տուել։ Էն օրից էսօր՝ դաշտը հային է մնացել, լեռները քրդին, էն օրից սկսած՝ հայը հողին է սիրել, հողը հային. հայի գործը հողի հետ է, քրդինը ոչխարի, հայի ձեռքին գութանի մաճն է, քրդինը հովուական ցուպը։

—Շատ ուղիղ նկատողութիւն է արածդ, իմաստուն ծերուն՛։

—Այո՛, հայը որ կայ՝ քրիստոնեայ է, այդ իսկ պատճառով Աստուած հային հողն է բաժին տուել, որ իր ճակատի քրտինքով մշակի, ցորեն ու խաղող յառաջ բերի։ Երկրիս բերքերի մէջ այս երկու սլուտուղներն ամենից գլխաւորներն են. առաջինը մարդին քաղցածութիւնից է փրկում, երկրորդը նրա քիմքն է քաղցրացնում և ուրախացնում, երկուսը միասին քրիստոնէին էս կեանքումն էլ են ապրացնում, էն աշխարհքի փառքին էլ են արժանացնում։ Հացը Քրիստոսի մարմինն է, գինին Նրա արիւնը, դրա համար էլ հայն իր քրտնքով վարած ու ցանած, աղունած ու մաքրած սրսուռ ցորենից

ալիւր է աղում, իր նշխարքն է գործում, և իր ձեռքով քամած քաղցր խտղողներից գինի է շինում, բաժակացու է պատրաստում։

Ռուբէնը հիացած նայում էր ծերի աչքերին, նա իւր մտքումը դատապարտում էր այն ազգերին, որոնք Հայի բնական յատկութիւնների վերայ ստոյգ գաղափար չունին և հային համարում են շահասէր, մանրավաճառ, վաշխառու և հարստահարիչ տարր։

—Սակայն այդպէս չէ քուրդը, շարունակեց ծերունին. քուրդը հող ու ջրի հետ կապուած չէ, նա կատարեալ գազան է, իսկ գազանի բնակարանը լեռներն ու ձորերն են։ Գազանը մի տեղ բոյն չի դնում, նրա որջը մի օր քարայրներն են, միւս օրը անձաւներն ու խորշերը։ Քուրդն էլ՝ նոյն և նման՝ էս օր իր վրանը սարի թմբին է տնկում, վաղը ձորի հովտի վերայ, ուր որ կանաչ խոտ է տեսնում, այնտեղ է իր ոչխարի հօտը քշում, ուր որ ամուր ապաստան է գտնում, այնտեղ է իր որջը շինում։

—Քո ասելովդ՝ հայը ոչխար ու անասուն չի պահում, հայը հովուական կեանքն արհամարհում է, հարց տուեց Ռուբէնը։

—Ես չեմ ասում, թէ հայը կաթն ու մածունը չի սիրում, իւղ ու պանիր չի շինում. երկրագործը չի կարող անասուն չը պահել. հայը տաւար էլ ունի, նրա հօտերը քրդի հետ համեմատած՝ կրկնապատիկ են։ Աստուած հային ամէն գործի մէջ չը-

նորհք է տուել, խելք ու միտք է պարգևել. հայը լաւ երկրագործ լինելուց յետոյ՝ լաւ արհեստաւոր է, լաւ հովիւ է, լաւ վաճառական է. նա ինքն երկիրն է մշակում, որդին աւետրով է պարապած, եղբայրը հովուական գաւազանն է ձեռք առնում, իսկ եթէ նրա ձեռքը չի հասնում և այս և այն անել, տան բանալին գողին է յանձնում, սարից քրդին քարշ է տալիս, հովիւ է շինում։ Ընդհանրապէս կարելի է ասած՝ որ ամէն տեղ մեծ մասամբ հայի հովիւը քուրդն է։

—Բայց Խիզան գաւառումը հակառակն եմ տեսնում, պատուական ծերուկ, ընդհատեց Ասքանազեանը։

—Ես էլ հէնց այդ տեղ եմ գալիս, սկզբումն ասացի, որ Խիզան գաւառը զանազանուում է տաճկահպատակ միւս գաւառներից։ Այսօր դու տեսնում ես, որ Խիզանի գաշտի բոլոր բարիքները քրդի ձեռքին են. քուրդ ու այգի, քուրդ ու արտ ու ագարակ։

—Իսկ մշակողները հայերն են, վրայ բերեց Ռուբէնը, գոնէ իմ եղած բոլոր տեղերումս այդպէս տեսայ։

—Ա՜խ ու վա՜խ... յոգւոց հանեց ալեւորը, սուտ չես ասում, ազնիւ երիտասարդ, Խիզանու հայն այսօր իւր տնկած ու հասցրած այգու մէջ, իւր պապենական հողի վերայ քրդի ծառան է. նա իւր սեպհական կալուածքը մշակում է քրդի համար։

—Ի՞նչպէս թէ իւր սեպհականը։

—Այո՛, սիրելիս, շատ ժամանակ չէ, որ Խիզանու դաշտը իր վրայի բոլոր գիւղերով հայինն էր. օրիցս 15 տարի յառաջ՝ այսքան չէր Խիզանի հայը, դեռ տասը բաժնից մէկը չի մնացել. 15 տարի յառաջ՝ Խիզանի դաշտի վրայ ապրող սակաւաթիւ քրդերը միմիայն հայի հովիւներն էին, գլխաւորը ժողովուրդը քո արենակից հայ-քրիստոնեան էր։ Եւ մէթէ չըտեսար, թէ քանի՛ քանի վանքեր ու եկեղեցիք աւերակ են մնացած և ոչխարանոցները են դարձած։

—Շատ եմ տեսել և շատերին եմ հարցրել, քայց և ոչ մէկից պարզ պատասխան չեմ ստացել, ուստի հարցրել եմ, կարճ ու կտոր խօսքեր եմ լսել, իբրև ապացոյց՝ յիշել.են մի պէլեմամեցի Մուրատի պատմութիւնն, և էն էլ չեն ասել, թէ այդ Մուրատն ո՛վ էր և ինչ էր արել։

—Մուրատին հանգիստ թող, ինձ լսիր։ Դու իմացար, որ 15 տարի յառաջ՝ Խիզանը հայաբնակ էր ու շէն էր. այն ժամանակը ոչ քուրդն էր հային նեղում և ոչ Օսմանցին, սէր ու խաղաղութիւն էր, գառն ու գայլը, կարելի է ասել, միասին արածում էին։

—Ինչպէս որ պարզ ու պայծառ օրը մառկալն ուշադրութիւն չի դարձնում, թէ կապոյտ երկնքի երեսին՝ հեռու հորիզոնում մի աննշան կտոր ամպ է երևում և չի էլ մոտածում, թէ այդ մի բռնաչափ

ամպը կարող է իր գործին արգելք լինել, ուստի և միամիտ սրտով իր գումթանը լծում է, դաշտն է գնում. այդ միևնոյն նմանութիւնով Խիզանի հայերից ոչ մինը ուշք չդարձրեց, երբ մի օր՝ մօլլա Սաբադուլլահ անունով մի քուրդ, ոտաբոբիկ, փորը քաղցած՝ իւր չորս հինգ լամուկների ձեռքը բռնած՝ Մոկաց երկրի Արվազ գիւղից գաղթեց և մտաւ Խիզան գաւառը։

Ո՞վ ինչ ցաւն էր կտրուել, հա գայ, հա գընայ, օրական հարիւրաւոր քրդի կին ու մարդ հայ գիւղերն ընկած՝ հայի հացը լափելով՝ քարշ են գալիս, այդ մօլլէն էլ նրանցից մինը։ Հայն երբէք իր հացն ուզողին չի խնայել, չէ չի ասել, տուել է, թող մի պատառ էլ մօլլէն կերած լինէր։

—Ներիր ինձ ասել, որ հայի լիմարութեան նշանակներից մինը հէնց այդ է, որ իր ձեռքով իւր երեխայի հացն առնում, շներին է ձգում, խօսքը կտրեց Աբգանազեանը։

—Դատողութիւնը մի կողմը թողնենք, եղածն ասենք, Մօլլա Սաբադուլլահն ամէն տեղ հայ գիւղերում մեծ պատիւներ է տեսնում և քաղցր ընդունելութիւն է գտնում։

Այդ հիւրընկալութիւնից սիրտ առած՝ Սաբադուլլահն իւր ընտանիքը տեղաւորեց մի հայ գիւղում և ինքը ոտքով շրջեց ամբողջ Խիզան գաւառը։

Նախապէս պէտք է ասեմ, որ քուրդը թէպէտ

փոքրամասնութիւն էր կազմում Խիզանումը, բայց ամէն տեղ կային բնակիլաճ։

Գալիս էր մօլլա Սաբադուլլահը գլուխը կախ, աչքերը գետնին ձգած և վիզը ծռած։ Նա խոնարհ էր ինչպէս վանայ լիճը՝ քամի չեղած ժամանակը։

Յանկարծ բազմամարդ գիւղերում անխօս գառը քաղցած գայլի նման ոռնում էր, մեռեալ լիճը սկսում էր ալեծփուել, փրփրակալել և սղմուկ բարձրացնել։

Մօլլէն լայն տարածում էր իւր ձեռքերը, աչքերն երկինքն էր դարձնում, հրապարակի վրայ գնում գալիս էր, աջ ու ձախ պատուներ էր գործում, ղղյացնում էր, կկլացնում էր, անկապ ու անհասկանալի հնչիւնները էր արձակում և իւր ահագին երկար հասակով մխանգամից գետին ընկնում։

Քուրդ ու հայ խմբուում էին մօլլի շուրջը։ Այդ ժամանակն, իբր թէ, նա երկնքից պատգամներ էր ստանում։

Մէկից չորս եղջիւրանի ոչխար էր մատաղ պահանջում, միւսին հարստութիւն էր խոստանում, երրորդին սպառնալիքներ էր տալիս։ Հանդերձեալ կեանք, դրախտ, դժոխք շարունակ լսում էին նրա ուղտի նման հաստ ու կախընկած շրթունքներից։

Մօլլա-Սաբադուլլահն այնուհետև անյայտ չէ մնաց, հետզհետէ նա իւր շուրջը հաւաքեց քուրդ հաւատացեալների մեծ բազմութիւն։ Մեծացաւ մա-

նաւանդ Սաբադուլլահի նշանակութիւնը, երբ քրդերի մէջ ամենից աւելի յարգանք վայելող Շերվանու Օլէք գիւղի մօլլա-Խալըդին իր իրաւունքը նրա ոտքի տակ դրեց։

Այլ ևս Սաբադուլլահը հաստարակ մօլլա չըմնաց, մի օր յայտնեց նա, որ երկնքից իրան և իւր սերընդին պարգևած է յաւիտենական շէյխութեան արտօնութիւն և իրաւունք։

Հիմա արդէն շէյխ Սաբադուլլահը հիմնաւորուեց Խիզանումը, նրա գետնափոր խրճիթը փոխուեց ուխտատեղի. ոչխար, եզը, գոմէշ, ձի, օրական մտնում էր նոր շէյխի օջաղը։ Էլ հիմա *օջաղ* էր Սաբադուլլահի տունը, *օջաղզադայ* էր ինքը, իր որդիքը, իր կանայքը, իր շունն, իր կատուն։

Շատ չանցած՝ Խիզանի բոլոր քրդերից հարուստը շէյխ Սաբադուլլահն եղաւ։

Բայց Սաբադուլլահին օրըստօրէ յաղթում էր ծերութիւնը, շատ երկիւղ կար, որ ինչպէս շուտ բարձրացաւ, արագ էլ կարող է կործանուել, քրդերի մեծամեծներն սկսել էին փոքր առ փոքր թերահաւատել դէպի Սաբադուլլահի մտաւոր և բարոյական ոյժը. մի կողմից էլ հին շէյխերն էին նախանձից թերահաւատութեան սերմը ցանում։

Բաղդաւոր էր Սաբադուլլահը, բնական խելքով, ճարպիկութեամբ, սատանութեամբ և կեղծաւոր խորամանկութեամբ հօրը գերազանցեց մեծ որդին Ջալալադինը։

Հոր մահից յետոյ Ջալալադդինը չը բաւականացաւ հօր նման գուշակութիւններով և ապագայ կեանքի խոստումներով կշտացնել տնկուշտ քրդերի փորը. նա երկրաւոր բարիքների յորդառատ աղբիւրներ բաց արեց իւր հաւատացեալների համար։

Իւր հոր ժողոված հօտերից օրական զոհադրծութեան անունով մորթոտում էր նա զանազան քրդաշատ կեդրոններում և եփում, բաժանում հասարակ դասակարգին. իւր ունեցած թանգագին նժոյգներն ու պատուական եզները չէր խնայում ընծայ ուղարկել յայտնի քուրդ ցեղապետներին. Հետն էլ մի եռանկիւնի ծալած, կարմիր ու դեղին փաթոյթի մէջ կարած օրհնութեան յուռութք։ Բերողը հաւատացնում էր, թէ *որ տուննայս թլփամը մտաւ, խէրն ու բարաքեաթը* (օգուտն ու արդիւնքը) հետ կը մտնի։

Այդպիսով գողացաւ Ջալալադդինը Խիզանու և լեռնական քուրդ ազգաբնակութեան և դաշտայինների սիրտն ու համակրանքը։

Բոլորեքեան շէյխ Ջալալադդինին իբրև Աստուծոյ մարգարէ էին ընդունում, որովհետև նրա քարոզածներն ամենքի գրպանին ձեռնտու և շահ էր։

Նա քարոզում էր կրօնական պատերազմ Խիզանու հայերի դէմ, նա պատրաստում էր մեծ հրոսակութիւն, ուզում էր մի յանկարծական յարձակումն գործել Խիզան գաւառի հայերի վերայ և աւար տալ ու աստատակել։

Շատ հեշտութեամբ նա գլուխ տարաւ իւր աւերիչ մտադրութիւնը, երկիւղ ոչ մի տեղից չկար, հայերը տեղեկութիւն չունէին և եթէ ունենային էլ, անզօր էին դիմադրելուն, որովհետև զէնքի մասին գաղափարը մեռած էր նրանց մէջ, իսկ տաճիկ պաշտօնակալները բոլորեքեան կաշառուած էին։

Մտաւ Ջալալադդինն ինչպէս թևաւորուած մորեխ և ոչնչացրեց Խիզանու դարաւոր ժողովրդին։

Կոտորուածք, աւեր, սպանութիւնք անխնայ կատարուում էին, արիւնն առու եղած՝ գնում էր. ուժահատ ծերերի, անտէր մնացած այրիների, կիտասպան մանուկների գոչիւնն ու աղաղակն երկինքն էր հասնում, բայց երկինքն ականջները փակել էր այս աղիողորմ աղաղակը չը լսելու, ինչպէս և Ջալալադդինի ու իւր մոլեռանդ հաւատացեալների սրտի դռները էր ամրացրել՝ իրանց գազանային անգթութիւնները անողորմաբար կատարելու։

—Ա՜խ, Աստուած, ախ, արդեօք ինչ մեծ յանցանք է գործել հայը, որ մինչև էսօր չը կարաց զղջալ ու դարձ գալ, ապաղեց, գոյդ ձեռներով գլուխը թաւկեց ծերունին։

—Խօսքդ շարունակիր, պատուական ծերուկ, և յոյս ունեցիր, որ հեռու չէ ժամը՝ Աստուծոյ աչքը մի օր հալի վերայ կը քաղցրանայ, յուսադրեց Աքանազեանը։

—Շատ լաւ ես ասում, սիրելի, ես մեղայ Աս-

տուճոյ... էն էի ասում, Ջալալադինը քանդեց, քարատակեց Խիզանի շատ գիւղերը. հօտեր, նախիրներ, ձիանց ջոկեր, շարժական գոյք՝ բոլորն աւար տուեց։

Կոտորուածը կոտորուեց, մնացածն առաւ իւր ընտանիքն և յաւիտեանս թողեց Խիզան գաւառը, գնացին իրանց արևի ձէնն աճելու, մի պատառ ցամաք հաց ճարելու։

Մեծ աւար ժողովեց Ջալալադինը Խիզանից, բայց և ոչ մի աննշան մասն այդ յափշտակածից իրան չէը վերցնում։ Բոլորը բաժանում էը իւր խմբի ամդամներին։

Ինքը շէյխ էը, անհատատի ձեռք դիպած առարկան սիրտ էը շէյխի համար, երկինքը կը զրկէը նրան շէյխութիւնից՝ եթէ շահամոլութեամբ օգտուէը *գնաւոլի* ունեցածից։

Վերցրած աւարի մեծ բաժինը հասնում էը ցեղապետներին, որոնց կտրիճ երիտասարդներից Ջալալադինն իրան համար *սօֆիներ* էը ընտրել, որպէս թէ երկնքի նախատես տնօրէնութեամբ։

Ա.հա այդ *սօֆի* կոչուած սրբազան դասն էը ամենից անխիղճ արեներբուն։

Այսպէս էը հռչակում իւր սրբութիւնն և անշահասիրութիւնն իւր սօֆիների ձեռքով։

Այնուհետև մի քանի ժամանակ դադար էը առնում Ջալալադինը, որպէս զի աւելի կատաղաբար ու բարբարոսաբար իւր աւերուածքը շարունակի։

Մի ժամանակից յետոյ՝ յանկարծ՝ մի ընդհանուր տեսիլ աօֆինների ձեռքով հրատարակւում էր բոլոր քրդերի մէջ։

—Ջալալադդինն երազ է տեսել, որ Աստուած հը պատժի այն քրդին, ով որ իւր մաքիներից ամենալաւերը հնգից մէկը չուղարկի շէյխի տունը՝ սերունդ աճեցնելու համար. ում պատուական եզներից ու կովերից ամենապատուականները տասից մէկը շէյխի օջաղում չը մշակեն ու կթուրին, որ ամէն մի հարուստ քուրդ իւր մատակ ձիանոնցից ամենից թանգագինը շէյխի ջոկի համար նժոյգներ յառաջացնելու չը շնորհէ և այլն։

Անմիջապէս մի ուրիշ երազ շէյխին հրամայում էր զօրաժողով լինել, Խիզանի երկրորդ ասպատակութիւնն սկսել և աւարը բաժանել նրանց, որոնք շէյխին պարգև են ուղարկել։

Նոր աւերուածք, նոր յափշտակութիւն, նոր հարստութիւն։ Քիչ քիչ հայերի կալուածքները քրդերի ձեռքն են անցնում։

Եւ որովհետև Ջալալադդինն էլ անչափ հօտերի անասուններից տէր է դարձել, նրան էլ առանձին արօտատեղիներ, արտեր, այգիներ են հարկաւոր։

Այս անգամ յարձակումը լինելու է միայն մի գիւղի վրայ, վերնային տեսչութիւնը արժան է տեսել շէյխի օջաղը հաստատել Խիզանի Պէյլիամ գիւղի մէջ։

ԻԹ.

Երբ Աբգանազեանը Պէլթամի անունը լսեց, նա իւր լսողութիւնը լարեց։ Մուրատը նրա մըտքում կենդանացաւ.

—Պէլթամը մեծ գիւղ չէր, շարունակեց ծերունին, բայց բարելից գիւղ էր և ողջ Խիզանի մէջ անուանի էր։

Տաճկահայ գիւղացիների մէջ ամենից հարուստ, առաջաձեռն, մարդասէր և ամենից սիրուած Մուրատն այնտեղ էր բնակուում։

Եօթանասնամեայ աստուածավախ և առաքինի ծերունի էր իւր տան նահապետ Մուրատը։

Այս տարիքում ծերութիւնն սկսում է բնկճել, կորացնել մարդին, սակայն այդ Մուրատին չէր վերապահուած. նա բարձր և ուղղահասեաց էր՝ ինչպէս մի դեռատունկ խնձորենի՝ փթթած գարնանազարդ անուշաբոյր ծաղիկներով։

Զինանփայլ ալիքն ու ճերմակ գեղմից առաւել նուրբ մետաքսանման մազերն էին Մուրատի գլուխն ու երեսը զարդարող ծաղկունքը։

70 ամառ ու ձմեռ անցել գնացել էին Մուրատի գլխովը, բայց նա իւր զուարթ տեսքով ու հայեացքով, կենդանի ու աշխոյժ աչքերով նմանում էր աշխարհիս ունայնութիւններն արհամարհող կայտառ երիտասարդի, տղամարդի։

Ոչ ոյժն էր տկարացել, ոչ երեան էր կնճռա-

կալել, ոչ թիկունքն էր կորացել, քայլում էր ինչպես պատերազմի դաշտից վերադարձած հերոս. ոտքերը փոխելուս՝ գետինը ոտքի տակ դոփում, դրոփում էր, հսկայ, էր հսկայ։

Հսկաները հասարակ մահկանացուներին սարսափ են եղել, բայց Մուրատն իր արտագրաւ պատկերով, պարզ ու անպաճոյճ խօսքերով վստահութիւն է վաստակել մեծ ու փոքրի, ճոխ ու տնանկի մէջ։

Հարստին սրտանց սիրողները շատ սակաւ են, ի պատիւ նրանց առ երեսս կեղծ ու պատիր հաճոյախօսութիւնները են խնկարկուում, իսկ Մուրատին ամենքեան սիրում են։

Սիրում են, որովհետև սիրելի է, սիրում են՝ նորա համար, որ շատ հարուստների նման չի գոռոզանում, հարստին չի նախանձում, աղքատից երես չի թեքում, սիրում են՝ ըստ որում հաց ունի և հացը միայն իւր ու ընտանիքի համար չէ, հացը տուողն Աստուած է, բոլոր մարդիկն Աստծու որդիքն են, Աստծու տուածը Աստծու որդւոց համար է։

Պէյլիամ գիւղն ամբողջութեամբ Մուրատի սեպհականութիւնն էր, այնտեղ ուրիշ ժողովուրդ չը կար, միջի բնակիչները Մուրատի ազգ ու ընտանին էին և իւր դրանը ծառայողները, բայց Պէյլիամի տարեկան եկամուտը հասարակական էր։

Մուրատն իւր ձեռքերով էր գիւղիս հիմքը

դրել, ինքն էր անուն տուել։ Պէյլթամ ասել է հասարակութեան տուն. մի տուն՝ որի դռները լայն բաց է միշտ ամէն ճանապարհորդի, ամէն կարօտեալների, ամէն քաղցած ու ծարաւ եկաւորի համար։

Մեծ ճանապարհի վերայ էր շինուած Պէյլթամը՝ մի այնպիսի կեդրոնում, ուր յարմար է ճանապարհորդին հանգստանալ, կշտանալ, գրաստը դարմանել, քնել, վեր կենալ և ճանապարհ ընկնել։

Հայ աշխարհումն այդպիսի տեղերում, անմարդաբնակ անցքերում հնուց շինուած քարվանսարայք կան, որոնց մէջ գիշեր ու ցերեկ ճանապարհորդներով լիքն են։ Կատարեալ քարվանսարայ էր Պէյլթամը։ Զանազանութիւնն այս էր, որ քարվանսարայում եկաւորները կերակրուում էին իրանց քսակի ներածի չափով, իսկ Պէյլթամումը քսակ հանելու պէտք չը կար. վայելի՝ որքան կարող ես, մնա, հանգստացիր՝ որչափ սրտիդ ցանկութիւնն է. պառող ու վարայ շարժելու տեղ չէ Պէյլթամը, Աստուծոյ հիւրն ես, տան տիրոջ գոյգ աչքի լոյսն ես, Մուրատի գլխի, աչքի վերայ տեղ ու պատիւ ունիս։

Ծառի հովումը, ճանապարհի վերայ փռուած են քրդի կապերտները, տան տէրը նստած է այնտեղ, նրա շուրջը ժողոված են յարգելի հիւրերը, ճանօթ ու անճանօթ հայ, թուրք, քուրդ, ասորի ճանապարհորդները։

Մի նայիր, թէ օրուայ քնչ ժամանակն է, սփռոցը փռուածՀ, հաց, կերակուր վրան շարուածՀ է, ուտող ուտողի է, տանող տանողի է, ճանապարհորդին պաշար ևս հարկաւոր է։

Մուրատը միայն սիրաշահելու համար չէ բանից գործից ընկել. նա անքուն պահապանի դեր է կատարում. չը չինի թէ պատահին այնպիսի ճանապարհորդներ, որոնք փախս տան և իջևանել չուզենան. զուր կըլինի այսպիսիների ջանքը, թէ ձիաւոր են, Մուրատն ինքն է անձամբ դիմաւորում, ձիու սանձն իւր կողմը քարշում. թէ հետևակ են, Մուրատն ինքն է ընդ առաջում, ճանապարհը փակում և կուռը բռնած՝ ծառի հովը հրաւիրում։

Հազար աղաչիր, որ շատ ժամանակ չէ ճաշել ես, ախորժակ չունիս, պնդիր, որ պաշարի կարօտութիւն չունիս, պայուսակդ լիքն է պաշարով։

—Ախորժակն ատամի տակին կը լինի, պատասխանում է Մուրատը, իմ սիրտս ուզում է քո պաշարից ուտել, խլում և տանում է պայուսակը։

Առանց աւելացնելու կարող եմ ասել, որ Մուրատի տանն օրական միջին հաշուով հարիւր ճանապարհորդ իջևանում և մեծարուում էր։

Սպասաւորողները ծառաներ ու վարձկաններ չեն. վարձկան կոչուած դասակարգը Մուրատի համար չըկար, փողով մշակ բռնել, աշխատեցնել՝ լսուած չէր Պէյլիամում։

Ով ուզում էր գտնել պատրաստ հաց, պատրաստ հագուստ, պատրաստ տուն ու տեղ, պատրաստ դրամ իւր ընտանիքի պէտքերը հոգալու, իւր արքունի հարկերը վճարելու և վերջապէս երկրին երեսին կարօտութիւն չըքաշած ապրելու, Պէլթամ էր գալիս։

Ի՞նչ է հարկաւոր անխոնջ երկրագործ գեղջուկին՝ հո՛ղ, գութա՛ն, ոչխա՛ր, տաւա՛ր՝ այս բոլորը կայ, գնա՛, գործիր, բե՛ր, դու էլ կե՛ր, ինձ էլ ուտացրու։

Այս էր Մուրատի ուղղութիւնը. Խիզանու ամէն կողմերից ցանկացողները հաւաքուել էին և յոժարակամ կապել իրանց վիճակը Մուրատի հետ։

Մուրատի իւր սեպհական գերդաստանը 75 հոգուց էր բաղկացած. սրանցից էին նշանակուած հիւրերին սպասաւորողները։

Իրանով ութն եղբայր էին Մուրատեանք, որոնցից իւրաքանչիւրը բազմաթիւ որդուց ու թոռների տէր էին. ամէնից աւագ եղբայրը Մուրատն էր։

Գերդաստանի անդամների գործը միայն հիւրերին սպասաւորելը չէր, նրանք բացի դրանից՝ ուրիշ սեպհական յատկացրած պաշտօններ էլ ունէին։

Եղբայրներից մէկը նախրի վերահսկողն էր, միւսը՝ ոչխարի, հօտերի, որը երկրագործներին է գլուխ քաշում, որը այգիների իրաւունքն էր վայելում, կանանցից մէկը սարն էր գնում՝ ի՛ւղ ու պանիր շինելուն նայելու, երկրորդը տների մաքրու-

թեան, մառանապետուԹեան, տնտեսուԹեան, կերակուր պատրաստելու, մշակներին հաց տանելու, հիւրերին կերակրելու, գորգ ու կապերտներ գործելու ու շատ ու շատ տնային գործերին գլուխ քաշելու։ Ո՛վ ինչ գործի յարմար էր, իւր սիրած պաշտօնն էր ընդունում։ Դերդաստանի արական սեռին պաշտօն տուողը Մուրատն էր, իգական սեռինը՝ մօտաւորապէս նրան հասակակից, բայց աւելի գրաւիչ, աւելի թարմ ու կայտառ իւր ամուսին Զանան-Մարիկը։

Ամհագին կաթսաները էին ամէն օր քլթ-քլթում մի թոնրի վրայ, տաշտերով հացը շարունակ թրխուում էր միւս թոնրումը, երկու երեք ծծում (խրնոցի) կախուած հարուում էին, իւղը մեծ մեծ պղնձներով հալուում էր, այդ բոլորի գլխաւոր վերադիտողը Զանան-մարիկն էր։

ԽտրուԹիւն չկար հիւրերի, տնեցոնց և մշակների մէջ, միևնոյն կերակուրն էին բոլորեքեան ուտում. Մուրատի համար իմ ու քո չկար, բոլորին իւր որդիքն էր համարում, Զանանի համար ամէնքն աչքի լոյս էին. տան վերջին երեխայի մատը խրուած աննշան փշիկը Զանան-մարիկի սրտի մէջ էր տնկուում, Մուրատ-ամու մտաճուԹեան առարկան էր դառնում։

Տուն չէր Մուրատի տունը, ծով էր՝ որ կար, ինչ եմ ասում՝ Թէ տուն, մի իշխանական պալատ էր։ Ոչ միայն Խիզան գաւառի մէջ, այլ և Հայաս-

տանի շատ դիւղ ու աւաններուն գետնափորներուն հետ համեմատած՝ Մուրատի տունն այնպէս էր՝ ինչպէս մի հաստաբուն կաղնի ծառ՝ թփերի ու մացառներու մէջ կանգնած։

Ի՞նչ մեծ մեծ սենեակներ, հիւրատունն, հացատունն, մառանն, նկուղ, գոմերը, մարագները տեղին ու կարգին մարդիս հոգին փառաւորում էին, տան առաջի մեծ սլարտիզի ծաղիկներիցը դրախտի հոտ էր բուրում։ Բակի մեծ դուռը, կարծում էիր, թէ մի նորահարս լինի, քարերի վրայ փորուածքները, կարծես, թէ ակն ու մարգարիտ լինէին՝ հարսի ճակատն ու երեսը զարդարող, դրան ճակատին դրուած մարմարեայ արձանագրութիւնը, հէնց իմանաս, մի մեծ ալմաստ քար էր՝ էնքան ակունքների մէջ յարմարացրած։

Այս ամէն հարստութիւնը Մուրատն ինքն էր աշխատել, այս շքեղ պալատներն իր աչքի առաջին իր հրամանովն էին շինուել։

Աստուած մարդին խելք էր տուել, որ կարողացել էր ոչինչ տեղից էն փառքին հասնել։

Հայրը մեռնելուս՝ Մուրատը լինում է մօտ 20 տարեկան, մնացած եղբայր ու քոյր ամէնքն անչափահաս որբեր էին իր գլխին ածած։

Ընդամէնը հայրը թողել էր տասը, տասն ու հինգ կով ու եզը, մի մատակ ձի, երեք մատակ գոմէշ, հարիւր ոչխար։

Մուրատն ինքը յառաջ բերեց ու աճեցրեց հօ-

տերով ոչխարները, նախիրները, Հիանց ջոկերն ու սեպհական կալուածքը։

Ա՜խ Մուրատ, ախ... քո գերեզմանիդ մատաղ, արդեօք ո՞ւր մնացիր, արդեօք ժամ պատարագի արժանացա՞ր, թէ Պօլսի թիավարների ձեռքով ծովի ձկներին կերակուր գնացիր...

Ծերունին չկարողացաւ շարունակել, գլուխը դրեց քարայրի ժայռին և աչքերը փակեց. հեծկլտանքն իրան խեղդում էր։

Աստքանազեանը չէր կարողանում հաշիւ տալ իրան, թէ ընչո՞ւ արտասունքն ինքնաբերաբար հոսում էր իւր աչքերից։

Երկար մէջոց յուզուած էր ալևորը, և Ռուբէնը չէր վստահանում մի մխիթարական խօսք արտասանել։

Լ.

Վերջապէս ալևորը հանգստացաւ, նա իւր պատառոտուն ցնցոտիների քղանցով աչքերը սրբեց և այսպէս սկսեց իւր պատմութիւնը։

Վարդավառ կիրակի օրը Պէյթամում առաւօտադէմին կարծես մեռելութիւն է. ոչ մի տղամարդ չի երևում ոչ փողոցներում և ոչ հանդում. ոչխար ու անասուն դաշտի երեսը փռուած՝ իրանց համար արածում են. չը կայ հովիւ, չը կայ նախրորդ. միայն տներում մի մի կին կամ հարսն

գլուխները քաշ իրանց գործին են։

Հարցրու յարգևոր տնպահներից՝ թէ ո՞ւր են իրանց տղամարդիկը՝ քեզ նշանացի կը հասկացնեն, որ բոլորեքեան ժամ են գնացել։

Այո՛, ժամ են գնացել այսօր ոչ միայն պէյլթամեցիք, այլ և շրջակայ գիւղերի բնակիչներից շատերը։ Այսօր Վարդավառ կիրակին է, այսօր Պէյլթամի եկեղեցու մեծ ուխտն է։

Եկեղեցին լիքն է ջերմեռանդ աղօթաւորներով. իսկ եկեղեցուց դուրս՝ ծառերի ստուերում՝ ահագին կաթսաների մէջ եփուում են մատաղները։

Այսօրուայ զոհագործութիւնը ուխտաւորների բարեպաշտութեան պտուղը չէ. Պէյլթամի հիմնարկութեան օրից՝ Վարդավառ կիրակին որոշուած է Մուրատի հին և նոր ննջեցելոց յիշատակութեան օր։ Ամեն տարի էս օրը՝ մի շաբաթ առաջ՝ գիւղերում տեղական քահանան ժամակոչին տունէ տուն շրջեցնելով՝ խնդրում է հաւատացեալներին Մուրատի կողմից գիւղահաւան բոլոր հասարակութիւնով առաջիկայ Վարդավառի օրը շնորհ բերել Պէյլթամ։

Սուրբ սուրբի ժամանակն է, դուրսը կանանչ խոտի վերայ երկար ու մէկ սփռոցներն են փռուած՝ անթիւ բարիքներով պատրաստ վայելելու, իսկ ժամում սուրբ պատարագի ահեղ խորհուրդն է պարտաճանաչ ժամաւորին մտքով երկինք վերացրել և մոռացրել երկրաւորը։

Այսպիսի հանդիսաւոր ժամասացութիւն՝ գա-

ւառի հոգևորականութեան մեծամասնութեան ներկայութեամբ՝ Խիզանումը ոչ մի տեղում չի պատահում: Պատարագից յետոյ՝ քահանայքն ամենքը շուրջառաւորուած՝ եկեղեցական դասը համախմբուած թափօրով՝ գնալու են գերեզմանատուն՝ Մուրատենց գերեզմանների վերայ հոգեհանգիստ կատարելու. այն տեղից գնալու են վայելչեն Մուրատի կողմից պատրաստած ճոխ ճաշը և ապա ցրուելու են իւրեանց գիւղերը:

Այս սովորութիւնն այնպէս արմատակալել է Պէլթամի շրջակայ գիւղականների մէջ, որ ամեն տարի շարունակ կրկնուում է:

Պատարագի այդ խորհրդաւոր ժամին՝ մի օտարոտի և անսովոր արկածք այնպէս շփոթեց եկեղեցու բազմութեանը, որ սրբազնագործութեան պաշտամունքը խափանուեց:

Հէնց իմանաս կայծակներ էին, որ պարզ երկնակամարից առանց ընութեան կարգը խանգարուելու, առանց ամպ ու մրրկի, պայծառ օրը տրաք-տրաքեցին և եկեղեցու դռնից ու լուսամուտներից թափուեցին ժողովրդի գլխին, ծուխը ամպացաւ եկեղեցու մէջ, պայթիւններն ականջներ էին խլացնում. հասած ծիրանի նման մարդիկն այստեղ այնտեղ գետին էին ընկնում:

Շփոթն այնչափ մեծացաւ, որ քանի րոպէ ոչ ոք չէր հասկանում աղետի պատճառը. գիտակցութիւնը զարթնեց ամէնքի մէջ, երբ պատարագիչ

քահանան ձեռնամած աղօթելիս ծնկան վերայ եկաւ և բեմի վերայ երեսն ի վայր անշնչացաւ։

Մի գնդակէր, որ պատուհանից շեշտեց և ծակեց ժամարարի ձախ էրաթաթը։

Ծողովուրդը խռնուել է եկեղեցու դրան առաջին, բայց դուրս գնալն անհնարին է. հազարաւոր քրդերի աչ ու ձախ շողացող կեռակտուց սրերը գնդակներից ոչ պակաս զոհեր են անում։

—Գեավուրների գլուխը թող մի մի սոխի գլուխ համարուի ուղղահաւատ սօֆիների համար, լսուեց դրսևից շէյխ Ջալալադդինի բարձրագոչ հրամանը, բայց Մուրատի գլուխը ձեր գլխից թանգ եմ գնահատում, Մուրատի գլխին վնաս տուողն իր գլուխը կըկորցնի, աշխատեցէք Մուրատին կենդանի կենդանի իմ առաջը բերել։

Մուրատը մինչև այդ ժամանակը դասի առաջին՝ ուրիշների նման շփոթուած՝ ինչպէս մըտամոլոր՝ ապուշ կանգնած մնացել էր. այժմ, հէնց իմանաս, նա քնից զարթնեց, սթափուեց, ուշքի եկաւ և գոռաց. սուրը պատարագը սկրողը թող ճանապարհ տայ ինձ։

Մի րոպէում ամբոխը մէջը ճղեց և Մուրատին յառաջ ձգեց։

Անեղկիւղ հետս եկէք, ձայն տուեց ծերունին։ Ոչ, նա ծեր չէր. նա այս վայրկեանին ալեզարդ գլխով, ալեզարդ մօրուքով, քառասնամեայ կտրիճ երիտասարդի էր նմանում, որ իւր ձեռնափայտը

գէնք արած՝ վեհանձնաբար խրոխտ քայլերով դէպի դուռն էր ընթանում։

Խուռն բազմութիւնը կանոնաւոր զօրքի նման հետևում էր իւր քաջ զօրապետին, ամէնքը մահն աչքների առաջն էին առնել։

Եկեղեցու մինչև շեմքը քրդերը ծառացած՝ կանգնած են, սրերը շողշողում են, գնդակները կարկտի նման ներս են տեղում, բայց հայերից ոչ ոք երես չի թեքում, նոյնպէս և վստահ յառաջ է գնում նրանց առաջնորդը։

Եկեղեցու շեմքի առաջին՝ դրսի կողմը՝ երեք քուրդ վայրկենական երկիր տապալուեցին, մէկի ուղիղը ցրուեց, միւսի քներակից արիւնը շռշռաց, երրորդը նոր մորթած հաւի նման, բերանը մի անգամ բաց արեց և կրկին փակեց՝ յաւիտեանս չը բանալու համար։

Մուրատի բազկի զօրութիւնն էր քրդերի արևը խաւարացնողը, նրա գաւազանի հարուածը մահաբեր էր։

Առաւել մահաբեր եղաւ Մուրատի հարուածը տասնաւոր քրդերի համար, երբ նա գաւազանը ձեռքից ձգեց և ոտքի տակ անշնչացած քրդերի մէկի սուրը ձեռքն առաւ։

Այժմ քրդերը չը կարողացան աւելի դիմադրել, Մուրատի հերոսական սխրագործութիւնը սիրտ տուեց շատ հայ երիտասարդների, նրանք գրոհ տուին, դուրս թափուեցին եկեղեցուց, տիրացան

սպանուած քրդերի սրերին և առաջներն ընկած՝ քրդերին կարգէ կարգ կոտորեցին, կոչճանեցին, ինչպէս որ քաջավարժ հնձուորը գերանդուի սուր հարուածով վախճան է տալիս հասած, սպիտակած ցորենի ցօղուններին։

Այլ ևս ճանապարհը բացուեց, եկեղեցու դրան անցքը լայնացաւ, կոտորուողը կոտորուեց, մնացողներից մինչև. տասը հզօրներ քրդի սրերից օգտուելով՝ կռուել սկսան, իսկ անզօրներն ու կանայք միջոց գտան ցաք ու ցրիւ փախչելու։

Բայց այս անհաւասար դրուԹիւնն երկար չը տևեց, մահն արհամարհող հերոսները իրար ետևից քրդերի սրերից և գնդակներից նահատակուեցին, երկնային պսակին արժանացան. մէջ տեղը մնաց Մուրատը, որ վիրաւոր առիւծի նման, մռնչիւնը երկինք բարձրացրած՝ ընկել էր որսորդների մէջ և ուժեղ թաթի մի մի հարուածով փշրտում էր իւր կուրիւններին աչքի առաջին սպանողներին։

—Վայ նրան, ով որ Մուրատի մի հատիկ մազին կը դիպչի, կրկնուեց շէյխի սպառնալիքը, բայց և ամօթ երկչոտ սօֆիներին, որոնք չեն կարողանում մի ծերունու ողջ ողջ բռնել և ինձ ներկայացնել։

Այս անգամ արշազան հրամանատարի յանդիմանուԹիւնը քաջավարժ որսորդի գնդակի նման շեշտուեց իւր նպատակին, յիսունի չափ կատաղի քրդեր վահանները խաղացնելով՝ շրջապատեցին Մուրատին և գետնից կտրեցին, բաւձրացրին։

Մինչև նրա ձեռքերը բռնելն և սուրը ձերքից խլելը՝ էլի մի քանիսի ուղեղը թափուեց։

Վերջապես առիւծը կաշկանդուած է, նրա մռնչիւնն այլևս սարսափ չի ազդում։ Մուրատի ձեռքերն ու աչքերը սինդ պրկեցին քրդերն ու բերին սուրը շեյխի առջևը զգուշութեամբ վայր դրին։

Ջալալադդինը հեծած էր Բարեձորոյ սուրը Աստուածածնին կոչուած վանքի վանահօր սպիտակ նժոյգը, յատուկ այն ձիու սիրոյն նա յարձակումն էր գործել վանքի վերայ և յափշտակել սրարշաւ երիվարը։

Այժմ նա իջաւ ձիուցն և աչքով արեց իւր աւազակապետը սօֆիին։

Նրա ակնարկը հասկացուեց. իսկոյն կանաչ խոտի վերայ փռուեց ոսկեկար գորգը։

Շեյխը կանգնեց գորգի վերայ, երեսը դէպի հարաւ դարձրեց, փոս ընկած աչքերը վեր բարձրացրեց, թաւամազ և խիտ յօնքերը ժողովեց, մռայլեց և մի քանի րոպէ սկսեց արաբական անկապ ու անհասկանալի բառեր շաղփաղփել. մէկ ծունկ էր չոքում շեյխը, երեսը գորգին դրած՝ գլխակոր անշարժ մնում էր, մէկ էլ վեր էր ելնում և մոլեռանդ շարժումներ անում։

Ջերմեռանդ քրդերը մոռացել էին իրանց յարձակմունքի նպատակը, պէտք է խոստովանած՝ որ նրանք բոլորովին չը գիտէին արաճների սլատճա-

ռը, Ջալալադդինի կամքն էր նրանց առաջնորդում։

Հայերը բոլորեքեան ցրուել էին, բայց ոչ մի քուրդ չէր ընկել նրանց ետևից, չէին անգամ ուշք դարձնում Մուրատի և ընկերների ձեռքով սպանուած և կիսամեռ իւրեանց նիզակակից եղբայրներին։ Բոլորեքեան սպասում էին Աստուծոյ մարգարէի վոխանորդ շէյխի երկնատուր պատգամներին։

Վերջապէս շէյխը ծածկեց քոլոզի (գլխարկ) վրայից կախընկած ծածանող մետաքսեայ թաշկինակն իւր երեսին, գլուխն երկինք բարձրացրած՝ երկու ձեռքերին հորիզոնական դիրք տալով մի քանի րոպէ անշարժ և լուռ մնաց կանգնած։

—Այո՛... օրհնեալ է քո անճառելի տնօրէնութիւնդ... հրամայիր, որ կատարէ քո անարժան ծառան... լսում էր երբեմն նրա բերանից։

—Աստուծոյ հետ է խօսում, շշնչում էին իրարու քրդերը։

—Այսպէս է հրամայում Ալլահը, առանց դիրքն ու դէմքը փոխելու՝ բարձր ձայնով խօսեց Ջալալադդինը. ես ընտրեցի իմ տունը, Պէյթամը պէտք է մշտնջենական շէյխութեան օջաղ լինի, իմ սիրելի ժողովրդի հոգևոր պետը Պէյթամից պէտք է իմ պատգամները նրանց հաղորդի։

—Ալլահը պատուիրում է, րոպէական ընդհատումից յետոյ շարունակեց շէյխը, մի առ ժամանակ դադարեցնել սրբազան և կրօնական պատերազմը, գեա-

վուրներին չը հալածել, մինչև որ Մուրատի տների սրբատաշ քարերը չը հանուին շարուածքից և այս եկեղեցու տեղը շէյխի պալատը և շէյխութեան օջաղը չը կանգնի։

Երկնալին զօրութեան բարեհաճտնօրէնութիւնն է, որ Մուրատի կարողութիւնը, նրա հօտերն ու անդեանները, նրա այգիներն ու արտերը, նրա արօտատեղիքն ու սեպհական գիւղն անցնի շէյխերի շէյխ Ջալալադդինին, նրա որդւոցն ու սերնդին ժառանգութիւն լինի։

Ալլահի ողորմածութիւնը թոյլ չի տալիս Մուրատի կեանքը բառնալ՝ մինչև՝ որ Ինքն իր մալաքների (հրեշտակ) ձեռքով իւր յանձնած աւանդը՝ Մուրատի հոգին յետ կը պահանջի, ջաննաթից (դրախտ) կը զրկի, ջհանդամի (դժոխք) թագաւորի իրաւանց ներքոյ կը դնի, որովհետև սա գեաւուր է, և իբրև գեաւուր զուրկ է ճշմարիտ հաւատից։

Բայց եթէ գեաւուրն իր անխելքութիւնը կանի, չի կամենալ իր յօժար կամքովը թողնել Պէյթամն ու քաշուել հեռանալ, Տէրը հրամայում է այդ ժամանակը անողոք գտնուել և Մուրատի սերունդը բնաջինջ անել. միաժամանակ Ալլահը պատուիրում է իմ սիրելի նիզակակիցներին ուշք չը դարձնել կիսամեռների վայնասունին, մօտենալ սեղանին և առանց նստելու; շների նման լափել, վերջացնել գեաւուրների ձեռքով պատրաստած կերակրները,

որովհետև գեաւուրի մատաղն արժան չէ ուղղափառ մատաղի պէս մարդանման վայելելու։

— Դէհ, գարձաւ Ջալալադդինը դէպի իւր զօրքը, հայի հացը քրդի փորը, կշտացէք, որ քաջութեամբ գործ կատարէք։

ԼԱ.

Խօսքերը խեղդուում էին ծերունու կոկորդում, ներքին հոգեկան վրդովմունքը չէր թոյլ տալիս թշուառին շարունակել իւր պատմութիւնը։ Այդ էր պատճառը, որ նա թինկնած իւր աջ արմունկին՝ մի երկար միջոց մտախոհութեան մէջ էր։

— Եթէ այսօր տրամադիր չես խօսելու, պատուական ծերունի՛, ես կարող եմ վաղը գալ. մնաս բարև, ասաց Անքանազեանն և կամեցաւ տեղից կանգնել։

— Ո՛չ, ինչ որ կարող ես այսօր անել, էգուցուան մի՛ ձգիլ, պապենական աւանդութիւնը մեզ խրատ է թողել։ Չեմ ուզում շատ մանրամասնութիւնների մէջ մտնել, դու ինքդ հասկացիր քաղցած գայլերի դրութիւնը, որոնց ձեռքը որսորդի գնդակից խոցուած մի որս է ընկել։

Մի ակնթարթում ամէն ինչ վերջացած էր։

— Պէյլթամի եկեղեցին Խիզան գաւառի հարուստ եկեղեցիներից մէկն էր, շարունակեց ծերը, սուրբ գիւտները բոլորը Մուրատի յանձնարարութիւնով յատկապէս Պօլսումն էին պատրաստուած, արծաթի

ոսկեզօծ խաչերը, *Հուլիհի* թեւից յերէւրած՝ կարնոյ ճարտարարուեստ ոսկերիչների գործն էին։

Ջալալադդինն ինքը յառաջ ընկաւ և իւր ետևից հրամայեց ներս մտնել իւր ամենամօտ աշակերտ Սօֆիներին։

—Ամէնից յառաջ դուրս տարէք այս տեղից վիրաւորուածներին և սպանուածներին, հրաման արձակեց շէյխը։

Երբ այս ամէնը կատարուեց, Ջալալադդինը հրամայեց ներս բերել Մուրատին։ Ձեռք ու ոտքը կապած՝ ծերունին վայր դրուեց տաճարի կեդրոնում։

—Մի վերջին անգամ տղօթք արա քո հինաճ եկեղեցու մէջ, Մուրատ, շատ մի՛ ցաւիլ տէրտէրիդ սպանուելու համար, նրա տեղը Աստուած քեզ նոր տէրտէր է ուղարկել. եթէ չես հաւատում՝ աչքովդ տես։

Ջալալադդինը առաւ սպանուած քահանայի վրայից հանած շուրջառը, ծածկեց իւր վերայ, սաղաւարտը գլուխը դրեց ու մօտեցաւ սուրբ խորհրդին։

Նրա հրամանով սօֆիներից ոմանք ժամաշուպիկ հագան, այլք բուրվառակիր դարձան, մի երկուքն էլ քշոցները շարժեցին։

Անիրաւ շէյխը ձեռքն առաւ սկիհն և իւր սօֆիների հետ ճիւաղական ձայներ հանելով՝ վերաբերումը ներկայացնելով՝ շուրջ արեց բեմի ետևից և սուրբ խորհուրդը թափեց սեղանի վերայ։

—Անհատատալի անցքեր ես պատմում, Ծերունի, ասաց Սաքանազեանը, վայրենի քուրդը հայի քահանայ ինչպէս կարող է ներկայացնել։

—Եթէ դու իմանայիր, որ այդ քուրդերը, նոյնիսկ Ջալալադինը շարունակ հայերի մէջ են իրանց կեանքն անցկացրել, շատ անգամ ոմանք լոկ հետաքրքրութեան համար, մխանները ջերմեռանդ սրտով ուխտադրութեան նպատակաւ՝ յաճախում են հայոց եկեղեցիները, ապա խօսքերիս ճշմարտութեան մասին կասկած չէիր տանիլ, պատասխանեց Ծերը։

—Եթէ այդպէս է, ներողութիւն եմ խընդրում, խօսքդ շարունակիր։

—Քրիստոնէական պաշտամունքը ծաղրելուց յետոյ՝ շէյխը հրամայեց կողոպտել եկեղեցու բոլոր անօթները և ապա քանդել Աստուծոյ տաճարը։

Չըքաշեց կէս ժամ, հսկայական շէնքը խորտակուեցաւ, գիւղումը բահ, փայտատ, բրիչ չըմնաց՝ բոլորը կրուեց այնտեղ. քարերից շատերը նիզակների ծայրերով էին տեղահան լինում։

Եւ այս ամենայն աղէտներին ականատես էր Մուրատը։ Նա գետնի վրայ վայր ընկած՝ լուիկ արտասուքները էր թափում։

—Հիմա, քաջերս, ձայն տուեց շէյխը, ժամանակ է գիւղը գեավուրներից մաքրել սրի յառաջ արէք վերջին հային և Պէյթամից արտաքսեցէք, հակառակողին շների բաժին արէք։

Զուր նեղուԹիւն էր տալիս այս հրամանով Ջալալադդինն իւր նիզակակիցներին, ոչ միայն ՊէյԹամեցիք էին ԹողեԼ հեռացել, շրջակայ գիւղերումն ևս հայ չէր մնացել։ Ամէնքը Թափած իրանց ունեցած չունեցածը՝ ընտանիքն յառաջ արած՝ տարագիր էին ընկել։

Մի տուն միայն փակ էր ՊէյԹամուամը։

Շէյխի հրամանով բոլոր քրդերը հաւաքուեցին այս տան առաջը. այստեղ բերուեց և տանտէրը։

Մուրատի տունն էր այն, որի դռներն ամուր կողպած էին։

Զուր անցկացաւ Ջալալադդինի սպառնալիքները. Մուրատն ինքն էլ չգիտէր իւր ընտանիքի տեղը և դրան փակուելու պատճառը։

—Ջարդել դռները, հրամայեց Ջալալադդինը։

Հաստ տախտակները չդիմացան աւազակների կործանիչ ուժին. դուռը ճռռաց և շրջուեց։

—Տունչ կենդանի չըմնայ մէջը, գոչեց շէյխը, գեավուրի արիւնով լուանալ գեավուրի պղծուԹիւնը։

Մուրատի աղիքները փորումը գալարեցին, նա ընկճուեց և իրան կորցրեց, երբ ներսից լսուեց կանանց և մանուկների ճիչն ու սրտաճմլիկ աղաղակը։

Մուրատի աւագ որդին՝ անհեռատես և անձնավստահ Շահբազն իւր սրի և քաջուԹեան վերայ ապահով՝ չիմարուԹիւն էր ունեցել փակուել տան ներսը և պաշտպանողական դիրք բռնել։

Շահբազն իւր հօրեղբայրների, եղբայրների և

հօրեղբօր որդոց հետ միայն էր մնացել, իւրեանց հացով ապրող մերձաւորները, բարեկամները և ծառաները ամենքեան թողել հեռացել էին։

Տան քաջաբազուկ և կորովի արական սեռի հետ միասին՝ Շահբազը բաւական ժամանակ ճակատ առ ճակատ սուր սրի էր տալիս քրդերի հետ։ Միայնակ ինքը մօտ քսան քուրդ սպաննեց. մի քանի րոպէ մինչև անգամ յետ մղեց թշնամիներին, բայց զուր ջանք և անօգուտ վաստակ, վերջ ի վերջոյ՝ իւր անխոհեմութեամբը պատճառ դարձաւ իւրեանց բազմաքանակ գերդաստանի չքքանալուն։

Կենդանի մնացին միայն երկու հոգի՝ ինքը Շահբազն և իւր ամենակրտսեր վերջին տաշտակբերանք երեք ամսական դստրիկը։

Ամէնքն իւր աչքի առաջին ընկան։

Շահբազի քաջութիւնը տեսնելով՝ Ջալալադդինը հրամայեց ափսոսալ կտրիճ ազամարդին և հօր նման կենդանի բռնել։

Բռնուել էր Շահբազը թիկունքի կողմից. քրդերը երբ տեսնում են, որ դժուար է լինում հերոսին ճանգը ձգել, տան արևմտեան պատը քանդում են, ներս են թափուում և սրահի նեղ անցքումն ետևի կողմից երկու կուռը պրկում են պարանով։ Սուրը մնում է Շահբազի ձեռքումը բայց ձեռքերը չեն շարժուում, որ խաղացնէր. մի վերջին ոյժ է գործ դնում նա և սուրը շպրտում է

իւր ուսագլխովը. թափն ի գուր չէ կորչում, ջուհարդար պողովատիկն երկու կէս է անում Շահբազի ձեռքը կապող քրդի գանգը։

Այժմ ևս Շահբազը հանդարտ չէ մնում, գուչում, ճչում էր նա, հայհոյում, անիծում էր Ջալալադինին, սպառնում և հրդռւում էր, որ եթէ, երբ և իցէ, ազատուի կապանքից, իւր կերածը քրդերի մխս է լինելու, մինչև վերջին շունչը փչելը՝ խմածը քրդի արիւն է լինելու և ծամած ծամոնը քրդի սիրտ։

Մեծախօսութիւն և պարծենկոտութիւն չէին Շահբազի ասածները. նա իւր ուխտը կրկատարէր, եթէ հօր հրամանը չստիպէր նրան լռել և խօսքը յետս կոչել։

Արդէն 75-ի չափ ընտանիք քրդած թափած էին մեծ տան մէջ, արդէն Մուրատն և իւր որդին շէյխի առաջին կապուած ընկած էին, ամէն ինչ վերջացած էր համարուում, երբ յանկարծ ամէնքի ուշքը դէպի տուն հրաւիրեց մի մանկական լացաձայն։

Ջալալադինը հրամայեց՝ իւր թիկնապահներին լալկան մանուկին անվնաս իրան հասցնել։ Մի կայտառ, գեղատեսիլ հրեշտակ օրօրոցում ամրացրած՝ թափել էր իւր քաղցր քունը և սպասողական սիրունիկ աչիկներով պտռում էր մէկին, որ գայ և իւր քաղցը լցնի։

Վայրենի գազանները կուշտ ժամանակ կարող

են մի րոպէ մոռանալ էրանց գազանային բնատուր յատկութիւնը։ Նոյնը պատահեց և Ջալալադդինին։

Ւուրդ ցեղապետներից մէկը՝ ձանձրացած գործի ձգձգուելուց՝ մօտեցաւ և առաջարկում էր շէյխին վերջ տալ գեավուրների կեանքին և աւերը շարունակել, բայց Ջալալադդինը դիմադրեց։

—Ասլանս է պատուիրում Ալլահը, ասաց Ջալալադդինը, ես փրկում եմ Մուրատի, իւր որդու և այս անմեղ աղջկայ կեանքը, եթէ իսկոյն սրանք կառնեն երեխային և կրհեռանան ոչ միայն Պէլթամից, այլ և Իզան դաւառից, ի հակառակ դէպքս՝ սրանք էլ թող մեռնին մէանների հետ։

—Աւաւել լաւ է մեզ էլ մեր սիրելիներին ընկերացնես, ուզում էր ասել Շահբազը, բայց հայրը խօսքը նրա բերանում թերի թողեց, իւր և որդու կողմից երդմամբ ուխտեց բարբարոսին՝ նոյն րոպէին թողնել հեռանալ։

Կապանքները քակուեցին, հայր ու որդի առան իւրեանց տան վերջին շառաւիղը և յաւիտեան թողին Պէլթամը։

—Եւ ո՞ւր գնացին, հարցրեց ծերին Ասքանազեանը։

—Մուրատը ոտքով Պօլիս հասաւ՝ արդարութիւն որոնելու, և չիմացուեց, թէ ո՛ւր մնաց, Շահբազն առաջ իւր անդին գանձը՝ լեռներն ընկաւ։

Մայր չէր Շահբազը, բայց մօր պաշտօն էր

կատարում. մայրական սակնքներին փոխարինում էին լեռների արօտական հօտերը. ամէն մի հովիւ ուրախութեամբ այծի կամ ոչխարի պտուկը դնում էր երեխայի բերանը։

Շատ թափառեց Շահբազը, հայրենիքի սերը գրաւում էր նրան դէպի Խիզան, բայց նա չէր ուզում ուխտադրուժ գտնուել, նա բաւականանում էր Խիզանի մերձակայ գաւառներից իւր սրտի պատուքը լցնել։ Խեղճ մարդ, քնչ էր մնացել Խիզանումը, որ ընչով մխիթարուէր։

Անիրաւ Ջալալադդինը միանգամ Խիզանը կիսաքանդ էր արել, այժմ էլ Պէլթամում իւր բոյնը հաստատելուց յետոյ՝ կրկնակի ոտնատակ տուեց և աւերեց բոլոր Խիզանը. հայաբնակութեան մեծագոյն մասը սրի քաշեց, շատերին փախցրեց և պահեց միայն նրանց, որոնք կարող էին քրդերին իրրև գործաւոր մշակներ պիտանի լինել։ Եթէ դու շրջել ես Խիզանի թէկուզ մի քանի գիւղերը, դու վկայ ես ուրեմն Խիզանի ներկայ դրութեանը։

15 տարի յառաջ Խիզանի ուխտաւունի չափ գիւղում կար մօտաւորապէս 2470 տուն հայ, իսկ այսօր հազիւ մնում են 550—600 տուն. այն օրուայ հայերը բոլորը հարուստ էին, ամէնքը լի էին, իսկ այսօրուայ եղածներից տասներորդ մասն ուտելու հաց չունի. 15 տարի յառաջ շատ քիչ գիւղ կար, որ իւր սեպհական եկեղեցին չունենար, այսօր ընդամէնն ամբողջ Խիզանումը կայ ոչ աւելի քան 60

եկեղեցի։ Ա՛յ, թէ ինչ էր մի օր Խզանը և ինչ այսօր։

—Ա.հա, հետաքրքիր երիտասարդ, պատմեցի քեզ համառօտիւ Խզան գաւառի և Պէլթամցի Մուրատի գլխով անցածները, ես լցրի քո ցանկութիւնդ, կարող ես գոհ լինել այս չափով։

Գնաս բարև, տէր ընդքեզ։

—Բայց ներիր ինձ, եթէ ասեմ, որ գլխաւոր դէպքը թերի է քո պատմածից, դու մոռացար, կամ չուզեցիր յայտնել, թէ ո՞ւր մնաց Շահբազն և ո՞ւր իւր ծծկեր աղջիկը, հարցրեց Ռուբէնը։

—Բաւականացիր այսքանով, ես յոգնեցայ։

—Ես կսպասեմ մինչև հանգստանալդ։

—Տեսնում եմ, որ ձեռք չես քաշելու. ուրեմն լսիր։

—Շահբազն եթէ ուխտադրուժ չէր, ուխտապահ էլ չըմնաց. նա մի քանի ժամանակ իւր դրսոտեր հետ Ալիֆ բէյլին ծառայում էր իբրև հովիւ. վիշտը նրան շատ շուտ ճկեց, անժամանակ ծերացաւ և ոյժը պակասեց։ Այսօր նա տեսքով 70 տարեկանի է նմանում, թէև 56 գարուն միայն տեսել է։ Այդ դրութեան մէջ Շահբազը մի օր թողեց Ալիֆ բէյլի տունն և անհետացաւ։

Շահբազի սիրտը չըհամբերեց, նա եկաւ Խզան գաւառը, սահմանագլխի քրդաբնակ գիւղերից մէկում նա գտաւ մի տուն հայ։

Այդ հայն իրանց նախկին ծառաներից մէկն

էր, որ հիւրասիրեց իւր տիրոջ տան վերջին սե-
րընդին։

Շահբազն իւր չորս տարեկան Լուսիկ աղջկա-
նը թողեց հալի տանն ու ինքը՝ գիւղից ոչ հեռու՝
մի քարաժայռի մէջ՝ իրան բնակութիւն հաստատեց։
Իւրեանց բազմաթիւ չորքոտանիներից մնացել է
իրան մի հատիկ հաւատարիմ շուն, որ երեք ամիս
որոնելուց յետոյ՝ գտել է իւր տիրոջն և այնօրից
էլ չի բաժանուել նրանից։

Շունն և իւր տէրը կերակրուում են դատերը
խնամք տանող հալի հացով։ Չորս տարի յառաջ
ուրիշներն էին նրանց հացով կերակրուում։

Ուժահատ ծերունին հացն ստանում է իւր
հարազատ զաւակի ձեռքից։

Ապաբաղդ Շահբազն իւր մեռնելու վերայ չէ
մտածում, նրան նեղում է իւր աչքի լոյս Լուսիկի
ապագայ վիճակը, և թէպէտ ինքը ցանկանում է,
որ իւր աչքերը փակողն իւր զաւակը լինի, բայց
հայրը չի կամենում, որ իւր մահից յետոյ՝ իւր որբը
Խիզանումը մնայ. նա ուզում է իւր աղջկանն ու-
ղարկել իւր անդրանիկ քրոջ մօտ, և չգիտէ՝ թէ
ո՛ւմ ձեռքով տեղ հասցնի։

—Ո՛վ է Շաբազի քոյրն և ո՛ւր է բնակուում,
հարցրեց Ռուբէնը։

Մուրատը բնական Պէյլթամցի չէր, նա հեռա-
ւոր տեղերից էր եկել Պէյլթամ. նրա աւագ դուս-
տրը Մարիամը Բ. քաղաքի մի հարուստ հալի՝ Սեղբոս

Դաւազեանի կինն է, Շահբազն ուզում է...

—Ո՞նչ... ինչ ասացիր... ընդհատեց կակազելով Ռուբէնը շփոթուած, դու ասում ես, որ Շահբազը կենդանի է... աղաչում եմ, ծերունի, ասա, ուր է նա, ուր է իմ քեռին, իմ մօր եղբայրը, որ ես շտապեմ դրկել նրան: Ես մօրից շատ անգամ եմ լսել Մուրատ պապիս անունը, բայց...

—Ի՞նչ ասացիր... ինչ... շնչարգել լինելով արտասանեց ծերը, ասում ես՝ որ դու Ղունկիանո՞ն ես, իմ քրոջ որդին:

—Իսկ դու իմ մօրեղբայրս, իմ քեռի Շահբա՞զը...

Երկուսի ձայնն էլ կտրուեց, ծերն ու երիտասարդը փարեցին միմեանց պարանոցով և հեկեկում էին:

Դուցէ երկար տևէր ինքնամոռացութիւնը, եթէ շան հաչոցը նրանց չընդհատեցնէր:

—Խելքի արի, Ռուբէն, դու կարող ես ծերունու մահուան պատճառը դառնալ, չես տեսնում, որ դրա ոյժը սպառուում է:

Այս խօսքերն ասողը Գարեգին Մելքիսեդեկեանն էր: Շահբազի պատմութեան սկզբնաւորութեան ժամանակ՝ Գարեգինն նստած էր այրի դրանը ընկած մեծ քարափի ետևը և գաղտնի վկայ էր քեռու և քեռորդու խօսակցութեանը:

Դէպքը չըբերեց Գարեգինին այս կողմը:

Նա մտաւ քրդի գիւղն և միակ հալից հարց-

ըեց իւր ընկերի մասին։

Առաջին անգամից հայը ճանաչեց անծանօթին. նա սպասում էր Գարեգնի գալստեանը։ Ռուբէնը նրան պատմել էր ընկերի մասին։

Հայը ցոյց տուեց Մելքիսեդեկեանին մերձակայ ձորի ճանապարհը, ուր կարող էր նա գտնել ընկերին։

Բարակ շաւիղը առաջնորդեց Գարեգնին և կանգնացրեց այրի մուտքի առաջին։

Մենք մոռացանք ասել, որ երբ Շահբազը նոր սկսել էր իւր պատմութիւնը՝ շունը պարկած տեղից գլուխը կրկին բարձրացրեց և հաչեց։

Շահբազը կարծեց, որ շունն իւր հրամանը մոռացաւ. այդ պատճառաւ նա բարկացաւ իւր հաւատարիմ ընկերի վերայ և փայտով զարկեց։

Ծերն անիրաւութիւն գործեց, այս անգամ շունը զգացել էր մի նոր անձնաւորութեան մօտենալը և ուզում էր իմաց տալ իւր տէրոջը, բայց նա լսել անգամ չուզեց։

Շունն ստիպուեց լռել։

Նոր անձնաւորութիւնը. Գարեգինն էր։

Շուտ արթնացաւ Ռուբէնը, բայց այնքան շուտ ուշքի չեկաւ Շահբազը։ Խեղճն աչքերն ածելով՝ մոլորուել՝ մնացել էր։

—Վերջ տուր յուզմունքիդ, բարի ծերունի՛, մխիթարեց Գարեգինը, զարմանալու ոչինչ չկայ, Աստուծոյ ողորմածութիւնը հանդիպեցրեց քեզ քո

քրոջ որդուն, սա՝ ինքը խնամք կըտանի իւր քեռու աղջկանը, և ես սրա սիրելի ընկերը՝ իմ կողմից խոստանում եմ հարազատ քրոջս պէս պաշտպանել քո զաւակին։

Շահբազը ոչինչ չըխօսեց. նա աչքերն երկինք ամբարձած՝ աղօթք էր մրմնջում։

—Պապի՛, պապի՛, ահա և ես։

Այս խօսքերով տուն ընկաւ քարայրը մեզ ծանօթ փոքրիկ Լուսիկը. երեխան, ի հարկէ, չըգիտէը, թէ ո՛վ էր իրան խնամողը. Շահբազի պատուէրով՝ նա իւր հօրը պապի էր կանչում, մի կոչում՝ որ ծերին յատուկ է։

—Ես վաղուց ուզում էի քո տեղը իմանալ, որ միշտ մօտդ լինեմ, բայց ինձ արգելում էին տանից հեռանալ. տեղդ էլ չըգիտէի. ես օր էլ չէի կարող քեզ գտնել, եթէ հայրիկը չըպատմէր այս էֆէնդուն քո տեղը. ես թագուն սրա քամակից ընկած՝ գալիս էի, թոթովեց աղջիկը։

—Իսկ իմ հոգին դուրս եկաւ քեզ որոնելով, վերջը քրդերից իմացայ քո այս կողմը գալն և ետևիցդ վազեցի, բայց չըհասայ, այրը մտնելով՝ երեխայի խօսքերին պատասխանեց Շահբազին և իւր աղջկանը կերակրող հայը, որին Լուսիկը հայրիկ կոչում տուեց։

—Աստուած է իմ բոլոր բարեկամներին միասին ժողովել, վերջապէս խօսեց վաղաթառամ ծերունին։ Դու, պատուական բարեկա՛մ, դարձաւ նա

դէպի իրեն և աղջկանը խնամարկող վաղեմի ծառան, ընդունիր իմ առ ի սրտէ շնորհակալիքը. մեր պահապացրածը թող Աստուած ինքն աւելացնէ։ Դու., իմ քրոջ որդի, իմ արեւնակից Ղունկիանոս, տալիս եմ քեզ քո մօրեղբօր զաւակը՝ իւր հօրաքրոջ մայրական խնամքին յանձնելու, իսկ դու՝ պատուական անձանօթ երիտասարդ, իմ քրոջ որդու ընկերը, դէմքիդ և կրած զէնքերիդ երևում է, որ օտարական և քաջասիրտ մէկն ես, խընդրում եմ քեզ՝ կատարես յօժարակամ արած խոստումդ։

—Քանի գլուխս պարանոցիս վերայ հաստատ է, քո աղջկանը վտանգ չի հասնիլ, պատասխանեց Մելքիսեդեկեանը։

—Մօտեցէք, բոլորիդ էլ համբուրեմ, սիրելիք, ասաց Շահբազը և նախ՝ գիրկն առաւ Լուսիկին, որի գլխին օրհնութեան հետ կաթ կաթ կաթում էին հօր արտասունքի կաթիլները. յետոյ նա համբոյր տուեց իւր ասպանջական նախկին ծառային, ապա կրծքին սեղմեց Գարեգնին, վերջը փաթաթուեց Ռուբէնին և թուլացաւ մնաց նրա գրկումը։

—Մի վերջին խօսք ևս, ուշքի գալով՝ մեծ դժուարութեամբ դարձաւ Շահբազը Գարեգնին. երբ այս այրի մէջ հողին կըյանձնէք իմ ցամաքած մարմինս, առանց յետաձգութեան թողէք, հեռացէք Խիզան գաւառից, թող Ջալալադինի շնչած օդը չըծծէ իմ զաւակս։

Ծերունին այլևս չլխօսեց. նա յետ ընկաւ Ռուբէնի գրկից, թիկնեց քարաժայռին և աչքերը փակեց՝ յաւիտեանս չբանալու նպատակով. նա այլ ևս չկար. նա մեռած էր։

Շահբազի հրամանը ճշտութեամբ կատարուեց։

Նա ամփոփուեց քարայրի մէջ։

Բոլորեքեան հեռացան այրից. չուզեցաւ բաժանուել միայն հաւատարիմ գամփռը. նա գլուխը դրեց տիրոջ գերեզմանաթմբին և մնաց։

Միւս օրը Ռուբէնը ոտքով ճանապարհ ընկաւ դէպի Սղերդ, իսկ Մելքիսեդեկեանը ձին հեծաւ և կրկին վերադարձաւ Վարագ։

Գարեգինը միայն չէր, եափնջու տակին նա գաւակին ունէր մի փոքրիկ աղջիկ։ Լուսիկն էր դա։

Մելքիսեդեկեանը տարաւ աղջկանն և Խրիմեան Հայրիկի խնամքին յանձնեց ու ինքը գնաց դէպի Սղերդ։

Հայրիկն երեխային ուղարկեց Վան՝ Ղրմցոնց տունը։ Խրիմեանի հայրական օջաղն էր Լուսիկին հիւրասիրողը։

Աղջիկը մնալու էր այնտեղ՝ մինչև որ իւր հօրաքրոջ որդի Ղուկիանոսը, կամ Ռուբէն Աստանազեանը գային և իրան վերցնէին։

ԼԲ

Օգերդի պանդոկներից մէկի մէջ երեք օր է իջևանած է մի երիտասարդ և դեռ երեք անգամ ոտքը հազիւ է դուրս դրել իւր սենեկից. օրն ի բուն դռնփակ նստած է ։ նա յատակին փռուած հասարակ կապերտի վերայ և շարունակ գրում է։

Երիտասարդը հանգիստ չէր. ինչպէս երևում է, նրա գրածները վրդովեցուցիչ բնաւորութիւն ունէին։ Այս կարելի էր նկատել գրելու ժամանակ նրա դէմքի արտայայտութիւնից և բոլոր մարմնի շարժումներից։

Երբեմն սարսափահար էր գալիս օտարականը, վախտ աչքերից բարկութեան և կատաղութեան կրակները էր դուրս ցայտում, մի ժամանակ գրիչն էր շպրտում և կրկին ձեռքն առնում, մեկ արտասուում էր, մեկ յուսահատ քրքիչներ էր արձակում և այլն։ Այսպիսի բազմատեսակ շարժումներ յերիւրելով՝ երիտասարդը գրում էր։

Նա գրում էր լուսաբացից մինչև խորին կէս գիշեր. օրուան 24 ժամից դժուար թէ հինգ կամ վեցը նուիրում էր իւր խոնջացած անդամների հանգստութեանը։ Եւ ինչ հանգիստ կարելի է կոչել այն քունը, որն անդադար ընդհատուում է անհանգիստ երազներից. անդադար կողքից կողք էր ընկնում նա, անդադար խռմփացնում էր, անդադար

խօսում էր և 40 աստիճան տաքութեան մէջ տընքացող հիւանդի նման անդադար զառանցում էր։

Երրորդ օրը վերջապէս երիտասարդը աւարտ տուեց իւր աշխատութեանը. մի հաստափոր տետրակ լցրեց նրա երկասիրած գործը։

—Անշուշտ այս երկու օրս կերևի իմ սիրելի ընկերս, քանի նա չէ եկել, կարդամ՝ տեսնեմ ինչ դուրս եկաւ, ասաց անճանօթին և ձեռքն առաւ իւր գործը։

Ոչ գրողն էր մեզ համար անճանօթ և ոչ իւր լիշած ընկերը։

Եթէ ասենք, որ Սղերդի պանդոկի սենեկում փակուած ինքնայօժար բանտարկեալը Ռուբէն Աստանազեանն էր, ընկերի մասին մտատանջութեան մէջ չենք ընկնիլ, ինքներս կասենք՝ որ Գարեգին Մելքիսեդեկեանի մասին էր խօսքը։

Վերջացրել էր Սղերդի գաւառում Ռուբէնն իւր ճանապարհորդութիւնը, և կարգի էր դնում իւր լիշատակարանը։

Ժամադրեալ հանդիպատեղին Սղերդն էր նշանակած երկու ընկերների համար։

Մենք հնարաւորութիւն չունինք ունկնդիր լինել Ռուբէնի կազմած ամբողջ լիշատակարանին. մենք կը լսենք միայն այնքանը, ինչ որ նա բարեհաճում էր բարձրաձայն կարդալ։ Շատ մասը կամ առանց կարդալու թերթում էր և կամ մտքումն էր կարդում։

...Երեկոյ էր, երբ ես մտայ քարի տակի գիւղը և հարցրի տէրտէրի տունը, այսպէս սկըսեց Ռուբէնն իւր ընթերցումը, քահանան ինձ սիրով ընդունեց։ Տէրտէրի հարսը ջուր բերեց և ոտքերս լուաց։ Քահանայի սեղանը ճոխ էր, երեւում էր, որ ինքը հարուստ մարդ էր։

Տէրտէրի խօսակցութիւնից ես հասկացայ, որ գիւղն ապահով վիճակի մէջ էր. քահանայի իւր շնորհքն էր այդ։ Նա մի կրթուած և հասկացող միջահասակ անձնաւորութիւն էր։ Դիպուածով տէր Մարտիրոսն իւր կրթութիւնն ստացել էր Կ. Պօլսի սուրբ Փրկչեան գպրոցում։ Վերադառնալով հայրենիք և քահանայանալով՝ տէր Մարտիրոսը կարողացել էր իւր ժողովրդին հանել տգիտութեան խաւարից և ներշնչել նրանց մէջ ինքնաճանաչութիւն։

Մինչև քահանայի գալը՝ այս գիւղը ոչնչով չի զանազանուել տաճկահպատակ միւս գիւղերից, իսկ տէր Մարտիրոսի օրով՝ շատ չի քաշել, աչքի է ընկել իւր տնտեսական ապահովութիւնովն և ժողովրդի գիտակցութիւնով։

Սիրտս լցուեց ուրախութիւնով երբ միւս առաւօտը քահանայի հետ ժամ գնացի. եկեղեցու դասը լիքն էր ընթերցող մանուկ սերնդով, իսկ ժողովրդի տեղերը բռնած էին ժամաւորները։

Ժամերգութիւնից յետոյ՝ քահանան աւուր պատշաճի մի ոգևորիչ քարոզ խօսեց. քարոզը կարճ էր

և աղղուս։ Թէև ամառն էր, ուստիից ազատ օրեր էին, բայց այդ օրն եկեղեցու բակում գտնուած դպրոց կոչուած սենեակը լցուած էր աշակերտներով, քահանան նրանց ժողովել էր ինձ ցոյց տալու։

Համառօտ էր վեր ի վերոյ արած հարցաքննութիւնը. բայց այդ չափովն էլ ես կարողացայ կշռել քահանայի գործ դրած ջանքն և կատարած յառաջադիմութիւնը։

Թուրք իշխանութիւնն և քուրդ ցեղապետները գիւղիս հայերի հետ բարեկամական յարաբերութեան մէջ էին. ոչ բռնակալութիւն կար այստեղ և ոչ աւելորդ հարկապահանջութիւն, այսինքն այն՝ ինչ տեսել էի ուրիշ գիւղերում։ Այս նրանից էր, որ տաճկական օրէնքների գլխաւոր կէտերը քահանայի շնորհիւ գիւղացիներին աւելի էր պարզուած՝ քան թէ նոյն իսկ օրինապահներին։

Ընդհանրապէս այս գիւղումը թագաւորում էր կարգ ու կանոն և տիրում էր մաքրութիւն, սէր և վիճակի ապահովութիւն։

Այս գիւղում ես երկու օրից աւելի չը մնացի. ես գտայ, որ ինձ անելու ոչինչ չը կար այնտեղ։

Ես դոհ դուրս գնացի Քարի տակի գիւղից։

Այս կտորը կարդալուց յետոյ՝ Ռուբէնը շրջեց մի քանի թերթ և սկսեց հետևեալը։

.... Առաւօտ է, շատ բարեհամբոյր և գով առաւօտ, ես դուրս եմ եկել մի ճնշուած և հարբս-

տահարուած գիւղից և ուզում եմ իմ վերայ ազդած վատ տպաւորութիւնը փարատել Ձորահովտում եղած մեծ գիւղում։

Գիւղի շրջակայքը խիստ բանաստեղծական են, Ձորակում վազում է դիմացի լեռներից իջած կարկաչասահ գետակը և տարածուում է առաջս բացուած ընդարձակ դաշտի վերայ, տերևալից ծառերը՝ փռած իւրեանց հովանին գետի երկայնութեամբ՝ հրաւիրել են քաղցրախօս թռչնիկներին օդը լցնել իրանց հազարերանգ երգասացութիւնով։

Գիւղը նստած լեռնաթմբի կրծքին՝ նմանում է մի թագուհու, որ պճնազարդուած զբօսանք է դուրս եկել իւր նաժշտների հետ։

Մի քանի րոպէ ինքս ինձ մոռացել եմ և միայն բնութեան սքանչելիքներովն եմ զմայլուել։

Յանկարծ հետաքրքրութիւնս շարժեց գիւղի վերի կողմում տուած մի հատիկ վրանը։

Սկզբումն ես կարծեցի, թէ գիւղի հարուստներից մէկի ոչխարի փարախն է այն, մտադրուեցի գնացքս դէպի այն կողմն ուղղել, բայց վրանի շրջակայքում աչքիս ընկած մարդիկը ոտքերս կապեցին։

Նրանք մի քանի տաճկի *զաբթիաներ* (ոստիկան) էին՝ կեռ սուրը կողերիցը կախ, որոնք իրանց պահում էին շատ ծանր և խոհեմ։

Հեշտութեամբ կարելի էր գլխի ընկնել, որ վրանի մէջ կար մէկ ուրիշը՝ աւելի բարձր աստի-

ճանով, որի ներկայութիւնը զսպել է վայրագ մարդկանց կատաղութիւնը։

Ես շտապեցի փախչել անախորժ հանդիպմունքից։ Ինձանից ոչ հեռու մի կիսախարխուլ մարագի դուռ բաց էր. այնտեղ մտայ ես և մութն անկիւնում կուչ եկայ։

Շատ չը քաշեց, զգացի, որ արածս անխոհեմութիւն էր, բայց եղածն եղած էր, պինդ նստելու էր այնտեղ, փախչելն աւելի վտանգաւոր էր։

Ստիպուեցի մթնումը նսաել և անկոչ վկայ լինել կատարուած սրտամորմոք տեսարանին։

Մի փալասի վերայ վրանի մէջ փռուած է կիսամաշ մահիճ. նորա վերայ թինկնած է տաճիկ հարկահանը և բաց է թողնում նարգիլէից ծխրանի ծուխը. իշխանաւորը փքուն և գոռոզ կերպարանք է առել, նրա դաժան երեսի վերայ անհամբերը սպասողականութիւն է երևում։

—Ի՞նչ եղաւ գեաւուրը, գլուխը մի կողմը թեքելով՝ խրոխտում է իւր սպասաւորի վերայ տաճիկ մեծաւորը։

—Էֆէնդիմ, ռէյսի հետ երեք հոգի նրան որոնում են և չեն գտնում, ամբողջ գիւղը տուն տուն մտել, դուրս են եկել, իսկ նա չկայ՝ որ չկայ, համեստութիւնով պատասխանեց ստորին զաբթիէն իւր իշխանաւորին։

—Փըֆըֆըհ... մէկ ուրիշին էլ թռցրու, բարկացաւ էֆէնդին։

—Ահա գալիս է ռէյսը, բայց դարձեալ միայն, ձնչաց սպասաւորը։

Արդարև, կորագլուխ, երկու գաբթիայի առաջը ընկած՝ թոյլ ոտքերով քարշ է գալիս, քան թէ յառաջում է մի յաղթանդամ հայ և շատ հեռուից երկրպագում է տաճիկ հարկահանին։

—Կրկէն միայն, գոչեց ամպրոպային ահարկու որոտումով տաճիկը։

—Էֆէնդիմ, չըկան գիւղումը ոչ հայրն և ոչ աղջիկը, ինչպէս խոնարհաբար յայտարարեցի, երկու օր է՝ ուրիշ գիւղ են գնացել։

—Ջուբմ (մահակ), գոչեց հարկահանը՝ դէմքը կիսաթեք դէպի իր մարդիկը։

Ես նկատած չէի, վրանի ետևը մի մեծ տրցակ մահակներ կտած՝ պատրաստ դրուած էին։

—Զարկեցէք ոտքերին, հրամայեց թուրքը։

Երկու գաբթիէ մի վայրկենում գետինը գլորեցին լեռնաչափ ամբարտակին և տրեխները կտրատեցին։

—Զարկում են և ինչպէս. աչք չես թարթում՝ մահակների կապերը փշրտուում, գետնին կիտուում են. արիւնը դեռ կաթիլներով՝ ապա առուի նման շաղուում է։ Ռէյսը գոռում և գթութիւն է հայցում, իսկ բռնակալն անշարժ դիտում է և լուռ է։

—Էֆէնդիմ, ահա մեր միւս ընկերները բերում են նրան, մատով դէպի գիւղը ցոյց տուեց մի գաբթիէ։

—Հերիք է, սպասեցէք, եթէ գիւղումն եղած լինի, ես ուէյսի սև օրը վրայ կը բերեմ, հրամայեց Հարկահանը և ծեծը դադարացրեց։ Ուէյսը ձգուել է խոտի վրայ և չի կարողանում վեր ելնել. նա հեկեկում է, իսկ ամենքի աչքերը դէպի գիւղի կողմն են դարձած։

Երկու զաբթիէ՝ բռնած մի մանկամարդ աղջկայ թևերից՝ բարձրացրել են և բերում են։ Աղջկայ ոտքերն երբեմն բոլորովին օդի մէջ ճօճում են, որովհետև գլուխը թոյլ խոնարհած է և աջ ու ձախ տատանում է, և եթէ նրա մունջ հեկեկանքից երբեմնապէս կցկտուր շնչառութիւն չլսուէը, համարձակ կարելի էր ասել, թէ աղջիկը մեռած է։

Բերող զաբթիաները ժամանակ առ ժամանակ գլխները թափ են տալիս և հայհոյանքներ տեղում իրանց ետևից գոռալով հետևող կնոջը, որ ուշադրութիւն չարած թուրքերի սպառնալիքներին՝ աշխատում է խլել յափշտակողների ճիրաններից իր զաւակին։

—Հասէք, բռնեցէք անպիտան կնոջը, հրաման տուեց Հարկահանն իւր ծառաներին։

Զաբթիաները վարժուած շների ճարպիկութեամբ յարձակուեցին և բռնեցին թշուառ մօրը։

Խեղճ կինն, շատ չարչարուեց, շատ աշխատեց, բայց մինդամ միայն յաջողուեց դուրս պրծնել իրան կապողների ճանգերից. նրա ազատութիւնը շատ կարճատև եղաւ, երրորդ զաբթիէն վեր թռցրեց

գետնից ձիու երասանակի պարանը և գրկեց ու կապեց ողորմելուն մերձակայ ծառի բնիցը։

Մինչ այս, մինչ այն, զաբթիանները մօտ բերին կիսամեռ օրիորդին։

Սպասեցէք, հրամայեց իշխանաւորն և տեղիցը վերկացաւ, մօտեցաւ աղջկանն ու երկու ձեռքով այտերից բռնեց, գլուխը բարձրացրեց ու երկար ժամանակ վաւաշոտ կրքով նայում էր նրա գունատ դէմքին։

Ոչ գունատութիւնն և ոչ անագորոյն զաբթիանների ազդած երկիւղը չէին կարողացել խլել չքնաղ աղջկայ երեսից աննման գեղեցկութիւնը, որ բնութիւնից հազարաւորների մէջից մէկին հազիւ է պարգեւուում։ Քրքմային դեղնութիւնը, կարծես, նորա համար էր սփռուել օրիորդի նուրբ ու բարակ մորթի վերայ, որ չափաւորէ բնատուր վարդադոյն կարմրութիւնը և արևի ու անձրևի տակ մեծացած ռամիկ գիւղացի աղջկանից վերաստեղծէ քաղաքակիրթ աշխարհների սալոններում շորորող մի դիցուհի։ Թող անհամապատշաճ չը թուի հասմեմատութիւնը. ով դիտել և ուսումնասիրել է պարզորակ աղբիւրակներում լողացող համեղաճաշակ կարմրախայտ ձկան ոսկեգոյն մորթի վերայ սփրուռուած կարմրիկ աստղիկները, նա կարող է գաղափար կազմել գեղջուկ գեղեցկուհու սարսափից սառցած ժամանակաւոր կենդանագրի մասին. այն զանազանութեամբ միայն, որ արիւնի բիծերն աւելի

խիտ էին շաղ անցած նրա դէմքի վերայ։

Անամօթ ու անզգամ տուփոտ տաճիկ, նա չը կարողացաւ զսպել իւր անասնական վատշուէը կիրքը, իւր պիղծ շրթունքներով բազմութեան ներկայութեամբ նա համբուրեց ուշագնաց հրեշտակին։

Սարսափը ցնցեց կիսամեռ գեղեցկուհու ամբողջ մարմինը. նա աչքերը բաց արեց և սուր ձայնով ճչաց. մարէ։

—Ջանէ՜... Լուսիկս... մարէն մեռնի՜ արևուդ, հեռուից աղաղակում էր անբախտ մարէն, կամ մայրը։

Մօր ձայնը չը հասաւ աղջկայ ականջին, բրտնակալի հրամանով զոբթիէքը նրան ներս տարան վրանը։

—Այս սիրուն աղջանն եմ բաշխում քո աննեերելի յանդգնութիւնդ, դարձաւ հարկահանը դէպի ռէյսը, դու կամենում էիր սէրս խլել ու թագցնել ինձանից, որ վերջը շինէք մի կոպիտ գեավուրի կին։ Գնա, իմ այս չորս ծառաների հետ մի ժամ չանցած՝ պէտք է բերես 2,000 դուրուշ արքունի հարկի ապառիկը, հարիւրական դուրուշ տաս իմ վեց սպասաւորներին՝ իրեանց կրած նեղութիւննեերի փոխարէն, իսկ 1,000 դուրուշ բերես ինձ հասնելիք պարգևը, ընդամէնը 3,600 դուրուշ մինչև վրանից դուրս գալս պատրաստ լինի։

—Է՛յ, խոհարար, երեսը շրջեց նա դէպի իւր ծառան, քաղցրեղէնը շատ արա, կուզեմ իմ սիրելի

հիւրին, իմ սիրուհին լաւ պատիւ տալ։

—Դէ, հայդէ, իմ ժիր ռէյսս, քեզ էլ մի պարգև կայ, եթէ մինչև մեր ճաշելը վերադարձած լինիս։

—Այն ձանձրալի կնոջ ձայնն էլ չը լսեմ։

Հարկահանն աչքով արեց իւր զաբթիաներին և արենլուիկ ռէյսին թևերի տակը մտած՝ թռցրին մէջտեղից։

Երկու հոգի էլ մօրը տարան։

—Իսկ դուք շատ չը հեռանաք, խոհարարի մօտ սպասեցէք իմ հրամանին, ասաց նա աղջկանը ներս տանողներին, և ինքը նրանց դուրս գալուց յետոյ՝ մտաւ վրանի տակը և դրան վարագոյրն իջեցրեց։

Մի քանի վայրկեան ես ինձ կորցրի, ձայնը բարձրացնելով կարդում էր Ռուբէնը, աչքերս մթնեցին, կարծեցի, թէ մարագը գլխիս փլչում է, բայց, երևի անգիտակցաբար, դուրս մղուեցի մի աներևոյթ ոյժից և վազեցի դէպի վրանը։

Շատ հաւանական է, որ ներս կընկնէի անմեղ զոհին փրկելու, եթէ վրանի մէջ կատարուած դէպքերը ոտքերս չըկաշկանդէին։

Վարագոյրը կիսաճաճկուել էր, գազանը կրքից կուրացած՝ մոռացել էր իսպառ ծաճկելը։

Առաջինը՝ որ վարագուրի փեղկից աչքիս ընկաւ, մահճի վերայ անշունչ տարածուած աղջիկն էր։ Տաճիկը չոքել էր նրա առջևը՝ շփում էր նրա փակուած աչքերը։

—Այս ուր եմ, յանկարծ ուշքի եկաւ օրիորդը։ Նա աչքերը բաց արեց, սարսափելի հայեացք ձգեց բռնաւորի երեսին, վեր կացաւ և ուզում էր դուրս թռչել։

—Մի վախիլ, մի վախիլ, ես քեզ սիրում եմ, քեզ իմ կինս կը շինեմ, շողոքորթ խօսքերով յառաջը կտրեց տաճիկը, գրկեց աղջկանը, վայր ձգեց անկողնի վերայ, կռացաւ և ուզում էր համբուրել։

—Չես հասնիլ չար ցանկութեանդ, ճիչ արձակեց աղջիկն ու երկու ձեռքով ճանգռտելով բարբարոսի երեսը, վեր թռաւ և դուրս փախաւ վրանից։

—Բռնեցէք, ձայն տուեց հարկահանը ծառաներին և. ինքը ծուատած, արեւնկոլոլ երեսով, գլխաբաց վազեց իւր օրսի ետևից։

Կատարեալ գայլ էր նա, որ լափել էր ոչխարի արիւնալից սիրտն ու փախուստ էր տուել հովուի շների ձեռքից։

Հարկահանին հետևեցին կրակի մօտից խոհարարն ու երկու զաբթիէքը։

Փախչում էր օրիորդը արագոան եղջերուի նման լեռնահովտի թմբով դէպի վեր։ Նրա քամակից ընկել էին օրսորդական շների պէս ինքը օրսկանն իւր ծառաներով։

Այսքան ժամանակումն ես մտամոլոր մնացել էի վրանի դրանը ապուշի պէս տնկուած՝ իբրև հեռուից դիտող։

Հալածողները հասուէհաս էին, երկու քայլ

և նոքա յափշտակելու էին հսմեղ պատառը, բայց մի րոպէ՝ և որսը աչքներիցն անհետացել եղաւ ու երեք գազանները մնացին կանգնած. ոչ յետ են կարողանում դառնալ և ոչ յառաջ գնալ։

Վերջապէս խոհարարը սիրտ արեց, մի քանի ոտք յառաջեց և գոչեց. ափսոս *զիւզէլին (գեղեցկուհի)*։

—Մեռաւ, դողալով հարցրեց հարկահանը։

Սուր քարը ծակել է նրա գանգն և ուղեղը ցրուել է, թէ չէ, ընկած տեղը շատ բարձր չէր։

—Աստուածդ, ո՛վ Աստուածդ, և դու տեսնում ես ու տանում ես այս անօրէնութիւնները, տրտընջացի ես Նախախնամութեան ստուերի դէմ ու կրկին մտայ մարագը։

Ես լսեցի հարկահանի հրամանը, որ տալիս էր իւր ծառաներին. այժմ թո՛ղ մնայ ապառիկները ժողովելը, շտապեցէք գիւղը, կանչեցէք մեր մարդկանցը, բերէք ձիանքն և հեռանանք։

—Ձաշը պատրաստ է, յայտնեց խոհարարը։

—Այս արիւնոտ տեղումը ճաշ չի կուլ գնալ, թափիր կերակուրները, որ գեաւուրների բաժին չը լինի, ջուր տուր միայն՝ երեսս լուանամ։

Լուացուեց, բայց աչքը պինդ կապեց. ոչ միայն դէմքի վերայ ողջ տեղ չէր մնացել, աչքի սպիտակուցի վերայ էս նահատակի եղունգի գծած սիւնն էր բացուել։

—Արժանի պատիժ անօրինին, մրմնջացի ես

մարագի անկիւնում։ Կէս ժամից զաբթիէքն իրանց մեծաւորի հետ հեռացան։

Ես դուրս եկայ ապաստարանիցս, վազեցի դիւղն և գոյժը տուի։

Ես ինքս գրկեցի անմեղ զոհի ջարդուփշրուր դիակն և ձորակիցը դուրս բերի։

Սուտ չէր խոհարար տաճկի խօսքը, եթէ ձորակում ընկած ցից ժայռը չը լինէր, դիակն այնպէս չէր այլանդակուիլ. ուղեղը ցրիւ էր եկել։ Պարզ երևաց, որ աղջիկը դիտմամբ գլխի վերայ էր գահավիժուել։

Անարատ կուսին թաղեցինք գիւղի եկեղեցու բակումը։

Յուղարկաւորողները բոլորեքեան թողին հեռացան, մինը միայն երկար ժամանակ եկեղեցու պատին յենուած՝ աչքը տնկել էր նոր կնքած դամբարանին և արտասուում։

Այդ մինը ես էի, ես՝ նշանաճս Աստուճու յուսով տաճիկ ղայմաղամի հաճոյքին թողած՝ նրա սիրոյն անարժան Ռուբէն Աբգանազեանս։

Այս գիւղսմն ես գործել չը կարողացայ, նոյն օրը թողի և հեռացայ։

ԼԹ.

Ասքանազեանը չը վերջացրեց ընթերցումը. Նրա սենեակի դուռը դրսից բաղխեցին։

—Ո՞վ ես, տետրակը կապերտի տակ թագցնելուց յետոյ՝ հարցրեց Ռուբէնը։

—Բաց արա՛, տէր իմ, մի պարոն ցանկանում է քեզ տեսել, պատասխանեց պանդոկապանը դրան քամակից։

Դուռը բացուեց. երկու ընկերները հարազատ, կարօտակէզ եղբօր նման գրկախառնուեցին։

Սկզբնական հարց ու բարեւներից յետոյ՝ Գարեգինը փռեց ընկերի առաջ մի մեծ քարտէզ։

Խիզան գաւառի աշխարհացոյցն էր այն։

Վանից Մելքիսեդեկեանը կրկին վերադառնում է Խիզան։ Խիզանի աշխարհագրական դիրքը մեծ նշանակութիւն է ունեցել իւր նպատակների համար։

Վանից դէպի հարաւ ուղեւորութեան ամենագլխաւոր պատճառն երկու ընկերների ծրագրի մէջ չի եղել։ Հայրիկի հետ Գարեգնի երկրորդ տեսակցութեան հետեւանքն այս նոր մտադրութիւնը յառաջ բերեց։

Մի քանի օրով մեայն Մելքիսեդեկեանն ուղեւորուել էր Ճուլամերիկ և տեսնուել Ասորիների Մար-Շմոն կաթուղիկոսի հետ։

Մար-Շմոնի և Գարեգնի մէջ երկար խօսակցութիւն է տեղի ունեցել և համաձայնութիւն է կա-

ացել մի ուղղութեամբ գործելու՝ ինքնաճանաչողութեան և ինքնապաշտպանութեան խնդրում։

Մար-Շմոնն ինքը վաղուց զգացած է եղել, որ հայոց հետ համերաշխութիւնն իւր ազգի ինքնուրոյնութեան ամենակենսական միջոցն է։

Նա խոստացել է այդ մասին բանակցութիւններ սկսել՝ ում պէտք է։

—Իսկ դո՛ւ ինչ ես գործել, իւր կողմից համաձայնութեան հաշիւ ներկայացնելուց յետոյ՝ հարց տուեց պարեզինը Ռուբէնին։

Առանց մի խօսք արտասանելու՝ Առքանազեանը ցոյց Մելքիսեդեկեանի առաջ իւր ընդարձակ տեղեկագիրը։

—Կարդա՛, որ լսեմ։

—Մինչև քո գալդ՝ շարունակ կարդում էի, բայց ցաւեց շատ բաց ու խուփ անելով, եթէ կամիս, այս անգամ կը շարունակեմ չը կարդացածս, նացածը վաղուան թողնենք։

—Համաձայն եմ։

Եւ Ռուբէնը շարունակեց իւր ընդհատած տեղից՝ այսպէս.

... Մելիք Ներսոյի գիւղացի տէր-Գասպարն իմ երայ վատ տպաւորութիւն թողեց։

Աւելը դեռ չէր մայր մտել, որ ես գիւղի առաջին հանդիպողից հարցրի տէրտէրի տունը։

—Եթէ մեծ տէրտէրի տունն ես ուզում, ա

գնա, ասաց մարդը, իսկ եթէ փոքր տէրտէրինը՝ ձախ ծռուէր։

Շատ ափսոսացի, որ մեծին գերադասեցի, բայց վնաս չունէր, որքան շատ մարդ տեսնենք, այնքան շատ կը փորձուինք, թէև վերջն անփորձ կը մեռնինք։

Տէրտէրը նստած էր կալումը. նա միայն չէր, չորս ամեհի քրդերի հետ ընթրիք էին անում։ Կերածները թանէսպաս և ժաժիկով պանիր էր։

Ես մօտեցայ քահանային և աջն առայ։

—Ի՞նչ կուզես, առանց իմ օրհնեա-տէրին քահանայապատշաճ «Աստուած օրհնէ»-ով պատասխանելու՝ կոշտ ու կոպիտ հարցրեց քահանան։

—Մի գիշեր սրբուհեանդ մօտ Աստուծոյ հիւր եմ։

—Որովհետև քահանայ եմ, ուրեմն և սլարտակէն եմ ամէն թափառաշրջիկների տեղ տալու և հաց ուտեցնելու։

—Վարագայ աշակերտ եմ, հայրենիք կերթամ։

—Որտեղից կուզես՝ եղիր, խաբեբաները շատ, նրանցից մէկ էլ դու, գիւղերն ընկած՝ միամիտ ժողովրդին մոլորեցնելով կը շրջիք։

—Ներեցէք, տէր հայր, դեռ չիմացած...

—Է՛... է... է... կարճ կտրէ՛, երեսդ պնդել, եկել ես, նստիր էդտեղ, քարը գլխիդ տակ դիր, պառկիր, լուսադէմին գնա գործիդ։

Ես մէկ մոտծեցի թողնել հեռանալ, մէկ էլ լաւ համարեցի վախճանական ելքին սպասել, պատուական ցած դրի և հեռումը նստեցի։

Քահանան իր առաջից մի ցամաք հաց վերցրեց, ինձ մեկնեց՝ ասելով. եթէ քաղցած ես; ա՛ռ, կեր։

Առայ հացն և սկսեցի ծղծամ տալով ծամել։

Այլ ևս տէրտէրն ինձ մոռացաւ, նա սկսեց իւր հիւրերի հետ քաղցր զրոյց անել։

Զարմանալի յանդգնութիւն, դժուար թէ քահանան երկմտէր իմ քրդերէն հասկանալու մասին. քրդաբնակ Հայաստանում շատ սակաւ մարդ կը ճարուի, որ քրդերէն չիմանայ, ինչպէս և քրդերից շատերը Նայերէն գիտեն, բայց տէրտէրն այդ կէտի վերայ ուշադրութիւն չարաւ։ Իսկոր ժամանակը նրա խօսածները հայերի մասին էր. նա խորհուրդ էր տալիս քրդերին յարձակուել այս և այն գիւղերի հարուստ հայերի տների վերայ և յափշտակութիւն գործել, սովորցնում էր միջոցները, մատնացոյց էր լինում զանազան տեղերում գտնուած գեղեցիկ աղջիկների վերայ՝ համեղ պատառ անուանելով, առաջնորդացնում էր քրդերին, որ իրանց վնաս չէ հանդիպիլ այդ կողմից. ի հակառակ դէպս՝ ինքը խոստանում էր միւդիրի, զայմաղամի, զադու, մինչև իսկ վալի փաշայի մօտ նրանց իրաւունքը պաշտպանել, պարծենում էր, որ ինքը տաճիկ իշխանաւորներին սրտէ ի սիրտ բարեկամ է և այլն։

Քրդերն ևս իրանց կողմից խոստում էին անում աւարից տէրտէրի համար բաժին հանել։

Ապա քահանան սկսեց պարծենալ, թէ բոլոր գաւառի հայերն իւր անունից դողում են, թէ ինքը գաւառի առաջին մարդն է և թէ իւր հոգևոր իշխանութիւնից անգամ մազաչափ երկիւղ չունի, ըստ որում Առաջնորդին ձեռքի թաշկինակի նման իւր գրպանումն ունի, կը պահի, թէ կը շպրտի. իւր հաճոյքին է մնացել։

Քուրդը տէր Գասպարից հեռատես գտնուեց. նա իմ վերայ ակնարկելով՝ խորհուրդ տուեց քահանային զգոյշ լինել. իսկ տէրտէրը քամահրանք մի-այն արտայայտեց՝ քիթը վեր քաշելով.—ոտքերս չը կրծէ, ասաց, մի այդպիսի չնչին մուկը։

Դորանից յետոյ էր, որ սառն արհամարհանքով ինձ նայեց և ասաց. ադա՛, դու քրդերէն հասկանո՞ւմ ես։

—Մանկութեան օրերս հասկանում էի, պատասխանեցի, բայց տասը տարի է վարագումն եմ, այնտեղ չեն խօսում, բոլորը մոռացել եմ։

—Գլուխները մեծ քարովն են տալիս, որ չեն խօսում, գոչեց վրաս տէր Գասպարը, քրդի լեզուն հայերէնից ընչո՞վ է պակաս, որ բանի տեղ չեն դնում ձեր յիմար վարդապետները։

Ես լռեցի, բայց նա ոչ. էլ չըմնացին անարգական խօսքեր, որ չը թափէր վարագայ միաբանութեան գլխին. մանաւանդ՝ Հալրիկի հասցէին,

անհաւատ, պահք խախտող, քրդի և օսմանցու թըշնամի, ժողովուրդ մոլորեցնող, իշխանութիւն չի ճանաչող, աղաներին հակառակորդ։ Էլ ինչ ասես, որ չը շարեց։ Խրիմեանի բաղդն էր, աւելացրեց քահանան, որ մեր վիճակումը չէ, ապա թէ ոչ, հիմիկ այս կտրիճ տղամարդկանց ձեռքով (քրդերին ցոյց տուեց), վաղուց միւս աշխարհը կուղարկէի։

—Մենք ամեն ժամանակ պատրաստ ենք, ինչ սիրտդ կը ցանկանայ, պատասխանեցին քրդերը հայերէն։

—Եթէ այս տղայի մասին էլ կասկած ունիս, պատրաստականութիւն յայտնեց քրդերից մէկը, մենք կարող ենք սրա արևը մթնացնել. ոչխարի նման յառաջ կանենք, գիւղից կը հեռացնենք և մի ձորում, կամ փոսում վիզը կը թռցնենք։

Լաւ էր, որ իսպառ մթնել էր, գաղաններն իմ սարսափը չը նկատեցին, ապա թէ ոչ, ինձ փըրկութիւն չը կար։

—Է՛հ, կարժէ այդպիսի ճանճ ու մժեղի համար սուր արիւնոտել, պատասխանեց տէրտէրը, իմ դուռն է ընկել, իմ հացի ափը կտրել, թող վայը ընկնի, մնայ, վաղը վեր կենայ, կորչի, դրանից ինչ վնաս կարող է հասնել։

Ես Աստուծուն փառք տուի և մտքումս քահանայից շնորհակալ եղայ։

Այնուհետև խօսակցութիւնը փոխուեց քահանայի իւր գիւղի վերայ, Մելիք-Ներսոյի վերայ, փո-

քըր կոչուած տէր Սիմոնի վերայ, գիւղականներուն վերայ և այլն։

Ես միւս օրը հասկացայ, որ տէր Գասպարը սուտ չէր ասում, պարծենալով՝ թէ բոլոր գիւղն իւր ստրուկն են և թէ Մելիք-Ներսոն իր հրամանից չի դուրս գալիս։ Բայց մի՛թէ միայն Մելիք Ներսոն էր իւր կաշին գնահատելով՝ տէր Գասպարին շողոքորթում. գիւղի մէջ մեծ ու փոքր նրանից վախենում էին, նոյն իսկ նորա ընկեր տէր Սիմոնն այնպէս էր տէր Գասպարի առաջին, ինչպէս մի հաւի ձագ ուրուրի առջևը. անզօր ձագուկի կեանքն իւր բռնաւորի կամքից կախում ունի։

Մի մասամբ գիւղացիք գոհ էին բռնակալից, այն ժամանակն երբ ուրիշ գիւղերում օր չէր անցնում, որ գողութիւն, սպանութիւն և աւարառութիւն չը կատարուէր, շաբաթ չէր լինում, որ միւս գիւղերում տաճիկ զաբթիաներն ու նիզամները ճընշումներ չը գործէին, կաշառառութիւններ և առևանգութիւններ տեղի չունենային, իսկ այս գիւղի մէջ ամիսներ կը գլորուէին և բացի արևից, անձ, ըևից ու ձիւնից ոչ ոք չէր թոյլ տալ իրան չար նպատակով ներս գալ, կամ խէթ աչք դարձնել։

Գող, աւերիչ, իշխանաւոր, քուրդ ցեղապետներ եթէ երբեմնապէս այս գիւղը մտքներն էին բերում, այն լինում էր տէր Գասպարին այցելելու մտքով։

Այս վերջին դէպքերում գիւղը փոքր ինչ նե-

դուքիւն եթէ կրօմ էը, բոլորովին տրտունջ չէը բարձրանում։ Ասել հարկաւոր չէը լինում, ոէյսը պարտական էը տներից ժողովել գառը, հաւ, ձու, իւղ, պանիը և ամեն տեսակ պաշարեղէն և ուղարկել տէը Գասպարի տունը եկուորներին պատուելու։

Ինչպէս յետոյ իմացայ, իմ եկած օրս չորս քրդին հիւրասիրելու պատրաստակաւ տէրտէրի գառների թիւը տասնով աւելացել էը, ըստ այնմ ևս հաշուիը միւս պիտոյքները։

—Ա.չքը կոխէ, երկու այլքան ևս եթէ տանք, էլի միւս գիւղերի տուաճի տասներորդ մասը չի գոյանալ, ասացին ինձ Մելիք-Ներսոն և տէր Սիմոնը։

Այս խօսքերն ինձ ասացին նրանք երկրորդ օրը։

Լուսնթագը բաւականին բարձրացել էը, երբ քրդերը հեռացան։

Ես վաղուց բաց երկնքի ներքոյ պարկած եմ կալումը, բայց չեմ քնած. սատանին քուն կար այս դիշերն, ինձ ոչ, թէև շարունակ յոդնած մարդի նման խռմփացնում էի։

Բոլորովին ուշք չը դարձրեց վրաս տէր Գասպարը, իւր հիւրերին ճանապարհ դնելուց յետոյ՝ ինքը գնաց իւր տունը։

Լոյսը դեռ չէը բացուել, կոչնակը դեռ չէին զարկել, որ ես ժամի դրանն էի։ Տէր Գասպարի քրդերին պատմելուց ես գիտէի, որ ինքը մեայն կիւրակի օրերն է ժամ գնում, փոքը տէրտէրն է պաշտօն կատարում։

Ուղիղ էր տէր Գասպարի ասածը, առաջին «օրհնեա տէր» ասողը տէր Սիմոնին միւս օրն ես էի։ Մենք միասին ժամ մտանք և ժամ ասացինք։

ԼԴ.

—Ծամից յետոյ փոքր տէր Սիմոնը հրաւիրեց ինձ իւր տունը, շարունակեց Ռուբէնը։

Դեռ եկեղեցումն ես հասկացայ քահանայի ինչ լինելը։ Խեղճն անգրագէտ էր, մինը մեր այն քահանաներից, որոնց թիւը հարիւրներով կարելի է հաշուել։

Մեծ տէրտէրի, կամ մի տիրացուի մօտ տարիներով Այբբենարանն ու Սաղմոսը հեգելով՝ այդպիսինները եկեղեցում մոմ են բռնում, փոխն ու քարոզն են թուրթակի պէս կրկնում, Շարականի ուրախ ձայնն են սուտ ու սխալ գլխները լցնում, և վերջացաւ իւրեանց ուսումը։

Եթէ իրանց բնատուր ընդունակութիւնով մասնաւոր գրավարժութեան շնորհք ունեցան, այն է՝ որ փիլիսոփայական գիտութիւնները կուլ են տուել։

Երեսներին մազը ծլեց թէ չէ, մի կճուճ հարիսայով գիւղի երախանաւորների սիրտը շահում են, հանրագիր են կազմում, ստորագրել են տալիս և ծոցերը դրած՝ շտապում են վանքերը։ Այնտեղ իրանցից ոչնչով աւելի մի եպիսկոպոսի առաջին չո-

քում են, փիլոն կրելու իրաւունք են ստանում և վերադառնում գիւղը։

Քառասունքի մէջ մեքենաբար նորընծան սկիհ բռնելում եւ «խաղաղութիւն» տալում՝ վարժուեց՝ այնուհետև տէրտէր է, որ կայ։

Բոլորը մի սանտրի կտաւ են, թէ իրանք, թէ իրանց հովուած ժողովուրդը։

Դեռ շատ անգամ ժողովրդի մէջ պատահում են այնպիսի անձինք, որոնք մշակութեան համար տարիներով օտարութեան մէջ դեգերուած՝ օր ծերութեան վերադառնում են հայրենիք բաւականին կովուած ու տաշուած, քիչ ու շատ քաղաքակիրթ՝ այնքան՝ որչափ կարելի էր զարդանալ մի էֆէնդու խոհանոցում սնակները լուանալով, կամ ձիապանի օգնականի պաշտօն կատարելով։

Վերջիններս համեմատաբար իւրեանց գիւղի և գաւառի մէջ գիւղական առաջաւորի փառք են վայելում, քահանայից և հարուստներից յարգ ու պատիւ են ստանում և համայնական լուրջ խորհրդակցութիւնների ժամանակ՝ վերջին խօսքն ու ու վճիռն ասողն ու դնողն են միշտ։

Իրաւունք ունին, եթէ սրանք շարական ու փոխաստացութիւն չը գիտեն, գոնէ շատերը հասարակ ընթերցումից զատ՝ իրանց անունը գրում են։ Իսկ մեր ողորմելի տէր Սիմէոնները, կամ հէնց նոյն ինքն ամենակուլ տէր Գասպարները, որոնց թիւը միաւորներով է և երբէք տասնաւորների չէ հասել,

այսպիսիներն ասում եմ, մինչև իրանց անօրէնն ազգաւէր ճանգերով կը խծբծեն, ժամեր կանցնին, դեռ շատերը գրէչ երբէք ձեռք առած չունին։

Բայց այդ տգէտ տէր Սիմոնները, ինչպէս և մեր միամիտ եղբայր տէր Սիմոնը, մի առաքինի, մի աստուածավախ, մի բարի մարդ էր։ Երբէք բարձր չէր խօսիլ, երբէք գիւղական գործերին չէր խառնուիլ, ագահ չէր, ընչաքաղց չէր, ստացածով գոհ էր, ողորմած էր, հիւրասէր էր, ժողովրդի շահերն իւր սեպհականից գերադասում էր և միշտ իւր ժողովրդի բարիքի վերայ էր մտածում. մի խօսքով ժողովրդի հայրն էր։

Մելիք Ներսոյի գիւղը թէև անբախտաբար ունէր իւր մէջ տէր Գասպար, բայց այդ գիւղն երջանիկ էր իւր տէր Սիմոն Հօրով։

Միայն տէր Սիմոնը չէր այս գիւղի հայրը. տէրտէրի նոյն և նմանն Աստուած պարգևել էր այս գիւղին և Մելիք Ներսոյին, այս գաւառի մելիքին, որին նկարագրելով՝ մենք ծանօթացած կը լինինք հայաբնակ գաւառներում անուն ու տոհմական յարգանք վայելող մելիքների ցեղաբանութեան և որակութեան հետ։

Քրքրելով մեր ազգային պատմութեան, կամ աւանդութեան տարեգիրը, կարելի է գալ այն եզրակացութեանը, որ այժմեան մելիքները, կամ հին հայկական իշխանական տների սերունդներն են և կամ վերջին ժամանակներում իւրեանց խելքով, կամ

հարստութիւնով անուն ստացած մի անհատի ժառանգները։

Ներկայ երկու տեսակ մէկիքներից և ոչ մէկը չի կարող իւր տոհմագրութեան պատմութիւնը ջորս սերնդից վեր բացատրել։

Ազգանունով, կամ տոհմանունով կոչուիլը, որ բարեբաղդ անցեալում ընդհանրացած էր մեր նախարարական և ազնուական տների մէջ, վերջերը քաղաքական յեղյեղուկ վիճակի հետ անհետացել է։ Մոռացուել են Արշակունի, Ոստանիկ, Պահլաւունի, Բագրատունի, Մամիկոնեան, Արծրունի և այլն կոչումները, կարծես թէ, երբէք հայ աշխարհում բարձր դասակարգ, տիրող իշխանութիւն գոյութիւն ունեցած չէ։

Ի հարկէ, այդպէս կը լինէր, քանի որ հայակուլ բռնակալների սուր ու նիզակները սրուած են եղել գլխաւորապէս այդ դասակարգը ոչնչացնելու։

Իւրաքանչիւր յափշտակիչ օտար բռնակալ կաղամբացան հօր խրատը քաջ ուսած՝ աշխատել է իւր ճանգը ձգած ազարակի մեծամեծ կաղամբների գլուխները կտրատել։

Նենգամիտ յոյնը, խորամանկ և խարդախ պարսիկը, աշխարհաւեր թաթարները, գիշակեր Մոնգոլները Հագարացիք, Տաճիկ, Մար՝ Հայաստանը գերբել, գրթափելուց յետոյ՝ ամենայն ճիգը թափել են ազգի ազգի պատրուակներով, կամ հէնց բարբարոսական պարզութեամբ ջնջել, անհետացնել

ժողովրդի մէջից բարձրանուն և նշանակութիւն ունեցող իշխանական շառաւիղներին, յարքունիս գրաւել, կամ առանձնաշնորհումներով իրանց մեծամեծներին նուիրել մեր ազատների կալուածքները, այրել, մոխիը դարձնել բոլոր գրաւոր լիշատակները, որոնք երբ և իցէ կարող էին լոյս սփռել իրանց վարագուրած յուշարձանների վերայ։

Այսչափով բռնակալների քաղցը չի լցուել, նրանք աւար են տուել, կեղեքել հարուստ վաճառականի արծաթը, հացի կարօտ են թողել եօթը գուբեան լծող, աշխարհին հաց մատակարարող երկրագործին, դաւադրութիւնով մահու են տուել եօթը գոմշի ոյժ ունեցող քաջ հսկաներին, կամ ձիու պայտը մաստաքի պէս ծամող ու փշրող ըմբիշներին, ծուղակի մէջ փութեցրել են բնական խելքի ու հանճարի տէր անթիւ հայերին, ճնշել, ճզմել և կիսախեղդ են արել հայութեան մէջ այս և այն լաւ յատկութիւնով փայլող, ընդհանրութեան շարքից վեր կանգնածներին։

Այս անգթութիւնները քաղաքագիտութեան երկիւղն է բռնաւորներին գործել տուել, նրանք արել են, որպէսզի համարձակ ընկոյզ կոտրեն ճնշուած ու ստրկացած ազգի գլխին, որպէս զի արձակ արշաւեն և աներկիւղ վայելեն Վերին Տեսչութիւնից Հային պարգևած լի ու առատ աշխարհի անթիւ բարիքները։ Զոռ ու ցաւ լափեն, քթիներից իջնէ,

թող կրկնի ինձ հետ ամէն մի սիրտն այրուած, աղէխորով հայ մարդ։

Ամէն աւերածութիւնները կատարելուց յետոյ՝ բնական էր, որ կը մեռնէր ժողովրդի մէջ գիտակցութեան նշոյլը, կը ջնջուէր ազգային ինքնաճանաչութեան պատիւը, հետզհետէ կ'ոչնչանային, կամ անձնասպառնալիքի բնազդմամբ անյայտութեան մէջ ինքնովին կը գաղուէին, իւրովի մոռացման կը տային տոհմական կոչումն իշխանական սերնդների յաջորդները։

Նրանցից սակաւամասնութիւնն իւրեանց սեպհական հողի վերայ, շատերը տարագրուած օտար երկիրներում՝ կը խառնուէին ժողովրդի ստորին դասակարգին, կը հաւասարուէին ընդհանրութեան հետ՝ միայն թէ՝ լաւ, վատ կեանք ունենալին, լաւ, վատ ապրէին աշխարհիս վերայ։

Զը յուսահատուենք և չը վհատինք. վասնզի որչափ և բռնակալի նենգամտութիւնն այս աղէտները հասցրեց Հայաստանի գլխին, սակայն նա չը կարողացաւ մահացնել կենդանի ազգի սրինի մէջ մակարդուած կենդանութեան սաղմը։

Մեր համար ամենքից աւելի աչքի ընկնող վիաստերն այսօր գոյութիւն ունին հայութեան մէջ։ Հայ աշխարհի ամէն անկիւնում, ամէն գաւառում տներ կան, որոնք հարուստ, թէ աղքատ՝ ընդհանուր հասարակութեան մէջ բարձր դիրք ունին, ամէնքից յարգուած ու սիրուած են, վերջին աղ-

քատից մինչև փարթամ հարուստն այդ տների ժառանգների տոհմական արժանիքի առաջին խոնարհում են, նրանց մեծ ու փոքրից ակնածում են։

Ասացինք, որ ոչ մի գրաւոր արձանագրութիւն է լոյս չի հանում այս երջանիկների նախնեաց փայլը, բայց և այնպէս ժողովուրդն ինքը յաջորդաբար պատուում է նրանց։

—Մելիք Դեվոյի, Մելիք Եէկոյի, Մելիք Պողոսէի, Մելիք Մինասի տղայ Մելիք Վրթօն է եկողը, զաւակս,—մատով ցոյց է տալիս ծերունի պապն իւր թոռին,—ել, կանգնի՛ տեղէդ ու բարև տո՛ւր։ Ասում է ալեզարդ ալևորն և դողդոջիւն ոտքերի վերայ կանգնում, դիմացից երևեցող պատանուն խոնարհօրէն ողջունում։

Զը զարմանաս, ընթերցո՛ղ, և չը սրդողես, ազգային պատուին նախանձախնդիր Մելիքն իրաւունք է համարում ծերից յարգանք ստանալը, ազնիւ հպարտութեամբ նա ընդունում է ընդհանուրի ձօնած պատիւը։

Մելիքի սերնդի պատիւն իրանը համարելու, մելիքի անունով պարծենալու փառքն իրան վերագրելուն չի ուշանում այն գիւղը, որ արժանացել է իւր կաթով անուցանելու մելիքի զաւակին...

Մեկել տեսար՝ մոռացուեց գիւղի անունն և կոչուեց Մելիք Եէկոյի գիւղ, Մելիք Մարգարի գիւղ, Մելիք Վրթանէսի գիւղ և այլն։

—Ո՞յք են ուրեմն այս բախտաւոր դասակարգը։

—Պատասխանը մենք վերը տուինք. սրանցից ոմանք հին հայկական իշխանուհեան շառաւիղներն են, որոնք թէև մի օր անձնապաշտպանուհեան համար ինքեանք իրպնց ինքնայօժար թաղել են անյայտուհեան մէջ, բայց հէնց որ երկիրը փոքր ինչ խաղաղուհիւն է գտել, ժողովուրդն ինքն է յիշել աւերակների մէջ բունած աղքատի տոհմական պատիւն և մոռանալով իսկական տոհմանունը՝ մշլիլ անունն է տուել և նրա առաջին ծունկ չոքել։

Վերջերումը՝ շատ տեղ՝ տիրապետող իշխանուհիւնն ստիպուած է եղել ճանաչել, հաստատել և արտօնուհիւն շնորհել այսպիսիներին։

Չենք կարող արդի բոլոր Մելիքներին հին նախարարական կամ ազատանեաց սերունդ համարել։ Սւանդուհիւնից երևում է, որ այլ և այլ ժամանակներում ժողովրդի միջից ծնել են անհատներ, որոնք ընական խելքով կամ ստացական արտօնուհիւնով մի ամբողջ գլխով վեր են կանգնել ժողովրդից և իւրացրել են մշլիլ կոչումը։

Սրանք միանգամից չեն ստացել այդ պատուանունը։ Վարելով հասարակուհեան մէջ այս և այն պաշտօնը, գլխաւորապէս գիւղական տանուտէրուհիւն անելով՝ նրանք բարձրացել են մելիքուհեան։

Մինչև այսօր էլ Հայաստանի մի քանի գաւառներում տանուտէրին ուղղակի մելիք են անուանում։ Չեն ասում տանուտէր Գրիգոր, քեօխվայ, կամ քէհիա Խաչօ, ուէյս Մրտօ, այլ ասում են

Մելիք Յովհաննէս, Մելիք Համբարձում, Մելիք Աղան և այլն։

Ըստ ամենայն հաւանակութեան՝ մելիք մակդիրով մականուն կրող ներկայ գերդաստաններից շատերն իրանց ազգանունն առել են իրանց տոհմի մէջ եղած մի տանուտէրից։

Իբրև ցաւալի ճշմարտութիւն, չենք կարող ծածկել, որ եղել են և այնպիսի մելիքներ, որոնք այդ պատուին անարժանութեամբ են հասել։ շատերը մատնչութեան և ազգադաւութեան անարգ միջոցներին դիմելուց չեն ամաչել։

Այսպէս թէ այնպէս, մելիքներից շատերի պատկերը մենք պէտք է տեսնենք մեր բարեկամ Մելիք Ներսոյի մէջ, որի գլուղն իւր անունով կոչուելու փառքն էր վայելում։

Հետևեալ գլուխը թող ասի՝ մեզ ով և ինչ մարդ էր Մելիք Ներսօն։

Լ.Ե.

Մեր առաջին կանգնած է մարդ ու կէս բարձրութիւնով մի յաղթանդամ եւ հաստաբազուկ հսկայ։ Այդ Մելիք Ներսօն է։ Նրա իւրաքանչիւր մատի հաստութիւնն երկու տարեկան ծծազար մնացած երեխայի կռան չափ է. նրա երեսի կաշին եթէ քերթես ու տրեխ գործես, տեսնողը կը կարծի, թէ լուծը չարած շիշակ արջառի թիկունքի շերտն է.

նրա քիթը մի սագի ձուից մեծ է. նրա աչքերի բացուածքն իւր նստելու հրեղէն նժոյգի աչքերի չափով է ձևաձ. նրա յօնքերից տրեխ չուան կարելի է հիւսել. նրա ճակատի լայնքն եթէ կրկնապատկես, տասնուհինգ օրական լուսին կը բռնորուի. նրա գլուխը կարող ես համեմատել կեանքիդ մէջ տեսած ամենամեծ ձմերուկին. նրա լանջի տրամագիծը հարիւրամեայ ընկուզենու տրամագծից ընդարձակ է. նրա ոտքի տրեխը հինգ տարեկան երեխայի դագաղի համար պէտք կըզայ. մի խօսքով, աստուածաշունչի բառերով ասենք՝ մի մսեայ բլուր, մի Գողիադ էր Մելիք Ներսոն։

Մերնկարագրութեամբը՝ Մելիք Ներսոն դուրս է գալիս անճաշակ, անճոռնի և այլանդակ մի կազմուածք, ինչպէս ռամկօրէն ասում են՝ Աստուծոյ քնած ժամանակ ստեղծուած, այնպէս չէ։

—Ընդ հակառակն, այդ ամբարտակն այնքան զուգաչափութիւն ունի իւր մէջ, նրա ընդհանուր կազմուածքի իւրաքանչիւր մասերը միմեանց հետ այնպէս համապատշաճ են դասաւորուած, որ նայողին ամենամեծ հաճոյք են պատճառում, կարելի է զարմանալ, բայց միաժամանակ և զմայլուել ու հիանալ բնութեան Արարչի այս ճարտարարուեստ ձեռակերտի հոյակապ շինուածքը տեսնելով։ Նայողը չի կշտանալ, կը ցանկայ մէկ էլ, հինգ էլ, հարիւր անգամ էլ նայել։ Մանաւանդ գրաւիչ է Մելիք Ներսոն, երբ իւր խոժոռ կերպարանքի վերայ արտայայտուում է

ոչ թէ գազանային վայրագ բնաւորութիւն, այլ բարեհամբոյր և սիրաշահ նայուածք՝ միացած գեղջկական պարզութեան հետ։

Այս այսպէս լինելուց յետոյ՝ մի՛թէ ասել հարկաւոր է, որ Մելիք Ներսոյի ջղերը գութանի ճոպանից ամուր լինելով՝ կրում են իւրեանց մէջ հարիւր մարդի ոյժ։

Մի յատկութիւն միայն՝ ցաւելով ասած՝ խանգարում էր ընդհանուր ներդաշնակութիւնը. այսպիսի քաջասիրտ դիւցազնը պէտք է խելքի հասունութեամբ էլ գերազանցուէր իւր նման և ոչ իւր չափով ստեղծուած արարածից, բայց որ չէ. թէ նրա հասկացողութիւնը, թէ վերջին նախրորդի դատողութիւնը. զանազանութիւնը միայն վայելած պատուի և տոհմական ծագումի մէջ է. մէկին՝ փայտն են ձեռքը տալիս, անասուններն են առաջն անում, միւսին՝ սեղանի գլխին են բազմացնում, իւղալի կերակուրներն են ուտացնում։

Այդքանը չէր. գիւղական համայնական խորհուրդների ժամանակ էլ Մելիք Ներսոն պէտք է նախագահէր, առանց նրա հրամանին քարը քարի վերայ չէր դրուել, տղայ աղջիկ չէր նշանուել, առանց նրա կամքի ոչ նախրարած կը վարձուէր, ոչ ուէյս ու գզիր կը կարգուէին։ Վա՛յ այն գիւղին՝ ուրեմն, որի կառավարիչն այս խելքի տէր է։

Այո՛, վա՛յ տալու էր Մելիք Ներսոյի գիւղը. ապա թէ ոչ՝ ընչո՞ւ պէտք է գաւառի մէջ արգաւան-

դուրեամբ և պատրաստ հողերով յայտնի գիւղը նիւթական ապահովութեան կողմից վերջինը համարուէր. ընչից պէտք է մի դաւաճան տէրտէր բոլորին սարսափեցնէր։

Չը նայեցեալ՝ որ Մելիքն ուրիւր գիւղացիք մեծ հօտերի ու նախրների տէր էին, որ Մելիքի գոմումը տասնաւոր թանգագին երիվարներ էին կապուտում, բայց մի օր էլ տեսնում էին, որ այդ ամէնը գնացին, հէնց իմանաս՝ ուրիշներինն էին ու տէրէցտէր եղան։

Ձիանքը գնում էին Թուրք զամպազամների կամ քուրդ էլ ըէգիների (ցեղապետ) գոմերը, ոչխարը կշտացնում էր սուրին աստիճանաւորին ու գիւղը հիւր եկող քրդերին, եզներն ու կովերը քուրդ հրոսակների ձեռքով դաշտից էին քշուում։

Այնուհետև Մելիքի պարտքն էր ժողովրդի պակասը հոգալու, որտեղից կուզէ՝ թող ճարի, բերի իւր ժողովրդին պահի։

Չէ՞ որ Մելիք էր, իւր հասարակութեան հայրն էր. իսկ հայրն իւր որդուց պարտաւոր հոգը պէտք է քաշի։

Ե՛ւ քաշում էր Մելիք Ներսոն, և՛ քաշում են բոլոր մելիքները։

Դու մելիքի գիւղացին ես. այսօր վարուցանքիդ համար եզը պակասեց։ Ի՞նչ հոգ։ Մելիքի գոմումը, կամ արօտատեղումը եզները շատ՝ գնա քշիր, բեր, լծիր։ Սերմնացու ցորենդ որոմնոտ՝ է —Մելիքի հոգերումն ու ամբարում լիքը ընտրովի ցորենն

աղունաձ, մաքրաձ ու լցրաձ է. — գնա քեզ ու գլուխ չափիը, տար ցանիը, նորը դուրս գալուս՝ եթէ ունեցածդ քեզ կը բաւէ ուտելու, արքունի հարկը տալու, քուրդ աղաների բունի հասոյթը լրացնելու, մօլլայի, զաբթիայի, ձրիակեր թուրք հարևաններիդ փորը կշտացնելու, խաչի, վանքի, տէրտէրի բաժինն ու տարեվարձը տալու, աղքատին ու տնանկին ողորմելու, տանդ կարիքը հոգալու, և որ մէկը համարեմ. ինչ ակնկալ և անակնկալ ծախքի դուներ ունիս առաջիդ բաց, եթէ այսքանի համար նորին եկած հացահատիկդ կը հերիքանայ՝ աւելորդից տար Մելիքին պարտավճար եղիր։ Իսկ եթէ տարին նահանջ է, պակասաւոր է, ստացածդ հազիւ քո պէտքերը լրացնի, դեռ ուրիշ հոգալիքդ հոգա, մելիքինը թող մնայ՝ մինչև միւս եկը, միւս հունձը։ Այն ժամանակն էլ ունեցար՝ կըտաս, չունեցար՝ պահանջող չը կայ. քոնն ու մելիքինն ո՛վ է բաժանել։

Ահա այս յարաբերութեան մէջ են Մելիքները իրանց գիւղականաց հետ, այս էր պատճառը, որ փոքր տէր Սիմոնը Ռուբէն Ասքանազեանին եկեղեցուց իւր տունը հրաւիրեց և իսկոյն ժամակոչին էլ ուղարկեց Մելիքի ետևից։

Այս արեց, ի հարկէ, տէր Սիմոնը, երբ իմացաւ Ասքանազեանի գալստեան պատճառը։

— Ի՞նչ կայ, տէրտէր, վաղ առաւօտահան ընչո՞ւ ես կանչել, նոր փորձանք հո չի՞ պատահել.

տուն մտաւ Մէլիք-Ներսոն և չընկատած ինձ՝ հարց տուեց փոքր Տէր-Սիմոնին։

—Դու ողջ կենաս, Աստուած օրհնեսցէ, դու կըթողնես, որ նեղութիւն կրենք։—Ահա մեր Մէլիքը։ Այս խօսքերով Տէր-Սիմոնն իմ և մէլիքի փոխադարձ ուշադրութիւնը գրաւեց։

Ես վեր թռայ տեղիցս և խոր գլուխ իջեցրի գիւղի իշխանին, իսկ վերջինս իւր կողմից յարգանօք տաճկական *թամաննահով* պատասխանեց և առաջարկեց օտարական անծանօթիս վերի կողմը տեղ բռնել։

—Ոչ, տէր իմ, մենք գիտենք պարտաճանաչ լինել, մեր քաջ նախնեաց արժանաւոր ժառանգին ըստ արժանոյն մեծարելը զանց չենք անիլ. հնումը մեր նախարարները թագաւորներին բարձակից էին, ժողովուրդը ձեռքը խաչած պատրաստ էր իւր ազատանեաց պատուէրները սրբութեամբ կատար ածելու։

Մէլիք-Ներսոն առաջին անգամ իւր կեանքում լսում էր գրականական ոճ, երբէք էլ չէր հասկանում նախարարութեան կարգն և իւր կոչումն ու դիրքը, բայց բնազդումով զգաց, որ այդ ներբողեանն իւր պատուոյն էր վերաբերում։ Նրա քմացը քաղցր եկաւ մի-օտար երիտասարդի գովաբանականը, և նա ինքնաբաւական ժպիտով մօտ գնաց, բազմեց վերին կողմն և հրաւիրեց ինձ իւր հաւասար ծունկէ ծունկ նստել։

—Ո՛չ, շեշտեցի ես,—քո բնատուր բարու-

թիւնովդ դու այդ շնորհքին արժանացնում ես ծառաներիդ, իսկ մենք ի չարն չըպէտք է գործ դնենք քո բարութիւնը։

Ասացի ես Աստքանազեանս և որոշեալ հեռաւորութեան վերայ ծունկ չոքեցի։

Մինչ այս մինչ այն, քահանայի դուստրը ճաշը բերեց։

—Դեռ վայելենք՝ ինչ Աստուած պարգևել է, միջամտեց տէրտէրն և սեղանն օրհնեց։

Առաւօտեան ժամից նոր էինք դուրս եկել և ճաշի նստեցինք։ Շատերին անհաւատալի կարող է թուել ասածս, բայց այս ճշմարտութիւն է. մինչև հրեկոյ Հայաստանում սեղան է բացուում ու վեր քաղուում։ Խօսքս սովորականի մասին է, իսկ օտար հիւրերը պատահած ժամանակ՝ էլ հաշիւ ու համար չըկայ։ Իջաւ հիւրը, դեռ օրինաւոր բարև չըտուած՝ հացը քաշուում է։

Բոլորակ սեղան—տախտակը դրուում է, տաք տաք թոնրից նոր հանած լաւաշները, կամ բոքոն հացերը՝ մարդագլուխ հինգ վեց հատ դարսուում է։ Նշանակութիւն չունի, եթէ տաք կերակուր էլ չըլինի. ուտիսին՝ մածունն է անպակաս, պահոց օրերը՝ թթուեղէնի բռնուածքը։

Ո՛ր աշխարհում, ո՛ր պետութեան մէջ կուզես, տարուան ո՛ր եղանակին կուզէ՝ թող լինի, մտիր Հայի տունը, չքաւոր, թէ շէն՝ մի հարցնիր, նրա տանը պատերի տակ մեծ մեծ հողէ ծափեր, մաշ-

նակները, բղուղները, կճուճ—բժուժները են կարգով շարուած, այդ բոլորը լիքն են իւղով, պանրով, բազկաթանով, սերուցք, կամ դայմաղով, վարունգաթթուով, բոխով և ուրիշ աղի ու քացախի մէջ դրած բանջարեղէններով։

Վերջին Հայն իւր տարուան պաշարն ունի։

Այդ միևնոյն ժամանակը շնորհ բեր Հալի հարևան այլազգու տունը, դատարկութիւն և չորութիւն է, շատ անգամ ցամաք հաց էլ չի ճարուում։

—Մեր բարեկամը Վարագիցն է գալիս։ Այսպէս սկսաւ Տէր-Սիմոնն իւր յառաջաբանը։

—Մեր աչքի, մեր գլխի վրայ, բարով է եկել, հազար բարի, պատասխանեց մէլիքը։

—Մեր եղբայրը շատ քաղցր ձայն ունի, այսօր եկեղեցումը սիրտս փառաւորեց։

—Ցաւում եմ, որ ուշ մնացի, դու էլ մեղաւոր ես, ընչո՞ւ ետևիցս չուղարկեցիր։

—Մի քանի օր դեռ կըլսենք սրա ձայնը, ասելիք ունի մեզ։

—Շատ աղէկ, ինչ հրամանք ունի, թող անի, մենք իր *ղուլլուղը* (հրամանը) կը կատարենք։

—Մեր գլխի տէրն ես, ընդհատեցի ես. պատահմամբ մտայ ձեր գիւղը, և մի քանի բան ինձ զարմացրեց։ Տէր-Հօրիցը հարցրի, բայց սա չը կամեցաւ առանց գիւղի իշխանի ներկայութեան բերան բանալ։

—Աւա՛, որ լսենք։

—Առաջինն՝ ես կուզէի իմանալ, թէ ինչպէս մարդ է այս գիւղի ծեր քահանան, որի տանն ես այս գիշեր հիւր էի։

—Մարդ է, Աստուծոյ ստեղծած է, Տէրն իւր հետ, մենք ինչ կարող ենք քահանայի համար վատ ասիլ, ծամծմեց խօսքը մէլիքը։

—Այո՛, հասկանում եմ, միայն դուք չէք, կարծեմ բոլոր Հայերն էդպէս են, որովհետև քահանայ է, նրա վերայ վատ չի կարելի խօսել... Թշուառ ազգ, երբ պիտի աչքերդ բացուին, որ դուք քո միջի ցեցերին ոչնչացնես, բացականչեցի ինքս ինձ և սկսեցի մի առ մի պատմել իմ երէկ երեկոյեան տեսածները։

Տէր-Սիմոնին շատ չդուր եկաւ իմ յանդգնութիւնը. նա մատը շարժեց՝ իմ երեսին և ասաց.

—Ամօթ է քեզ, որդի, դու վանքի աշակերտ ես, վանքի հաց ես կերել, հոգևորականի պակասութիւնները պարտական ես ծածկել և ոչ թէ կրակի վերայ ձէթ լցնել։ Ընչքից է, գիտես, որ երբեմն հոգևորականները իրանց պարտքը մոռանում են. այդ ժողովրդի մեղքն է, որ Աստուած իրանց երեսովն է տալիս։

—Մեղա՛յ, մեղա՛յ, գլուխը ծանր ծանր ճօճելով կրծքին խփեց մէլիքը և մրմնջաց. Ամենակալ Տէր, թող զմեզս իմ։

—Ի հարկէ, պնդեց Տէր-Սիմոնը, եթէ մեր

մեղքը չըլինէը, մենք էսքան աղքատ կըլինէինք, մեր գաւառի ոչ մի գիւղը մերինի չափ հողեր չունի, ոչ մի տեղ մեր չափ բերք չեն վերցնում, բայց քանի՛ դուրուշի կառնիմ մեր բաղդաւորութիւնը, որ վերջը մեր ընտանիքը քաղցած ու տկլոր, գառն օրով են իրանց կեանքն անցկացնում, գոնէ մորեխը վչացնէը, գոնէ կարկտահար լինէը՝ էլի կասէինք, թէ Աստուծոյ բարկութիւնն է մեր գլխին թափուել, բայց ախար Աստուած տալիս է, մենք չենք կարողանում օգտուիլ, ի հարկէ այս մեր անարժանութեան ու չար գործերի հետևանքն է։

—Ուրեմն ինչ է լինում ձեր գետնի բերքը, ո՞ւր է գնում, հարց տուի ես զարմացած։

—Ի՞նչ է նշանակում, եղբա՛յր, որ մանկութիւնից վանքի չորս պատի ետևն ազատ մեծացել ես, վանքի պարսպից ոտքդ դուրս չես դրել ու գրսի ցաւերի մասին տեղեկութիւն չունիս, թէ չէ Օսմանցուի հողի վերայ ապրող ծծկեր երեխան էլ գիտէ, թէ ինքն ինչ աստղի տակ է աշխարհ եկել։ Իմացիր, սիրելիս, էս սուտ ու փուչ աշխարհումս հայ-քրիստոնեին հանգստութիւն չկայ, էս կեանքումը տանջանքը մերն է՝ մենք տանջանքինը, մերն այն տեղ է, այն տեղ,—մատն երկինք բարձրացրեց Տէր-Սիմոնը,—ո՛վ ասես՝ մեր աշխատանքը չի ուտում, վնաս չունի, թող ուտեն, մենք կը համբերենք...

—Դու կրկին իմ հարցմունքին չըպատասխա-

նեցիր, ընդհատեցի ես, այդ ինչ մարդիկ են, որ իրանք ձեռները ծալած բոլոր տարին նստում են միայն նրա համար, որ ուրիշների հաշուովն ապրին։

—Դրա պատասխանը մելիքը լաւ կըտայ, թող դա ինքն ասի՝ ինչ որ լինում է։

—Հրամանք արա, ծառայ եմ աղիդ, քո ոտքը մեր գլխից աւելի գիտէ, մեղայ Աստուծոյ, քո խօսած ժամանակ մենք ինչ կըհամարձակենք բերան բանալ։

—Մենք նման ենք այն անբաղդ կնոջը, շաբունակեց քահանան, որ տարին մի անգամ ծնում է, երբեմն էլ երկուորեակ է ունենում, բայց միշտ օրօրոցը դատարկ է տեսնում, նրա մի երեխէն միւսի երեսը չի տեսնում. մի քանի ամիս չի անցկենում, մէկ էլ տեսար՝ կամ ծաղիկը տարաւ, կամ փորացաւն սպանեց, կամ կոկորդացաւը խեղդեց։

—Ի՞նչպէս, հարցրի ես։

—Ա՛յ ինչպէս, ցանել ենք, մշակել ենք, հասցրել ենք, օրանը կալումը ժողովել ենք և շտապում ենք առաջին կալը շուտով հանել, ջրաղաց տանել, որ վաղը երեխայքը քաղցած չըմնան, էս օր վերջին ալիւրն է թխուել։ Թեղը հանել ենք, պարկը ձեռք ենք առնում, որ ցորենը մէջը լցնենք, յանկարծ աչքդ թեքում ես ու տեսնում որ գլխավերևդ կանգնեցին քրդի տկլոր լամուկները, Սամանցուի քաղցած չինգեանէքը, Թափառական մօլլէքն և մի մի պարկ դէմ արած՝ աներեսի պէս պահանջեցին, որ լցնես իրանց տաս։

—Այդ դեռ ոչինչ, տէր-հայր, ուրիշների համար պատմիր, մինչամտեց մէկիքը, դրանց գոհացնելը հեշտ է, կէսը որ տաննեն, կէսն էլ է կըմնայ. դու նրանց ցաւը քաշիր, որ փայտը վրէդ կոտրում է, դէմիդ արիւնը թափում է ու աւելը դնում՝ կալդ սրբում, քեզ էլ ստիպում է, որ լծած եզդ արձակես, կալդ փռուած թողաս ու քո երեխի բերանի պատառը քո ոտքովդ տանես իր ամբարը լցնես։

—Աւելացրու՝ կամ ջրաղաց տանես աղաս ու բերես իրանց տաշտը լցնես, որ շաղախեն ու լափեն։

—Խար ինչ մարդիկ են դրանք, սրան նրան նայելով՝ ուզեցայ իմանալ ես։

Առաջիններըը, պատուելի Սաքանազեան, շարունակեց Տէր-Սիմոնը, մեր պարտքատէրերն են։ Դրանք այն մարդիկն են, որ իրանց քսակների մէջ գիւղացու քրտինքն է լցուած, ոչ ցանում են այդ մարդիկը, ոչ գործում են և ոչ քրտնում. ուրիշների կռնները նրանց համար են գործում։ Թէ ինչ ճանապարհներով նրանք կարողութիւն են ձեռք բերել, մի՛ հարցնիլ, այլ այս ասա, որ ունեւոր են և իրանց հարստութիւնից օգտուում են։ Իաւական է, որ գիւղացին նրանից հինգ դուրուշ պարտք առնի, կամ երկու կօտ ցորեն փոխ առնի. այնուհետև անբաղդ պարտապանը յաւիտենական իր վաշխառուի ստրուկն է. վերջին շապիկդ էլ ծախի, վճարիը, դարձեալ պարտքից չես ազատուիլ, դարձեալ ունեցածդ պէտք է տաս։

—Հայ են, Թուրք են, քուրդ են, վերջապես ինչ ազգից են այդ տզրուկները, հարց առնես:

—Ո՞ր ազգից կամենաս՝ կըգտնես. քուրդը Թուրքից է անողորմ, Թուրքը հայից բարբարոս, հայը երկուսից առաւել անխնայ. հազար անգամ լեզու հանիր, աղաչիր, որ առաջին կալդ քեզ Թողնի, երկրորդից իւր ստանալիքն առնի՝ անկարելի է, անկոտրում է՝ մինչև որ վճարելիքդ կրկնապատկելով հատուցանելու խօսք չըտաս:

—Իսկ ջրաղաց ուղարկող երկրորդներն ոյք են, հետաքրքիր եղայ ես:

—Նրանք ղալմաղամների դրան ծառայող նիզամ, զաբթիէքն են, կամ միւդիրների ոտք ու ձեռները:

—Եւ դուք անխօս կատարո՞ւմ էք նրանց ապօրինի պահանջները:

Տէր-Սիմոնի պատասխանը շրթունքներում սառեց.

—Ոտքերիդ մատո՛ղ, էֆէնդի՛մ, սպասեցէք, հէնց հիմի ձեր բոլոր հրամանները կը կատարուին: Մի տղիտղորմ ձայն էր այս, որ լսուեց դրսևից՝ անգրելի հայհոյանքների և մտրակի հարուածների հետ խառնուած:

—Լռեցէք, լռեցէք, ժամանակը չէ, մեր ռէյսի ձայնն է, խեղճին մտրակաչոր անելով՝ զաբթիէքը մեզ մօտ են բերում, ասաց մէկիքն ու վեր թռաւ տեղից. դէպի դուռը շտապեց:

Դեռ չէը յառաջել մի քանի քայլ, որ ռէյնն աչքը բռնած, առանց գլխարկի ներս ընկաւ:

Ռէյսը չըկարաց բերանը բանալ, իւր ցաւն յայտնել: Հարայ-հրոցով նրա ետևից կրնկակոխ. հասատ ու կրօն հալհոյելով, ներս ընկաւ մի զաբթիէ և օդի մէջ մտրակը ճօճեց:

—Համբերիր, էֆէնդիմ, աչքս էիը հանում, տան մէջ ենք, պատուաւոր մարդկանց մէջ ես, դաշտում հօ չէս՝ անասուններն առաջիդ, քոնչ ես հրամայել, որ անկատար է մնացել, ծանը և լրջօրէն խօսեց մէլիքը:

Նոր միայն զաբթիէն փոքը ինչ ինքն իւրեան ժողովեց և իւր շուրջը նայեց:

Յայտնի չէ, մէլիքի խօսքերը, թէ օտարական հիւրիս ներկայութիւնը նրա վերայ մեղմացուցիչ ազդեցութիւն գործեցին:

Զաբթիէն հանդարտօրէն պատասխանեց. Վալի փաշան մի քանի օրից յետոյ պէտք է դուրս գայ իր վիլայէթը շրջելու, նրա հետի մարդկանցն ու ձիանցը կերակրուել է հարկաւոր, ամեն տեղից պաշար ու կեր ենք ժողովում, ձեր գիւղին բաժին է ընկել 30 պուրատ ոչխար, 100 հաւ, 10 սայլ խոտ, 5 բեռն ալիւր, 20 չափ գարի, 25 հօխա իւղ, այնքան էլ պանիր: Էս օր մինչև արևը ճաշուայ տեղը գալն այս բոլորը պէտք է բարձուին ու ճանապարհ ընկնին դայմաղամի ամարաթը (պալատ):

—Մեր աչքի, մեր գլխի վերայ իշխանութեան

հրամանը, պատասխանեց մելիքը, այդ բոլորը կը կատարուի, քո կրած նեղութիւնի վարձն էլ իւր կարգին կըլինի, բայց որովհետև դու ճանապարհից ես եկել, նեղացած ես, հրամմէ նստիր, հանգստացիր։ Աբքունի հրամանները կատարելն ամէնքիս պարտքն է, իսկ մեր փորի հոգսն էլ չը պիտի մոռանանք, Աստուծոյ տուածից մի կտոր հաց վայելիր՝ մինչև ամէն ինչ կարգի դրուի։

—Որտեղ իշխանութեան հրաման կայ, մարդ իւր գլուխը պէտք է մոռանայ, շեշտեց զաբթիէն աչքը դէպի Ասքանազեանը դարձրած։

—Ասածդ շատ ճշմարիտ է, բայց իշխանութեանն էլ հաճելի չի լինիլ, եթէ իւր հաւատարիմ ծառաները հանգիստ և կուշտ չըլինին։ Այնպէս չէ՞, աղա՛ս, դարձաւ մելիքն իւր ասածների պատասխանն ինձանից խնդրելու։

—Եթէ գործածներս օրէնքի զօրութեամբ և կանոնաւոր լինի, հոլալ է կերած խմածներս, սառնութիւնով պատասխանեցի ես։

—Այս էֆէնդին կարդացող մարդ է, հեռու աշխարհից եկած ճանապարհորդ է, սրա խօսքերը շատ գայմագամների մօտ գին ու արժէք են ունեցել, մատնացոյց արեց մելիքը վրաս։

—Իմ կոկորդովս հաց չի ներս գնալ, ոչ էլ կերածս հալալ կը լինի, մինչև իմ վերայ դրած պարտականութիւնը չը կատարեմ, դեռ իշխանութեան հրաման՝ յետոյ փորի հոգս, կրկնեց զաբթիէն։

Նա ռէյսի թևը քաշեց ու դուռը ցոյց տուեց։

—Ես քեզ խնդրում եմ, դարձեալ մի՛ջամտեց մէլիքը, հրամանքդ շնորհ արա նստիր, մի ժամ չը քաշած՝ ամէն բան պատրաստ կըլինի։

—Ռէյս, հրամայեց մէլիքը, զաբթիէ էֆէնդու բոլոր պահանջը կը լրացնես մեր տանից, առանց այն էլ՝ գիւղը նեղուածեան մէջ է, ոչ ոքի չընեղացնես, մեր սայլերն էլ լծել տուր և ճանապարհ դիր, դէհ, գնա և կարգադրիր՝ ինչ որ հարկն է։ Սատա մեր տնեցոնցը, թող շուտով 50 ղուրուշ փող ուղարկեն, զաբթիէ էֆէնդուն պատիւ է հարկաւոր։ Զըմոռանաս տնօրինել, որ երկու ամենապատուական *շիշակ* ոչխար ընտրեն մեր հօտից, ականջները կարեն և առանձնապէս ուղարկեն մեր ողորմած Ղայմագամ էֆէնդուն իմ կողմից ընծայ։ Հայդէ, էլ մի՛ կանգնիր։

—Բայց իմ աչքս ոչինչ չի տեսնում, առանց ձեռքը աչքի վրայից հեռացնելու՝ ասաց ռէյսը, մտրակի զարկից արիւնը լցուել է։

—Վնաս չունի, գնա՛ մեր գառներից մէկը մորթել տուր, միսը մեզ ուղարկիր մեր յարգելի հիւրերին պատուելու, իսկ դմակի աստառը դիր աչքիդ՝ արիւնը կը քարշի, տնօրինեց մէլիքը։

Տանուտէրը դուրս գնաց։

—Բայց, մէլի՛ք, չըկարողանալով համբերել, մէջ մտալ ես, առաջինը՝ այս զաբթիէն իրաւունք չունի առանց իւր ձեռքի հրամանաթուղթը ցոյց տալու, ոչ մի խոտի ծղօտ պահանջելու, երկրորդ իրաւունք

չունի ոչ ոքի վերայ ճչալու կամ զարկելու։

—Իմ խօսքերի վերայ զաբթիէի գոյնը սկրթնեց, նա ուզում էր խօսք ասել, բայց կակազեց։ Զաբթիէին օգնութիւն հասաւ մէլիքը։

—Վնաս չունի, տէր իմ, մենք պարտական ենք մեր բարեխնամ տէրութեան բոլոր պաշտօնեաներին յօժարութիւնով ծառայել, թէկուզ նրանց պահանջը մի փոքր խիստ լինի, քանի կանի հրամանաթուղթը, էֆէնդին զաբթիէ է և բաւական է մեզ, և եթէ մեր զաբթիէն՝ բարկացած ժամանակը, մի ապտակ է տուել, քանի փոյթ, հաւկիթ հօ չենք, որ փխրինք ու թափուինք, եթէ իշխանաւորը չը զարկի, հապա ո՞վ պիտի գիւղացուն իւր պարտքն լիշեցնի։

Ես այլայլուեցայ և կամենում էի պատասխանել, բայց մէլիքն աչքով արեց ինձ և ակամայից լռեցրեց։

Զաբթիէն ինձանից առաւել շփոթուեց. նա էլ, երևի խոհեմութիւն համարեց առ ժամանակ լռելն և նստաւ։

ԼԷ.

Գարեգինը խլեց Ռուբէնից լիշատակարանն և ծալեց։ Հերիք է, ասաց նա, բերանդ ցաւեց կարդալով. այժմ իմ հարցերիս համառօտ պատասխանները տալով գոհանանք. ի հարկէ, դու մէլիքին չըկարո-

ղացար խօսք հասկացնել և զաբթիէն էլ իւր պահանջածները տարաւ. այնպէս չէ՞։

—Ձիշտ այդպէս, պատասխանեց Ասքանազեանը, սկզբումը զաբթիէն վիրաւորուեց, որպէս թէ, իմ խօսքերից. տեղիցը վեր կացաւ, սպառնալիքներ կարդաց դիւղի դլխին, իմ վերայ իշխանութեան ուշադրութիւնը հրաւիրելն իւր պարտականութիւնը յայտնեց...

—Յետո՞յ։

—Ես, ի հարկէ, անտարբերութեամբ նրա խօսքերին նշանակութիւն չէի տալիս, բայց մելիքն ու տէրտէրը դուռը բռնեցին, զաբթիէին դուրս չըթողին, Տէր-Սիմոնի որդու ձեռքով 40-ի փոխարէն՝ մելիքի կնոջից 50 ղուրուշ բերել տուին և զաբթիէի բուռը դրին։ Ձեմ ու չում, նազ ծախել, երդում— հաւատ, որ ինքն եկած է իւր վերայ դրած պարտականութիւնը սրբութեամբ կատարելու, բայց հետևանքից երևեց, որ ղուրուշի համար հոգի տուողներից էր։ Երբ որ տէրտէրի ու մելիքի խնդրանաց համաձայն ես էլ իմ կողմից մի երկու համոզիչ խօսքեր ուղղեցի իրան, իբր թէ, մեզ նման պատուելի մարդկանց խօսքը գետինը ձգելն իւր կողմից անքաղաքավարութիւն համարեց և ի պատիւ մեր՝ մելիք-Ներսոյի գիւղից արքունի վճարքը բարեհաճեց հեռացնել։

—Ի՞նչ, իւր պահանջածներից ոչինչ չըտարաւ։

—Եւ ոչ մի խոտի ցօղուն։

—Ուրեմն նորա պահանջը բարձր իշխանութեան թոյլտուութիւնով չի եղել. ինչպէս կըլյանգգնէը մի ստորին ոստիկան ինքնագլուխ այդքան մեծ պահանջներ անել. ամէն գիւղում հօ կաշառով չէր յաջողիլ գործին վերջ տալ, կըպատահէր այնպիսի գիւղ, որ առանց զաբթիէին բաւականութիւն տալու՝ ուղղակի բառացի կըկատարէր նրա պատուէրները. այն ժամանակն ինչ պատասխան պիտի տար զաբթիէն իւր մեծաւորին։

—Եթէ դու տաճկաստանցի լինէիր՝ կիմանայիր, որ ղայմաղամների ու միւդիրների գիտութեամբն են այդ յափշտակութիւնները կատարուում։

—Նրանք առանց բարձրագոյն կարգադրութեան իրանցից են այդ տնօրէնութիւնները անում։

—Եւ անում են և մարսում են. երբ գաւառապետի պաշարը վերջանալուն մօտենում է, նա բացարձակ իրաւունք է տալիս իւր ստորադրեալներին՝ իւրեանց հնարագէտ միջոցներով լցնել իւր ամբարները։ Ստորին զաբթիէքն, այնուհետև, ընկնում են գիւղերն և իրանց խելքի փչած հրամաններն արձակում. որքան պահանջածները շատ լինի, այնքան աւելի իրանց գրպանները տուզում է. նա հարիւր ոչխար պահանջեց, դու հինգը տուր, 95-ի փոխարէն էլ մի քանի դահեկան իւր բուռը դիր. ամէն գիւղից բաւականաչափ բան է հաւաքուում, որով տէրերն էլ են կշտանում, ծառայքն էլ։

—Ես կարծեմ, գիւղացիք ուրախ եղան, որ հեշտ ազատեցան։

—Մի տեսնէիր, թէ ինչպէս ոտք ու ձեռքս կամենում էին լիզել, երբ՝ զաբթիէի հեռանալուց յետոյ՝ հաւաքուեցին տէրտէրի տան առաջ։

—Ես հաւատացած եմ, որ դու այնտեղ մեծ գործ ես կատարել. առաքելութեանդ պարտականութիւնը բեղմնաւորելու համար՝ ամենալաջող ասպարէզն է բացուել առաջիդ։

—Այսքանով գոհ չես, եթէ ասեմ, որ մի ժամ խօսելով՝ ես յաջողեցի մի ուսումնարանի հիմք դնել։

—Կեցցես։

—Դեռ շարունակութիւնը լսիր. Մելիք-Ներսոյի գիւղացիք իւրեանց մելիքի հետ միասին ուխտել են բացի բարձրագոյն իշխանութիւնից օրինաւոր հրամանագրով տնօրինած տուրքերի՝ և ոչ մի բուռը հաւի կոտ անգամ չտալ ապօրինի կերպիւ, ուխտել են ուժի դէմ ուժով կռուել, հարստահարիչ քուրդ ու թուրքերին իրանց գիւղը ներս չթողնել, իրանց մէջի օտարասէրների քէթն ու ռնգունքը փշրտել, եթէ իրանց չարութիւնը չեն թողել և հասարակութեան հետ համերաշխ լինել։

—Այնտեղ չէր ուրեմն Տէր-Գասպարը։

—Երևակայիր, սիրելի Գարեգին, իւր անպիտանութիւններն և քրդերի հետ տեսակցութիւնն էլ պատմում հասարակութեանը, երբ մեծ տէրտէրը հեռուից երևեցաւ։ Տէր-Սիմոնը թևս քաշեց և հա-

մոգում էր լռել. ես չըհասկանալու տուի և շարունակեցի։ Տէր-Գասպարը լսեց իմ պատմութիւնս և գաւազանը բարձրացրած՝ հայհոյելով՝ ինձ վերայ յարձակում գործեց։ Կատաղի գայլի աչքերից աւելի սոսկալի էին նրա աչքերը, գազաններ զսպողներն անգամ չէին համարձակուիլ այդ րոպէին սառը մընալ, բայց ես, իբր թէ, չեմ տեսնում, իմ քարոզս անտարբեր շարունակում էի։

—Լակո՛տ, գոչեց Տէր-Գասպարը, դու համարձակուո՞ւմ ես վայրահաչութիւնով գիւղի խաղաղութիւնը խռովել և տէրութեան հրամաններին հակառակել, ես քո գլուխդ այս րոպէին կըփշրտեմ և վաղը կախաղան կըբարձրացնեմ։

—Կանէր անպատճառ, եզրակացրեց Գարեգինը։

—Ի՞նչպէս թէ կանէր, պատասխանեց Ռուբէնը, գաւազանի սուր երկաթն աչքս էր ցցուում, եթէ մէկիքը փայտը ձեռքիցը չըխլէր, ծերունի՝ բայց ջղուտ քահանայի կռուփը գլխիս էր իջնում, եթէ իմ խօսքերից ոգևորուած երիտասարդներն իրան չըբարձրացնէին։ Զըգիտեմ՝ ինչ կըլինէր տէրտէրի դրութիւնը՝ եթէ ես չըմիջամտէի, շատերն արդէն վազում էին դէպի նրա տունը, որ քանդ ու քար անեն։

—Աւա՛ գիւղի մէջ մեծ երկպառակութիւն ես ձգել. ես համոզուած եմ, իմ անհեռատես եղբայր Ռուբէն, որ քո հեռանալուց յետոյ՝ Տէր-Գասպարն իւր համախոհներով գիւղին մեծ վնաս տուած կը լինի։

—Նախ քան քո ենթադրութիւնները անելդ, լաւ էր՝ ինձ թոյլ տայիր պատմութեանս ծայրը հասնելու

Երբ Գարեգինը համաձայնեց և լռեց, Ասքանազեանը շարունակեց. Տէր-Գասպարն երբ տեսաւ, որ իւր դրութիւնն արդարև վտանգաւոր է, հրապարակաւ ներողութիւն խնդրեց ինձանից և հաստատակութեան ներկայութեամբ խոստացաւ իւր սենեակը յատկացնել դպրոցին, մինչև որ իւր ծախսով նոր ուսումնարան կը կառուցանէ։

—Ոըը երբէք չի կատարիլ, չըկարաց համբերել և չընդհատել Մելքիսեդեկեանը, ըստ որում ոչ մի ուսուցիչ իւր գլխից ձեռք չի քաշիլ. պարզ է, որ դիւղականաց կիրքն իջած ժամանակ՝ Տէր-Գասպարը խեղճ ուսուցչին իւր քրդերի ձեռքով հանդերձեալ կեանքը կուղարկի և կամ տաճկական բանտերում կըմաշի։

—Ձեմ հակառակում, կարող էր պատահել գուշակութիւնդ, եթէ մուկը կտրած տուիծին իւր կատուները չը խեղդէին։

—Այսինքն ինչ։

—Այսինքն այն, որ հինգ օրից յետոյ՝ մի գիշեր, Տէր-Գասպարի տուած խոստման համաձայն, իւր բարեկամ քրդերը գալիս պահանջում են, որ նա առաջնորդի նրանց Մելիք Ներսոյի տունն աւերելու և աւար տալու։

Երբ տէրտէրը մերժում է իւր խոստումն և

յորդորում է մի առ ժամանակ յետաձգել յարձակումը, քրդերն, երևի, հարուստ աւարի ակնկալիքով եկած, չեն ուզեցել ձեռնունայն վերադառնալ, տէր Գասպարին մի ատրճանակի գնդակի զոհ են անում և իւր տունն աւերում, բոլոր ունեցածը յափշտակում։

—Այնուհետեւ։

—Թէև տխրալի, բայց մի փառաւոր թաղում ունեցանք, մեծ հանդիսով Տէր-Գասպարին իւրնախնիքների մօտ ուղարկեցինք և իւր ժառանգների յօժարակամ հաճութեան համաձայն՝ դպրոցի սկզբնատրութիւնն արինք. այդպիսով գիւղն ունեցաւ մի օրինակելի դպրոց, և ըստ բերման բաղդի՝ մի պատուական ուսուցիչ, որը թէպէտ Կ. Պոլսում Ֆըրերների ուսումնարանում է իւր կրթութիւնն առել, բայց եզուիտ *պատերնների* խարդախութիւններից զզուած՝ յայտնի հակառակորդ է ազգային փարախը ներս սպրդող գառնազգեստ գայլերին. նա չի կարդաղանում առանց վրդովուելու լսել կամ խօսել կաթոլիկների մասին։

—Ապրի՛ս, Ռուբէնս, մեծ գործ ես կատարել։

—Մ՝էլիք Ներսոյի գիւղի պարոն ուսուցիչն ամբողջ գիւղականներով, նա մանաւանդ՝ երիտասարդութիւնը սրտատրոփ սպասում են քեզ, որ գնաս և ինքնապաշտպանութեան տարրը մտցնես իրանց մէջ։ խեղճերը զէնքի անուն լսել են, մի քանիսը մինչև անգամ տներումն ունին, բայց գործ աճել

չըգիտեն, իրանց միակ զէնքն իրանց մահակներն են։ Գնա, սիրելի Գարեգին, և պարտքդ կատարիր. մեզ հարկաւոր է հոգալ և դասագրքերի մասին, այդ մի լուրջ մտածութեան խնդիր է, որ մեզ մեծ մտատանջութիւն է պատճառելու։

—Մեր կատարելիք պարտականութեան այդ մասը վերջացած համարիր, պալուսակս տես, բոլորը դասագրքեր են, ազգի ցաւերը քաշող հայր-Հայրիկն ինձ ու քեզանից յառաջ է մտածել այդ մասին, նա քեզ իւր հայրական օրհնութիւնն ուղարկելով՝ խոստանում է դասական պիտոյքներդ անպակաս անել, դու, որքան կարող ես, դպրոցներիդ թիւը շատացրու, ամեն տեղ ուսումնարանական պիտոյք կազմ ու պատրաստ կը գտնես։

—Կեցցէ՛ մեր Հայրիկը, ասացին երկու երիտասարդները և վախճան դրին քաղցր զրոյցին։

ԼԸ.

Մի երկու օրից յետոյ Ս.սքանազեանն ու Մելքիսեդեկեանը բաժանուեցին իրարից. Գարեգինը գնաց դէպի Ռուբէնի շրջած գիւղերը, իսկ վերջինս իւր ուղղութիւնը բռնեց՝ նախանշանակեալ շրջանառութեան ծրագրին համաձայն։

Երկու բարեկամները այդպիսով չէին կորցնում միմեանց հետքը, գրաւոր հաղորդակցութիւնը նրանց մէջ անընդհատ շարունակուում էր, երկու շաբաթը,

կամ երեք շաբաթը մի անգամ որոշեալ տեղերում տեսակցութիւն ունէին նշանակած։

Ամէն տեղ, ուր Ռուբէն Ասքանազեանի ոտը մտել էր, Մելքիսեդեկեանը գտաւ կազմ ու պատրաստ. Ռուբէնի առաքելութիւնը սկսել էր շատ տեղեր արմատաւորուել. մի քանի գիւղերում կրթական գործը պատուաստուել էր, փոքրիկ վարժոցներում մանուկները մի-մի քիչ ու շատ հասկացող տիրացուի ձեռքի տակ դաստիարակուում էին Ռուբէնի նոր մուծած հրահանգով, ոչ միայն քահանաներն էին ըմբռնել իրանց կոչման նշանակութիւնը, տեղական երիտասարդներն ևս ձգտում էին ինքնաճանաչ լինել, հրազէն՝ ամէն սիստեմի՝ ձեռք բերուած պատրաստ ունէին շատ տեղեր, գինավարժութիւնը հացի խնդրի չափ կարևոր էր ճանաչուել։

Կարապետողն իւր դերը լաւ էր ուսումնասիրել և. կատարել, սպասած վարպետին մնում էր միայն գալ և վարժեցնել։ Կարապետն էր Ռուբէնը, վարպետն էր Մելքիսեդեկեանը։

—Ի գուր ես աշխատում գլուխդ թագցնել, տէր, ուղղակի պատասխանում էին Գարեգնին շատ տեղերում, մենք քո ունեցած արտօնագրերին նշանակութիւն չենք տալիս, դու մեր սրտատրոփ և անհամբեր սպասած հիւրն ես, հրամայիր և կը կատարուի։

Մի օր, հինգ օր, ոչ շատ քան տասն օրուայ

մէջ վառօթի հոտից փախչողները քաջ որսորդներ էին, փոքրիկ պղնձէ դրամը գնդակի ամենահեռաւոր նշանակէտից հրացանով թռցնում էին։

Յաջող էր և Գարեգնի վաճառաշահութիւնը, որսի մորթերի բեռները յաճախ բարձուում և ճանապարհ էին դրուում, նոցանից շատերն իւր նորընտել աշակերտների քաջամարզութեան արդիւնքն էին։

Հեշտ չէր Մելքիսեդեկեանին վերջին հրաժեշտը տալ իւր այցելած տեղերին, խնդրում էին, թախանձում էին մի քանի օր էլ մնալ։

Սրտազգած էր լինում նրա ուղեւորութիւնն և յաղթական. կարճաժամանակեայ աշակերտները ժամերով ուղեկցում էին իրանց ուսուցչին։

Մի անգամ Մելքիսեդեկեանն իւր յուղարկաւորներին վերջին մնաս բարևն ասելուց յետոյ՝ հանեց ծոցատուփից Ս.աքանազեանի տուած ճանապարհորդական քարտէսը, նայեց ուշադրութեամբ և խիստ զարմացաւ։

Նրա քարտէսի վերայ նշանակած չէր ճանապարհից ոչ հեռի սջակողմն երևեցող մեծ գիւղը։

—Ի՞նչ է այս, մոռացել է մեր Ռուբէնն այս գիւղը, թէ սխալուել է, կամ գուցէ այլազգի գիւղ է, որ չի գծել, մտածեց նա։

—Բայց ոչ, ուսերը բարձրացրեց Գարեգինը, դաշտը մշակողները բոլոր հայեր են, իսկ թէ ընչո՞ւ չի գծել, չեմ հասկանում։

Մելքիսեդեկեանը դուրս եկաւ ճանապարհից և ձին քշեց դէպի մի ասպարէզաչափ վար անող գութանաւորները։

—Տէր իմ, այդպէս չէ ճանապարհը, գոչեց քամակից իւր բեռնակիրը, որը պարտաւորուած էր հասցնել Գարեգինին որոշեալ հայ գիւղը։

—Ո՛ համար աւելի ձեռնտու է այս, ծիծաղելով պատասխանեց Մելքիսեդեկեանը, դու աւելի շուտով պարտքդ կատարած և վերադարձած կըլինիս։

—Ոչ, տէր իմ, մենք այդ գիւղը չենք գնալ, մենք ո՛վ դրանք ո՛վ։

—Ի՞նչ է, հայերը չե՞ն։

—Ոչ։

—Ի՞նչպէս թէ ոչ, բոլոր գութանաւորները հայ են և հայերէն են իրանց *հոռոլոն* երգում։

—Լեզուով, ճշմարիտ է, հայերէն են խօսում, բայց իրանք հայի թշնամի են, հայ չեն։

—Հապա ի՞նչ ազգ են, զարմացմամբ աչքերը շեշտեց Մելքիսեդեկեանը բեռնակրի զգուանք արտայայտող դէմքին։

—Ես ի՞նչ գիտեմ, իրանք էլ անիծուին, իրանց ազգն էլ, անհաւատ *փոլթներ* են։

—Այժմ հասկացայ, թէ ընչի՞ Ռուբէնը չի գծել, ծորեց Գարեգինը, հայ պրօտեստանդներ են եղել։ Է՛հ, սիրելիս, տրտնջաց նա իւր մէջ Ռուբէնի շուաքի դէմ, որքան էլ զարգանաս, այնուամենայնիւ մէջդ միս ու արիւն դարձած նախապաշար-

մունքը քեզանից չի անհետանալ, վանքի հաց ես կերել, ներելի է քեզ։

—Վնաս չունի, սիրելիս, դարձաւ Մելքիսեդեկեանը դէպի իւր բեռնակիրը, սրանք թէպէտ փոօ՛ր են, բայց էլի մեր ազգիցն են, էլի հայ են, դու ինձ տար սրանց գիւղումը թող ու գնա գործիդ, ես սրանց մէջից բեռնակիր կը վերցնեմ։

—Ոչ, տէր իմ, ո՛չ, մենք դրանց հետ արենխում թշնամի ենք, դրանց հետ երթևեկութիւն չենք անում, դրանք մեր սրբերին հայհոյում են, ափսո՛ս է քո ոտքդ անհաւատների երեսին դնել։

Որքան և պնդեց ու համոզեց Գարեգինը, բեռնակիրը չլսեց, նա իւր ձիու սանձը պինդ պահած՝ ճանապարհից չի շեղուում։

—Ուրեմն տառը իմ պայուսակս, հրամայեց Մելքիսեդեկեանն և վարձատրելով իւր հետևորդին՝ բեռն իւր ձիու գաւակին կապեց ու միայնակ մըտրակեց երիվարը դէպի գուրթանաւորները։

—Բարի աջողո՛ւմ ձեզ, եղբայրնե՛ր, կանգնեց և ողջունեց նա երկրագործներին։

Վարողներն առանց խօսք ասելու՝ խոր գլուխ իջեցրին։

—Սիրելի՛ք, ասաց Գարեգինը, ես այսօր կամենում եմ հիւր լինել ձեր գիւղում, թող ձեզանից մէկն ինձ առաջնորդի, ես կըվճարեմ՝ ինչ հարկն է։

Գուրթանաւորները կանգնացրին ինն լուծն և

օտարականի երեսին *մանթ-մանթ* (ապուշ) նայեցին, ոչ ոք տեղից չշարժուեց,

—Ձեզ կամենում քաղցրութեամբ կատարել խնդիրքս, ես իրաւունք ունիմ բռնութեամբ տանել ձեզ, սպառնաց Մելքիսեդեկեանը։

—Տէր իմ, ներողամիտ լերուք, ծանրութեամբ խօսեց մաճկալը, մենք իշխանութեան հրամանը ոտնահար անող չենք, բայց նախ՝ ասացէք մեզի, ինչ ազգ ես հրամանքդ։

—Ես հայ եմ, պարզութեամբ պատասխանեց Գարեգինը։

—Մինչդեռ քովդ հրամանաթուղթ կայ, որ իրաւունքն է մեզ ամէն կողմը տանել, բայց չեմ հասկանար, թէ ինչ գործ ունի հայը մեր մէջ։

—Սակայն մի՛թէ դուք հայ չէք։

—Ոչ, Աստուած չընէ, մենք *փոքմներ* ենք, 15 տարուց աւել է, որ մենք բաժանուել ենք աղանդաւոր հայերից։

—Ի՞նչ էք խօսում, եղբա՛յր, բաւական է, որ հայ ազգ ես և դու իմ եղբայրն ես, ինչ կրօնի կուզես մի՛ացիր։

—Տէր իմ, չըսրտմտիս, կ՚աղաչեմ, կերևի որ հրամանքդ ուսեալ մէկն ես, բայց ձեր հաւատը սխալ է, դու չէ՝ բայց ձեր հայերն անասունի պէս պահք կըպահեն, մարդիկներին սուրբ անուն կուտան և կըպաշտեն, այդ ոչ այլ ինչ է, եթէ ոչ կռապաշտութիւն, իսկ կուռքերը կործանել՝ Տէրինպատուէրն է։

Դարեգինը մինչև այդ օրն առաւել համակրում էր մի հայ ամսագրի գաղափարներին, որի թերթերում մոլեռանդութեան և խաւարամտութեան անունով դատապարտուում էին անողորմաբար նոքա ամենեքեան, որոնք իրանց հայրենի կրօնի նախանձախնդրութեամբ՝ սառնութեամբ էին վերաբերուում դէպի նորամուծութեան պաշտպանները, նոյն թերթի և իւր նորահաս աշակերտների համար կրօնական խորութիւնները ազգայնութեան շէնքին վնասող տարրներ չէին. „Հայ եղիր, ինչ դաւանութեան կամենաս՝ յարիր“, այսպէս էր քարոզուում լուսամիտների թերթի էջերում, այս հոմոզմանն էր և թերթը սիրող Դարեգինը, որը տգէտ հնձուորների բերանից իւր ըմբռման հակառակը լսելով՝ շփոթուեց ու գլխին սառը ջուր լցրած մարդու նման՝ մնաց կանգնած։

Նա չըգիտէր՝ ինչ անէր, իր ուղեկից բեռնաւորը հեռացել կր, մնացել էր միայնակ. մտածում էր՝ արդեօք մտնել բողոքականների գիւղը, թէ վերադառնալ կրկին իրան հիւրասիրողների մէջ։

—Ինչ կըլինի, թող լինի, էշը հեծնելը մի ամօթ, իջնելն՝ երկու, մտածեց Մելքիսեդեկեանն և իւր արտօնագրերի իրաւունքը պաշտպանելով՝ պահանջեց գուժանաւորներից առաջնորդել իրան դէպի նրանց գիւղը։

Մաճկալի հրամանաւ հօտաղներից մէկն ի-

ջաւ լծան վրայից և Գարեգինին տարաւ յանձնեց իրանց գիւղապետին։

ԼԹ.

Տանուտէրը Գարեգնի հրամանաթերթը տեսնելով՝ պատշաճաւոր պատուով հիւրասիրեց նրան և խոստացաւ միւս օրը ներկայացնել իւր պահանջած երիտասարդներին։

Մելքիսեդեկեանի իրաւունքն էր՝ ցանկացած գիւղերից առաջնորդողներ վերցնել հետը դէպի տեղական որսատեղիքը։

—Առաւել լաւ է, տանուտէրը, ասաց երկրորդ առաւօտ Գարեգինը՝ որսի գնալուց յառաջ՝ ժողովես ինձ մօտ գիւղիդ առաջաւորներին, մի քանի խօսքեր ունիմ ձեզ ասելիք։

Շատ չըքաշեց, տանուտէրի տան առաջին մի համայնական ժողով կազմուեց։

Գարեգինը մի կարճ յառաջաբանով մի երկար ատենախօսութիւն արեց. նա տաքացած հաստատում էր, որ կրօնը հակառակ չէ ազգայնութեան գաղափարին, որ իրանց *միռօթ* կամ բողոքական լինելն արգելք չէ իւրեանց հարազատ ազգի գաւակը համարուելուն, որ սրանք էլ նոյնպիսի հայեր են, ինչպէս ընդհանուր հայ ազգը՝ ինչպէս ինքը, որ ազգաշինութիւնը ներքին համոզման հետ գործ չունի, որ այլ է եկեղեցի և այլ է ազգութիւն, որ

սրանք էլ պարտական են, ինչպէս հայ, ճանաչել իրանց ազգային պատիւն ու գիտակցութիւնն, ասելն։

Ոչ ոք չընդհատեց Մելքիսեդեկեանին, ուշադրութիւնը համատարած էր, որից նա ենթադրեց, թէ իւր ճառը ցանկալին տպաւորութիւնը գործել է։

—Ուրեմն, սիրելի հայ եղբայրնե՛րս, յարմար ժամանակ համարեց վերջաբանով հարց տալ Գարեգինը, ես յոյս ունենամ, որ կրօնական խտրութիւնը չի կարող մեռցնել ձեր մէջ արենակցական և ազգային ինքնաճանաչութիւնն և ինքնապաշտպանութիւնը։

Համայնքի միջից մինը, որ ամենքից մօտ էր նստած Գարեգինին և ըստ երևութին վայելում էր ընդհանուր յարգանք, տեղիցը կանգնեց և այսպէս խօսեց.—Տէր իմ, այսօր հրամանքդ մեր գիւղի հիւրն ես և մեր գլխի վերայ տեղ ունիս, որովհետև մեր օրհնեալ տէրութեան կողմէն ուղարկուած անձն ես. եթէ պատուոյ արժանի մէկը չըլինէիր, այդպիսի մի բացարձակ *ըոյուրուլդի* (հրամանագիր) ձեռքիդ չէիր ունենալ։

—Դրանով ինչ ես կամենում հասկացնել, պատասխանեց Գարեգինը։

—Հասկացնելու ինչ կայ, ես սարզ ու կարճ խօսեցայ, շեշտելով պատասխանեց մարդը, ես ասում եմ, որ հրամանքդ առաւել լաւ կանէիր, եթէ ձեր եկած գործի մասին խօսէիք, քան թէ լուսոյ ճանապարհը ճանաչած ժողովրդին կրկին դէպի մոլո-

բուլթեան խաւարը տանելու նանիր աշխատութիւնը յանձն առնէիք։ Իմացիր, յարգելի, որ ես այս գիւղի պատուելին, կամ ըստ ձեր՝ քահանան եմ, ես թոյլ չեմ տալ, որ մի որսորդ գայ և Առաքեալին պատուէրը կատարող մարմնաւոր տիրոջ հնազանդ և հաւատարիմ հպատակներին ապստամբութիւն և հոգւոյ կորուստ քարոզէ, այն էլ՝ պատկերապաշտ մոլորեալ խոտաճարակ հայի համար։

Յայտնում եմ քեզ, աղա՛ս, ձայնը բարձրացրեց ալաստօրը, որ հրամանքդ շատ սխալած ես, դու խաբուած ես մեր լեզուից, հայերէն խօսելով՝ մենք հայ չենք լինել, երենք Առաքեալները վերնատան մէջ Հոգին Սուրբն ընդունելուց յետոյ՝ սկսան խօսիլ զանազան լեզուներով, մէ՛թէ այդպիսով նրանք դարձան պարթևացի և մեդացի, եղիմացի և միջերկրացի, գամիրացի, պոնտացի, փռիւգիացի, եգիպտացի և այլն...

Գարեգինը չդիմանալ ձևացնելով՝ ասաց. շատ լա՛ւ, պատուելի՛, մէ՛թէ դուք հայ չէք։

—Ո՛չ, կարճ կտրեց պաստօրը, մենք ճշմարիտ քրիստոնեայ ենք և հայի աղանդի հետ ոչինչ առընչութիւն չունինք։

—Ուրեմն ի՞նչ ազգի զաւակներ էք։

—Մենք, Առաքեալի խօսքովն ասեմ, Տիրոջը զաւակներն ենք։

—Յոյժ բարի՛, բայց ձեր նախնիքն ո՞վ էին, ի՞նչ արիւն է շարժուում ձեր երակներում մէջ։

—Առաջին անգամ Աստուծոյ սիրելի ազգը երբայեցիքն էին, մնացածները բոլորեքեան կռապաշտ էին։

—Ձեր համոզմամբ, ուրեմն, հայերն էլ կռապաշտ են։

—Մենք ինչ կապ ունինք անտէր հայերի հետ։

—Իսկ դուք տէր ունիք։

—Գոհութիւն Տէրին, մենք մեզի համար պաշտպաններ ունինք համայն երկրագնդին վերայ. այսօր բոլոր հակոտնեայ Ամերիկան լուսամիտ *հռոմ* է, ոսկեշատ Անգլիան մեզ ամուր պատնէշ է, նոցա կողմանէ եկած քարոզիչները չեն թոյլ տար, որ տաճիկը մեզ նեղէ, և իւրացնէ, մենք այնպէս տառապանքներ չենք կրեր, ինչպէս մոլորութեան մէջ մնացած հայ ազգն է. մեր բարերար *միսիոներները* փողով և քաղցր խօսքերով օսմանցուին բարկութիւնը մեզնէ կըհեռացնեն, հայի գլխին կըթափեն, այլևս ինչ ընդհանուր շահ կարող է լինել սուտ և ճշմարիտ քրիստոնեաներուն մէջ։

—Վերջապէս քանի տարի է, որ մոլորութենից դարձել էք, այդ կըցանկալի իմանալ, յուսահատ հարց տուեց անպատկառ պաստօրին Մելքիսեդեքեանը։

—Դրա պատասխանը կըստանաս։ Ամբողջ գիւղը միանգամից չեկաւ աստուածգիտութեան ճանապարհը. 20—30 տարի յառաջ՝ անհատները կըլու-

սաւորուէին, բայց մօտ թուականներիս մէջ պատահած սովը փութացրեց ամէնքիս փրկութիւնը։ Քաղցածների համար բոլոր հայերից ժողոված նպաստի մեծագոյն բաժինը՝ *Միատր* Ք.-ի շնորհիւ՝ մեր գիւղը մտաւ. նոյն պատուելիին ձեռքով Ամերիկայէն եկած օգնութեններն ևս անբաժին չմնացինք։

—Ի՞նչպէս։

—Մենք յայտնի տեսանք, որ աշխարհը սովի ձեռքէն կրկոտորուէր, իսկ *Միատր* Ք.-ի փոքրաթիւ հաւատացեալ հօտը լիութեան մէջ կրծփար։ Գիւղի առաջաւորներս ժողովեցանք՝ սուրբ Հոգւոյ ազդմամբ՝ դիմեցինք *Միատրի* ոտքը, խնդրեցինք խառնել մեզ իւր քրիստոնեայ հօտի մէջ և իւր հայրական խնամքը մեր վերայ հովանի անելով, մեզ ևս ապրուստ մատակարարել։ Գոհութիւն Տիրոջը, իրեն ընտրեալ քարոզիչը գրկաբաց մեզ ընդունեց, տեղէն վեր ելաւ, ձեռքերը երկինք ամբարձած՝ աղօթեց, գոհացաւ Տիրոջ անբաւ շնորհաց և անհուն ողորմութեան համար, որ վերջապէս մոլորեալ ոչխարներս ուղղութեան եկանք։

Միատրը ամէնքիս մէկ մէկ համբուրեց և այն օրից գիւղովի քաղցից ազատուեցինք և մեր հոգւոյ փրկութեան ճանապարհը գտանք։

—Բայց, պատուելի՛, այսքան երկար խօսելուց յետոյ՝ դարձեալ չասացիր, թէ ինչ ազգի մոլորեալ զաւակներն էիք դուք։

—Ս.ւեւլորդ կըհամարիմ, եթէ հասկացող մարդ էք, լեզուէս պէտք է հասկանալիք, մեր շուրջ— բոլոր պիւղերի բնակիչների մեծագոյն մասն այսօր մեր ազգականներն են, որոնց մոլորութեան վերայ կըխղճանք, կըցաւինք, բայց ձեռքերնէս ոչինչ չի գալ, որովհետև յամառ են և ճշմարտութիւնը ճանաչելուն միանգամայն անընդունակ։

—Ուրեմն դուք հայ էք և ինչպէս երևում է, կարուաճ էք ազգի մեծամասնութիւնից ու նրանց հետ չէք էլ խօսում, այնպէս չէ։

—Թէև տհաճութեամբ, բայց կըխօսինք և իրենց հետ հեռի ծանօթութիւն կանենք, որպէս զի՝ եթէ ոչ ամէնը միանգամից, գէթ մէկիկ մէկիկ Տիրոջ փարախը քաշենք՝ յուրախութիւն հրեշտակաց։ Տէրն ինքնին 100 ոչխարին առակով մէկ մոլորեալին դարձը կըջատագովէ։

—Դուք, ուրեմն, ասում էք, որ ձեր վիճակից գոհ էք, և մտադիր չէք ազգային ընդհանուր ինքնաճանաչութեան խնդրի մէջ մասն ունենալ, կամ ինքնապաշտպանութեան միջոցների համար հայ ազգի հետ համերաշխ լինել։

—Ըսած բառերդ այնքան առաձգական են, ոչէր իմ, ասաց պաստօրը, որ իսպառ մեզի համար անհասկանալի են. եթէ դուք կուզէք, որ մենք մեզի հայ համարենք, ի գուր է ջանքդ, մենք աւելի ուշ օտարներուն հետ կըհամաձայնինք, քան թէ հայերուն. իսկ եթէ ձեր մտքէն կանցնի կասկած-

նեը ծնեցնել մեը մէջ մեը երկրաւոր տէրերուն վերայ, մեը համար միևնոյն է, ով կուզէ, թող լինի մեը տիրապետը, ըստ որում աշխարհիս մէջ մենք ժամանակաւոր ենք, մեր Տէրը երկնքումն է։

—Բայց եթէ կարևոր դատուէը մի փոքրիկ պահանջ անել՝ ազգային ինքնուրոյնութիւնն ապահովելու և քրդերի ու հարստահարիչների ձեռքից ազատուելու համար՝ դուք ինչ դիրք կը բռնէիք։

—Մենք չէինք խառնուիլ և կաշխատէինք այդպիսի յիմարական ցնորքներին խափանաւիթ լինել։ Ծառադ սկզբումը քեզ զգուշացրի և քրիստոնէական պարտականութիւնս լցուցանելով՝ խորհուրդ տուի քո սեպհական գործով պարապել, թռչուններ որսալ, գազաններ սպանել, եթէ չես ցանկանար՝ օր առաջ հայրենիքդ տեսնել։

Գարեգինը տեսնելով՝ որ գործը սուր կերպարանքի է փոխուում, խորամանկութեան դիմեց։ Նա ոտքի կանգնեց և բոլորին հրամայեց իրեն հետևել։

—Դո՛հ եմ քեզանից, ո՛վ Տէր, բազկատարած աչքերը վեր սևեռեց Մելքիսեդեկեանը, որ Դու քո փոքրաթիւ հօտդ սիրելով՝ ամրացրել և հաստատուն ես արել ճշմարտութեան ճանապարհում. տուր, Տէր, որ սրանց օրինակին հետևին ոչ միայն մոլոբեալ հայերը, այլ և տաճիկները, այլ և քրդերը, այլ և բոլոր հեթանոսները՝ ամէն։

—Նստեցէ՛ք, սիրելիք, ժպտաց Գարեգինը բոլորի երեսին, և ես յայտնի խոստովանիմ ձեզ իմ

յանցանքս։ Ես ինքս մեր պատուելու գործակից պաշտօնեայ եմ. (այս ասելով նա ցոյց տուեց պաստօրին). Ինքս Գ. ընկերութիւնից հասոլթ եմ ստանում, իմ պաշտօնս թափառական քարոզչութիւնն է և պէտք է աւետեմ ձեզ, որ բաւականաչափ գործ կատարել եմ, որքան Տէրը նախասահմանել է օժանդակել՝ Ռուսաստանում, Պարսկաստանում և Տաճկաստանում. հարիւրաւոր անհաւատները իմ ձեռքով Տիրոջ հօտին են խառնուել, և եթէ չէք հաւատում, ահաւասիկ նրանց անուանական ցուցակը։

Գարեգինը հանեց ծոցից անուանական ցանկով լիքը մի տետրակ՝ և մեկնեց պաստօրին։

Պաստօրը գրավարժ էր, նա փառաւորուեց, երբ կարդաց հետևեալ վերնագիրը. *Ցուցակ Շմմայիտ քրիստոնեաների, որոնք պատուելի Կիրակոսի ձեռքով դարձ են եկել իրանց մոլորութիւնից։*

Պաստօրն էլ չըշարունակեց, նա թուահամարները աչքի անցրեց. այր ու կին 1125 հոգի էին։

Մելքիսեդեկեանը ուտա չէր ասում. Գրիգոր, Մկրտիչ, Յովհաննէս, Աննա, Հռիփսիմէ անունների թուում կային՝ Մահմատ, Ալի, Ֆաթմա, Գիւզալ և այլն։

Ցուցակը վաւերացրած էր մի անգլիերէն ստորագրութեամբ. երկու անգլիական տառ կնիքի նշանակները էին։

—Խոնարհաբար թողութիւն խնդրելով հրա-

մանքդ վիրաւորելուս համար, պատկառանօք ասաց պաստօրը Գարեգնին, կրվստահանամ հարցնել ձեր պատրուակուելու պատճառը։

—Ուրիշ կերպ էլ չէի կարող վարուիլ, պատասխանեց Մելքիսեդեկեանը, ես մի անփորձ և տեղական պայմաններին անծանօթ ոմն եմ, ինչպէս կարող էի նախատեսել, թէ ինչպիսի ժողովրդի մէջ եմ, վերջապէս ինչ կարիք կար չնչին ծառայութիւնս յիշել, դուք ինձանից քաջ գիտէք Սուրբ Գրքի խօսքը, թէ՝ անպիտան ծառաներ ենք, ինչ պէտք էր կատարել՝ կատարեցինք։

—Այդ ամէնը շատ աղէկ, տէր իմ. ասաց պաստօրը, բայց սա ինչ ազգայնութեան գաղափար է, որ կըքարոզէք։

—Այո՛, գլուխը դրականապէս շարժեց Գարեգինը, թէև Առաքեալը ծառաներին հնազանդութիւն է պատուիրում, ինչպէս հրամանդ յիշեցիր, Բայց Ինքը Տէրն ազգասիրութիւնն անձամբ մեզ օրինակ տուեց. նա ուղղակի եկաւ իւրայինների մէջ, Հրէաստանից ոտք դուրս չդրեց, լաւ համարեց իւր հայրենիքում չարչարանք և՝ մահ յանձն առնել, քան թէ Աբգար Հայ թագաւորի հրաւէրն ընդունել և գնալ Հրէաստանից դուրս անվտանգ ապրելու։ Պօղոս առաքեալն էլ ջերմ ազգասէր էր. նա ինքն ասում է. «Ես իմ եղբայրների և արիւնակիցների սիրոյ համար ուրախութեամբ կըցանկայի նզովուիլ Քրիստոսից»։

Ահա այդ գաղափարն է, պատուելի եղբայր, և դուք Քրիստոսի ճշմարիտ հաւատացեալ եղբայրները, որ մեր ամէնքիս համար սուրբ պէտք է լինի, այդ է, որ մեզ թելադրում է սիրել մեր հայ եղբայրներին, նրանց գարին ցանկանալ, որովհետև նոյն բարին մեզ էս պատկանում է, այդ սուրբ գաղափարն է, որ մեզ ստիպում է տալ Աստծունը Աստծուն, և ազգինը՝ ազգին։

Գարեգնի և պատօրի մէջ այդ խնդրի մասին երկար վիճաբանութիւնները եղաւ, պատուելի պատօրը հայի անունը լսել չէր ցանկանում։ Վերջապէս Մելքիսեդեկեանին յաջողեց գիւղականաց բազմութեան հաւանութիւնը շահուիլ. այն բանին գլխաւորապէս օգնեց դարձի եկած մոլորեալների ցուցակի տակ դրած անգլիերէն կնիքն և տորպեդութիւնը։ Ո՞չ ապաքէն այսչափ անհաւատներին ուղղութեան վերածողը հայասէր պատուելի Կիրակոսն էր, որը վայելում էր, Պ. Ընկերութեան լիուլի վարկը։

Պատօրը թէև տրտունջը դէմքին, բայց իր կողմից էս կիսաբերան խոստացաւ բազմութեան հետ համակերպուել։

Երեք օր մնաց Մելքիսեդեկեանը բողոքականների գիւղում, մի երկու երիտասարդների մէջ հաղիւ կարող եղաւ զինավարժութեան աշխոյժը զարթնացնել, մնացեալները Քրիստոսի „որ սուր առցէ, սրով մեռցի“, խօսքերը յաճախ կրկնելով՝ փախս էին տալիս։

—Վայն այն օրն եկաւ մեր գլխին, մտածում էր չորրորդ օրը ճանապարհ գնալուս Գարեգինը, երբ շահասէր մարդորսների թակարդները լարուեցին մեր դէմ, երբ տգիտութեան շնորհիւ՝ պառակտումն տեղի ունեցաւ Քրիստոսի անդրանիկ եկեղեցու զաւակների մէջ։ Զորս օր փրփրակալած բերանով ոչինչ չըշինեցի, մինչև որ մի սուտ կազմած ցուցակ նրանց առաջը չըդրի։

Իմ բաղդից՝ գիւղն և իւր մօլեռանդ քարոզիչը հայազգի էին. այս յաջող հանգամանքին եմ պարտական ես, եթէ փոքր ի շատէ գործ կատարեցի և այս յիմարների ուղեղի մէջ գիտակցութեան առաջին խմորը մտցրի. ո՛ գիտէ, վաղը մի ֆանատիկ օտարազգի շահամոլ պաստօր իմ խմորեցրած ցորենի շաղախն անպէտքացնի փթած գարու, հոտած կորեկի և մքլած (նեխած) հաճարի զանգուածով։

Խ.

Բողոքականներն առիթ տուին Գարեգին Մելքիսեդեկեանին մի կաթոլիկ գիւղ ևս մուտք ունենալու։

Առաջին անձնաւորութիւնը, որ գիւղի ափին նրան հանդիպեցաւ, մի պապական *ալատնը* էր։

Այստեղ Մելքիսեդեկեանը պահեց իւր ճանապարհի արտօնագիրը, և ինչպէս սովորական պանդուխտ անցաւորական, խնդրեց «վերապատուելի հօրից» մի իջևան, ուր ինքը մի երկու ժամաչափ

հանգստանալուց յետոյ՝ կրկին կուղևորուի։

Պատերը սառնութեամբ գլուխը շարժելով Գարեգնի խոր բարևի փոխարէն՝ այնքան էլ շուտով դրական կամ բացասական պատասխան չըտուեց, այլ ոտից գլուխ խորամուխ աչքերով դեռ զննութեան ենթարկեց օտարականին, և ապա թէ՝ հարցրեց.—Հրամանքդ ինչ մարդ ես, կամ որտեղից ես գալիս, ուր ես գնում։

—Ռուսաստանցի եմ, չըխաբեց Մելքիսեդեկեանը, Վանից գալիս եմ անձնական գործով և Մարշի կողմերը պիտի անցնեմ։

—Անցաթուղթ ունէ՞ս։

—Մէթէ Տաճկաստանում կարելի է օրով ցորեկով ինձ նման մի այլատարազ օտարականին առանց անցաթղթի քայլ անել. իմ կողմից կասեմ, որ մեր աշխարհում այդպիսի անհոգեմտութիւնը գլխից ձեռք քաշելուն է հաւասար։

—Չեղծումները ամէն տեղ կարող են պատահել, սառնութեամբ պատասխանեց պատերը։

—Ձեր կասկածը փարատելու համար՝ ահաւասիկ իմ օրինաւոր անցաթուղթս, ասաց Գարեգինն և ծոցիցը հանեց ռուսական դրօշանշանով անցագիրը՝ վաւերացրած մի երկու տաճկական քաղաքներում։

—Այդ կողմէն ապահովացանք, այժմ նեղութիւն կրեցէք յայտնել ձեր ազգն ու անունը։

—Վրթանէս Սողոմոնեան։

—Այդ չեմ հարցնեը, կուզեմ իմանալ, թէ ինչ ազգի անդամ էք։

—Հայ եմ։

—Որպիսի՞ հայ։

—Հայ, ինչպէս որ հային է սեպհական, որի երակներումը հայի արիւն է վազում։

—Այդքանը հասկացայ, բայց այն է ինձ հետաքրքիը, թէ դուք ո՞ր կարգի հայերից էք, ուղղափառ, թէ անուղղափառ։

—Ներեցէք, հա՛յր, ես ձեզ չեմ հասկանում, թէպէտ ուղղափառ բառը սեպհականութիւն է ընդհանուր քրիստոնէութեան, բայց մեր աշխարհում այդ բառը վերագրուած է *օրթոդոքս* եկեղեցուին, այդ անունով Ռուսաստանում ընդունուած է կոչել տիրապետող եկեղեցին։

—Ուրեմն Ռուսիայի մէջ բացի օրթոդոքս եկեղեցին՝ ուրիշ քրիստոնեայ ժողովուրդ չկա՞ն։

—Շատ, ընչո՞ւ չէ. օրինակի համար, ինչպէս ասացի, հայ, գերմանացի, լեհացի...

—Հա՜... ա՜... ա՜... այդտեղ էլ սպասեցէք. Լեհացի ասացիք, դրանք ինչ կրօն են պաշտում։

—Լեհացիք ազգովին քրիստոնեայ են։

—Նոքա կաթուղիկէ եկեղեցուին հաւատացեալները չե՞ն։

—Բոլոր քրիստոնեայք կաթուղիկէ եկեղեցուին են պատկանում։

—Սրբազան պապի նախամեծար իրաւասութիւնը չեն ճանաչեր։

—Հա՛, այժմ ես ձեզ հասկանում եմ, հայր, երևի, դուք հարցնում էք՝ թէ ես կաթոլիկ եմ, լուսաւորչական եմ, թէ բողոքական, այդպէս չէ՞։

—Հազիւ հազ ըմբռնեցիք։

—Սակայն ներեցէք, վերապատուելի հայր, մի համեստ հարցմունք առաջարկել սրբութեանդ. ձեր հագուստը ձեզ մատնում է, որ դուք կաթոլիկ քահանայ էք, իսկ այս գիւղացիք ինչ ազգ են և ինչ կրօնի են պատկանում։

—Սոքա ուղղափառ հայ են։

—Ի՞նչ էք հրամայում, զարմացական շարժում արեց Մելքեսեդեկեանը, մի՞թէ Տաճկաստանի հայերի մէջ ուղղափառութիւնը ներս է սպրդել. ես այդ բանն երբէք լսած չէի. ինձ յայտնի է, որ Թուրքիայում բողոքական հայեր կան, կաթոլիկները նոյնպէս, բայց ուղղափառ հայեր՝ առաջին անգամն եմ լսում։

—Այլ սակայն դուք կը մոռանաք, որ այժմ դուք տաճկի և ոչ ռուսի հողի վերայ էք, ընդհանուր Եւրոպան, համակ Ասիան, ամբողջ Ամերիկան, սևամորթ Աֆրիկան, մինչև անգամ վայրենի Աւստրալիան ուղղափառ կը ճանաչէ մեն միայն կաթոլիկ եկեղեցին, որի գլուխը Հռովմի սրբազան և անսխալական պապն է։

—Ուրեմն այս գիւղն էլ կաթոլիկ է։

—Այո՛, սոքա ուղղափառ են, ապա թէ ոչ, Տաճկաստանի մի յետնեալ գիւղի մէջ դուք ինձի նման եւրոպացու չէիք հանդիպիր։

—Երևի սրանց հոգևոր հովիւն էք։

—Զը սխալուեցար։

—Եւ ինչ ազգի զաւակ էք։

—Վատիկանի զաւակ։

—Այդ գիտեմ, բայց ինչ ազգից էք։

—Կաթուղիկէ ուղղափառ սուրբ եկեղեցւոյ համար ազգութիւն չկայ, կայ ուղղափառ քրիստոնէութիւն։

—Այդ բոլորը լաւ, բայց դուք ֆրանսիացի էք, լեհացի էք, իտալացի էք, իսպանացի էք...

—Դոքա ամէնքն ևս ուղղափառ կաթոլիկ են։

—Վերջապէս ո՞րտեղ է ձեր հայրենիքը։

—Համատարած աշխարհը, ուր Վատիկանի սուրբ կրօնի լոյսը դեռ ներս չէ թափանցեր։

—Նշանակում է քարոզիչ էք։

—Մարգարէացաք։

—Խիստ բարի, հայր, սակայն ես և իմ երիվարը յոյժ քաղցած և յոգնած ենք, մի տեղ ցոյց տուէք, իջևանեմ, ապա թէ՝ երկար ու բարակ հետաքրքիր խօսակցութիւնները կունենանք, իսկ եթէ ընդունիք՝ գիշերել ևս պատրաստ եմ, որովհետև, իրաւն ասեմ, տաղտկալի ճանապարհորդութիւնից ձանձրացել եմ։

—Ո՛...ո՛ ...՝ ո՛չ... սիրելիս, ցանկութիւնդ չի

կատարուիը, մինչև չասես քո եկեղեցին։

—Հայ-Լուսաւորչական, կամ սովորաբար ասած՝ հայ քրիստոնեայ եմ։

—Այսինքն՝ Էջմիածնական։

—Հէնց թէկուզ Էջմիածնական։

—Է՛հ, ուրեմն, բարի ճանապարհ, այս գիւղի մէջ ձեզ իջևան չըկայ, ծռուեցէք դէպի արևմուտք, մի երկու ժամէն ձեր առջևը կելլէ ձեր ազգակից-ների և կրօնակիցների մի գիւղ, ուր դուք կարող էք հանգստանալ։

—Ի սէր Աստուծոյ, վերապատուելի հայր, կէս ժամն ևս շատ է իմ և գրաստիս համար. մինչև չըկազդուրուինք, մենք քայլ չենք կարող անել։

—Իմ մեղը չէ։

—Շատ լաւ, բայց հրամանքդ իբրև աւետա-րանի քարոզիչ, պարտական էք ամէն մարդու սի-րով ընդունել և ճշմարտութիւնը ճանաչացնելու համար՝ ամենայն միջոց չըխնայել։

—Է՜... է... է... Ներեցէք, չիմար չես գտել, որ խաբես, ուտես ու ելնես փախչիս, մենք գիտենք մեր հունձն ուր անելու ենք։

—Խօսք եմ տալիս կաթոլիկութիւն ընդունել։

—Խրատանոց քաղաքագէտ ես եղած, սիրելիս, ստամոքսիդ ժամանակաւոր պահանջը լցուցանելու դիտմամբ՝ կրօնը մուշտակի նման կռնակէդ յաճախ հանել հագնելու չես խղճահարուիը։

—Ո՛չ, ոչ, հաստատ խօսք եմ տալիս, որ կա-

թոլիկութիւն կընդունեմ և այսուհետև դաւանութիւնս երբէք չեմ փոխիլ։

—Հը՛մ, քթաճակերը կուչ ածելով՝ շունչ արձակեց պատերն և գլխով ճանապարհը ցոյց տուեց։

—Ո՛հ, որքա՜ն քաջափորձ էք, վերապատուելի սուրբ հայր, դուք անդրդուելի քաջ զինուոր էք մեր ուղղափառ կրօնին, դուք կաթոլիկական եկեղեցւոյ գլուխ և հաւատոյ վէմն՝ սրբազան Պետրոսի արժանաւոր աշակերտն էք, այն Պետրոսի՝ որի վերայ Յիսուս Քրիստոս խոստացաւ շինել իւր եկեղեցին և որին չըպէտք է յաղթահարեն դրունք դժոխոց։

—Ա՜ֆէրի՛մ, զարմացած աչքերը Գարեգնի վերայ շեշտեց *ալատները*, կեցցե՛ս, տղա՛ս, աւետարանի ամենէն էական խօսքերը գիտես եղեր։

—Որովհետև նուաստ ծառայդ բարեբաղդութիւն ունի բուն ուղղափառ կաթողիկէ եկեղեցւոյ հարազատ զաւակներից մինը լինել, խոնարհութեամբ ասաց Մելքիսեդեկեանը։ Այսքան երկարատև վիճաբանութիւնը՝ հրամանոցդ հաւատը փորձելու նպատակաւ արի, որի համար կանխօրէն ներողամտութիւն եմ հայցում և պատրաստ եմ խոստովանութեան մէջ դրածդ ապաշխարանքը սիրով կատարել։

Ա՛յո՛, վերապատուելի հայր, կրկնեց Գարեգինը, ես իրաւունք ունէի փոքր ինչ թերահաւատ գտնուիլ դէպի ուղղափառ քահանան, տարաբաղդաբար՝ ձեր նման անյողդողդն և մեր սուրբ հաւատի ջերմ նա-

խանձախնդիրները շատ սակաւներն եմ տեսել։

—*Եթէ այդպէս է, հետևիր ինձ, ասաց ալա-ամբն և գիւղապետի տունն առաջնորդեց Մելքիսեդեկեանին։*

ԽԱ.

Կատարեալ հաւատ ընծայելով իւր անճանօթ գաւակի անկեղծութեանը, ալատերն ուրախ սրտով իջեցրեց Գարեգինին տանուտէրի տան մօտ գըտնուած պարտիզում։

Անտեղ կանգնած բարձրահասակ երիտասարդը ալատերի հրամանով ձին գոմը քաշեց։

—*Ցանկալի կը լինէը իմ ձին աչքիս առաջից չը հեռացնել, ուզում էր խնդրել Գարեգինը, բայց ալատերը մերժեց նրա պահանջը։*

—*Միամիտ եղիր, սիրելիս, ապահովացրեց նա, քո ձիդ կը դարմանուի տիրոջը վայել խնամքով, դու այս գիշեր սոյն տան համար աստուածառաք հիւր ես, խիստ ախորժելի էր երկար խօսակցութիւններ անել հետդ. սուրը աւետարանէն առած քո մի հատիկ վկայութենէն ես ճանաչեցի քո մեծ արժէքդ, սակայն կը ցաւիմ, որ ձեզ միայնակ թողնելու ստիպուած եմ, այս գիշեր ես մեր գերապայծառին մօտ անցնելու շնորհքն ընդունած եմ։*

—*Ուրեմն Մաղաքիա, ձայն տուեց ալատերը ձին դարմանող և վերադարձող երիտասարդին, մեր ուղղափառ անճանօթ ճանապարհորդ եղբայրը նախ՝ իւր գրաստին, ապա՝ ստամոքսին և ապա՝ անձին յա-*

գեղումն և հանգիստ տալու կարօտ է, մի ուշանար պարտ ու պատշաճ տնօրէնութիւնն անել։ Հարկ կը համարիմ կանխաւ ծանօթացնել ձեզ, սիրելի, ը՛... ը՛... ը՛... ներեցէք, հրամանքիդ անունը մոռացայ, կմկմաց նորից *պատերը* Գարեգինին՝ սպասողական դիրքով նայելով նրան։

—Վրթանէս։

—Այո՛, սիրելի Վրթանէս, մեր յարգելի եղբայրը՝ տանս տէրը՝ գիւղի տանուտէրը, կամ գիւղապետն ևս է, տեղական բարբառով սորան *ռէյս* կը կոչեն։

Խիստ ջերմեռանդ հաւատացեալ ուղղափառ քրիստոնեայ է, աստուածծալին անբաւ բարիքներով տուն ու դուրսը լի է, հոգևոր կողմանէ մխիթարուած է, քաւարանին մէջ անմեղ մտնելու, անմեղ ելնելու է, իսկ մարմնաւոր կենաց մէջ ևս ոչնչի պակասութիւն չունի. առաքինի, բարեպաշտ ամուսնով, աստուածծավախ զաւակներով, և հնազանդ եղբայրներով բարեբաղդ և օրհնեալ է։ Այս րոպէիս մենք երկոքինս մեր աստուածապաշտ *ռէյս* Մաղաքիայի հիւրն ենք։ Ես ևս տեղացի չեմ, ինչպէս հրամանքդ գուշակեցիր, ուղղափառ կրօնի ստորին պաշտօնեայ և քարոզիչ լինելով՝ «աղուեսուց որջք գոն և թռչնոց երկնից բոյնք»...

—«Իսկ որդւոյ մարդոյ ոչ գոյ տեղի, ուր դիցէ գլուխ իւր», *պատերի* բերանից աւետարանի խօսքը խլեց Գարեգինը։

—Այո, մեր հանգիստը մեր սիրելի զաւակնե-

րուն գիրկն է, տարին քանի մ՚անգամ կուգամ այս գիւղն, և թէպէտ ամէնքէն յարգուած և ընդունուած եմ, այլ իմ օթևանը մեր սիրելի ուէյս Մաղաքիայի հիւրասէր յարկի ներքոյ է։ Թէ ինքն և թէ իւր ջերմեռանդ ամուսինն իմ խոստովանողքիքս են, ինքը քան կինը հնազանդ՝ կինը քան ինքը կամակատար։ Այս ամէնին դու անձամբ հասուկը լինիս, մենք շուտով կը վայելենք սրտով և պատկերով գեղեցիկ և առուգահասակ տանտիրուհու քնքոյշ մատներով պատրաստուած անուշահամ կերակուրները։ Օ՜ն, ուրեմն, իմս Մաղաքիա՛, այլ ևս մի՛ դանդաղիր, ողջագուրիր մեր թանկագին հիւրը և փութա կերակրեղինաց պատրաստութիւնը տեսնել, ես կարող եմ ուշ մնալ։

Ուէյսը մի ոտքն յառաջ դրեց, խոնարհ *թամմանաւ* արեց Մելքիսեդեկեանին և գնաց *ալաստերի* հրամանը կատարելու։

ԽԲ

Վերապատուելի հա՛յր, մի փոքր տարակուսական մտմտուքից յետոյ՝ խօսեցաւ Գարեգինը, ինձ շատ հետաքրքրում են Տաճկաստանի աղանդաւոր Էջմիածնական հայերը, ես կը կամենայի նրանց մասին ձեր կարծիքը լսելու։

—Ի՞նչ կողմանէ։

—Ձեզ քաջ յայտնի է, որ փոքր Ասիայի քրիս-

տոնէից մէջ Հայերը մեծամասնութիւն են կազմում. մի կողմը թողնենք իրանց յամառութիւնը, որ չեն ուզում Հռովմէական սուրբ եկեղեցւոյ գիրկը մտնել. (թէև զուր դիմադրութիւն է իրանց կողմից, մի օր Պետրոս առաքեալի եկեղեցին պէտք է յաղթահարէ), բայց և այնպէս ներկայիս խնդիրն այդ մասին չէ. ես կը ցանկալի իմանալ, թէ ընչո՞ւ համար պէտք է Հայերն իրանց հայրենի հողի վերայ այդ աստիճան հալածանքների ենթարկուած լինէին։ Տաճկաստանում ազգեր շատ կան. քուրդը, եզիդին, չաչաններն, ինչպէս իսլամական կամ իսլամութեան յարելու համահաճ ազգեր, հասկանալի է, որ մահմետականութեան տարրի մէջ պաշտպանութիւն կը գտնեն։ Բայց ախար Յոյներ կան, Ասորիք կան, որոնք նոյնպէս քրիստոնեայ են. այսինքն՝ մեր կաթոլիկութեան համար նրանք հերձուածող են, բայց Օսմանցուի համար կրօնի խտրութիւնը նշանակութիւն չունի, իսլամի աչքում ոչ-իսլամն անհաւատ է, ընչո՞ւ, ուրեմն, ամենքից աւելի ճնշումը Հայերին է բաժին ընկել։

—Ո՛չ, սիրելի Վրթանէս, Էջմիածնականներին դու ուղափառ և բողոքական Հայերի հետ մի խառներ, վերջիններըը համեմատաբար առաւել ազատութիւն կը վայելեն, և իրաւմբ։ Մերայնոց վերայ կը հսկեն Եւրոպայի առաջնակարգ պետութիւնքը, բողոքական Հայերուն Անգլիան է զօրավիգն, անօգնական կը մնան միայն Էջմիածնականներն։

—Ինձ զարմացք պատճառողն էլ այդ խնդիրն է. ինձ համար անհասատալի է, որ եւրոպական լուսաւոր տէրութիւնները մարդկութեան պաշտպանութեան գործումն երկրորդական նպատակներ ունենան։ Քաղաքական աշխարհում փոքր շահերը կուլ են գնում վեհ և վսեմ գաղափարների առաջ և մթին մարդասիրութիւնը չէ ամենից բարձր առաքինութիւնը։

—Իուն ազնուութեան գաղափարի վերաբերմամբ՝ քո կարծիքդ ուղիղ է, բայց ո՞չ ապաքէն շատ վսեմ առաքինութիւններ կը զոհուի մասնաւոր շահերին. նոյն իսկ Քրիստոսի սուրբ Աւետարանը շատ անգամ կը ծառայէ քաղաքականութեանն իբրև կոյր գործիք. յանուն աւետարանի շատ անգամ քինչ չարութիւնները չեն կատարուել և չեն կատարուիր։

—Եւ այդ ծուռը միջոցը դուք արդարացնո՞ւմ էք։

—Ներէք ես ալ չարդարացնեմ, հանճարները արդարացրած են։

—Օրինակի համա՞ր։

—Օրինակի կարօտութիւն չը կայ. դէցուք մեզ հարկաւոր է հեթանոսական աշխարհներին մէջ մեր հոգևոր որսն անել, մթին յանցանք է մեր կողմանէ եւրոպական գիւանագիտութեանը դիմել։ Եթէ քաղաքականութիւնը չը բռնադատէ, կարծեմ որ տաճիկ կառավարութիւնը մեզ իրաւունք կուտայ ազատ համարձակ իւր երկրի սրտերը մտնել։ Տաճիկը շատ լաւ

գիտէ իւր դիրքն եւրոպական պետութեանց շարքին մէջ, ուստի և կրհովանաւորէ այն տէրութեան հպատակներուն, որմէ աւելի ակնկալութիւն ունի։

—Իսկ իւր հպատակների հետ ինչպէս է վարուում։

—Ինչպէս իւր օրէնքը կրթելագրէ։ Բայց ի հարկէ այստեղ ևս ընտրութիւն կանեն, օրինակի համար՝ նոյն իսկ հայերու մասին խօսինք. Տաճիկը գիտէ, որ ուղղափառ և բողոքական հայերն Եւրոպայի պաշտպանութեան տակ են, ուստի նոցա հետ առաւել ակնածութեամբ կը վարուի, քան թէ անօգնական Էջմիածականներուն։

—Ընդունում եմ, սակայն մի՛թէ առաւել մարդասիրական չէր լինիլ, եթէ արտօնութիւն վայելող եւրոպացի հոգևորականները, ասենք՝ մէկն էլ դուք՝ ձեր հովանաւորութիւնը միապէս տարածէիք *ուղղափառների եւ ծուսիաների* վերայ, որոնք թէև մոլորեալ են, բայց մեծամասնութիւն են ներկայացնում։

—Եւ այդ մենք անենք ամէն ժամանակ։

—Այո՛, անշո՛ւշտ։

—Ուրեմն մենք տգէտներ պիտի լինէինք իսպառ, իսկ տգէտին առաքելութեան պաշտօն տալն առաւել քան յիմարութիւն է։

—Ինձ համար մութն են ասածներդ, վերապատուելի հայր։

—Ի՞նչ կասես, միամիտ և ազնիւ եղբայրս Վըր-

թանէս, եթէ մենք ելնենք և անխտիր բոլոր հայութիւնը հովանաւորենք. այլ ևս ինչպէս կարող ենք մեր հաւատացեալներու թիւն աւելցնել: Այդ կամակոր էջմիածականները կը նեղուին, կը կեղեքուին, կը տանջուին, կըսպանուին ու կը խոշտանգուին, բայց դարձեալ իւրեանց մոլորեալ աղանդին հաստատ կը մնան:

—Այդ բանը շատ ճշմարիտ է:

—Մեր քարոզիչներիս էական շահերը կը պահանջեն, որ իսկապէս ճնշումները չեղած տեղն ալ արհեստական ճանապարհաւ յառաջ բերենք:

—Ընչո՞ւ համար:

—Որպէսզի հովանաւորի դեր յանձն առնելով՝ մեր հօտն ստուարացնենք: Եւ ինչ կը կարծես, չենք ըներ:

—Չը գիտեմ:

—Գիտցած եղիր և ինքդ նորանով հրահանգուիր, թողունք բողոքական քարոզչաց ծածկագրծուիւններն և մերն ասենք. կաթոլիկ հոգևորականքս հրահանգուիւն ունինք Կ. Պոլիս նստած Հասունեան սրբազանէն, որ մտերմական և բարեկամական յարաբերուիւն պահենք Տաճկահայաստանի բոլոր պաշտօնակալներուն հետ և նորանց ձեռքով մեր ուռկանը լցուցանենք:

—Շարունակեցէք:

—Կաշառելով նահանգապետին, մենք կը շահինք նորա համակրանքը, իսկ այդչափը կը բաւէ

մեր ձեռքին ունելու նահանգի միւս պաշտօնեաները։ Այնուհետև մեր հլու կամակատարները կը դառնան նոքա ամենեքեան, որոնց ապրուստն այլոց քրտինքն է։ Տաճիկ էֆէնդին, քրդի ցեղապետն եթէ մի օր ձրի ուտելիք չունենան, քաղցէն կը մաըին. տաճիկ պաշտօնեայք՝ անձնատուր եղած ծուլութեան՝ նարգիլէ ծխելէն և դառը սուրճը որովայնը լցուցանելէն զատ՝ ուրիշ ոչինչ չը գիտեն. քրդի ազգապետն ևս յափշտակութեամբ միայն կապրի։ Բնական է ուրեմն, որ սիրելի են նոցա համար իւրեանց հաճոյքը լցուցանող ամենատեսակ միջոցները, իսկ այդ միջոցները հայթայթելն ընդ միշտ շահաւէտ են մեզ համար։

—Բացատրեցէք խնդրեմ։

—Ձանկուրթիւն ունելով մի որևէ աղանդաւոր հայ հասարակութեան փարախը պատառել և մոլորեալին ճշմարտութիւնն ուսուցանել, երբ ամեն ճիգը ի գործ դնելէն վերջը ձեռնունայն կը մնամ, ես կը դիմեմ ամենէն ուղիղ միջոցին։

—Որ լինի՞...

—Որ լինի այս. ես կը գրգռեմ տաճիկ պաշտօնէի կամ քրդապետի մոլեռանդութիւնը, իմ կողմանէ, որպէս թէ, նախանձախնդիր լինելով նոցա ինձ ցոյց տուած բարեկամութեանը՝ չեմ կարող համբերել, երբ, իբրև թէ, կը լսեմ տրտունջներ և հայհոյական խօսքեր իմ բարեկամաց ատուերներուդէմ։

—Շատ ճիշտ միջոց։

—Այդչափը դեռ լրիւ չէ. ես կը քաղցրացնեմ բարձրաստիճան պաշտօնէից քիմքը՝ ներբողելով նոյն հասարակութենէն ելլելիք առատ աւարնեըը և դեղեցիկ սեռի հրապոյրները։

—Այնուհետև՞։

—Այնուհետև հաստատ համոզուած եմ, որ եթէ ոչ բոլոր հասարակութիւնը, գէթ մի քանի դերդաստանի յամառութիւնն ընկճեցի և կաթողիկէ եկեղեցւոյ զաւակ արի նոցա։

—Սակայն դարձեալ լաւ հասու չեմ լինում, մատը քներակին տալով՝ մտածութեան մէջ ընկնել պատրուակեց Մելքիսեդեկեանը։

—Միւս օրը նոյն հասարակութեան առաջնորդները բանտի խորքը կը վարուին, կամ համայնքը քրդերի աւերածութեան կենթարկուի։ Ի՞նչ պիտի անեն այնուհետև աղանդաւոր էջմիածականները. ճարահատեալ՝ մեր հովանաւորութիւնը կը խնդրեն։ Մենք ևս իբրև քրիստոնեայ, արտաքուստ կարեկցական ձեռք կը կառվառենք և երկրորդ օրը մեր ձեռքով յարուցած հալածանքը կը դադարեցնենք։

Մեր այդ ակնյայտնի ազդեցութիւնն իւր արդիւնաւոր հետևանքը միշտ ունեցած է և կունենայ. աղանդաւորը հայերու մի մասը մեր փարախը կը մտնէ, միւս մասին ևս ճանապարհ կը պատրաստէ։

—Այժմ ձեզ հասկացայ, հայր, բայց ըստ իս, առաւել շուտ կը հասնէիք ձեր նպատակին, եթէ

փոխանակ ոլոր մոլոր ճանապարհների՝ անխտիր ձեր հովանաւորութիւնը տարածէիք բոլոր հայ ազգի վերայ, մտցնէիք նրանց մէջ գրագիտութիւն և ինքնաճանաչութեան ու ինքնապաշտպանութեան սկզբունքը, այն ժամանակը նրանց աչքերը կը բացուէին, իւրեանց ընդհանուր ուժովն և եւրոպական տէրութիւնների միջամտութեան յուսովը՝ նրանք կարող կը լինէին վերջ տալ իւրեանց նեղութիւններին։ Այսպիսով՝ բարոյապէս ու տնտեսապէս ապահովուած՝ գուցէ մի օր մի փոքրիկ ինքնավարութիւն ձեռք բերէին։ Այն ժամանակը նրանք ազգովին կը ճանաչէին ուղղափառ եկեղեցու գերակշռութիւնը միւս եկեղեցիների վերայ, ըստ որում այնուհետև առաւել գիտակցաբար կը մտածէին իւրեանց հոգւոյ փրկութեան համար, քան թէ բռնութեամբ։ Մ՛թէ ձեզ յայտնի չէ, որ ճնշումը յամառութիւն է ստեղծում։

—Դեռ անփորձ ես, սիրելի Վրթանէս, ժլատաց *ալատոնը*, դու ինքդ հայ ես և քո ազգին բնաորոշ յատկութիւնը չես ճանաչեր. վերացրու հայի մէջէն հերձուածն և բաժան-բաժնութիւնը, ներշնչէ սակաւ ինչ ինքնաճանաչութիւն և ձեռքերդ լուա իրանէ. այսօր Հայն այսչափ տանջանաց ներքոյ գոլով՝ իւր ձեռքի մէջ պահած ունի իրեն տիրապետող ազգը, Տաճկաստանի բոլոր քրիստոնեաներուն մէջ ամենքին առաւել արտօնութիւնները կը վայելէ հայը, Բարձրագոյն դռնէն մինչև վերջին *մուդիրը*

ամենուրեք ընդունուած է, ամենէն ապահով նիւթական վիճակն ունի, և գոլով ամենքէն չարքաշը, ամենքէն ալ տուկուն ազգն է։

—Հապա ընչո՞ւ է այսքան նեղութիւնները կրում։

—Գուցէ սակաւ կը կրէր, եթէ կողմնակի դըրդումներն և նոյն իսկ իւրայիններուն դաւադրութիւնքը չը լինէին. ազգայնութեան հաւատարիմներուն թուոյն մէջ անպակաս են և ազգադաւ հայկատակ ստորաքարշներ։ Շատ անգամ վերջիններն են իրենց ազգի դէմ հալածանքները յարուցանողքը, քանի է՝ թէ իրենց դէրքը ամրապնդեն Տաճկի առաջ։

—Ձեր պարտքն է ամբողջութեան գայրոյթը գրգռել փոքրաթիւ դաւաճանների դէմ։

—Կուզես ասել՝ ձեռք լուանք հայերը շահելու մխումներէն և մեր ձեռքով էջմիածնականութեան խարխուլ հիմնաքարն ևս առաւել խորթաղենք։

—Ոչ, հայր, ես անձնական փորձերիս վերայ յենուած՝ այս առաջարկութիւնն անում եմ. քանի ինքս գրապէտ չէի, թուղթ էջմիածնական էի. առաջին երդումս լինում էր՝ Իջման տեղը, Մեռոնն ու Լուսաւորիչը։ Բայց երբ դիպուածով, Ե՞մախու բողոքականների շնորհիւ, գրաճանաչ լուտերական եղայ, հետզհետէ սկսեցի ինքնակրթութեամբ զբաղանալ և քննողական հայեացք ձգել ընդհանուր քրիստոնէութեան վերայ. և ինչ էք կարծում, կա-

թոլիկուԹիւնը միայն ճանաչեցի կրօնքերէն ամենէն ուղղափառն և հոգւոյ փրկուԹիւնը միայնակ Հռովմայ եկեղեցւոյ մէջ տեսայ. և հէնց միւս օրը ճանապարհ ընկայ դէպի Թիֆլիս ու տեղական ալատեր հայր Օ... սկու արժանաւոր օրհնուԹեամբն՝ լուսաւորեցի միտքս ու հոգիս։

—Փառք Աբարչին, որ հրաշքով իմն մի կրաճ մեղաւորի դարձ է բերեր, բայց դու չը կարծես, Թէ բոլորեքեան նոյն շնորհացը կարժանանան. ըստ իս, Հայք առաւել կըլամաւին իւրեանց մոլորուԹեան մէջ, եԹէ տաճկի բռնուԹեան լուծը նոցա պարանոցէն բարձուի։

Գալով ձեզ՝ այսչափս կասեմ. ով ոք ջատագով և նախանձախնդիր է կաԹոլիկական սուրբ կրօնին, պարտաւոր է լսել իր հոգևոր պետերուն և նոցանէ իւր ապագայ գործառնուԹեանց հրահանգն ստանալ։

—Ես պատրաստ եմ հնազանդուԹեանդ քարոզած ճշմարտուԹիւններով ղեկավարուիլ, և շնորհակալ եմ, որ փակ աչքս բաց արիք, ապա Թէ ոչ, այսուհետև նոյն վտանգաւոր գաղափարը պիտի քարոզէի ամէն տեղ, ինչ որ պարզուԹեամբ ձեզ խոստովանուեցի։ Մեղքս ինչ Թագցնեմ, մինչև ցայսօր ամենուրեք քարոզածս այն է եղել, ինչ ձեզ ասացի, այս աններելի սխալանքներուն համար մաղԹում եմ ձեր հայրական ներողամտուԹիւնը։

Այս խօսքերէն յետոյ՝ Մելքիսեդեկեանը մօտեցաւ և պատերի աջը համբուրեց։

—Պարտքս լինի երկրորդ հանդիպմանս ընձեռել քեզ, սիրելի Վրթանէս, առանց դրամական վարձու՝ սրբազան պապի *ինդուլգենցիան* (թողութեան կոնդակ), այժմ մօտս չունիմ, սպառուած են, կըսպասեմ մօտ օրերս Պօլսէն առնելու։

—Որի համար, հայր, անշուշտ դուք տուժելու էք, խոնարհ ծառայդ չունի այնքան կարողութիւն, որ սուրբ *ինդուլգենցիայի* արժէքը վճարէ, իսկ ձեզ, կարծեմ, հաշուով ու համարով է տրուում՝ արժանաւորաց միայն մատակարարելու։

—Մենք գիտենք մեր անելիքը, մէկի պակասորդը միւսէն կըլրացնենք, դիցուք քեզնէ 100 ղուրուշ պակաս առի, մի ուրիշ անզաւակ և հարուստ բարեպաշտի վերայ եռապատիկ կը բարդեմ։ Սուրբ եկեղեցւոյ առատաձեռն զաւակունք ամէն տեղ և ամէն հասարակութեանց մէջ յարաժամ կըգտնուին։

—Օրհնեալ է Աստուած, օրհնեալ է Հռովմայ սուրբ գահը։ Վրթանէսը երկրորդեց իւր երկրպագութիւնը, իսկ պատերն աջակնքեց նրան։

Այդ ժամանակն էր, որ Ռէյս Մաղաքիան ճաշը բերեց։

ԽԳ.

Ճաշի ժամանակ Գարեգինը տեղեկացաւ, որ պատերը Ֆրանսիացի է և եզուիտական կարգից,

որ նա քաջ խօսում է հայերէն, տաճկերէն, քրդերէն, յունարէն և ասորերէն, որ գիւղումը մի ուրիշ հայ կաթոլիկ քահանայ կայ, բայց *պատուելի* վկայութեամբ՝ տգէտների մէկն է, այնպէս որ *պատուելը* խորհուրդ չի տեսնում «իւր սիրելի Վրթանէսին» նորա հետ տեսնուիլ։ Այլ եթէ նա ցանկանում է հոգեշահ քարոզները լսել, կարող է առաջիկայ կիւրակէին վերադառնալ այս գիւղը՝ բաց-պատարագի ներկայ լինելու. ինքը *պատուելը* պէտք է՝ պատարագէ և քարոզ խօսի, և գուցէ մինչև այն օրը կըստացուի ինդուլգենցիական թերթը։

Գարեգինն, ի հարկէ, սրտանց շատ ուրախ եղաւ եզուիդ *պատուելի* շուտով հեռանալու մասին, բայց արտաքուստ ցաւակցութիւն յայտնեց և խոստացաւ, որպէս և իցէ, միջոց ճարել սուրբ շնորհացն արժանանալու։

Սեղանի վերայ եւրոպացի *պատուելը* միանգամայն ապշեցրեց Մելքիսեդեկեանին իւր շատակերութեամբը։

Տանտիկինը վաղուց ճանաչած է եղել իւրեանց մշտական հիւրի ախորժակը, երկու հոգու համար տասը մարդի բաժին էր պատրաստել և այն՝ համեղ քաղցրեղէններ։

Անշուշտ հոգևոր հօր ախորժակը բանալու համար էր, որ գեղեցիկ տանտիկինը պարտք էր համարել իւր տօն օրերի համար *ըռախաթլիջի* պահած հագուստով պճնազարդուիլ. նա իւր բնական շա-

զանակագոյն խոշոր և սիգահայեաց աչքերին թուխ *սուլմա* ներկ էր տուել և եկել երկու ձեռքը կըրծքին՝ սպասաւորում էր սուրբ հօրը։

Ռէյս Մաղաքիան սեղանից բացակայ էր։ Դեռ նոր հացը քաշել էին, որ *պատերը* տիպեց ռէյսին շուտով ճաշել և իւր համար գրաստի պատրաստութիւն տեսնել՝ մինչ ուշ չէր։ Շատ կարելի է խեղճ ռէյսը մտադիր էր իւր կնոջ պատրաստած քաղցրեղէններով իւր քիմքը պարարել, բայց նա քաղաքավարութեամբ իւրեան կշտացած ցոյց տուեց, ճաշից վերկացաւ ու գնաց իւր տանուտէրական պաշտօնը կատարելու։

—Շատ լաւ եղաւ, որ հեռացաւ, ժպիտն այտերին աչքի պոչով նշանացի արեց *պատերը* Մելքիսեդեկեանին, եթէ ռէյսն այստեղ մնար, մենք զրկուելու էինք անուշեղէններս պատրաստող տիկնոջ առաւել անուշ հայեացքէն։

Այդ ժամանակը տանտիրուհին բացակայ էր, իսկ ծառի տակից անուշեղէնների հոտից հրապուրուած՝ գող կատուի աչքերով նայում էր մի մանկիկ։

—Զաւակս, ձայն տուեց *պատերն* երեխային, գնա, ասա մայրիկիդ՝ թող մեզ ջուր բերէ խմելու, ասա իրեն, որ հայրիկդ գնաց գործի, իսկ այստեղ մեզ սպասաւորող չկայ։

Աղաղակը շատ չանցաւ, տիկինը պղնձեայ գաւաթը ջրով լիքն՝ եկաւ և խոնարհութեամբ մօտեցաւ նոր հիւրի ձեռքը համբուրելու։ Այդպէս էր

պահանջում տեղական սովորութիւնը։

—Ահա սա է մեր բարեպաշտ խոստովանադուստրը, որուն գովանի վարուց և գեղանի տեսքին նկարագիրը կարճօրէն արի հրամանքիդ, ծանօթացրեց *պատմիչը* Գարեգնին. ահա աչքովդ տես և հրճուիր. հոգւոյ ներքին գեղեցկութեան հետ՝ արտաքին գեղն ալ մի մեծ երկնային շնորհ է, որուն Աստուած արժան է տեսած մեր սիրելի Մարիամ խաթունին. այնպէս չէ՞, Մարիամիկս, այս ճշմարտութիւնն ես յաճախ չեմ կրկնած քեզի։

—Այնքան գովել ես իմ գեղեցկութիւնը, որ հիմա օրական մի քանի անգամ քո ընծայ բերած հայելու մէջ ինքս ինձ նայելով՝ ուրախանում եմ, համարձակուեց ատամները բաց անել և անհամեստ ժպիտով պատասխանել տանտիրուհին։

Գարեգնի նեարդները ցնցուեցան, առաջին անձամն էր նա այսպիսի անպարկեշտ հայ կին տեսնում, այն էլ՝ Տաճկաստանի գիւղերում. բայց և այնպէս նա խոհեմութիւն համարեց աննշան ժպիտով իւր հաւանութիւնը տալ անպատկառ խօսքերին։

Սեղանը ժողովում էին, որ ուչյան եկաւ և *պատմիչի* համար մի թամբած ձի բերեց։

Պատմիչն առաջինը համբուրեց և բարև մնալ ասաց Գարեգնին, յետոյ Մաղաքիային, ամենից վերջը իւր համեստ խոստովանադստեր լայն ճակատին իւր հայրական սուրբ համբոյրն երեք անգամ դրոշմեց։

—Շո՛ւտ կը վերադառնաս, չամաչեց հարցնել տիկինը։

—Խոստովանքի պէ՞տք ունիս, քաղցրադէմ հարցուց իւր կողմից *պատերը*։

—Այ՛ո, քեզի յայտնի է, որ անարժան մեղաւորին մէկն եմ։

—Հոգ մ՚ընե՛ր, այդ մեղքերուն կէսը մեր պատուական ուէյսին բաժին կը հասնի, հատուածական քրքիչներ արձակելով՝ պատասխանեց *պատերը*. հետն էլ աչքով անելով Գարեգնին՝ այս աւելացուց. «պատուական է ամուսնութիւն և սուրբ են անկողինք նորա», առաքելոյն խօսքերն են. այս կիւրակէ կուգամ և քո անցեալ, ներկայ և ապագայ մեղաց համար կըքերեմ մեր սրբազան պապին *ինդուլգենցիան*. տեսնենք, հապա, դու այն ժամանակին քնչ բանով վճարելու ես այն մեծ շնորհացը քեզի տրժանացնողին արժանի վարձատրութիւնը։

—Հոգւով ու մարմնով քեզի անձնատուր եմ, գարձեալ կըլինիմ, տուփոտ աչքերը *պատերի* երեսին խաղացնելով՝ ասաց տիկինը։

—Շատ շնորհակալ եմ, դստրի՛կս։

—Վերապատուելի՛, խոնարհ ծառայիդ ևս չքս կարող նոյն բաղդին արժան անել, խնդրեց Մաղաքիան։

—Կինն արձակել, այրը կապելը չարամիտներուն գործն է, սիրելի՛ ուէյս, իսկ ես միշտ եղեր եմ և կը մնամ բարեմիտ դէպի քո բոլոր գերդաստանը։

—Ուրեմն յուսամ, որ ինձ համար ևս թողութեան հրովարտակ կը բերես։

—Պարտքս լինի։

Ռէյսը կրկին մօտեցաւ *պատերին* և երկու ձեռքով ամուր բռնեց նրա հայրական սէն ու ջերմաջերմ համբուրեց։

Ռէյսը տարաւ ճանապարհ դրեց *պատերին* ու դարձաւ Գարեգնի մօտ, իսկ տանտիրուհին երկար ժամանակ պատի տակից աչքը տնկած՝ նայում էր և մինչ կաթոլիկ քահանան անտեսանելի չեղաւ, նա իւր կացած տեղը չլթողեց։

Վերջին անգամը տիկին Մարիամը թևով սրբեց իւր գեղաղէշ աչքերից ցօղած արտասուքն և ներս պրծաւ տուն։

Մելքիսեդեկեանը տեսաւ այս ամէնն և արտաքուստ միայն գլուխը շարժեց, իսկ ներքուստ ատամները կրճտեց։

ԽԴ.

Միւս առաւօտը Գարեգնի հրամանով ռէյսը մի գիւղական ժողով կազմեց իւր կալումը։

Ամէնքն արդէն լսել էին օտարական որսորդի անունն ու համբաւը և սիրով շտապեցին անձամբ ստուգել աւելորդներով պատմուածները։

Գիւղական ժողովին ներկայ էր և տեղական հայ վաքդապետը, որի մասին այնչափ աննպաստ

տեղեկութիւնները էր տուել եզուիտ սլատերը։

Հայ վարդապետի հետ Մելքիսեդեկեանի տեսակցութիւնն այսօր առաջինը չէր. երէկ երեկոյ նրանք երկար զրուցատրութիւն էին ունեցել միմեանց հետ։

Հէնց սկզբից հասկացաւ Գարեգինը պատերի գժտութեան պատճառը տեղական քահանայի դէմ։

Հայր Տաճատը (այսպէս էր երիտասարդ վարդապետի անունը) մի զարգացած հոգևորական էր։ Նա իւր ուսումն ստացել էր Կ. Պօլսում՝ Մխիթարեան ակնաւոր մի հայագէտ վարդապետի մօտ, որի սկզբումը՝ ծառան, ապա՝ ձեռնասուն աշակերտն է եղել։

Հայր Տաճատի աշխարհահայեցողութիւնը միանգամայն զանազանուում էր իւր կարգակիցներից։

Նրա հայեացքով՝ հայ ազգի կրօնական խտրութիւնները ցաւալի երևոյթներ են, բայց կատարուած փաստն այնքան էլ յուսահատական չըպէտք է համարել։

Նա ասում էր. կարելի է լինել կաթոլիկ և բողոքական, և չանջատուելով ազգի մեծամասնութիւնից՝ մնալ հայ և ծառայել ազգայնութեան գաղափարին՝ եթէ միայն տգէտ ժողովրդի մոլեռանդութիւնը չըգրգռեն օտարազգի շահամոլ քարոզիչները ու միսիոնարները։

Սոսկալի փաստեր էր յառաջ բերում հայր Տաճատը՝ Տաճկաստանի մէջ մրջիմների նման տարած-

ուած՝ Եւրոպայից փախած, կամ վռնդուած կաթոլիկ քարոզիչների մասին, որոնք բուն դնելով Հայ աշխարհի հեռաւոր և մթին խորշերում, ըստ ամենայնի մոլորութեան և տգիտութեան մէջ են պահում դէպի իրանք կուրօրէն մեծ համարմունք ունեցող խուժանին։

Հայր Տաճատի պատմելով՝ գիւղ ու քաղաք չի մնացել, որ Եւրոպայի անուանն անարժան գաւակները իրանց անբարոյական գործերով չըպղծեն ու չապականեն։

Հայր Տաճատն անուանեց մի երկու վենետիկեան հայրերի, որոնք հալածուած են իրանց ծննդավայրից։

Կրթուած և դաստիարակուած լինելով ազգային ուղղութեամբ՝ այդ թարմ ուսումնականները բարւոք են դատել բաժանուել իրանց միաբանակիցներից և շտապել հայրենիք՝ իրանց եղբայրակիցների հոգևոր և մտաւոր ցաւերին դարման անելու, բայց հէնց առաջին քայլափոխում արգելքի են հանդիպել։

Հայր Տաճատը պատմեց, որ ինքն էլ վաղուց իւր նմաններին վիճակակից պիտի լինէր և կը հալածուէր, եթէ խոհականութիւնն իրեն ղեկավարող չունենար։

Նոր ստանձնելով իւր հայրենի գիւղի քահանայութիւնը՝ հայր Տաճատը յաջողում է 30—35 երեխայից բաղկացած մի փոքրիկ դպրոց հիմնել.

շատ սակաւ ժամանակամիջոցում նա գրագիտութիւնն է մոցրել։

Ձաւակիների հետ հայր Տաճատը դաստիարակել է և նրանց ծնողներին ու երէց եղբայրներին, ամէն կիւրակէ և տօն օրեր նա եկեղեցու ամբիոնից նկրշնչել է ազգային դաղափար։

Ողևորութիւնը տևողական չի եղել. մի օր Հ. Տաճատն ստանում է Պօլսի իւր բարեկամից մի նամակ, որով խորհուրդ է տրուում իրեն փակել դըպրոցը, դադար տալ քարոզներին, եթէ չի ուզում իւրովի անձին կոլստեանը պատճառ դառնալ։

Բանից դուրս է դալիս, որ մեր բարեկամ *Հզուիլ ալատեղը*, որի անուան հետ մենք հայր Տաճատի շնորհիւ ենք ծանօթանում՝ Հ. Ալֆօնսը հասու լինելով եղելութեանը, փութացել է եւրապատակած տեղեկութիւն հաղորդել Հասուն Գերապայծառին։

Հասունը սաստիկ հրաման է արձակել՝ ստուգել իրողութիւնն՝ և ճշտելուն պէս՝ կարգադրել, որ վերոնդուր վարդապետը քարոզչութեան պատրուակով աքսորուի Եգիպտոսի տաք կողմերը։

Առանց ժամավաճառ լինելու՝ հայր Տաճատն անձնական տկարութիւն պատճառաբանելով՝ աւերել է դպրոցը, դադարել է քարոզելուց և շտապել է առանձնապէս տեսակցել *Հզուիլ* Ալֆօնսին, զրոյցն յայտնել իւր անփորձառութեան մասին և մի քանի սկի մէջլիտիէի աջհամբուրով հազիւ կարողացել է

իջեցնել վերապատուելի *պատերի* արդար բարկութիւնը:

Մի ուրիշ նամակով Հ. Տաճատը տեղեկացել է իւր բարեկամից, որ արդարև Հ. Ալֆօնսի երկրորդ նամակն է անհետևանք թողել Դերապետճաւի խիստ տնօրէնութիւնը:

Այն օրից այսօր է, պատմում է Հ. Տաճատը, որ ինքը մի կողմը քաշուած՝ լեզուն փակել է և պարապում է լոկ քահանայութեամբ. իսկ *պատերը* Ալֆօնսն՝ ընդհակառակն՝ ընդարձակ ասպարէզ է գտել միամիտ ժողովրդին իւր ցանցի մէջ խճճելու:

Հ. Տաճատի բառախաղութիւններից Գարեգինը հասկացաւ, որ ռէյս Մաղաքիայի կնոջ և Հ. Ալֆօնսի յարաբերութիւնները վարդապետին անճանօթ չեն և թէ նման օրինակ զգուելի դէպքեր սովորական են հայր Ալֆօնսի և իւր նմանների համար՝ Տաճկաստանի հայ կաթոլիկական բոլոր համայնքներում:

Գարեգինը մի երկու ժամաչափ խօսեց ժողովրդի հետ. նա իրան ներկայացրեց իբրև ջերմեռանդ կաթոլիկ:

Այդ կերպարանափոխութիւնն օգնեց նրան արծածել ժողովրդի մէջ ինքնաճանաչութեան սկզբունքը: Մելքիսեդեկեանը քարոզում էր նրանց սէր և միաբանութիւն հաստատել իրանց արևնակից „էջմիածնական“ և „բողոքական“ հայ եղբայրների հետ և օտարազգի կաթոլիկ *պատերներից* առաւել՝

հաւատ ընծայել իրանց հարազատ համազգի հայ կաթոլիկ հոգևորականներին։

Մելքիսեդեկեանի խօսքերն ընդհանուր համակրութիւն գտան և արձագանգ տուին շատ սրտերում։

Երկու օր մնաց նա այդ գիւղում, երկու անգամ պատարագ ելաւ և երկու աշակերտ ունեցաւ զինավարժութեան արհեստի մէջ։ Մէկն էր ինքը հ. Տաճատն և միւսն՝ իւր տնային գաղտնի աշակերտը։

Այս գիւղի և գաւառի տեղագրական քարտէսը նկարելու կարիք չունեցաւ Գարեգինը։

Հ. Տաճատը տուեց նրան իւր ձեռագրածը՝ մի պատուական գործ՝ մանրամասն նկարած և գծած։

Հ. Տաճատը խրախուսուած Գարեգնից՝ ուխտեց զգուշութեան մէջ պարտաճանաչ լինել։

Նա խոստացաւ շարունակ տեղեկութիւնները հաղորդել Մելքիսեդեկեանին իւր գաւառի հայերի մասին, խորութիւն չընդունելով նրանց կրօնների մէջ։

Գարեգինն ուրախ տրամադրութեամբ հրաժեշտ տուեց հ. Տաճատին։

— Եթէ ամէն տեղ այսպիսի հոգևորականներ ունենայինք, որոճում էր իւր մէջ ձիու վերայ հեծած Գարեգինը, մեր առաջին խմորած շաղախը շատ շուտով կըհասնի, կըգայ և հեռու չի լինիլ այդ խմորով թթխուեցրած պատուական հացը վայելելու օրը. եթէ մեր ձեռնարկութիւնն այսպէս յաջող ընթանայ, համարձակ կարելի է ենթադրել, *որ սկիզբն է ւրկանց։*

Մելքիսեդեկեանն իւր գործառնութեանց հաշիւը պատրաստեց Ասքանազեանին ուղարկելու, որն իւր գրած նամակի համաձայն՝ Մշի կողմերումն էր։

Մշու կողմերում մի լեռան առատ որսի համ-

Խե.

բաւն իսկապէս գրգռեց Մելքիսեդեկեանի որսորդական եռանդը։ Ապրիլեան արիւնն եռաց նրա երակների մէջ և նա կամեցաւ մի քանի օր բացառապէս իւր արհեստով պարապել։

Բայց ոչ հայ գիւղական տանուտէրը, որի տանն իջած էր, ոչ տէրտէրն ու գիւղի առաջաւորները խորհուրդ տուին նրան այդ վտանգաւոր և յանդուգն քայլն անել։ Քահանան մինչև անգամ զգուշացրեց ռէյսին անփորձ „աղային“ ուղեկիցներ տալուց։

—Ընչո՞ւ համար, հարցրեց Գարեգինը։

—Որովհետև լեռան պարարտ արօտի սէրը քաշել է դէպի իւր հովիտները մարդակեր քրդերի անչափ բազմութիւն, ասացին ամէնքը միաբերան։

—Եթէ այդպէս է, թող ձեր տղայքն ինձ առաջնորդեն մինչև լեռան ստորոտն. այնուհետև ես ինձ համար ուղեցոյցներ կըգտնեմ, քրդերն իրանք իմ առաջնորդողներս կըլինին։

—Ի՞նչ ես ասում, տէր, ձայն ձայնի տուին ամէն կողմից, դու քուրդ ասուածծ մի լեռ (ցեղ) չես ճանաչում, նրանք արիւնռուշտ գազաններ են, նրանք սարսափ ու ահ են հային, ասորուն և նոյն իսկ տաճկին. նրանց համար խտրութիւն չըկայ։

—Տաճիկն քնչ ունի վախենալու, երկրի տէրն է՝ քուրդը պէտք է նրանից ակնածի։

—Սխալ ես, տէր, ասաց ռէյսը, էլի մենք, վանք Աստուծոյ, ինքներս հովիւ ժողովուրդ ենք, եթէ սուր չունինք, քո հաւանած հաստագլուխ հովուական ցուպ գործածելու մէջ վարժ ենք. մեր մէջ այնպէս յաջողաձեռն մաշակ խաղացնողները կան, որոնց մէկն երեք քրդի թրբի ու վահանի դէմ մի անգամից է կռուում և յաղթում։ Տաճիկն իսպառ ողորմելի է. քրդերը տարին բոլոր հաւի ձագի նման կոտորում են նրանց։

—Ի՞նչպէս, տաճկին քո՞ւրդն է յաղթում։

—Լաւ. օրը ցորեկով երեք քուրդ մտնում են տաճկական դիւղն և սւերում, քանդում, յափշտակում, աղջիկները փախցնում։

—Եւ տէրութիւնը քրդերին չէ՞ պատժում։

—Հը՛... ծիծաղեց ռէյսը, տէրութիւնն ո՛վ է. եթէ դու տէրութիւն Սուլթանին ես ասում, նա հեռու է, ոչ տեսնում է և ոչ գիտէ, թէ ընչեր են գործուում իւր կարգած դատաւորների ձեռքով։ Երկրիս գլխաւոր սւաղակը, գողը, մարդակերները մեզ կառավարողներն են. նրանց շատ հո՞գսն է, թէ քուրդ Մսո աղէն էսօր հինգ հայ, վաղը՝ տասը տաճիկ կըսպանի, կամ սպանել է. բաւական է միայն, որ Մսոի կողմից իրանց բաժինը գնայ։

Շատ անգամ տաճիկ իշխանաւորներն են քրդին գրգռում. անօրէնները բոլորէքեան կաշառքի

վերայ են հաստատուած, ոչ ոք տեղ չի ստանալ, մինչև կաշառ չըտայ. վերջին տասնապետից՝ մինչև փաշան՝ միմեանցից կապուած են. եթէ նրանք չը քանդեն, չըլափեն, չկողոպտեն, ինչ կարող են արդար ճանապարհով կառավարուել, կամ տէրութեան տուրքը հասցնել. նրանցից ամէն մէկը հազար ծակ ունին փակելու, որ մէկը ցխեն. ուստի ստիպուած՝ յոյսները քրդերի վերայ են դնում և աչքները ճանապարհին սպասում են նրանց ուղարկելիք աւարին։

—Եթէ այդպէս է, թող հայ և տաճիկ հարստահարեալ գիւղացիքն իրանք կշտացնեն անկուշտ մեծաւորների աչքերն և քրդերի ձեռքից ազատ լինին։

—Այն ժամանակն աւելի լաւ չէր՝ փոխանակ երկչոտ ու պարծենկոտ տաճիկ պաշտօնէի գրպանը հաստացնելու՝ քրդի աչքը լի պահէինք, մինչդեռ թուրք իշխանաւորներն իրանց կաշու ապահովութիւնը քրդից են սպասում։ Քուրդն եթէ չըլինի, ոչ մի *միւդիր* կամ *դայմաղամ* տեղը չի կարող հաստատ մնալ, հէնց իրանց դրան մարդիկը նրանց կսպանեն։

—Ի՞նչ էք ասում, հօյեր, բարկացաւ Գարեգինը, այդ կառավարիչները գէնք չունէի՞ն, կանոնաւոր զօրք չունէի՞ն։ Զէնքով ու զօրքով են պետութիւնները հպատակների իշխում, տէրութիւն պահպանում։

—Ո՞վ է տուել մեր աշխարհում կանոնաւոր զօրք, եթէ այստեղ այնտեղ, զօրանոցներում գտնուած սակաւաթիւ զինուորներն ես ասում, նրանք մերկ ու քաղցած՝ գիւղերը քարշ գալով՝ գլուխ են պահում։

—Ուրեմն, ձեր խօսքով, եթէ կամենաք՝ կարող էք գոնէ տաճերաս քրդի հետ սերտ բարեկամութիւն պահել և ապահով ապրել։

—Ա.նշո՛ւշտ. քուրդն այնքան էլ վտանգաւոր և սարսափելի հակառակորդ չէ՝ եթէ հետը սիրով վարուինք։ Տարեկան մի երկու անգամ իւրաքանչիւր ցեղապետի մի քանի ոչխար և մի հատ գեղեցիկ ձի ուղարկելով՝ կարելի է իրանց իշխանութեան ներքոյ գտնուած բոլոր քրդերի հետ մի տան պէս ապրել։

—Ապրում էլ ենք, միջամտեց մի ծերունի, մի անգամ մեր դրացի Աւգօ-բէգը մի քանի ձիաւորով մեր գիւղի գլխովն անց էր կենում. մենք խորհուրդ արինք, գնացինք, խնդրեցինք, մեզ հիւր բերինք, պատուեցինք, մեծարեցինք և չորս եզն և մի գեղեցիկ վրանի թաղիք ընծայեցինք։

—Յետո՞յ։

—Հինգ տարի է անցել այն օրից և Աւգօ-բէգի քրդերը մեզ հետ հարազատ եղբօր պէս են, իսկ նրանց ահից՝ ուրիշ քրդեր չեն համարձակուում մեր գիւղը ոտք դնել. ըստ որում միւս օրն Աւգօ-բէգի և մեզ վնասող ցեղի մէջ մեր պատճառաւ արիւնահեղութիւն կը՝ պատահի։

—Այլ ևս ինչ էք ուզում, հէնց այսօրւանից ձեզ համար սուրբ պարտականութիւն համարեցէք քրդերի սիրտը գրաւել և գլուխներն եղել. դուք կը տեսնէք, որ ձեր վտանգաւոր թշնամիներից մէկը ձեր բռնութիւնը կը լինի, ասաց Մելիքսեդեկեանը՝ մանրամասնաբար բացատրելով հայերին իրանց ներկայ կացութեան վտանգաւորութիւնը։

—Աղան լաւ է ասում, վճռեցին միաբան։ Միայն քահանան էր, որ երկար ժամանակ դիմադրում էր. վերջը նա էլ համաձայնեց՝ երբ Գարեգինը բերեց յայտնի առաջը. շան հետ եղբայրացիր, փայտը ձեռքիցդ մի վայր դնիր։

Միւս օրը Ռէյան ինքն անձամբ առաջնորդեց Մելքիսեդեկեանին դէպի լեռնաբնակ քրդերը։

Խ Զ.

Լեռան երկայնութեամբ տարածուած էին քրդերի վրանների խմբերը, որոնց մէջ մի մի վրան իւրեանց մեծութեամբն ու գեղեցկութեամբը հեռուից նկատելի էին լինում։

Ռէյսը մի առ մի բացատրում էր Գարեգնին իւրաքանչիւր ցեղերի և ցեղապետների բնաւորութիւնները, թիւը, տնտեսական դրութիւնն և այլն։

Աջակողմում՝ մի դարատափի վերայ երևում էր, Ռէյսի ասելով, ամենադաժան և հային սարսափեցնող քրդերի վրանախումբն իրանց գլխաւորի հետ։

Ռէյսը խորհուրդ էր տալիս Գարեգնին, որ չայցելէ վերջիններիս։

Մելքիսեդեկեանն, ընդհակառակը, պնդեց և իր հետ դէպի այն կողմը քարշ տուեց սարսափահար եկած ռէյսին։

Վրանների հովուական շները վաղուց զգացին օտարոտի և անճանօթ հոտն և ամէն կողմից գրոհ տուած յարձակում գործեցին։

Գարեգինը հանեց իր դաշոյնը։

—Ի սէր Աստուծոյ, չըլինէ թէ մէկն ու մէկին վիրաւորես, զգուշացրեց ռէյսը, եթէ շները մեզ չբծուատեն, իմացիր, որ իւրեանց արենկեր տէրերը կըբրդեն։

—Դու մի՛ մօտ գալ, թող ինձ վերայ յարձակուին, ես գիտեմ պաշտպանուելն, ասաց Մելքիսեդեկեանն և մտրակեց ձիուն։

Արդարև, 15—20 շուն, որոնց ես շուն ասեմ՝ դու գալլ, շուրջ բոլորեցին Գարեգնին։

Աչտեղ երևաց, որ ոչ միայն արցախեցի քաջասիրտ կորճի՝ այլև իր սանձակոտոր երիվարի մէջ շնորհք է եղել։ Այնքան արագ և այն աստիճան ճարպիկ պտոյտներ էր անում քաջավարժ երիժոյգն՝ և այնպիսի յաջողութեամբ առաջին ու յետին ոտքերով ոստոստիւնները էր կատարում, որ ամեհի գամփռները չէին վստահանում մօտ գալ։ Մէկն ու մէկն եթէ յանդգնում էր . ծլունգ լինել հեծեալին ձիաթափ կորճանելու նպատակով՝ քաջ

տղամարդի դաշոյնի հարուածից կրկին վայր էր ընկնում։ Զարմանալին այս է, որ ոչ մի շան արիւնը չէր հոսում։ Սրի տափարակ կողմն էր գործում։

Շատ ուշ գազանները մտածեցին ձեռք քաշել վտանգաւոր հակառակորդից և մօտենալ ուէյսին։ Այդ լուսաւոր միտքը ծագեցաւ նրանց գլխում՝ երբ հովիւները արդէն մահակներով օգնութիւն էին հասել։

—Անպիտաննե՛ր, գոչեց Մելքիսեդեկեանը, տա՛րէք մեզ ձեր ցեղապետի վրանն. այնտեղ ես ձեզ ցոյց կըտամ, թէ ինչ կընշանակէ Աստուծոյ հիւրերին գիտութեամբ շների հաճոյքին թողնելը։

Ցեղապետն, երևի, հագուստից՝ եկաւորի մէջ մի մեծ անձնաւորութիւն նկատեց։ Նա հրամայեց ծառաներին նոր վրան կանգնացնել, իսկ ինքը յառաջ վազեց դիմաւորելու։

Այս և այն կողմից մօտ եկան և Գարեգնին ձիուց իջեցրին։

Ցրդապետի յաղթանդամ կազմուածքը, վայրագ դէմքն և սովորականից դուրս բարձր հասակն ամենուրեք երկիւղ էր ազդել։ Կուրդն ինքը գիտէր իւր այդ ահռելի յատկութիւնն և դրանից միշտ օգտուում էր։ Այս անգամ նա, կարծես, կծկուեց և իւր աչքումը փոքրացաւ, երբ հիւրը սառնութեամբ ընդունեց իւր ողջոյնն և ասաց. իմ ձին չըկապէք, սանձը գլխից հանեցէք և թողէք արածել այս կանաչ մարգագետնի վերայ։

Նա էլ չըսպասեց տուած հրամանի կատարուելուն, իւր ձեռքով սանձը հանեց, մի կողմը շպրտեց, ձիուն մատով կանաչը ցոյց տուեց ու գնաց տանտիրոջ ետևից։

Պատուելի հիւրերի համար խնամքով պահուած գեղեցիկ վրանը տնկուեց կանաչ տափարակի վերայ՝ մի արծաթափայլ կրկչան աղբրակի գլխին։

Տանտիրոջ հրաւիրանօք Մելքիսեդեկեանը բազմեց թանկագին դորգերի վերայ տարածած կերպասեայ վափուկ մահճին և հրամայեց իւր ճանապարհորդակից ռէյսին նոյնպէս նստել։

—Ինաս չունի, տէր իմ, խոնարհ ծառայդ կը կանդնի, համեստ պատասխանեց ռէյսը, քայց Գարեգինը հրամայեց.

—Նստիր, դու այսօր այս տան հիւրն ես, այդպիսով դու կարող ես տանտիրոջն անպատուել. մեր երկրումն ասում են. հիւրը տանտիրոջ վարդի փունջն է. նա եթէ ուզում է վարդի անուշ հոտով զուարճանալ, պարտական է վարդն աչքի լուսի նման պահպանել։

—Այնպէս չէ, Նազօ բէգ, դարձաւ Գարեգինը դէպի քրդապետը։

—Ստուծոյ բերանովն ես խօսում, տէր իմ, խոնարհաբար .համաձայնեց քրդապետը։

—Նստիր ուրեմն և դու, փոքր ինչ սէր ու սոհբաթ անենք, իսկ այս կտրիճներին պատուիրիր մեզ համար համեղ սեր ու կարագով նախա-

ճաշիկ պատրաստել, մենք քաղցած ենք։

— Ամէն բան կարգադրուած է, տէր իմ, քիչ ժամանակ սպասելու է, մինչև գառը հասնի։

— Ո՛չ, գառը մորթել տալու նեղութիւն մի՛ կրիր, մենք շուտ պէտք է գնանք։

— Արդէն քերթուած է, էլ իմ հրամանս չի ազդիլ։

— Անշուշտ հետաքրքիր ես իմանալու անժամանակ եկած հիւրիդ ո՛վ լինելը, սկսեց Գարեգինը, իմ բարի ընկերս լեռան ստորոտում գտնուած հայ գիւղերից մէկի ռէյսն է...

— Ռէյսին մենք ճանաչում ենք, ժպտաց քրդապետը, մենք դրկիցներ ենք, շուտ շուտ ենք տեսնուում։

— Իսկ ես մի գժատուտ, կամ ձեր խօսքով ասեմ, *շաշխուն* ռուսաստանցի հայ եմ, որ բան ու գործից աւարայ եղած՝ խեղճ ձիուս և շատ մարդկանց նեղութիւն տալով՝ *չօլէ չօլ* եմ ընկել՝ երկիրներ տեսնելու և լաւ մարդկանց հետ ծանօթանալու։

— Շատ լաւ ես արել, երկրատեսութիւնը ցանկալի բան է, հաւանութիւն տուեց Նադօ-բէգը։

— Պատուական մարդկանց հետ ծանօթանալն էլ խիստ լաւ բան է, կրկնեց Մելքիսեդեկեանը։

— Ի հարկէ, վաւերացրեց քուրդ ցեղապետը։

— Հէնց այդ պատճառաւ իսկ պարտականութիւն եմ համարել հիւր լինել այն պատուական

աղ ու հացով մարդին, որի առատ հոցի պռունգն այսօր պէտք է կտրենք, շողոքորթեց Գարեգինը։

—Մեր գլխի՛ մեր աչքի՛ վերայ տեղ ունիս։

—Երկիրները շատ եմ տեսել, շատ ազգերի հացն եմ կերել, շատ մարդկանց հանդիպել եմ, շարունակեց Գարեգինը, շատերի կարօտն այսօր քաշում եմ և ցանկանում եմ մէկ էլ, երկու էլ տեսնել, իսկ շատերի համար աչքերիս ափսոսացել եմ։ Գալով քեզ՝ ասեմ անկեղծօրէն՝ ինչ որ քո մասին լսել եմ. ծակ բերանը՝ հալ, թուրք, քուրդ, ասորի քեզ հայհոյում են։ Ես եկայ, որ քո մէջ գտնեմ մի ամենաանպիտան, Աստուծոյ ատելի արարած։ Քեզ պարզն ասեմ, հեռուից կարծեցի, որ գտել եմ, քո արտաքին դէմքդ այն էր ցոյց տալի։ Չէ, այդպէս չէ. քո թշնամին քո երեսի գծագրութիւնն է, քո աչքերդ նոյնը չեն ասում։ Մինչև էսօր քո մասին կարծիք կազմողները դէմքիդ գծերն են չափել և ոչ մէկը չի մտածել աչքերիդ վերայ ուշք դարձնել։ Աչքը մարդիս հոգու հայելին է. քո հոգու մաքուր պատկերն ես տեսնում եմ քո աչքերի մէջ. այսուհետև եթէ դու ինքդ էլ քեզ համար վատ վկայես, ես չեմ հաւատալ. աչքերդ ասում են, որ մէջդ մի ամենապատուական հոգի կայ թագցրած։

Մելքիսեդեկեանի պարսկական հաճոյախօսութիւնը մինչև քրդապետի հոգին թափանցեց և նա մի քանի անգամ կրկնեց իւր *թամաննահներով* գոհութիւնը։

Հետզհետէ խօսակցութիւնն անցաւ քրդապետի կենցաղավարութեան վերայ, նորա ցեղակիցների հետ ունեցած բարեկամական և թշնամական կապերի վերայ, նրանց դաշտաբնակ հայ հարևանների վերայ, տիրող պետութեան հետ ունեցած յարաբերութեանց վերայ և այլն։

Քրդապետն իւր կողմից վարժ էր տաճկական քաղաքակրթութեանը, բոլորեցունց համար նա նպաստաւոր կարծիք էր արտայայտում։

—Ոչ, ասաց Գարեգինը, մի կէտում ճշմարիտ չես խօսում, սրտանց դու անգոհ ես տաճիկ կառավարիչներից։

Քուրդն երդմամբ պնդում էր ասածները։

—Ես հաւատում եմ, Նազ՛օ աղայ, որ այսօր դու բոլոր տաճիկ իշխանաւորներից պատիւ և յարգանք ես վայելում, բայց դու ինքդ ուրախ կլինէիր՝ որ ո՛չ նրանց երեսը տեսնէիր և ո՛չ նրանց շողոքորթ խօսքերը լսէիր. ուրախ կլինէիր, որ երբէք նրանց մօտ չըգնայիր, սակայն ստիպուած ես, պէտք է հետները տեսութիւն անես։

—Ընչո՞ւ համար ես այդպէս կարծում, հարցրեց քրդապետը։

—Որովհետև այցելութիւններդ քեզ էժան չեն նստում։

Քուրդը ժպտաց։

—Հասկանում եմ, վրայ բերեց Մելքիսեդեկեանը, դու քո մէջ ծաղրում ես իմ միամտութիւնը.

քո կարծեօք, ես չեմ հասկանում, որ քո տարած ընծաները ու դանձերը քո դառը քրտնքի պտուղը չեն, այլ անտէր հայ ու թուրք գիւղացւոց արեան դինը. դորա համար էլ զգալի չէ քեզ նուէրներիդ կորուստը, որովհետև ձեզանից ոչինչ չէ պակասում, օտարի ապրանքն է քո անունով տաճկաց պաշտօնեաների փորը մտնում։ Ո՛չ, Նադօ բէգ, ոչ, ինքնախաբէութիւն է քո կողմից. թուրք կառավարիչներից ստացած պատիւը՝ մի դատարկ նարգիլէն, մի գաւաթ դառը սուրճը, հաւատացած եմ, որ քթերիցդ են իջնում։

—Ներեցէք, ձեզ չեմ հասկանում, ուսերը վեր քաշեց քուրդը։

—Որքան էլ անգութ սիրտ ունենաս, շարունակեց Գարեգինը, որչափ էլ խիղճդ մեռած լինի, բայց և այնպէս, իբրև մարդ, իբրև որդւոց ու ընտանեաց հայր, չես կարող, գոնէ միանգամ, կեանքիդ մէջ՝ չմտածել քո արած աւերմունքների և կոտորածքների մասին, չես կարող չլսել օսմանցուի կառավարիչների անկուշտ փորը յագեցնելու համար թափած անմեղ արիւնները։

Գործողութիւնը կատարելու ժամանակ, այո՛, դու քարացտանում ես. աչքերդ արիւնոտուում են, գազանական բնաւորութիւն ես ստանում, բայց երբ գազանային կիրքդ յագեցաւ, երբ հարուստ աւարով տեղական իշխանաւորների աչքերը կուրացրիր և տուն վերադարձար, իմ կարծեօք, դու իսկոյն ուրիշ

մարդ կըդառնաս։ Եեմքիդ վերայ ուրախ ուրախ քեզ կը դիմաւորեն սիրելի զաւակներդ և ամենասիրելի ամուսինդ. խոստովանիր, Նադօ-բէգ, այս ժամանակում եթէ ոչ արտաքուստ՝ անշուշտ սրտումդ մի սարսուռ կըզգաս, երեսիդ ժպիտը կեղծ կըլինի։ Դու կըմտածես, որ մի ժամ յառաջ քո ձեռքովդ, կամ հրամանովդ քո երեխաների նմաններից մի քանիսի կեանքն ես կարճել, քո ուրախ կնոջ քոյրերից մի քանիսին զրկել ես իրանց փայփայող ամուսիններից և սիրասուն զաւակներից, հարիւրաւորների անէծքին և նզովքին ես ենթարկել սրտիդ սիրելիներին։ Էն էլ՝ ինչ պատճառաւ, ումնից դրդուած։—Որպէս զի քաղցած պաշտօնականների փորը լցնես, որ կեղծաւոր ժպիտով երեսիդ իրանց գազանային ժանիքը ցոյց տան, իսկ ետևիցդ ծաղրելով՝ ասեն. յիմար քուրդը մեր կթի էշն է։

Քրդապետի դէմքը մռայլուեց։

—Մի բարկանար, Նադօ-բէգ, անկեղծ խոստովանիր, այսպէս է, թէ ոչ, սխալուած հօ չեմ, երդուեցնում եմ քեզ քո լոյս հաւատովդ, այո՛, լոյս հաւատովդ։

Նադօ-բէգը լեզուն ծամծմոտեց և իրաւունք տուեց իւր հիւրին,—բայց ներիր ինձ, ասաց,—ինքդ ինչ հաւատի տէր ես։

—Գիտեմ, պատասխանեց Մելքիսեդեկեանը, դու զարմացար, որ մի խաչապաշտ հայ մարդ քրդի հաւատը լոյս է անուանում, այնպէս չէ։

—Շատ ճիշտ հասկացար, մեղքս ինչ ծածկեմ, մենք մեր աշխարհում խաչապաշտին *գեաւրուր* (անհաւատ) ենք կոչում. նրանք էլ թէպէտ, երեսներիս չեն վստահանում պատասխանել, բայց ետևներիցս իրանք էլ մեզ են „*գեաւրուր*“ անուանում։ Իսկ հիմա դու՝ մի խաչապաշտ հայ՝ իմ հաւատս լոյս կոչեցիր, ցանկանում եմ իմանալ՝ լոկ քաղաքավարութիւն էր այդ, թէ հաստատ խոստովանութիւն։

—Ո՛չ, կեղծաւոր շողոքորդութիւն չէր, Նազօ բէգ, այլ ճշմարիտ համոզմունք։

—Խնդրում եմ բացատրես։

Հազիւ քրդապետն արտասանել էր այս խօսքը, որ ամբողջ վրանախմբերի մէջ մի իրարանցում տեղի ունեցաւ. բոլոր վրաններից դուրս թափուեցին մեծ ու փոքր և խռնուած՝ դէպի մերձակայ թումբը վազեցին։ Այդ միջոցումը մի քիւրդ շտապաւ ներս ընկաւ և ցեղապետի ականջումը փսփսաց։

—Ներեցէք, խօսքդ չըմոռանաս, ասաց Նազօ բէգը Գարեգնին, այսպիսի յարմար րոպէին Աստուած է ուղարկել մեր մեծ Շէյխին. նա մեզ հիւր է գալիս և դու նրա մօտ կըբացատրես մեր հաւատի լոյս լինելը, ես գնում եմ նրան ընդառաջ։

Մելքիսեդեկեանը ժամանակ չունեցաւ պատասխանելու, ցեղապետն արդէն հեռացել էր։

—Շատ վատ բան եղաւ, տէր իմ, ասաց ռէյսը, մեր կեանքն այժմ մի մազից է կախուած, եկող Շէյխը Հայի հաւատին թշնամի մի գազան է։

—Ընդհակառակն, շատ յաջող դէպք է, դու միայն լուիր և հետևիր իմ օրինակին... բայց արդէն ժամանակ է, ահա նա երևեցաւ, մեզ ևս հարկաւոր է դիմաւորել։

Խէ.

Ահա երևեցան լեռան միւս երեսից հարիւրի չափ ձիաւորները և հանդարտ քայլերով մօտենում են Նադօ բէգի վրանին։ Ամենից յառաջ՝ միւսներից երեսուն ոտնաչափ հեռաւորութեամբ՝ ձիու վերայ նստած գալիս էր մի անձնաւորութիւն։ Դժուար էր որոշել՝ կին է նա, թէ այր մարդ։ Ծանր քայլուածքից, երկար հագուստից և երեսին ծածկած դեղնագոյն նուրբ և թափանցիկ քօղից կարելի էր հաւանակօրէն կնոջ նմանացնել տարօրինակ հեծեալին, եթէ ալեզարդ մօրուքը շղարշի տակից չերմատնէր նրան։ Միայն երեսի քօղը չէր դեղին, գլխի փաթաթանները, մինչև սրունքը փռուած ջուբբէն, կօշիկները, բոլորը դեղնաճաղկով ներկուած կտորից էին։

Նա ինքն էր շէյխը՝ մահմետական քրդերի մեծ հոգևոր պետը, որի ձիու ծնկները համբուրում էին ընդառաջ եկող բոլոր քրդերը։

Նադօ բէգի վրանից բաւական հեռու շէյխը կանգնեց և աչքերը շուրջ ածեց։ Նրա տեսանելիքը դադարեցին խոնարհութեամբ իրան երկրպագութիւն տուող այլատարազ երիտասարդի վերայ։

—Էֆէնդին մեզ հիւր է, ներկայացրեց քրդապետը Գարեգնին։

Վ.ԵրՋինա երկրորդեց իւր երկրպագութիւնը։ Շէյխը բաւական դատեց դէմի աննշան շարժումով ընդունել Մելքիսեդեկեանի բարևը։

Վ.րանի առաջին Նադօ բէդն ինքը բռնեց շէյխի ձիու սանդակը, օգնեց նրան ձիուց իջնել և տարաւ դէպի վրանը։

Մինչև որ շէյխը վրանի առաջին կանգնած՝ աչ էր տալիս ջերմեռանդ քրդերի բազմութեանը, Գարեգինը խորամուխ հետազօտութեամբ ուսումնասիրում էր շէյխի անձնաւորութեան արտաքինը։

Ի՞նչ ունէր ուսանելու. մի կմախք էր քրդերի կրօնապետը՝ պատած չորացած ու սևացած մորթով. կատարեալ մահուան պատկերն էր նա, որի փայտացած մատների մէջ եթէ սև թագբեհի փոխարէն գերանդի տայինք, մահուան հրեշտակի դեր կարող էր կատարել։

Շէյխի սեպհական սպասաւորները, որոնք նոյնպէս հագնուած էին դեղնագոյն հանդերձ, ներս տարան վրանը մի դեղին թաղիք և փռեցին կանաչ խոտի վերայ։

Շէյխն աչ տալը վերջացրեց, ներս մտաւ վրանն և իւր համար պատրաստած տեղը բազմեց։

Բացի քրդապետից՝ բոլորեքեան մնացին դուրսը վրանի առաջին՝ ըստ աւագութեան շարուած։

—Ներս հրաւիրիր հիւրիդ, հրամայեց շէյխը քրդապետին։

Գարեգինը ներս եկաւ և շէյխի աչը համբու-

ըեց։ Շէյխը ձեռքով ցոյց տուեց Մելքիսեդեկեանին իւր նախկին տեղը։

—Շատ բարեբաղդ եմ, ասաց Գարեգինը թուրքերէն, որ իմ ցանկութիւնս օր յառաջ կատարուեց. այս լեռը բարձրանալուս գլխաւոր պատճառը սրբութեանդ տեսքին արժանանալս էր. ես պէտք է անպատճառ ոտքդ գայի, բայց Աստուծոյ կամեցողութիւնն այսպէս է եղած։ Սրբութեանդ բարի համբաւը տարածուած է արևելից արևմուտ, բայց ամէնքի խնդրուածքն Աստուած այնպէս շուտ չի կատարում, ինչպէս անարժան մեղաւորինս. մըտքումս դրել էի քո սուրբ աչը համբուրել և արժանացայ։

—Հրամանքդ որ աշխարհքից ես, ինչ ազգ ես և ինչ գործի տէր ես, երկու խօսքով հարցրեց շէյխը։

—Խոնարհ ծառայդ ռուսաստանցի է, ինքս հայ եմ. մի փոքրիկ յանձնարարութեամբ մեր տէրութիւնից ուղարկուած եմ Երզրումի փաշալի մօտ, իսկ այնտեղից, ինչպէս յայտնեցի, ինձ այս կողմը քարշեց քո արժանաւոր աչը համբուրելու ջերմ փափագը. ես կարօտ եմ քո օրհնութեանը. խնդրեմ չըխնայես։

—Աստուծոյ և իւր սուրբ մարգարէի օրհնութիւնը լինի բոլոր հաւատացեալների վերայ, ասաց շէյխն՝ երեսը դարձրած դէպի վրանի դուռը։

—Մեր էֆէնդին շատ ջերմեռանդ և հաւա-

տալ մարդ է, մէջ մտաւ-քրդապետը, ես կը խընդրէի, որ իրան հրամայէիր շարունակել այն խօսակցութիւնը, որի թելը կտրուեց քո գալստեան համբաւն ստանալով։

—Թող շարունակէ, կարճ հաճութիւն յայտնեց շէյխը։

—Սմենահասարակ և պարզ ճշմարտութիւն էին իմ խօսքերս, սուրբ հայր, սկսեց Գարեգինը. մեր պատուական և հիւրասէր Նադօ բէգին ես մի գործի համար երդում տուի *իր լոյս* հաւատովը, իսկ սա զարմացաւ, որ խաչապաշտն իսլամի հաւատը լոյս է կոչում։ Նադօ բէգը խնդրեց այս մասին իմ բացատրութիւնը, իսկ սրբութեանդ գալուստն արգելք եղաւ մեր խօսակցութեանը։

—Ես ես ցանկանում եմ, որ ասածներդ, եթէ կեղծաւորութիւն չեն, հաստատես, խօսեց շէյխը։ Մենք ինքներս գիտենք և համոզուած ենք, որ իսլամական հաւատը լոյս է, իսկ այդ ճշմարտութիւնը խաչապաշտի բերանից լսելն ուրախալի է։

—Քեզ յայտնի է, հայր, որ ամէնքիս ստեղծող ու խնամարկող անտեսանելի Աւրարիչը մէկ է, պատասխանեց Մելքիսեդեկեանը։

—Այո՛։

—Եթէ այդպէս է, ուրեմն ձեր հաւատն էլ լոյս է՝ մերն էլ. մենք, դուք և ամէն ոք հաւատում ենք մէկ Աստուծուն, որին ոչ ոք մեզանից չի տեսել։ Մեր ամէնքի լոյսը դէպի երկնքի ու

երկրի արարիչն է, որին ամենքս ցանկանում ենք հասնել, դեպի երկնային դրախտն է, ուր ձգտում ենք մտնել։ Մեր և ձեր կրօնի մէջ եղած զանազանութիւնը դրախտի ճանապարհի մասին է։ Մեկս աջ կողմից ենք գալիս՝ միւսս ձախ. մեզանից ոմանք լեռան վրայովն ենք անցնում, կարճկտրում, ուրիշները լեռը շուրջ են բոլորում, դաշտային երկար ճանապարհով են հանգիստ տեղ հասնում։ Թէ շուտ տեղ հասնողը, թէ ուշացողը, թէ հանգիստ եկողը, թէ նեղութիւն քաշողը վերջն իրանց վարձագին հասան, միևնոյն Աստուծոյ տեսութեանն արժանացան։ Իսկ այդ երջանկութիւնից գրկուում են միայն նրանք, որ ճանապարհին աւազակների, կամ գազանների ճանգն էն ընկնում, կամ թէ յիմարութեամբ ճանապարհից շեղուելով՝ գլորուում են անտակ անդունդի մէջ և շնաստակ լինում։

Վերև յիշածս բաղդաւորներն արդարներն են, որ ճանապարհաւ որ եկած լինին. իսկ վերջին յիմարները մեղաւորներն են, որոնք չարի ձեռքով մոլորուած՝ մոռանում են իրանց ստեղծողին և յաւիտենական դժոխքի կրակումն այրուում են։

—Շատ ճշմարիտ ես խօսում, գլուխը տմբացնելով հաստատեց շէյխը։

—Եթէ այդպէս է, եթէ ամէն մի ճանապարհից եկող վաստակածները հանգիստ պէտք է գտնեն միևնոյն ստեղծող Աստուծոյ գրկումը, այն ժամանակն ես ինձ իրաւունք չեմ տալ՝ միայն իմ հա-

ատը լոյս ճանաչել, իսկ ուրիշինը՝ խաւար։ Ես միատեսակ երկիւղածութեամբ համբուրում եմ ամէն ազգի ու կրօնի աւանդապահ սուրբ հոգևորականների ձեռքը՝ մէկինն աւելի ջերմեռանդութիւնով, քան թէ միւսինը, մանաւանդ՝ եթէ այս վերջինը սրբութեանդ չափ արժանաւորութիւն ունենայ. ինչ վնաս, թէ իմ սեպհականը չէ։

Շէյխը գլխով հաւանութիւն էր արտայայտում։

—Այդ իսկ է պատճառը, կրկնում եմ, ձայնը բարձրացրեց Գարեգինը, որ ես աղ լիզած, ջրի կաթսով՝ պապակուած ոչխարի նման՝ գործս թողել եմ, լեռները ընկել և շտապում եմ այն մարդի օրհնութիւնը խնդրել, որի սրբութիւնը թև ու թիկունք է այս լեռների վերայ բնակուած ժողովրդին, որոնց մէջ մեր պատուարժան տանտիրոջ նման կտրիճ, քաջ և հիւրասէր տղամարդիկ կան։ Այո՛, հա՛յը սուրբ, բարեբաղդ են քրդերը, որոնց հայրը քեզ նման Աստուծոյ սիրելին է։ Այսպէս եմ լսել քո մասին ամէն մէկից։

—Աֆէրի՛մ, զաւա՛կս, Աստուծոյ և իւր մեծ մարգարէի օրհնութիւնը լինի քո և քեզ նման հաւատացեալների գլխին։

Այս անգամ շէյխի խօսքերը Գարեգնին էին ուղղուած։

Մելքիսեդեկեանը վերկացաւ տեղից և երկրորդ անգամ համբուրեց շէյխի ձեռքը։

—Բայց ընչի՞ մասին բացուեց ձեր մէջ այդ

զրոյցը, հետաքրքիր եղաւ շեյխը։

Գարեգինը մանրամասնօրէն պատմեց իւր և քրդապետի մէջ եղած բոլոր խօսակցութիւնները, չմոռացաւ կրկնել Նադօ բէգի անիրաւութիւններն և տաճկի պաշտօնեաների հետ ունեցած յարաբերութիւնները։

—*Հնա Ալլահ, իլ Ալլահ, վա Մօհամմէտ ռուսուլ Ալլահ*, մօրուքն երեք անգամ շփելով, ծորում էր շեյխը։

Մի քանի րոպէ խորին լռութիւն էր, ոչ մի շշուկ չէր խանգարում մեռեալ անշարժութիւնը։ Խօսքը պատկանում էր շեյխին, իսկ նա մտածմանց մէջ խորասուզուած՝ նուրբ շղարշեայ երեսքաշի ծակոտէններով իւր խոր գնացած աչքերի դիւրաշարժ ու մանր բիբերը սևեռել էր անծանօթի երեսին և կարծես, կամենում էր երկու գործողութիւն մի անգամից կատարած լինել. այն է՝ նախ՝ թափանցել Գարեգնի սրտի խորքը, կշռել նրա խօսքերի անկեղծութեան սահմանը, և երկրորդ՝ իւր աչքերի ելեքտրական հոսանքով փշրել, խորտակել անձնապաստան հայի յանդգնութիւնն ու վստահութիւնը։

Պարզ էր, որ կրօնապետը մոլեռանդութեան կատաղի բարկութիւնով եռում, բորբոքուում էր և իւր ներքին հնոցում խանձել, խորովել, մոխիր դարձնել էր ուզում «*ալչաք զեավուր էրմէնիին*», որ իւր սուտ հաւատը համարձակուում է իսլամութեան հետ հաւասարացնել, քայց շեյխը խոհեմու-

թեամբ, կամ ապագայի պատասխանատուութեան երկիւղով՝ զսպում է իւր զայրոյթը։

Բարեբաղդաբար, թէ քրդապետն և թէ բոլոր քրդերն իրաւունք չունենալով ուղղակի նայել սուրբ շէյխի դէմքին՝ գլխակոր նրա ոտքի տակ փռուած թաղիքին միայն անվստահ աչք էին ձգել, ապա թէ ոչ, դժուար թէ Մելքիսեդեկեանին էժան նստէր իւր յանդգնութիւնը։ Մելքիսեդեկեանը մեծ մարգարէի յաջորդի աչքերում կարդում էր նրա ներքին դիտաւորութիւնը և չըհասկանալ էր ձևացնում. նա միապաղաղ հայեացքով, սպասողական դրութեամբ՝ ուրիշների հետ միասին՝ մնում էր սուրբ մարդի պատասխանին և վճռին։

—Շատ և շատ ուղիղ և խելացի են ասածները, էֆէնդիմ, ի վերջոյ հանդարտօրէն գլուխը շարժեց շէյխը, Աստուած առաքինութիւնն անվարձ չի թողնել, ամէն ազգի իր հաւատովն ու գործովն իրան պատշաճ տեղը կըյատկացնէ։ *Ջէննէթի* (դրախտ) մէջ տարածութիւնը մեծ է և ըստ աստիճանի կարգաւորուած. հարիւրաւոր մարդիկ կարող են կանաչ դաշտի վերայ միասին սեղան նստել, բայց վերին և ստորին կողմերում նստողների պատիւը միատեսակ չի լինել. վերևը բազմածների վայելած անուշեղէնների հոտովը միշտ կշտանում են վերջերումը նստոտած, թանէ սպաս խփշտող, անկիւններից ժողովուած ամբոխը։ Այդպէս էլ արքայութիւնն է. իսլամն իւր արժանին պատիւն ունի,

մնացածները էլ քաղցած չեն մնալ։

—Աւելի էլ աչքածակ չենք գտնուիլ, սուրբ հայր, գլուխ իջեցրեց Գարեգինը, թող մենք սրբութեանդ արժանաւոր աղօթքով *չէննէլթը* մտնենք և մեզ բաւական է ձեզ նման արժանաւորների վայելած անուշեղէնների հոտովը կշտանալ։

—Ապրիս, ապրիս, զաւակս, քիչ ուշիր, որ շատ ստանաս, մեծ մարգարէն թող բանայ սմէն մարդի աչքերն, ինչպէս որ քո պայծառ միտքդ է լուսաւորել։

—Իսկ ինչ կը հրամայես, տէր իմ, ծառայիդ վերջին կարծիքին, գոհաբանական երկրպագութիւնով հարցրեց Գարեգինը շէյխին. արդարացի չեն ասածները՝ տաճիկ մեծաւորներին տանելիք պարգևների մասին. ես պնդում եմ, որ մի բաժակ դառը սուրճի համար մեղք է հարիւրաւորների անմեղ արիւն թափելը։

Րոպէն յաջող էր, շէյխը Գարեգնի բոլոր ասածները ընդունեց։

Նա այն ևս խոստացաւ, որ ինքը կը պատուիրէ բոլոր քրդերին այսուհետև հայերի հետ սէր միաբան լինել և կրօնական խտրութիւնները մի կողմը թողած՝ հայերին իրանց կրօնով տարբեր եղբայրն ընդունել։

Գարեգինը գիշերեց քրդերի մէջ և միւս օրն ուրախ տրամադրութեամբ վերադարձաւ լեռներից։ Նոյն օրը նա երկու նամակ ուղարկեց՝ մինը Ռուբէն Աբգանազեանին և միւսը Վարագ։

ԽԸ.

Միայն երկու ընկերների մէջ չէր, որ թղթակցութիւնները շարունակուում էին. չորս հոգի էին, որոնք ուխտել էին առ առաւելն երեք շաբաթը մի անգամ իրար հետ գրաւոր խօսել։

Սև էին անցնում Ս.րփիկի համար մէկ մէկ կարդալ հասցէները և գտնել իւր անուանն ուղղածները, կամ մտածել, թէ ո՞րն իւր հասցէին ուղղածներից յառաջ և ո՞րը վերջը կարդայ։

Ս.րփիկը գիտէր, որ չորս նամակից երկուսն իւրն և երկուսն եղբօրն են։ Սրտի նախազգացութեամբ՝ աչքը չուր կտրած աղջկայ մատներն իւրովի յափշտակում էին իրան պատկանած նամակներից դեռ մինը՝ յետոյ միւսը։

Այդ մինը Ռուբէն Աբգանազեանի գրածն էր, այդ մինն էր, որ զգալի չէր անում Արփիկի սրտին իւր հօր կողմից օր օրի վերայ աւելացող, անտանելի և կսկիծ վարմունքներն ու գորճ դրած բռնութիւնները։

Արփիկի գազան ու դաժան հայրը՝ ազգի դաւաճան Չէլէբեան Սարգիս աղան՝ լոյսը բացուելիս, մութը մթնելիս՝ ամենակոպիտ հայհոյանքներով լիշեցնում էր աղջկանն իւր խոստումը, որ տուել էր Ղայմաղամին։

Եթէ չենք մոռացել, Ղայմաղամը կամեցել էր Սարգիս աղայի տան բիւրբիւրին ոսկէ վանդակում երգել տալ իւր հարեմում։

Հեռու չէր ժամանակը. հոյակապ մզկիթը բարձրացրել էր իւր գմբէթը մինչև երկինք, նրա մինարէյի ոսկի կիսալուսնի փայլը ցերեկն անց.ու դարձ անող հայերի սիրտն էր խոցոտում, գիշերն իւր համանուն գիշերային լուսաւորի լոյսի հետ էր մրցում։

Մզկիթի արտաքինը բոլորովին պատրաստ էր. մինչև մի ամիս՝ ներսի մաքրութեան և կահաւորութեան գործն ևս կաւարտուի և միւս լուսնի 15-ին՝ տաճկական մի հանդիսաւոր բայրամի օր՝ մեծ մուֆթին մեծ մարգարէի տաճարի մէջ կառնի Չէլէբեան Սարգիս աղայի ձեռքից նրա դստեր ձեռքը և կըյանձնէ Բ. քաղաքի Ղայմաղամին։

Տաճկական *ըէլըհնի* (պսակակատարութիւն) սովորական ծէսից տարբերուելու է Ղայմաղամ Օսման էֆէնդու և Արփիկի ամուսնական ծիսակատարութիւնը։

Օսման էֆէնդու փառամոլութեան հաճոյքը լրիւ կըլինի, երբ հայ քահանան՝ իսլամի հոգևոր պետի հետ՝ հայի ձեռքով շինուած մզկիթի մէջ հայ-քրիստոնէական պսակի արարողութիւն կատարէ։

Զարմանալին այս է, որ՝ Մահմէտի մոլեռանդ աւանդապահ մեծ մուֆթին՝ հակառակ իւր մէջ արմատացած համոզման՝ յօժարութիւն էր յայտնել մզկիթի մէջ խաչը ներս տանել։

Բ. քաղաքի բոլոր հայերն և տեղական քահանայքը վաղուց լսել են և սգի մէջ են. քահա-

նալքն իրանց առաջնորդի ներկայութեամբ որոշել են նահատակուիլ և տաճկական մզկիթ չըմտնել, իսկ Սարգիս աղան ընչացքի տակ միայն ժպտում է և ասում արհամարհանք արտայայտում։

—Երբ իրանց ոտքը գնամ, թող չըգան և չը պատկեն իմ աղջկանս, ասում էր նա. ես ունիմ իմ քահանան։

—Այսօր քեզ վերջին անգամն եմ հրամայում, ցուցամատը թափահարեց մի առաւօտ Սարգիս աղան՝ դուրս գնալուս՝ Արփիկի վերայ։ Այս օրուանից դու պատրաստուիթիւնդ տես, մօրդ հետ գնացէք Միհրաթ աղայի կնոջ մօտ, նրա հետ խորհրդակցեցէք, Տաճկի նորահարսին անհրաժեշտ արդուզարդն իմացէք և պատրաստուիթիւն տեսէք։ Մի ամսից Օսման էֆէնդու կինն ես լինելու։

—Կրկնում եմ, թող կամակորուիթիւնդ, եթէ չես ուզում մազերիցդ քարշէ քարշ գալով՝ մզկիթը մտնել. պատասխանեց Սարգիս աղան իւր աղջկայ բացասաբար գլուխը շարժելուն և դուրս գնաց։

Չուգադիպաբար՝ հօր սպառնալիքն այն օրն էր, երբ Աւետիքը տուն եկաւ և վերը լիշած չորս նամակը դրեց քրոջ առաջը։

—Թող վերջինը լինին սրանք, լալով ասաց Արփիկը՝ նամակների միջից Ռուբէնի գրածը վերցնելով, հերիք է, էլ տանել չեմ կարող, մարմնական ոյժս ձեռք է վերցնում այսուհետև ինձ օգնելուց, գրենք Ռուբէնին, թող շտապի գայ։

—Ահա հէնց ինքն ևս իւր կողմից յիշում է, որ իմ սև պսակի օրերը մոտեցել են, նա սպասում է իմ կամքին, որ բաւական համարի թափառականութիւնը, աւելացրեց աղջիկը՝ Ասքանազեանի նամակը կարդալուց յետոյ։

—Ինձ ևս գրում է, որ մտադիր է շուտով գալ, այդպէս են վճռել Ռուբէնն ու իւր ընկեր Գարեգինը՝ վերջին տեսութեան ժամանակ, պատասխանեց Աւետիքն՝ իւր հասցէին եղած նամակը կարդալով։

Վերն ասացինք, որ չորս նամակից երկուքը Արփիկի և երկուքը Աւետիքի հասցէին էին, այժմ պէտք է աւելացրած, որ գրողներն էին Ասքանազեանն և Մելքիսեդեկեանը։

Գարեգինը թէպէտ անճանօթ էր Զէյէբեան քոյր ու եղբօրը, բայց Ռուբէնի միջնորդութեամբ՝ բարեկամական և մտերմական կապն ամենամօտ հարազատների յարաբերութիւն էր հաստատել քոյր ու եղբօր և երկու ճանապարհորդ ընկերների մէջ. նրանք փոխադարձ խոստումն էին արել՝ իրար հետ թղթակցել։

Որոշեալ կեդրոնատեղիք էին նշանակուած, ուր տեսնուում էին Գարեգինն ու Ռուբէնը. այդ տեղերում ստացուում և նոյն տեղերից գրուում էին նամակները։

—Տեսնենք՝ ինչ է գրում Գարեգինը, մի անգամից խօսեցան Արփիկն ու Աւետիքն և պատա-

ուեցին Մելքիսեդեկեանի գրած ծրարները։

Դարեգինը տալիս էր վերջերումս իւր կատարած ճանապարհորդութիւնների և գործերի հաշիւը։ Նա լիշում էր նոյնպէս, որ շատ չի քաշիլ, լինքը կը զրկուի իւր սիրելի բարեկամների հետ քաղցր գրաւոր զրոյցները անելու բաղդատորութիւնից։ Ռուբէնի հեռանալուց յետոյ՝ աւելացնում էր Դարեգինը՝ ինքը կըմնայ ինչպէս մի ընկերը կորցրած լծան եզը, որ չի կարող միայնակ քարշել արօրը. մանաւանդ, որ իւր անցաթղթի ժամանակը լրանալուն մօտ է ու մանաւոր գործերը հրաւիրում են նրան Հայրենիք։

—Սիմոն և Հազար ափսոս, չորժանացանք մեր պատուական բարեկամի տեսութեանը, միաժամանակ ցաւ յայտնեցին Արփիկն ու Սւետիքը։

Հոյը ու եղբայը նոյն օրը ստացած նամակները պատասխանեցին։

—Պատասխանիդ չենք սպասում, քո ներկայութիւնն է անհրաժեշտ, շեշտեցին Արփիկն ու Սւետիքը Ռուբէնին, եթէ հնար է, հետդ բերես մեր պատուական, ոնտես, անճանօթ եղբայը Դարեգնին, թող մեզ չըտեսած՝ չըհեռանայ Տաճկահայաստանից։

—Նախազգուշացնում եմ քեզ, Ռուբիկս, աւելացրեց Արփիկը, էլ այժ չունիմ տանելու և դիմադրելու, մինչև օրս քո անունն է ինձ զօրավիգն եղել, իսկ այսուհետև ներկայութիւնդ է փրկելու։

Ոչ տրտմի և ոչ վախեցի, տղամարդ ես ամուսնական իրաւունքով, արի և գործիր՝ ինչ սիրտդ և կամքդ քեզ կը թելադրեն՝ ապագայ կենակցիդ վիճակը որոշելու։

Քեզ անհամբեր սպասող *Արփիկը*։

Չորս օրից վերջը՝ մի ուրիշ նամակ Արփիկի կողմից առանձին սուրհանդակի ձեռքով հասաւ Ռուբէնին։

Ահա ինչ է գրում աղջիկը.—Մի ուշանար։ Այս առաւօտ հայրս ներս մտաւ և վճռապէս յայտնեց, որ այս լուսնի 15-ին, այսինքն ուղիղ ութ օրից յետոյ՝ երբ գիշերային լուսատուն կը բոլորի և մարդկանց երեսին ուղղահայեաց կը նայի, կատարուելու է իւր նորաշէն մզկիթի բացման հանդէսը։ Նոյն օրը պիտի ես սև ապսակ հարս գնամ Ղայմաղամին։ Երկու հանդէսը միացած՝ լցնելու են հօրս ուրախութեան չափը։

Աւետիքի և մօրս հետ խորհրդակցեցինք և եկանք այն եզրակացութեանը, որ Տաճկաստանում մեզ կենալն անհնար է. Բաղդադից ու Մուսուլից կը վերադարձնէ մեզ Օսման էֆէնդին. միակ ելքն էջմիածին փախչելն է։ Այս ևս կասեմ, որ եթէ Հոգևոր Տէրը մեզ չը պաշտպանէ, Օսման էֆէնդին այնտեղից էլ յետ կըբերէ, փաշան իւր կողմն է։

Ուրեմն արա, ինչ կարող ես. այս գործում

մեր ամենամեծ օգնականը կըլինի քո և իմ հոգեկից եղբայրը Գարեգինը։

Հունվի 15-ին՝ ամենից յարմար օրն է՝ մեր փախուստը գլուխ բերելու, տաճիկները զոլորքեան օրուան հանդիստով և հօրս առատ ճաշկերոյթով յղփացած կըլինին։

Իմ կողմից միանգամայն ապահով կաց, այսօրուանից անկողին եմ մտնելու, հաւատացած եմ, որ իմ պատճառաւ մզկիթի բացումը չեն յետաձգել, այն օրը տաճկական մեծ *ղայրամ* է, Վալի փաշան հաճութիւն է յայտնել անձամբ բացումը տօնել հօրս շինած մզկիթում և արդէն այսօր եկել է. ինչպէս լսուում է, պաշտօնական գործեր ևս ունի կատարելու։

Անկարծիք, Ղայմաղամի հետ իմ ամուսնութիւնը կը մնայ մի ուրիշ անգամի, կիսամեռ դիակին պսակի չեն տանիլ. այս այնքան ուղիղ է, որչափ և այն, որ մինչդեռ սրտերակս զարկում է, հազարաւոր ղայմաղամների վոհմակները չեն կարող ինձ խլել քո գրկից, այդ միայն մահուան հրեշտակի անբեկանելի իրաւունքն է։

Մեր Աբեթիքը նոյնպէս որոշել է հիւանդ ձևանալ, տօնի օրը մեր տունը մեծ հացկերոյթ է լինելու, փաշան ինքը ներկայութեան խօսք է տուել. հօրս սրտի փափագն է, որ փաշային սպասաւորէ մեր Աբեթիքը, հայրս ուզում է պարծենալ իւր խելացի և գեղեցիկ որդուովը. իսկ Աբեթիքն այդ չի

կամենում. ուրեմն հօրս երկու ցանկութիւնից և ոչ մինը չի կատարուիլ։

Տօնի օրը մեր տան կանացի բաժնի դուռը շարունակ փակ կը մնայ, կը բացուի միայն նրա առջևը, ով երեք անգամ դուռը բաղխելուց յետոյ՝ կարողանի հեռևեալ պայմանաւոր խօսքը. «Քո ծեռքով պատրաստած կարկանդակ կուզեմ, Սալվիը—աջի»։

Վերջին անգամ զգուշացնում եմ, չըվախենաս ոչ գաւնատուիթիւնից և ոչ այր-մարդու տարազից։ Ինչ որ անելիքն է՝ պէտք է անել։

Արմիկը

Խթ.

Տաճկաստանի Բ. քաղաքում մեծ հանդէս է. խանութները բոլորը փակուած են, քաղաքի գլխաւոր հրապարակը բռնուած է ժողովրդով։

Այս այն հրապարակն է, ուր երեք տարի յառաջ՝ տեղական հայ հասարակութիւնը որոշել էր եկեղեցի շինել, իսկ այսօր մի փառապանծ մզկիթ իւր սրածայր *մինարէով* հրապարակի վերայ տընկուած՝ դարաւոր, բարձրաթռիչ բարդի ծառերի կատարներն իւր բարձրութեան կիսումն է թողել։

Հրապարակի ճակատը՝ ուր մզկիթն է՝ բռնած են հարիւրաւոր *ուչմանը*, ղազի-զադիներ և այլ տաճկական հոգևորականներ և պաշտօնականներ։ Նա-

հանգի ամենից մեծ միջթին վալի փաշալի հետ մեասքե գորգի վերայ առաջին տեղումն են կանգնած։

Տաճիկ մեծաւորներից յետոյ՝ բազմաթիւ քրդի ցեղապետները ու աղաները իրանց հսկայ և առնական կազմուածքովն աչքի են ընկնում։

Ուղղափառ մուսուլմաններին բաժանել են քրիստոնեաններից մի գունդ ասկեար (զօրք), որոնք առանց աչք ու ճակատ հարցնելու՝ անխնայ հրացանների կոթերով զարկում են իրանց եաևը կուտակուած հայերին և ուրիշ քրիստոնեաներին։ Զինուորներից աւելի՝ վայրագօրէն ոստիկանները են մահակներով, մտրակով և սրի բութ կողմով դէմքեր ալլանգակում. ընդունուած *զեաւմուր* անարգական բառի հետ՝ շատ ու շատ անգրելի հայհոյանքները դուրս են թափուում կարգապահների բերանից։ Էլ ոչ մեծ է որոշուում, ոչ փոքր, ոչ հարուստ և ոչ աղքատ, դասակարգի խտրութիւն չկայ, պատժական գործիքները շարունակ գործողութեան մէջ են՝ քրիստոնեաններին կարգի բերելու. պաշտպանուում են միայն նրանք, որոնք փողը չեն խնայել և մի ոստիկանի բուռը կոխելով՝ նրա քամակին հովանաւորուել են։

—Վայ գլուխս, կսկծում է մինը, վայ աչքս, լալիս է երկրորդը, աւազ ճխլուեցի, թողէք, թողէք, ի սէր Աստուծոյ, հեռանամ, կորչեմ, իրանց տաճարն էլ գլխներին փլչի, շինողն էլ Լուսաւորչի լուսիցը զրկուի...

Ասյսպիսի բացականչութեան վայնասուններ ամէն կողմից լսուում են, բայց ազատուել անկարելի է. խռնուած ամբոխի միջից ոչ յետ կարելի է գնալ և ոչ յառաջ, երկու կողմից խուժանը զօրքով շրջապատուած է, հեռանալ գնալ ոչ ոք իրաւունք չունի, ներկայ լինելն էլ կամաւոր չի եղել, քաղաքի ամբողջ արական սեռը պարտական էր մասնակից լինել Հանդիսին՝ տօնակատարութիւնն առաւել շքեղ անելու և իսլամի յաղթանակի առաջին խոնարհելու։

Ահա լսուում է մինարէլի ծայրից ուլէմի միապաղաղ ձայնը. աչա ընդհանրացաւ ուղղափառ մուսուլմանների շրթունքների իսլամական դաւանաբանական փառատրութիւնը. «*Լա Ալլահ իլ Ալլահ, վա Մահամմադ ռասուլ Ալլահ*»։

Վալի փաշայի և մեծ միւֆթու կարգումը թանգագին գորգերով և գոյնզգոյն կերպասներով կահաւորուած մի պատշգամբանման ժամանակաւոր բազմոց է բարձրացած։ Ներնուած է այն մի անձնաւորութեան համար։

Գերեզմանիկ պատուարժանն ամէն կողմից նկատուում է. նա ուղղափառ մուսուլմանների հետ չէ աղօթում, այլ միայն լուռ վկայ է իսլամականների ջերմ աստուածպաշտութեանը։

Արտաքին տեսքով, տարազով, մօրուքի խուզուածքով և ուրիշ նշաններով յիշեալ անձնաւորութիւնը թէպէտ չէր զանազանուում Օսմանցի

թուրքի հարուստ վաճառականից, բայց սովոր աչքը և մարդաբանական գիտութեան քաջահմուտ մասնագէտն առաջին իսկ հայեացքից մեր պատուելի անձնաւորութեանը հայ անուն կըտայէին։

Եւ սխալուած չէին լինիլ. միակ հայ-քրիստոնեան էր երջանիկ Սարգիս աղան, որ այսօր տաճկից աւելի պատուի էր արժանացել և տաճկական նորակառոյց տաճարի առաջին՝ փաշալի և մեծ միւֆթու հետ մի կարգում կանգնել էր։

Ա.Հա բարձրացաւ նախապատրաստած ամբիոնն ինքը մեծ միւֆթին և երեք անգամ հազաց ու կոկորդը մաքրեց։

Մի կարճ յառաջաբանով մի մեծ օրհնութիւն կարդաց միւֆթին և յետոյ սկսեց աղըրի նման դուրս թափել բերանից հետևեալ երևելի ատենաբանութիւնը.

—Ուղղափառ Իսլամի օրհեալ զաւակնե՛ր, գոչեց միւֆթին, արևելքից արևմուտք, հարաւից հիւսիս Ալլահի անունն է փառաբանուում, 72 միլլէթ (ազգ) Աստուած է կանչում, բայց Ալլահն ամէնքից աւելի Իսլամի ձայնն է լսում, որովհետև կրօնների ճըշմարիտներից ամենաճշմարիտ ճշմարտութիւննե՛րը դուրանի էջերն են բռնած, Աստուծոյ ճշմարիտ մարգարէն մեր մեծ մարգարէն էր, որ Ղուրանի լոյսը համատարած արեց, Մահմեդի երկրաստան թուրն էր, որ դողացրեց աշխարհքն և Աստուծոյ խօսքը շատ անհաւատների ճանաչացրեց։

Տեսէք, թէ որքան գերազանց է մեր կրօնը, որքան հզօր է մեծ մարգարէն, որ այս քաղաքում, որի բնակիչները կիսից աւելին գեաւուր են, գեաւուրի ձեռքով իւր համար աղօթարան է կանգնացնում։ Այո, մեծ մարգարէն բարի միտք տուեց քաղաքիս ամենից պատուելի հարուստ հայ իշխանին՝ մեր սիրելի Սարգիս էֆէնդուն, որին դուք ամէնքդ տեսնում էք. սա այսօր արժանացել է մուսուլմանների հետ մի կարգում, բայց ամենից բարձր տեղը կանգնելու և մարգարէին աղօթելու։

Աշխատասէր մշակն իւր վարձը կրստանայ. մի տարուց աւելի է, որ մեր Սարգիս էֆէնդին արեգակի տակ տապակուելով՝ իր հսկողութիւնով շինել էր տալիս այս փառաշէն տաճարը. Սարգիս էֆէնդին 2000 լիրայ ոսկի է ծախսել և շինել մի այնպիսի հոյակապ մզկիթ, որի նմանը դժուար թէ համայն Անատօլիայումը գտնուի, միայն Ստամբօլում կարող է այսպէսը լինել։

Մենք, ուրեմն, ուղղափառ Իսլամներս, օրհնենք Ալլահին, գովենք նրա մեծ մարգարէին և կեանք ու արեւշատութիւն խնդրենք Սարգիս էֆէնդուն։

Ասեմ ձեզ, թէ ինչ բարի և առաքինի գործ կատարեց Սարգիս էֆէնդին.

Հինգ տարի սրանից յառաջ՝ մեր ուլէմաներից մէկն երազ է տեսել. նրան աւետիք է տուել ինքը *փէյղամբարների փէյղամբարը*, որ երբ այս քա-

պաքումը գեավուրի ձեռքով իւր համար մի մզկիթ շինուի, քաղաքիս և շրջակայ գեաւլուր ազգերից շատերը կարճ ժամանակի մէջ գեավուրի շինած մզկիթում ուղղափառ մուսուլմաններ կըդառնան։

Հապա տեսա՞ք, որ բարեպաշտ Սարգիս էֆէնդին իր աստուածահաճոյ առաքինական գործովն այս քաղաքում իսլամութեան դռները լայն բաց արեց։

Աղաչեցէք, սիրելի՛ք, Ալլահին, որ մեր Սարգիս էֆէնդու փակ աչքերը մի օր բանայ, որ իւր շինած տաճարի մէջ արժանանայ լոյս հաւատին։

Ասացէք՝ Ամէն։

—Ամէն. շշնջոցը տարածուեց օդի մէջ.

—Շատ ապրի՛ Սարգիս էֆէնդին, թնդաց ամէն կողմից։

Սարգիս աղան յետ դարձաւ և մի քանի անգամ գլուխ իջեցրեց մուսուլմաններին։

—Մի ուրիշ աւետիք էլ տամ ձեզ, սիրելի՛ք, ձայնը լարձրացրեց ամբիոնից մեծ միւֆթին. մեր Սարգիս էֆէնդին ուխտել էր, որ իւր սքանչելի ձեռակերտի մէջ իւր մի հատիկ նագելի դուստրը պարգև տայ մեր բարերար պայմաղամ Օսման էֆէնդուն։ Մեր պատուական Օսման էֆէնդին սիրով յօժարացել էր Սարգիս էֆէնդուն այդ շնորհքին արժանացնել. այսօր՝ տաճարիս բացման օրը հանդիսի հետ միասին՝ մենք պէտք է կատարէինք մի փառաւոր հարսանիք, իմ ձեռքով և ձեր ներկայութեամբ պէտք է այսօր քեաբինը կարուէը. մեր

ողորմած վալի փաշան մարդասիրական շնորհք էր արել ինքը դառնալ հանդիսակատարն և հենց այդ պատճառաւ այսօր իւր քաղցր տեսութեանը մեզ արժանացրել է։ Հայց մի աննշան անյաջողութիւն մեր ուրախութեան մի մասն անկատար թողեց։ Մեր համեստ հարսնացուն չը կարողանալով տանել իրան վիճակուած մեծ բաղդաւորութիւնը, ուրախութիւնից այս գիշեր յանկարծ հիւանդացել է։ — Եւ որովհետև հարսանիքի ամէն պատրաստութիւնն և մեծարանքը տեսնուած էր, մեր ողորմած վալի փաշան էլ պատուել էր մեր քաղաքն իւր այցելութիւնով, մենք բարւոք դատեցինք մէկ անգամի հանդէսն երկու դարձնել։ Այսօր կատարում ենք մզկիթի բացման տօնը, այսօր կըվայելենք տաճարի բացման ճաշը, իսկ մի քանի օրից՝ երբ հարսնացուն՝ մարգարէի ողորմութեամբ՝ անկողինը կը թողնէ, մի այսպիսի ուրախութիւն էլ ձեզ հետ միասին այն ժամանակը կունենանք։ Սարգիս էֆէնդին ինքն իմ բերանով ձեզ բոլորիդ խնդրում է մասնակից լինել իւր ընտանեկան երջանկութեանը։ Թէ այսօրուայ ճաշը և թէ մօտիկ ապագայում հարսանիքի ծախքերը Սարգիս էֆէնդու առատաձեռնութեան արդիւնքն են։

Մեծ մուֆթին իջաւ ամբիոնից և մօտեցաւ ամենից յառաջ համբուրեց վալի փաշային. ապա թեքուեց դէպի Սարգիս ազան և իւր ձեռքը ձգեց դէպի նա։

Հայ իշխանը համբուրեց իրեն գովասանող մխիթթու ձեռքը և 200 ոսկի մէջլիտիէ դրեց նրա բուռը։

Նահանգապետը դարձաւ դէպի Սարգիս էֆէնդին և թամաննահով շնորհակալութիւն յայտնեց։

Փաշային հետևեցին բոլոր մեծամեծները. այնուհետև կէս ժամի չափ ժողովրդի գոհութեան աղաղակն էր լսուում։ Այդչափ ժամանակը Սարգիս էֆէնդու գլուխն անդադար տմբտմբում էր. նա շնորհակալութեան ողջոյն էր տալիս ուրախ մուսուլմաններին։

Ցաւելով պէտք է ասած, որ բազմաթիւ հայերը նոյնպէս ձայնակցեցին իսլամներին։ Հայ առաջաւորներից շատերը տաճիկների օրինակին հետևելով՝ բարձրացան Սարգիս աղայի բազմարանն և շնորհակալութիւն յայտնեցին։

Նրանցից ոմանց ուրախութիւնը սրտանց էր, օտարասէրների յատկութիւնն է այդ, իսկ շատերն ակամայից էին կատարում արտաքին քաղաքավարութիւնը։

Չանել չէին կարող, իշխանութեան տնօրէնութիւնն էր։

Դեռ այդքանը չէր, ինքը գայմագամն իւր տեղից դիտում էր հայերի տրամադրութիւնը. վայ էր, եթէ մէկի երեսը տխուր տեսնէր։

—Հը՛, հը՛, հը՛, հէ՛... հէ՛... հէ՛... հէ՛ հէ՛ հէ՛։

Այս երկար ու բարակ հատուածական ծիծաղը մեր հին ծանօթ Փալչիկճեան նշան պատուելի ճե-

րուն էր՝ Ռուբէն Ասքանազեանի բազմավաստակ ուսուցչինը։

Պատուելի Նշանը գաւազանի վերայ յենուած՝ մօտեցաւ Սարգիս աղային և շողոքորթ ծիծաղով պատց.—վարձքդ Երուսաղէմ, ողորմած Սարգիս աղա՛յ, արածդ բարեգործութիւնն Աստուած ի փառս իւրում ընկալցի, հրամանքնիդ ժամանակիս էն մեծ ջերմեռանդ հաւատաւորն ես։ Մզկիթ է, եկեղեցի է՝ միևնոյն է, երկուքն ևս Աստուծոյ աղօթատաճարն են։ Շատ և շատ ուրախ եմ, որ հայուն յատուկ խոհեմութեամբ՝ հաւատարմութեան պարտքդ կատարած ես. հեռատես ես վարուած մանաւանդ՝ երբ դատրիկդ կնութեան ես տուեր հանուրց բարերար դպմտղամ էֆէնդիին. անշուշտ ազգասիրական հոգիդ քեզ թելադրած է, որպէս զի ազգային նախանձախնդրութեամբ՝ մեր անտէր ազգին յարգն բարեխնամ տէրութեան առջև ի վեր հանես։

—Շատ լաւ ըմբռնել ես դիտաւորութիւնս, պատուելի՛, պարծեցաւ Զալաբեան Սարգիս աղան, ես գիտեմ, որ մեր հայերից շատերը միտքս չըհասկանալով՝ ինձ դատապարտում են, ինքդ, ինչպէս մեր քաղաքի ամենից գիտնական պատուելին, խօսք հասկացրու այդ տխմարներին։

—Այո՛, այո՛, տխմար են, տխմար, մանաւանդ քան զամենեսին տխմարագոյն՝ մեծութեանդ պատուոյն անարժան Սեդրաս աղան, ես քովը կեցած էի, կըբամբասէր զհրամանքդ. հայհոյեց ևս,

երբ շնորհափայլ մեծ միւֆթիին բերանէն լսեց իւր ազէտ զուսակէն բարձրապատիւ դռնմաղամը գերադաս ընելու խոհականութիւնդ։

Խնդրեմ, Նշան պատուելի, մեզ հետ սեղանակցելու շնորհքն անես, իւր երկար ներքողեանի պատասխանն առացաւ Փալչիկճեանը Սարգիս աղային։

—Կու գամ, անզուգական բարերարը, կուգամ և տաճկերէն լեզուով աւուրն պատշաճաւոր ճառ մ'ի ալ կը շարահիւսեմ, թող գերաստիճան վալի փաշան և սրբակրօն մեծ միւֆթիին լսեն և զարմանան Ք. քաղաքի հայ մանկանց նուաստ դաստիարակչի դաստիարակութեան զգալի արդիւնքն։

Փալչիկճեանը բաժանուեց ու մօտեցաւ մզկիթի դուռը համբուրեց։

—Համբերիր, ես քո ճաշդ կեփեմ, անպիտան Սեղբոս, այս օրին էի սպասում, դեռ քիչ ժամանակ էլ կարող ես լոյս աշխարհ տեսնել, թող իմ կամակոր աղջիկս առողջանայ ու զարմաղամի կինը դառնայ՝ նոյն օրը քո վերջին ազատութեան օրը կըլինի։ Այ, սուտ չէ ասում Նշան պատուելին, վաղուց է, որ նախանձից տրաքուում ես, բայց չես յանդգնում լոյս ընկնել, կաց, մի շտապիր, շատ չի քաշել՝ կըտեսնես։

Այս սպառնալիքն էր իւր մտքումը որոճում Սարգիս աղան, երբ Ռուբէնի հայրը Սեղբոս աղան՝ գլուխը կախ՝ մօտեցաւ և երկու խօսքով շնորհա-

ուրեց Սարգիս աղայի քաղաքավորութիւնը։

—Շատ շնորհակալ եմ, գոռոզութեամբ և հեգնաբար պատասխանեց Սարգիս աղան, այսօր և հարսանիքի օրը, կը խնդրեմ, շնորհ անես մեզ մօտ, շատ կը պարտաւորես։

Սեղբոս աղան լուռութեամբ գլուխ իջեցրեց և հեռացաւ։

Փալչիկճեան Նշանը մզկիթի դուռը համբուրելուց յետոյ՝ վերադարձին հեռուից խոր գլուխ իջեցրեց փաշալին, միւֆթուն, դայմաղամին և շատ տաճիկ ու քուրդ մեծամեծների և գնաց կանգնեց կրկին Սեղբոս աղայի կողքին, որը նոր էր յետ եկել Սարգիս աղայի մօտից։

Սեղբոս աղայի տխրութիւնը դէմքի վերայ պարզ երևում էր։

—Այ՛, այ՛, կըզգամ, կըզգամ և կը վշտանամ, յարգոյապատիւ Սեղբոս աղա՛յ, ասաց Գաւազեանին Նշան պատուելին, սիրտս կտոր կտոր կըլայ, երբ մեր ազգին դաւաճանները կըտեսնեմ, որոց ամէնին գլխաւորին և՛ դու և՛ ես և՛ շատեր ստիպեալ ենք կեղծել ու շողոքորթել։ Քաղաքիս միակ եկեղեցին կիսաւեր՝ վաղը միւս օրը կըփլչի և անհամար բազմութիւն իւր աւերակաց ներքոյ կը թաղէ, իսկ ազգակործան Չէլէպեան Սարգիսը տաճկի մզկիթ կըկանգնէ։ Ուղիղ չեմ ըսիր, ողորմած Սեղբոս աղա՛յ, հարցրեց պատուելին։

Սեղբոսը չը պատասխանեց։

—Ո՜հ և վա՛շ ինձ, կըզգամ և չեմ մեղադրեր, տէր իմ, հրամանքիդ կսկիծ ի վեր է քան մեր ամենուն ցաւը, հոգւոյս սիրելի Ղունկիանոս կըզրկուի իւր խօսեցեալ հարսնացուէն, ծնողական սրտին համար առաւել մեծ վիշտ չի կարող ըլլալ. ես և ես, իբրև որդւոյդ հոգևոր ծնողը, ցաւակից եմ քեզի, ցաւակի՛ց և վշտակի՛ց:

Փալչիկճեանը թևքով աչքերը սրբեց:

—Շնորհակալ եմ, քաղաքավարութիւնից ստիպուած՝ կարճ պատասխանեց Սեղբոս աղան:

Ա՛խ, ինչո՛ւ չը լսեցիր ծառայիդ, տէր իմ, երբ ոտքդ եկայ և թախանձանօք խնդրեցի Խրիմեանին թակարդէն հեռու պահել զաւակդ. եթէ Ղունկիանոս վարադ գնացած չըլլար, այսօր անարժան հօր արժանաւոր դուստրը Ղունկիանոսիս կողակիցը կըլլար, և ըստ ամենայն հաւանականութեան՝ Սարգիս աղան կորստեան գըբէն տգատ կըմնար:

Ա՛հ Խրիմեան, ա՛հ, ատածս ամենէն ատելի հայ հոգևորականը, տես թէ՛նչպէս հայ ազգութեան և հայ եկեղեցւոյն ջնջուելուն պատճառ կըլլայ, մինչև անգամ տղայոց աւազանի անունը կը փոխէ. ո՛ր աստիճան արհամարհանք առ մեր սուրբ եկեղեցին. Յիսուսի խաչելութեանը հաւատացող Ղունկիանոսի անունը որ և է Ռուբէնն հայ իշխանի անուանը կը վերածէ, Գաւազեան դիւրահնչիւն մականունն երևակայական Ասքանազեանի կը դարձուցանէ: Նորաղանդ հերետիկոս:

Հանդէսը վերջացաւ, հայերը գլխներն ազատեցին և ցրուեցին իրանց տները, իսկ տաճիկները մնացին: Այդ օրը Սարգիս աղան մեծ հոգկերոյթ ունէր. հրապարակի վերայ գետնին սեղան էր պատրաստած ստորին դասակարգի համար, իսկ մեծամեծները քազմելու էին Սարգիս աղայի փառաշէն սենեակներում:

Ծ.

Հրապարակի խնճոյքը վաղուց վերջացել է, բայց Սարգիս աղայի տանը հիւրերն ամենատուրմ զրամադրութեան մէջ են. թմբկահարները, լարախաղացները, ատամկական խեղկատակ խաղեր նեղ փողոցների անց ու դարձը դժուարացնում են: Հազարից մի հայ՝ իւր տանիքի վրայից, կամ խուլ անկիւնից՝ համարձակուում է գլուխ դուրս հանել և մոլեկրօն տաճիկների խառնիճաղանճ ամբոխի վայրենի խրախճանը տեսնել: Հայ կանանց հոտը կըտրուել է, մկան ծակը հազար զուրուշի են առել:

Ո՞վ կը յանդգնի հրապարակ գալ. այսօր Իսլամը փառաց յաղթանակն է Քրիստոսի խաչի դէմ, հաւիւը զենավուղի արիւն էլ թափուի, այսօր դիւան դատաստան չըկայ:

Ձաշն էլ վերջացաւ, մուրճն էլ գետինն առաւ, բայց Սարգիս աղայի թանգագին հիւրերից և ոչ մինը տեղից չի շարժուում. փողոցային խաղատուակ

խաղերից ոչ պակասն այստեղ է կատարւում. կիսամերկ, պագշոտ գնչուհիների աղբշիռ պարերգները, ախտաբորբոք աշուղական առասպելները և սրաթօսութիւնները, զեավուրի կրօնի հասցէին անվայել հեգնութիւնները և երգիծանքները՝ ազելից խմիչքների շնորհիւ գղալազուրկ իսլամ աղանների ու էֆէնդիների վատշուէը տուփական նեարդերն են կիսաթմբլիր գրգռել։

Ի՞նչ վնաս, թէ մահմետական կրօնը գրգռուչ խմիչքներն արգելում է, պարզ, գոյնզգոյն, քաղցրախում մաստիքանները, էշխ տուող ռոմը, Ֆրանգների աշխարհից եկած փրփրուն և համեղ ըմպելիքներն ասիական շէրբէթից ընչմով են զանազանում. այդ ըմպելիքները օղի հօ չեն, սատանալին է յայտնի, թէ ինչ խառնուրդներից են բաղկացած։

Վերջապէս ով է քննում, թէ խոր յախճապակեայ պնակների մէջ անդադար լցուող ու դատարկուող գունաւոր հեղուկները գինի և օղի են, թէ օշարակ. գինի կամ արաղ եթէ լինէին, շշերի մէջ լցուած կըլինէին։

Մեծ մխիթին՝ ի պատիւ համիսլամեան կրօնական հանդիսաւոր տօնի՝ իրաւունք է տուել բացի գինուց և արաղից՝ ամէն ուրախացուցիչ խմիչք գործ ածել. նա ինքն անձամբ ճաշակել է Սարգիս աղայի սեղանի վերայ մատուսակուող բոլոր հեղանիւթերը։

Այսպէս էին արդարանում իրար առաջ մահմետի զաւակները, հետն էլ ընկերի կողը հրելով

ծանկախօսում էին. եթէ մեծ միւֆթին, արդարև, ճաշակել է այս պատուական խմիչքն ու չի կարողացել հասկանալ, թէ սա ոչ այլ ինչ է, եթէ ոչ գեավուրի ոտներով տրորած խաղողի ջուր, ապա միւֆթու ճաշակի թեղերը փչացած են:

Ոչ ոք չընկատեց, որ խնճոյքի ամենաուրախ ժամանակը՝ մուէզը գետինն առնելուս՝ մի օտարական հայ երիտասարդ յանդգնութիւն ունեցաւ պատառել խուռւն խուժանն և մտնել Սարգիս աղայի բաժը:

Երիտասարդի հագուստը տեղական հայերի տարազից փոքր ինչ տարբերուում էր:

Աներկմիտ, անծանօթին յայտնի էին Սարգիս աղայի տան ամէն քունջ ու պունճախը. տղան ծռանից առաւ դէպի կանանց բաժինն և երեք անգամ բաղխեց կանանցի մուտքը:

—Ո՛վ ես, լսուեց ներսից մի կանացի ձայն:

—*Քո ծեռքով ալատրաստուած կարկանդակ կուզեմ Սալվի-քաջի:*

—Տուած պատասխանից իմացանք, որ եկաւորը Ռուբէն Ասքանազեանն էր:

—Մեռնի՛ Սալվին զանգակի սուր ձայնիդ, բացականչեց Աբփիկի դայեակն և դուռն զգուշութեամբ բաց արեց, Ասքանազեանին ներս առաւ:

—Շատ շո՛ւտ, զարմացք յայտնեց Աւետիքն յառաջ գալով և գրկախառնուեց Ռուբէնի հետ:

—Աւելի շուտ եմ եկել, քան թէ դու կըմտա-

ձէիր, մեծ մխիթար քարոզը բառէ-բառ արտագրած՝ ունիմ, ամբոխի բազմութիւնից խոհեմութիւն համարեցի իմ հայրենի քաղաքի հեռու կողմերը մի վերջին անգամ աչքից անցկացնել։

Բայց, աստ խնդրեմ, Աւետիք, յաւելացրեց Ռուբէնը, այս ինչ կընշանակէ, րոպէն ամենալաջողն է, խաւարն աշխարհը պատում է, ամիկը ցրուում է, քաղաքիս հսկող մեծամեծներն արբած ընկած են ձեր տանը, իսկ Արվիկս չկայ և պատրաստ չէ. մթթէ արդարև տկարութիւնը շինծու չէ։

—Ա՛ռ, որդի, քո պահ տուած աւանդը, Աստուած ձեզ հետ, դնացէք ձեր գլուխն ազատեցէք, ինչ գալու է՝ թող իմ պառաւ գլխին գայ։

Արվիկի կռնից բռնած՝ դուրս եկաւ միւս սենեկից Փամբուխ խաթունն և վերոգրեալ խօսքերով դատեր ձեռքը մխացրեց նշանածի ձեռքին։

Գրչի ուժից վեր է նկարագրել այն խոր տրտաւորութիւնը, երբ երկու սիրահարների մարմնի մորթերը շփուեցան իրար հետ. թէ ինչ հոգեզրգիռ յուզում ինքնայեռի ներսի նման քլթում—քլքլթում էր խօսակների սրտում, մենք դուշակել չենք կարող, սակայն այս կայ, որ Աւետիքի և մօր աչքերից աւելի սուր դանուեցին պառաւ Սալվի-բաջու տեսանելիքը։

—Բռնիր, Աւետիք ջան, Ղունկիխս, չես տեսնում, որ ուշագնաց մարում է, հիմի գետինը կընկնի, գոչեց Սալվին։ Բայց արի տես, որ միւս

կողմումն էլ Արփիկն է իրանից գնում։ Էլ չընայեց Սալվին, նա ինքն իւր կողմից գրկեց Ռուբէնից աւելի անզգայացած Արփիկին, տարաւ զգուշութեամբ փռուածքի վրայ պարկացրեց և վազեց դէպի ջրի սափորը։

—Խելքի արի, Ռուբէն, ինչ կանացի քնքշութիւնների ժամանակ է, հէնց հիմի հայրս կարող է իւր սենեկի դռնովը ներս մտնել և այն ժամանակն ամէն ջանք կորած է, շեշտեց Աւետիքը։

Ռուբէնի գլխին, ինչպէս թէ մի կուժ սառը ջուր դատարկես, նա սթափուեց, զգաստացաւ և ասաց.—ես պատրաստ եմ։

—Իսկ ո՞ւր է մեր ազնիւ եղբայր Գարեգինը, Սալվու տուած ջուրը խմեց ու ուշքի գալով՝ հարցրեց Արփիկը։

—Նա քաղաքից դուրս Մեծ քարափի եռւը Հիանքն արածացնում է. նա մեզ է սպասում։

—Դէհ, ուրեմն, համբուրեցէք ծնողիս մայրական քաղցր ստինքն և տէր ընդ Ձեզ, կարգադրեց Աւետիքը։

—Եթէ գիտենամ, որ իսկոյն կըբռնուիմ և կը գլխատուիմ, ասաց Ռուբէնը, մինչև մեր տունը չը գնամ և մօրս օրհնութիւնը հետս սլաշար չըվերցնեմ, քայլ անողը չեմ։

—Տուն գալու ժամանակ չէ, անուշիկ զաւակս, քո ծնողաց մէջ այնքան բարոյական այժ կայ, որ

իրանց որդու և հարսի ոտքը կըգան և օրհնելով ճանապարհ կըդնեն։

Խօսողը Ռուբէնի մայր Մարիամ խաթունն էր։ Սալվի-բաջին Աբրիկին ուշքի բերելուց յետոյ՝ ինքնաբերաբար մտածել էր մօր ու որդու տեսակցութիւնը դյուրա բերել։

Բարեբաղդաբար, այդ իսկ վայրկենին Ռուբէնի հայր Սեդրոս տղան մի հնարքով աննկատելի կերպիւ դյուրան ազատել էր Սարգիս աղալի կոչունքից և տուն էր եկել։

Սալվին երկու խօսքով ամէն ինչ պարզեց Գաւազեան ամուսիններին և իւր հետ պարտիզի միջնադռնով քարշ տուեց իրանց տունը։

Սրբաւանդ կրօնական պատկառելութեան ծէսին դէմ չենք լինիլ, եթէ վստահութիւն ունենանք պնդելու, որ եկեղեցական պատկառելութեան չափ ընդունելի էր Բարձրելոյ Աթոռի առաջ երեք ծնողների բերանով կատարուած հակիրճ պսակը։ Ի՛նչ օրհնութիւն և բարեմաղթութիւններ որ կարելի էր թափել մի քանի վայրկենի մէջ, չբխնայեցին Գաւազեան հայր ու մայրն և Զէլէբեան տիկինն իրանց սիրասնունդ զաւակներին։

Աստասուքը խօսքերի շարունակութիւնը խլեց նրանց բերանից և սրտի լեզուով խօսեցրեց։

—Այսքանս կրբաւէ, ասաց Սալվին և դուրս կորզեց Աբրիկին և Ռուբէնին ծնողական գրկերից։

Մի րոպէ չափ Սալվի-բաջին ներս տարաւ Աբ-

փիկին միւս սենեակը և նրա փոխարէն հետը դուրս բերեց մի խոժոռադէմ պատանու և յանձնեց Ռուբէնին։

Եթէ Ռուբէնի հոդին չզգար և տարօրինակ կերպարանափոխութեան մասին կանխօրէն տեղեկութիւն չունենար, նա արտաճաք կըլինէր՝ անծանօթ տղային նշանածի փոխարինելովը։

Փամբուխ խաթունն և Աւետիքը մի րոպէ իրանք էլ շփոթուեցան օտար պատանու ներկայութիւնից, թէև այլակերպութեան գաղտնիքն իրանց տնօրէնութեամբն էր կատարուել։

Առնական հագուստը կանացի շրջազգեստից և ջուբբալից ոչ պակաս յարմարում էր ծպտեալ Արփիկին։

Զոքեց աղջիկն իւր սկեսրայրի և սկեսրոջ առաջին, համբուրեց նրանց ոտքերն և ձեռքը տուեց սրտի սիրեկանին։

Մի մի վերջին համբոյր ևս տուին ամոլները դրան շեմքումը բազմաշխատ Սալվի-բաջուն և դուրս եկան փողոց։

Մուրթը գետինն առել էր, ամբոխը նօսրացել էր, փողոցները դատարկ էին և ոչինչ չարգելեց փախստականներին շտապելու դէպի Մեծ քարափը։

Շատ խնդրեցին երջանիկ զոյգերն Աւետիքին, որ չըհետևի իրանց, բայց նա պնդեց, որ մինչև իւր փեսայի անձնուէրը ընկեր Գարեգին Մելքիսեդեկեանի հետ չըհամբուրուի, իւր սիրտը չի հանդըստանալ։

—Լաւ է, որ մինչև վերադարձդ հայրդ տուն չըմտնի, իսկ եթէ դայ և քեզ ու քրոջդ անկողնում չըգտնէ, այն ժամանակ ինչպէս կարդարանաս, չէ՞ որ այս առաւօտ հայրդ, կարծես, չէր ուզում հաւատալ ընծայել քո հիւանդութեանդ, ասաց Աւետիքին Պամբուխ խաթունը։

—Վնաս չունի, մայրիկ, քանի հայրս շուտ հասկանալ իմ և Արփիկի պատրուակեալ հիւանդութիւնը, այնքան զգալի կըլինի սրտին իւր մոլորութիւնը. նա շատ ու շատ անգամ է լսել քրոջս դիմադրութիւնները. ես մեծապէս զարմացայ, որ հայրս առաջին իսկ օրը չը կարողացաւ հասկանալ մեր կեղծ տկարութիւնը։

Այս խօսքերով դուռը մօր երեսին ծածկեց Աւետիքն և հետևեց արագավազ գոյդին։

Ա.Ծ.

Հարազատ եղբօր և քրոջ նման գրկախառնուեցին Մեծ քարի եռւը Աւետիքն և Արփիկը Մելքիսեդեկեանի հետ, բայց վերջին հրաժեշտի համբոյրը մեր կարծածի չափ շուտ չեղաւ։

Պնդում և ստիպում էր Աւետիքը Գարեգնին և Ռուբէնին՝ իւրեանց գործառնութիւնների ընդհանուր պատկերը ներկայացնել իրեն, բայց թէ ընչի

համար՝ այդ մի կտորը չէր ուզում բացատրել։

Ոչ հետապնդութեան երկիւղն և ոչ մի չտապեցուցիչ հանգամանք չը կարողա ցան համոզել Աւետիքին՝ իր անժամանակ պահանջն անելուց յետկենալու։

Շատ իրաւացի էին Աւետիքի դիմադրական պատճառաբանութիւնները. իւր աստղեամբ՝ հայրը ոչ միայն այս գիշեր տուն չի մտնիլ, վաղը մինչև ճաշ էլ չի զարթնիլ։ Հետևաբար՝ ամենաքիչը՝ 15 ժամ ազատ միջոց ունին անվախ ճանապարհ կըտրելու։

—Եթէ այդպես է, ես խոստանում եմ 15 ժամի մէջ ձեզ ռուսական սահմանագլուխը հասցնել, միջամտեց լուռ կանգնած հինգերորդ անձնաւորութիւնը։

Նա՝ քաջահմուտ և յայտնի *ղլաուզ*, կամ ուղեցոյց Կարապետն էր, որին Գարեգինը կրկնակի գնով վարձել էր։

—Եթէ մեր նամակներով շարունակ հաղորդած տեղեկութիւնները քո հետաքրքրութիւնդ չեն լրացրել, ասաց Գարեգինն Աւետիքին, ես համառօտապէս կըպատմեմ քեզ մի գիւղում կատարած փոքրիկ գործս, որով դու կարող ես ընդհանուր գաղափար կազմել իմ գործակատարութեանց մասին։

—Ջեզանից յետոյ էլ ես կանեմ մի համառօտ նկարագիր, ասելացրեց Ասքանազեանը։

Մի ձորամէջ էր, ուր իմ ուղեկիցների աստ-

թեամբ՝ որսեր շատ կային։ Այսպէս սկսաւ Մելքիսեդեկեանը։

Ես նստեցի դալար խոտի՝ վրայ՝ աղբիւրի ական մօտ։ Հինգ հոգի էին գիւղից վերցրած երիտասարդները, հինգն էլ ունէին հասարակ հրացաններ։

Դիւղականաց վկայութեամբ՝ այս հինգ տղայքն էին ամբողջ գիւղումը զէնք դործածողները։

—Ձորի միւս թմբի ցից քարի վրայ կանգնած գիշակը հսկայ անդղ թռչունին զարկողը թող վերցնի ընծայ այս ատրճանակին, ասացի ես նստած տեղիցս և կողքիցս մի վեցհարուածեան *ռեվոլվերը* խոտի վրայ վայր դրի։

—Նախ՝ այսքան հեռաւորութեան մէջ զարկել անհնար է, սկսեցին մխաբերան տղայքը, և երկրորդ՝ հրացանների ձայնը կըխրտնացնէ միւս որսերին։

—Այս աւուր որսը չուզեցի, պատասխանեցի ես և ոտիկեցի բոլորին այլ և այլ կէտերից նշան դնել։

Մինը մի քարի վրայից, միւսները թմբերից և ուրիշ բարձրութիւններից ուղղեցին հրացանները։

Պարզուեց, որ հինգ հոգուց և ոչ մինը հրացան բռնել չըգիտէը, ամբողջ մալմսով դողում էին խեղճերը։

—Այժմ նայեցէք, աչքին եմ խփում, ասացի ես և կանգնած տեղիցս ուղղեցի հրացանս ու արձակեցի։

Պատրաստ որսկանի նման տղայքը վազեցին ընկած անդղի ետևից և զարմացմամբ յետ եկան։

Գնդակը հանել էր թռչունի երկու աչքը՝ առանց գլուխը փշրելու։

— Եթէ կը կամենաք, երկու ժամի մէջ բոլորիդ ինձ նման որսականները կը շինեմ, միայն այն պայմանաւ, որ դուք էլ ձեր գիւղական բոլոր երիտասարդներին վարժեցնէք։

Տղայքը խոստացան։

Փորձառու ուսուցչի հմտութեամբ՝ կարճ մէջոցում իմ աշակերտներիս քաջ նշան զարկող որսորդները և անահ հրացանազարկները պատրաստեցի։

Ինչպէս այդ օրը՝ նմանապէս և ուրիշ տեղեր՝ իմ նոր աշակերտներս էին ինձ համար որս անողները։

— Այսուհետև հինգ քուրդ, նոյնքան էլ արեներբու աւազակները չեն համարձակուիլ մեր գիւղին, մեր ստացուածքին մօտենալ, ինքնապաշտպանութեան գաղափարը նրանց մէջ ներմանելուցս յետոյ աւետում էին ինձ աշակերտներս։

— Եթէ իմ ձեզ աւանդած դասը դուք կլսաք ձեր եղբայրներին, ոչ թէ հինգը, տասն անգամ հինգն էլ չեն վստահանալ ձեր գիւղին մօտ գալ։

Տղայքն անսուտ խոստումն էին անում վարժեցնել ուրիշներին։

Շատերը պահպանում էին իրանց ուխտը։ Պատահում էր, որ դիտմամբ՝ մի ամսից վերադառնում էի այցելածս գիւղերը։

Ոչ միայն զէնքն էի շատացած գտնում, այլ և քաջ զինավարժներ տասնեակներով խմբուում էին

չորս կողմս և առաջարկում իրանց ծառայութիւնը։

Ես, ի հարկէ, բաւականանում էի նրանց փորձելով և շտապում էի հեռանալ՝ կասկածանաց տեղիք չը տալու համար։

—Ես վերջացրի, Ռուբէն, ասաց Մելքիսեդեկեանը, այժմ դու սկսիր։

Ռուբէնն այսպէս սկսաւ.

—Բացի տէրտէրից և իւր որդուց՝ գիւղումը ոչ ոք կարդալ չգիտէր. քահանայի և իւր որդու ուսմունքը հասարակաց ընթերցանութիւնից և ժամերգութիւնից այն կողմը չէր անցնում։

Հաւաքուած են մօտս գիւղի առաջաւորները։ Այնտեղ է և քահանան։

Ես կարդում եմ նրանց համար մօտս եղած հետաքրքրաշարժ գրքոյկներից մի փոքրիկ կտոր։

Ամենքեան զարմանում են, որ հասկանում են կարդացածս։

—Ուսում տուէք ձեր երեխաներին և ամէն օր կլսէք նրանցից այդպիսի պատմութիւններ, առաջարկում եմ ես։

—Ո՛ւր է ժամանակ և ո՛ւր է ուսուցիչ, գոչում են ամէն տեղից. ամառը երեխայքը մեզ պէտք են դաշտային գործերում, իսկ ձմեռն էլ վարժապետ չկայ։

—Ամառը ձեզ ուսումնարան հարկաւոր չէ, պատասխանում եմ ես, իսկ ձմեռները միշտ կարելի է դպրոց և ուսուցիչ ունենալ, եթէ ամէն մի ծնող չբնայքը իւր մանուկի կրթութեան համար մի

քանի *Հօխսայ* ունեցած բարիքից ուսուցչի աշխատանաց փոխարէն հատուցանել։

—Տուր մեզ ուսուցիչ և կեանքներս չենք խընայիլ, ձայն ձայնի են տալիս ամէն կողմից։

—Մեր Տէր Հայրը, կամ իւր որդին ձեզ ուսուցիչ, եթէ ուրիշը չը ճարուի, շեշտում եմ ես։

—Երանի չէր, օրհնեալ լինիս, ես կամ իմ որդին կարողանայինք քեզ պէս կարդալ, կամ սովորեցնել, մեզ ուրիշ վարձատրութիւն հարկաւոր չէր, Աստուած շէն պահէ իմ ժողովուրդը, ոչինչ պակասութիւն չունիմ, ցաւալին այս է, որ մեր սովորցրածով շատ հեռու չենք գնալ։

—Երկու շաբաթուայ մէջ, տէր Հայր, ես խոստանում եմ քո որդուն և քեզ պատրաստել ուսուցչութեան համար, եթէ միայն հետս ճանապարհորդէք. ես ժամանակ չունիմ երկար մնալու ձեր գիւղում։

Բաւական էր քահանայի կամ որդու պատրաստականութիւնը. նոյն օրը բազմականաց ներկայութեամբ սկսում էի իմ փորձնական դասերս։

Ես կանխապէս ինձ համար կենդրոնատեղի որոշած ունենում էի։

Մինչև իմ այնտեղ գնալս, վարժապետութու աշակերտներս հինգ տասը հոգի հաւաքուած՝ սպասում էին ինձ։

Ամենաշատը՝ երկու շաբաթ էր քաշում. եթէ ոչ բոլորեքեան՝ գոնէ կէսը նրանցից այդ կարճ ժա-

ճանապարհորդում ծանօթանում էր հնչական մեթոդին, կրօնի սկզբունքին և թուաբանական ուզեղագրական տարերքին։

Այնուհետև նուիրական պարտականութիւն էի դնում յառաջադէմներին՝ օգնելու իրանց ընկերակիցներին և գնում էի իմ ճանապարհս։

Ես հասնում էի նպատակիս։

Վերադարձին՝ գտնում էի մի փոքրիկ վարժոց՝ իմ պատրաստած ուսուցչիս աշխատութեամբ հիմնուած։

Նա արդէն պարապում էր իմ ուղարկած դասագրքերով։ Իմ ուրախութեանը չափ չկար՝ երբ նկատում էի ուսուցչի մէջ իմ ցանած ինքնաճանաչութեան *սերմանց սկիզբը* սաղմնաւորուած։

—Այդքանով միանգամայն գոհ եմ, ասաց Աւետիքը, ժամանակ է վերջին հրաժեշտի ողջոյնը տալու և բաժանուելու։ Ցէրը ձեզ հետ։

Նրա վերջին գրկախառնութիւնն եղաւ Արփիկի հետ։

Ջոլրը փաթաթուել էր եղբօր պարանոցովն և հեծկլտում։

Մի քանի րոպէից Աւետիքը գոչեց. օգնեցէք, սա ուշագնաց՝ է լինում։

Գարեգինը վազեց, խլեց օրիորդին եղբօր գրկից և յանձնեց Ռուբէնին։

Բռնիր, ասաց, մինչև ես ձիս հեծնեմ։

Նա հեծաւ ձին և իւր գաւակն առաւ արդէն ուշքի եկած Արփիկին։

—Դէպի աջ, գոչեց ղաւուզ Կարապետն և մըտրակեց իւր երիվարին։

Փախստականները հետևեցին նրան։

Բաւական ժամանակ էր անցել և Աւետիքը դեռ անշարժ կանգնած էր մթութեան մէջ։

ԾԲ

Անատօլիայի նահանգական դիւանների *քէթիբնները* (գրագիրը) միևնոյն օրուայ մէջ միատեսակ բովանդակութեամբ հրամաններ են յօրինում, սուրհանդակները ու հեռագիրները քաղաքից քաղաք խստապահանջ պատուէրներ են թռցնում, քաջափորձ և յայտնի խուզարկուներ, ձիավարժ ոստիկաններ, քուրդ էլչեգինները, գլխից ձեռք առած աւազակապետները Տաճկահայքի լեռ ու ձորերն են ճանապարհում։ Վերջնական տնօրէնութիւնը Մեծ Եպարքոսից հեռագրով է սպասուում, որպէսզի փոքր Ասիայի գինուորական զօրութիւնն ի գործ մղուի և երկիրը պատերազմական դրութեան մէջ յայտարարուի. բայց Բարձրագոյն Դրան տնօրէնութիւնն ուշանում է։

Ի՞նչ շփոթ է այս։

Ե. քաղաքի հայաշէն մզկիթի բացման գիշերը Սարգիս Չէլէբեանի պատուամեծար հիւրերը շատ ուշ ցրուեցին. այն օրը վալի փաշան մի այլ իմն տրամադրութեան մէջ էր. մեծ միւֆթին փաշայից անբաժան՝ կրօնական նախանձախնդրութեամբ՝ բոր-

բոքուած դրութիւնը շարունակ սպահպանում էը վիաշալի մէջ։

Անոնցմէ եղելութիւն չէը. իսլամականութիւնն այն օրը խախտել, խարխափել է քրիստոնէութեան հիմունքը, հայ մարդը հայ եկեղեցւոյն յատկացրած տեղում իր ծախքով Մահմէտի տաճար է բարձրացնում։

Ի՞նչ վտանգաւոր յաղթանակ։

Եւ ոչ է այս մեծագործութեան սկզբնապատճառը։—Քաղաքի առաջաւոր հայ եկեղեցական Սարգիս Էֆէնտին։ Ո՞ւմ շնորհիւ և յորդորանօք մոլորեալ հայը դարձ է եկել։

—Կրօնասէր մեծ մխիթիւ և իւր հաւատարիմ աշակերտ բարեպաշտօն գայմաղամ Օսման Էֆէնդու շնորհիւ։

—Ո՞ւմ հովանաւորութեամբ է պաշտպանուած գործը։

—Գերաստիճան և իմաստուն նահանգապետ վիաշալի։

Վերոդրեալ բովանդակութեամբ՝ արևելեան պերճախօսութեան կանոններով շարահիւսած՝ մի համառօտ նկարագրութիւն Բ. քաղաքի մզկիթի հիմնադիրների անուններն յաւիտենականութեան տարեգրի մէջ անմահացրեց։

Մի մեծ ոսկեկազմ շրջանակ հաստ մագաղաթանման թղթի վրայ ոսկէ տառերով դրոշմեց իւր մէջ վերոյիշեալ մեծագործների սխրագործութիւնը։

Երջանակը զարդարեց Սարգիս էֆէնդու սենեկի պատը։

Մի աննշան ձախողակ հանգամանք հանդէսի փայլի վրայ մի աղօտ գծի հետք սփռեց, բայց վալի փաշայի հանճարը գիծը ոչնչացնելու հնարը գտաւ։

Սարգիս էֆէնդու նազելի դստեր անակնկալ տկարութիւնն էր այն սև գիծը, յաղթութեան դաբնին մի քանի օրով ուշ պէտք է պսակէր Օսման էֆէնդու ճակատը։

Խաչապաշտութեան համար կրկնակի պարտութիւն, բացականչեց և խրախուսեց վալին, կրկնակի հանդիսականարութիւնով երկրորդ յաղթանակը տարած կը լինինք. աղջկայ առողջանալու հետևեալ օրն ես իմ ձեռքով քաղում եմ մեր սիրելի Սարգիս էֆէնդու պարտիզի հոտաւէտ վարդն և Օսման էֆէնդու հարէմի զարդն անում։

Ի նշան խորին երախտագիտական հաւաստեաց Սարգիս էֆէնդին ու ղայմաղամը մօտեցան և համբուրեցին փաշայի վերնազգեստի քղանցը։

Զարմանալի չէր ուրեմն, որ նոյն գիշերը Սարգիս աղան հիւրերին ճանապարհ դնելուց յետոյ՝ աւելորդ գլխացաւանք համարեց իւր ընտանիքին այցելելը։ Նա մի կողքի վայր ընկաւ և մինչև երկրորդ օրուան ճաշ թեքուելը խռմփացնում էր։

Վերջապէս զարթնեց Սարգիս աղան և յոգնած ու ջարդուած՝ յօրանջելով մտաւ իւր կնոջ սենեակը։

Փամբուխ խաթունի աչքերը շատ լալուց ու-

ռել էին, ոչ պակաս կարմրել էին և Սալվէ-քաջու աչքերը։ Աւետիքն իւր անկողնում պարկած՝ տնքում էր։

Այս դրութեան մէջ գտաւ Սարգիս աղան իւր գերդաստանը։

—Ի՞նչ կայ, աղջիկը ծանրացել է, ցաւը սաստկացել է, որ անքուն էք մնացել, հարցրեց Սարգիս աղան կնոջից։

—Ի՛նչ աղջիկ, ուր է աղջիկ, մրմռաց Գամբռւխ խաթունը։

—Ինչպէս թէ ուր է, մեռել հօ չէ, երեկ չէը որ քոյր ու եղբայր հիւանդ սատկում էին. երանէ ոչ ծնուէին և ոչ իմ բարեկամների առաջ ինձ խայտառակէին։

—Սրտմղ եղաւ, էլ ինչ ես ուզում, այդքան անէծքին ու հայհոյանքին ես եմ, որ դիմանում եմ, ապառաժ քարը կը պատռուէր ու չէր տանել։

—Չեմ հասկանում, ինչ ես դուրս տալիս, ուր է աղջիկդ։

—Ես ինչ իմանամ, ես էլ քեզ պէս. երեկ երեկոյին դադրած, առանց շորահան լինելու, կողքին գլորուեցի չոր գետնի վրայ, քունս տարել էր, լոյսը բացուեց, վեր կացայ՝ որ չը կայ։

—Ի՞նչ կը նշանակէ չը կայ։

—Ոչ մօտիկ հարևանների, ոչ հեռու բարեկամների տները մնաց, ոտքիս կաշին մաշուեց՝ էն-

քան քարշ եկայ. կերևի՝ քո սիրական փեսացու տաճիկն է փախցնել տուել։ Ու էլ, ճար կտրած մարդ, երբեմն աքաղաղների հետ զարթնում՝ ամենքին դիւադադար ես անում, վախտ էլ մի կողքի ընկնում ես ու ճաշքաշն տալիս։ Ը՛ր գիտեմ՝ ումնից էիր վախենում, որ սենեկիդ երկու դուռն էլ ալինդ փակում էիր. ի հարկէ, վնաս չունէր, եթէ հիւրերի դուռը կողպէիր, զգուշութիւն պէտք էր, խառնուածք օր էր. մեր կողմի դրան փականքն ընչուր էիր ամրացրել, կինդ ու որդիքդ հօ քեզ կողոպտելու չէին։ Հարիւր անգամ բաղխել ու ձայն եմ տուել, մտքումս սև սև օձեր էին գալար գալար գալիս, կարծեցի, թէ քո սիրելի տաճիկները գոգումդ նստել՝ մօրուքդ փետտել են, տաճկին ու քրդի շանը հաւատալ չի կարելի։

—Հապա ձեզանից ոչ ոք չը նկատեց, թէ ո՛ր կողմը կորաւ, կո՞յր էիք, ինչ է։

—Ինածն ու մեռածը մին է, խեղճ երեխէքս քո ազգաթքանք խրախճաններից ու աղմուկներից մինչև կէս գիշեր չը կարողացան աչք կպցնել. այնուհետև սատանայ չենք, մարդ ենք, քնով ենք ընկել։

Սկզբումը Սարգիս աղան մեծ նշանակութիւն չը տուեց կնոջ տուած բօթին, նրա համար ցաւ չէր, եթէ Սւետիքն էլ քրոջ հետ միասին կորչէր. բայց վերջը՝ երբ միտքն եկաւ, որ հետևանքն իւր համար կորստաբեր է, ոչ ոք չի հաւատալ, թէ

շինծու խորամանկութիւն չէ, սկսեց աղաղակել, դուչել ու տունը գլուխն առնել։

—Իմ ճչալու փոխարէն դո՞ւ ես գոռգոռում, ձայնը բարձրացրեց Փամբուխ խաթունը, իմ երեխան ես քեզանից եմ պահանջում. եթէ Սեղբոս աղալի տղային չէիր հաւանում, ուրիշ հայ—քրիստոնեան գլխիդ կտրուել էր, որ աղջկանս անհաւատի հարէմն էիր ձգում. ես ինչ դիտեմ, կարելի է չեն փախցրել, կարելի է ինքը գլուխ է առել, մի կողմով հեռացել. կարծում էիր թէ երեկուան երեխան է, տեսար, քո աչքն էլ հանեց, իմն էլ, ով դիտէ՝ ջուրն ընկաւ, քարափից գլորուեց, թէ փէշը թափ տուեց, մի կողմով քաշուեց, իւր պատիւը պահեց, իւր հոգին դժոխքից փրկեց, անհաւատի կին լինելուց ազատուեց։

Սարդիս աղան կնոջ տրտունջը չէր լսում, նա տան մէջի բոլոր կահ—կարասիքը ցաք ու ցրիւ էր տալիս, կարծես՝ տեղ էր կորցրել։

Եւ արդարև, Աբրիկի գորգի տակից մի նամակ լոյս ընկաւ։

Սարդիս աղան յափշտակեց ու բաց արեց, բայց ոչինչ չը հասկացաւ. անգրագէտ էր։

—Ա՛ռ, կարդա՛, տես, ինչ է գրած, կոպտաբար հրամայեց նա Աւետիքին։

—Ի՞նչ կարդամ, ինձ հայերէն սովրեցրել ես, որ կարդամ, հեւալով պատասխանեց որդին, թուրքերէն գիր տուր՝ կարդամ։

—Է՛յ, ո՞վ կայ այդ տեղ, գոչեց դուռը բանալով Սարգիս աղան դէպի ծառաները։

Ծառան ներս եկաւ։

—Նո՛ւտ, այս րոպէիս գնա Նշան պատուելուն՝ մեր քաղաքի ծեր վարժապետին էստեղ կանչիր. շտապիր, անպիտան, գոչեց Սարգիս աղան, դեռ կանգնած ես, գետնին թաքուն եմ, եթէ մինչև ցամաքելը ալևորին առջևս չես կանգնեցնիլ, վայտի տակին քեզ կրմահացնեմ։

Սարգիս աղայի ցանկութիւնն իր կարծածից շուտ գլուխ եկաւ, պատահաբար՝ նոյն վայրկենին Փալչիկճեանը գալիս է եղել Չէլէբեանի մօտ, որ երեկուան ստացած պատուասիրութեան համար շնորհակալութիւն յայտնէ։

—Հ՛ը, հ՛ը, հ՛ը, հէ հէ հէ, հի, հի, հի... ակնոցներն աչքին՝ նամակն երկար միջոց տնտղելուց յետոյ՝ հռհռում էր Փալչիկճեան պատուելին։ Հէ, հէ, հէ... ես քաջ գիտէի, թէ նա ինչ սուտ ըլլալու էր... հի, հի, հի...

—Չո՛ռ, չոռ, չո՛ռ, ցա՛ւ, ցաւ, ցա՛ւ, ծաղրեց Սարգիս աղան նմանեցնելով Փալչիկճեանին իւր հընչիւնը, բան ես ասում՝ բան ասա, որ ես էլ հասկանամ, ինչ ես ձայնը կտրած գազարակը իշի նըման զկռտում ու զռզռում։

—Այո՛, կը տեսնամ, աղա՛ս, որ սիրասուն դըստերդ անյայտանալու հոգսով վշտացած ես, ծառաներնիդ կը գուշակէի, Խրիմեանի նման անձանց

դաստիարակած սաներէն ուեւէին ապասելիք չէր յուսացուիը։

—Պարզ խօսիր, ասում եմ, թէ չէ գլուխդ վշուր վշուր կանեմ։

—Սարգիս աղան ձեռքը բարձրացրեց, որ Նշան սառուելուն զարկի, բայց չը խփեց, այլ ձեռքն օդում վեր բռնած՝ պահեց։

—Ի՞նչ խօսիմ, ազգային բարերար, դուստրդ վախուցեր է իւր նախկին խօսեալ ամուսնացու Ղունկիանոսը, որ Խրիմեանին խարդաւանուԹեան շնորհիւ՝ Ռուբէնի է վերածուեր։ Նամակիս մէջ որոշ օր է ժամադիր եղած և այդ օրն՝ երեկուան քո վառաց օրն էր։ Այ՛, այ՛, խելացի նախատեսուԹիւն, մուԹն աշխարհը պատելուն սկէս, կըգրէ Ղունկիանոսը քո դստերդ, պատրաստ եղիր, ես կուգամ և կերԹանք։ Օ՛ն անդր, դաւաճանուԹիւն բարեխնամ ԿառավարուԹեան դէմ, շարունակելով նամակը կարդալ, գոչեց Փալչիկճեանը։ Շո՛ւտ, շո՛ւտ, Սարգիս էֆէնդի՛, կորանք հալքս. իբրև տիրադաւ՝ վաղն ազգովին սրի կը քաշուինք, փուԹացեք՝ մինչ ուշ չէ, փրկեցէք հայ ազգը, յանցաւորք դեռ հեռի չեն, մատնեցէք արդարուԹեան ատենին, Թող անհատները կորսուին, քան Թէ ազգն գլխովին տուժէ, օհ ոճիր ...

—Վերջապէս խօսիր, մենք էլ հասկանանք, պատուելի՛։

—Ի՞նչ խօսիմ, երկնային արդար պատուհաս

իջած է նախ՝ քո, ապա՝ մեր ազգին գլխուն և այդ ամենի պատճառը քո անհեռատեսութիւնն է։ Դուստրըդ կեղծ է հիւանդ ձևացած, նա անկողնին մէջ կսպասէ եղեր իւր փեսացուին։ Դեռ այսքանը չէ. փեսացուդ՝ Գաւազեանին տպիրատ գաւակը՝ ամիսներէ հետէ գաւադրութեան գեկավարի պաշտօն կատարած է Տաճկա-Հայաստանի գաւառներուն մէջ՝ իրան գործակից և մեղսակից ունենալով ռուսահայ մի տահակ երիտասարդ, որ երեկ դուստրդ փախցնողներէն մէկն է եղած։

Ո՛հ, ո՛հ և վա՛յ... բացականչեց Փալչիկճեանը ընթերցանութիւնը շարունակելով, նամակ չէ այս, սա մի լիակատար տեղեկագիր է, որ առանց ժամ և ժամանակ կորսնցնելու՝ յանձնարարելու է օրհնաբանեալ տէրութեան, որոյ արիտուրը, հարկաւ, կըստանաք։ Կատաղիք գժոխոց, փրփրում էր նշան ծերունին, ընչեր կը լսեմ, փեսայացուդ և Մելքիսեդեկեան Գարեգին կոչուած ռուսաստանցին իրանց շրջանառութեան մէջից յաջողած են անասունի նման թշուառ հայերուն մոլորութեան բաւիղը գլորելու. ընթերցանութիւն և գինավարժութիւն են ուսուցած՝ հրահանգներ են տուած, և այժմ, ըստ իւրեանց գրութեան, իբրև թէ, ամենուրեք հայք քաջ գինավարժ են, գէնքեր ձեռք կը բերեն, վառօթի հետ կը խաղան և իրանց բարին ու չարը կը ճանաչեն։

Այս մենախօսութեան ժամանակ Փալչիկճեա-

նի մարքում մի նոր լոյս ծագեցաւ։ Ա.Հա թէ ինչ։ Քան թէ Սարգիս աղան վայելէ տաճիկ մեծամեծ-ներուն շնորհակալիքը, ինքը Զէյէբեանէց ընչով պա-կաս հպատակ է ու հաւատարիմ։

Նա վայրը քարշ տալով նամակը գրպանը դրեց և յայտնեց, որ գնում է արդարութեան առեներին յանձնելու։

Դժուար է դուշակել, թէ ինչ ենթադրու-թեամբ առիւծ Սարգիս աղան իշի լիմարութեան եկած՝ լուռ հետևում էր Փալչիկճեանին։

Ա.Հա այս նամակն էր, որ Ասիական Տաճկաս-տանի քաղաքագիտական շրջաններում մեծ շփոթ և իրարանցում յառաջացրեց։ Կարգադրուած էր երե-քին ևս կենդանի բռնել. ի հակառակ դէպս, գոնէ նրանց թղթերն և գծած քարտէսները ձեռք բերել. վարձատրութիւնը նրանց գլխի քաշով ոսկի էր որո-շած։

Ամբողջ շաբաթներ բոլոր անցքերը, ճանա-պարհները, բոլոր ծերպ ու խոխոմները ոտնատակ տրուեցին, բայց վախստականներին ոչ մի տեղ չը հանդիպեցին։

Ամենից ուշիղ քաջամարգիկ տղամարդը հա-մարուում էր մեծ տէր Գասպարի նախկին բարեկամ, վերջը նրա կեանքը կարճող քուրդ աւազակապետը։

Նա փաշայի հրամանը լսելուն պէս՝ հասկացաւ, որ որոնուող անձնաւորութիւններից մինը տէր Գա-սպարի տանն իւր տեսած երիտասարդն է։ Նա խոս-

տացաւ ողջ կամ մեռած՝ գետնի տակից հանել և ներկայացնել։

Աւազակների խօսքերը մնացին լոկ խոստումն, որ այնպէս օդը ցնդեց ու ոչնչացաւ, ինչպէս քրդի իւր կարճատև կեանքը։

Բայազիդից այս կողմը, սահմանագլխին մօտ՝ Մասեաց լեռնաշղթայի կատարներից մէկի վերայ քուրդ աւազակապետը հասաւ փախստականներին և գնդակի բռնուեց նրանց հետ։ Քրդի օրերը համարած էին. Գարեգնի գնդակը շեշտակի ծակեց պարծենկոտ քաջի կրծատախտակը։

Միակ մարդն էր, որ Մելքիսեդեկեանն ոչնչեց իւր ճանապարհորդութեան մէջ։

Մի օր յետոյ՝ ընկերները իրանց անձը ապահով համարեցին։ Սուրբ Էջմիածնի *Հուսատուչի* կոչուած դրան առաջին՝ ընկերները տուին իրար վերջին հրաժեշտի համբոյրը։

Հայրենիքի և ծնողաց սէրը ձգտեց Գարեգնին դէպի Արցախ, իսկ Արփիկն ու Ռուբէնը, ինչպէս տաճկաստանցի ուխտաւոր «քոյր-եղբայր», գիշերեցին Ղազարապատի սենեակներից՝ մէկում։

ԾԳ.

Սուրբ Էջմիածինն ամբողջ հայ ազգի սեպհականութիւնն է, աշխարհի մի ծայրից մինչև միւսը տարագրուած բոլոր հայերն իրաւունք ունին հիւրասի-

բուելու իրանց մայր Աթոռումը, իրաւունք ունին գերեզմանիկ Ղազար կաթուղիկոսի կառուցած «Ղազարապատ» հիւրատունը վաճառել անկողին և տաք ընակարան ստանալու։

Ուխտաւոր ես՝ ուխտդ կուզես կատարել, ճանապարհորդ ես՝ յոգնած անդամներիդ հանգիստ ես կամենում տալ, աղէտալից վշտացեալ ես՝ պատսպարուելու պէտք ունիս, խնդրարկու ես՝ խնդրիդ կատարմանն ես սպասում, ինչ կուզես՝ եղիր՝ սուրբ Էջմիածնի և Էջմիածնականների թանգագին հիւրն ես։

Մի օր, հինգ օր, տասն օր կաց ու մեծարուիր, ոչ ոքից մի լաթու խօսք չես լսիլ. բայց որովհետև քեզ, ինձ և ամէնքին յայտնի է, որ Էջմիածնի կարօտը միայն ես ու դու չենք քաշում, գիտենք, որ ամէն մի հայ ջերմ փափագ ունի կեանքի մէջ գոնէ առնուազն մի անգամ սուրբ Իջման տեղի շեմքը համբուրելուն արժանանալու, յայտնի է մեզ, որ տարին 12 ամիս մայր Աթոռի դռները հիւրերի համար կրնկի վերայ բաց են և տարին բոլոր երթևեկն անսպակաս է, այդ պատճառաւ մեզանից իւրաքանչիւրն զգում է անհրաժեշտութիւն՝ ինքնակամ իւր իջևանն ուրիշ Էջմիածնակարօտ ուխտաւորի համար դատարկել։

Ուխտաւորն ուխտը կատարում է և մի քանի օրից վերադառնում, իսկ երկար մնալու ցանկութիւն ունեցողը Վաղարշապատ գիւղումն է բնակարան վարձում։

Շատ բացառութիւններից մի բացառութիւն եղան Ճաճկահայքից եկած «քոյր ու եղբայր» Աբգարեանց Ռուբէն էֆէնդին և իւր գեղահրաշ քոյր օրիորդ Արփիկը։

Թող սուրբ Էջմիածնի ճգնազգեաց հայրերը՝ վարդապետական համեստութեամբ՝ օրիորդ Արփիկն անցնելուս՝ նրա երեսին չընայեն, այդ իրանց կամքն է և արածները պատշաճավայել է. բայց ոչ ոք իրաւունք չունի դրսի ժամապաններին արգելելու, որ սովորականից աւելի ժամասէր լինին։

Զարմանալին այս է, որ ժամասէրների մէջ վաղարշապատաբնակ ճաշակի տէր երիտասարդների համեմատական գերակշռութիւնը զգալապէս աչքի է ընկնում։

Քանի «քոյր ու եղբայրն» Էջմիածնում էին, առաւօտեան ժամին, ճաշուայ պատարագին, երեկոյեան ժամերգութեանը վանքը ժամապաններով լիքն էր։

Այս դէպքի համար՝ ամէնից շատ ուրախ է Վաղարշապատցի բոլորից յարգուած, ժիր և գուարճախօս ծերունին, Վեհափառի, սրբազանների ու հայրսուրբների սիրելի Աբրահամ աղան, կամ ինչպէս տեղացիք ասում են՝ Բօյաղչոնց Ապրօն։

Իրաւունք ունի Աբրահամ պապն ուրախանալու. նա ինքը, թէ և աշխարհական է, բայց Վեհափառի բարեհաճութեամբ՝ երկար տարի է Էջմիածնայ վանքի մոմավաճառն է, որքան շատ մոմ ծախուի, որ-

քան մոմավաճառութեան արդիւնքն աւելնալ, այնքան նա իւր վեհափառի օրհնութիւնը շատ կը վայելի, այնքան նրա պատիւը կաւելնայ։

Այս արդարացի պատճառներով՝ Աբրահամ աղան թանգ էր դնահատում «քոյր ու եղբօր» ժամասիրութիւնը։

Փորձուած ու հեռատես էր Աբրահամ աղան, նա գիտէր, որ ոչ այնքան ժամասիրութիւնը, որչափ օրիորդ Արփիկի դէղեցկութիւնն ու աչքերի մագնիսն էին երիտասարդներին քարշում դէպի մոմավաճառութեան սեղանը, ուր Աբրահամ աղայի հետ մի կարգով կանգնած էին «քոյր ու եղբայրը»։ Վայ էդպիսի երիտասարդների հոգուն։

Ոչ մի օր Արփիկն ու Ռուբէնը ժամից չեն յետ մնում, գանգակի ձայնին մտնում՝ «Օրհնեալք եղերուքին» դուրս էին գալիս։

Զարաճճի վաղարշապատց՝ ջահէլները կարապի նման պարանոցները բարձր բռնած՝ աչքերը սիրուն օրիորդի վերայ սևեռած՝ մօտենում էին Աբրահամ աղայինն, արծաթ դրամը դնում էին մոմավաճառի սեղանի վերայ և հաստ մոմերը վերցնում ու ծանր քայլերով դէպի աշտանակներն էին գնում։

—Ի՞նչ անենք, որ օրիորդը համեստութիւնից և ամօթխածութիւնից աչքերը շարունակ գետնին ունի ձգած, մտածում էին երիտասարդները, չէ որ աչքի պոչով անշուշտ մեզ դիտում է և իւր սրտում համեմատութիւն և ընտրութիւն է անում։

Յամենայն դէպս, Վաղարշապատումն առաջին խօսակցութեան առարկան օրիորդ Արփիկն էր։ Սուրբ սէր, դատապարտելի սէր, լոկ հետաքրքրական սէր, նախանձայուզական խանդալից սէր բորբոքուել էր ընդհանուրի սրտում։ Վերջին կիրքը կրծում էր Վաղարշապատցի ամուսնացած և նշանուելու գեղեցկուհիների սիրտը. բազմաթիւ պագշոտ ամուսինների և հարսնախնդիր ամուրիների սրտերըն իրանցից սառչելը պարզ նկատում էին Նւալի աղջիկները։

Ահա, թէ ինչո՞ւ համար շատ գեղեցկուհիք նոյնպէս յաճախում էին այն քանի օրը վանքը։ Նրանք գալիս էին իրանց ատելի ախոյեանին աչքով ուտելու և նրա մէջ հազար ու մի պակասութիւններ գտնելու։ Օ՛, օ, օ... խեղճ Արփիկը ձեռքերն ընկնէր՝ կը քրքրէին, հաւի ճուտի պէս փետրահան կանէին։

Բայց արի տես, որ այդ համեղ որսը ոչ ոքի ճանգը չէ ընկնում, եկած օրից՝ «քոյր ու եղբայր» Վաղարշապետի հիւրատանից դուրս չէին գնացել, Ներսէս Աշտարակեցու գեղաճիճաղ լիճը քթներին կպած էր՝ չէին տեսել, օրն ի բուն սենեակի դուռն երեաներին փակուած մնացել է և միայն ժամ գնալիս է բացուել։

Շատ շատերը ցանկանում էին ծանօթանալ „քոյր ու եղբօր“ հետ, բայց նրանք անմատչելի

էին, ոչոքի երեսի անգամ չէին նայում, ոչոքի հետ չէին խօսում։

Միայն Աբրահամ աղան է, որ իւր բնաւորիչ հաճոյախօսական ձիրքովը, իւր հայրական մշտաժպիտ դէմքովը, «ղադէդ կառնեմ» (ցաւդ տանեմ) ասելով կարողացել է օրական երեք անգամ վանքի մէջ պարկեշտ ժպիտի հետ մի մի խոնարհ երկրպագութիւն խլել տաճկաստանցի «քոյր ու եղբօրից»։

Աբրահամ աղայի յաղթանակն այդքանը չէր, նա մեր ուխտաւորների սեննեակը մտնելու հնարքն էլ գտել է։ Ինքը չի ձգտել, Ռուբէնն է անձամբ այդ շնորհը խնդրել։

—Մի ելք խրատ տուր մեզ, պատուելի եկեղեցական, հայր Աբրահամ, դիմում է Ռուբէնն Աբրահամ աղային։

—Ի՞նչ կարիք ունիք, ղադէդ կառնեմ։

—Մենք էլ կզգանք, որ մեր ուխտաւորութեան օրերը վաղուց լցուած են, կուզենք մեր սեննեակը թողնելու, բայց ստիպուած ենք տեղս մնալու և այս տեղից դուրս չըգալու։

—Եթէ դրամի կարևորութիւն ունիք, ղադէդ կառնեմ, ես կըհոգամ։

—Ա՜խ, շնորհակալ եմ, հայր, մենք...

—Ո՛չ ոչ, ղադէդ կառնեմ, ես ձեզ նուէր չեմ տալիս, դուք միջոց ունիք ինձ վերադարձնելու, ես լաւ գիտեմ, որ ասում եմ։

Եւ Աբրահամ աղան յայտնեց, որ Վաղարշապա-

տում ծառայող աստիճանաւորներից և վաճառականներից շատերը դիմել են իւր միջնորդութեանը և խնդրում են օրիորդ Արփիկի հարսնութիւնը. նորանցից շատերն իրանց արժանաւորութեամբ ընտիր վեսացուներ են, նրանք ամէն օր վանքը ժամ են գալիս, թող օրիորդ Արփիկը նշանացի մատնացոյց անի որ և է մէկի վերայ, Աբրահամ աղայի վրդին լինի գործը գլուխ բերելը. այն ժամանակ Ռուբէնն էլ կարօտութիւն չի ունենալ:

Արփիկի սիրտը թռունդ ելաւ, արտասունքն աչքերը լցուեց, բայց նա օրիորդական համեստութեամբ իրան զսպեց, լաց չեղաւ, միայն վարդանման կարմրութիւնը *եօթն եղբօր կոյս սրիւն* ծաղկի պէս կարմիր լալագարի փոխուեց:

—Ղադէդ կառնեմ, օրիորդ ջան, նկատեց և սիրտխօսեց Աբրահամ աղան, ամաչելն էլ օրէնք է, մարդի գնալն էլ, վնաս չունի, էսօր կամաչես, կըտխրես, էգուց կը ծիծաղես, կուրախանաս, քեզ համար մի այնպիսի վեսացու գտնեմ, որ քո հաւան կացած. էնպէս ընկեր ճարեմ, որ մեռած տեղըս էլ հինգ նաւակատիկին գաս, գերեզմանս օրհնել սաս. դու շատ ապրի, լալա ջան, ես ծեր պապ եմ, պապերը ջահէլների ցաւը տանեն:

—Այդ չէ ասածս, Աբրահամ աղայ, միջամտեց Ռուբէնը, մենք Վեհափառին ոտքը գնալու պէտք ունինք և կասեն՝ հիւանդ է, մարդ չէ ընդունում:

—Դուք ինձ լսեցէք, թող այս երկու օրս օրի-

որդը մեր երիտասարդներից մեկին՝ ում սիրտը կը ցանկանայ՝ հաւանի, կամ թողնի իմ ընտրութեանը, ես իր համար մի լաւ փեսացու ճարեմ, այնուհետև խօսք եմ տալիս՝ ձեզ Վեհափառին ներկայացնել և եթէ կը կամենաս, պարոն Ռուբէն, քեզ համար մի լաւ հարսնացու էլ կը ճարեմ։

—Ինձ և քրոջս ամուսնացնելու հայրական հոգսդ առ այժմ լետ թող, Վեհափառին ներկայութիւնը փութացրու և երախտապարտ կը մնանք հայրութեանդ։

—Խօսք տալիս ես, որ սրտիդ փափագը կատարելուց լետոյ՝ քրոջդ իմ հաւանած տղային տա՞ս։

—Թո՛ղ այդպէս լինի։

Ռուբէնի վերջին խօսքի վրայ Աբփիկի կատաղութիւնն եկաւ, նա դլուխը վեր բռնեց և ուզում էր պատասխանել, բայց Աբգանազեանը նրա ծունկը սեղմեց և հասկացրեց լռել։

—Միայն դու ես ուզում Վեհափառին ներկայանալ, եթէ քոյրդ էլ ցանկութիւն ունի։

—Երկուսս էլ կարօտ ենք այդ շնորհացը։

—Շատ լաւ, այսօր և եթէ դուք ձեր նպատակին կըհասնէք, իսկոյն ես Վեհափառին կերթամ և ձեզ կանչել կըտամ, Վեհափառն իմ խօսքը կըլսըդի. ինքս էլ այն տեղ կը նստեմ և կըլսեմ, թէ ինչ է ձեր սրտի խորհուրդը։

—Կաղաչեմ, հայր Աբրահամ, վերջին ցանկու-

թիւններդ մի՛ կատարէք, մեր մտնելուն՝ դուք դուրս եկէք։

—Ինձանից մի՛ քաշուի՛ք, որդի՛ք, ղադէդ կառնեմ. էս իմ փորս անտակ ծով է, հազար ճարատրի ու անճարի խորհուրդները մի կտոր աղի պէս էս փորի մէջ հալուել են, մէկ ես կիմանամ, մէկ էլ վերևն Աստուած։

—Այո՛, բայց այս անգամ շնորհ արէք մեզ միայնակ թողնել։

—Խօսք տալիս ես, որ գործդ յաջողելուց յետոյ գաղտնիքդ ինձ յայտնես։ Ձեր համար եմ ասում, ղադէդ կառնեմ, կարելի է վեհափառի գործը չըլինի ձեր խնդիրը կատարելը, այն ժամանակն՝ իմ աչքի վրայ, ես կը կատարեմ. էսպէս մի՛ տխնէք այս գզգզուած ալևորիս, մէջս շնորհք կայ։

—Թող այդպէս լինի, խօսք եմ տալիս սրածդ շնորհաց փոխարէն՝ վեհափառին ներկայանալու երկրորդ օրը՝ մեր գաղտնիքին հրամանքդ մասնակից անելու։

Աբրահամ աղան իւր խոստումը կատարեց։

Ձղջաց Աբրահամ աղան, իւր ասութեամբ՝ առաջին անգամն էր՝ որ խաբուեց։

Մի՛ւս օրը „քոյր ու եղբայրն“ առաւօտեան ժամ չեկան։ Աբրահամ աղան կարծեց, թէ ճաշին կըգան. ճաշին էլ չեկան։ Կարծեց՝ երեկոյեան կը գան, երեկոյեան էլ չեկան։ Կարծեց, թէ իւր նոր բարեկամների մէկն ու մէկը տկարացած կը լինի,

պարտականութիւն համարեց պանդուխտ օտարականներին այցելելու, դնաց Ղազարապատ և „քոյր ու եղբօր“ սենեակի դուռը՝ բաց՝ ու ներսը դատարկ գտաւ։

—Երէկ երեկոյեան, մթնով, փոշտի՝ սալակն եկաւ և նրանց տարաւ, պատասխան ստացաւ Աբրահամ աղան Ղազարապատի սենեակապահ սպասաւորներից։

—Կարծեմ, Վեհափառի հրամանով գնացին, շաթիրը մի մեծ ծրար՝ Կաթողիկոսի կնքով փակուած՝ բերեց և իրանց տուեց, աւելացրեց ծառաներից մինը. աղջիկն ու տղան ծրարն ստացան և համբուրեցին, ինչպէս երևում էր, շատ ուրախացան։

Սուտ չէր ասում Ղազարապետի սպասաւորը. «քոյր ու եղբայրը“ գնացին կաթուղիկոսական կոնդակով։

Ահա եղելութիւնը։

Վեհափառ Հայրապետն Աբրահամ աղայի մէջնորդութեամբ՝ սիրով ընկալաւ օտարականներին։

Ռուբէնը ծնկան վրայ եկած՝ ամէն իրողութիւնը ճշդութեամբ պատմեց Սզգի Հօրը և խընդրեց Նորա զթառատ տնօրէնութիւնը։

Ռուբէնը չլթագրեց իւր արած ճանապարհորդութիւնն և յանձնեց Կաթուղիկոսին իւր կազմած տեղեկագրի երկրորդ պատճէնը։ Զրծաճկեց նոյնպէս, որ այս տեղեկագրի մի օրինակը հասել է Խրիմեան Հայրիկի ձեռքը։

Վեհափառն Աստանազեանին սիրով լսելուց յետոյ՝ երեք տողով մի հրաման ուղարկեց Երևանի Առաջնորդին։

Բովանդակութիւնն էր. գրաբեր գոյգին մի գիւղի քահանայի ձեռքով պսակել տալ և մի ապահով գիւղում բնակեցնել։

Ե. գիւղի տէրտէրն՝ Առաջնորդ սրբազանի հրամանով՝ «Լուսատու սուրբ Նշան» եկեղեցում կատարեց Ռուբէնի և Արփիկի պսակը։

Նորապսակները հիւրասիրուեցին քահանայի սենեակում։

Երկու շաբաթ էր անցել և ոչինչ չէր խանգարում նրանց երջանկութիւնը։

Մի գիշեր միայն հանգստութիւնը փախաւ տէրտէրի սենեակից։

Ռուբէնը թուղթը ծնկան վրայ, ձեռքը դողդողալով՝ արագ արագ նամակ էր գրում Գարեգին Մելքիսեդեկեանին։

Գրեց, կնքեց, տուեց տէրտէրին և խնդրեց ուղարկել Երևան՝ փոստին յանձնելու։

Ահա ինչ էր գրել.

Մենք պսակուած ենք, կարծում էինք, թէ Ռուսիայի մէջ վերջ կըլինի մեր հալածանքին, աւազ, սխալուած ենք եղել։ Այսօր մի անծանօթ ձիաւոր մի նամակ բերեց իմ անունով։ Նամակն Էջմիածնի վանքի մոմավաճառ բարեսիրտ Աբրահամ աղայից էր։ Նա հաստատ աղբիւրից իմացել է, որ տաճկա-

տուելուց փախատ տուինք, բայց ներողամիտ սըրտով խորհուրդ է տալիս մեզ՝ առանց ժամավաճառութեան անցնել պարսկական սահմանը։ Ա.-մենից մօտ անցքը, ասում են՝ Շարուր գտաուինն է։

Ռուբէնը մի առ մի տեղեկագրում է Գարեգնին իւրեանց բաժանուելու օրից մինչև ներկայ րոպէն գլխներովն անցած դէպքերը։

Մնաս բարև, սիրելիս, վերջաբան է անում Ա.ազանազեանը, մենք վաղը, կամ երրորդ օրն Ա.-րաքսի հոսանքը կըպատառենք և Պարսկաստան կանցնենք։ Որտեղ մեր անփորձ ոտքերին մի տեղ արինք, այնտեղից քեզ նամակ կըգրենք, իսկ մինչև այն ժամանակը՝ դրկում ենք քեզ երկուքս միասին։

Ցմահ քո Արմիկն և Ռուբէնը։

ԾԴ.

Վերոգրեալ դէպքերից հինգ տարի յետոյ՝ Ա.-րևելեան պատերազմն էր։

Չեմ լիշում նախ, թէ յետ քան պատերազմը անգլիական «Կապոյտ» անուանած գրքի մէջ հրատարակուեց Տաճկահայերին վերաբերեալ մի ընդարձակ տեղեկագիր։ Մեծամեծ հարստահարութիւնների, անդուր ճնշումների և բռնակալական ոճիրների նկարագիրներ կուտակուած էին «Կապոյտ»

գրքի էջերում, կալին և մխիթարական կէտեր։

Պատերազմի հետևանքը Բերլինի դաշնագիրն էր, որից Հայաստանին բաժին հասաւ 61 յայտնի յօդուածը։

Խրիմեան Հայրիկը դաշնագրաց խորհրդարանի դռնից չէր հեռանում։ Հայրիկը մաշեց նոյնպէս եւրոպական մեծ տէրութեանց Ծերակոյտների շեմքերը։ Ասում են, որ Հայրիկն ամէն տեղ „Կապոյտ“ գիրքը փռում էր քաղաքագէտների սեղանների վերայ։

—Արդեօք «Կապոյտ» գրքի տեղեկագիրը մեր աշխատասիրութեանց քաղուածքը չէր, գրում է պատերազմից մի քանի տարի յետոյ՝ Պարսկաստանի հայթնակ քաղաքներից մէկի վարժապետ Աբգանազեան Ռուբէնն՝ իւր հոգեկից Գարեգին Մելքիսեդեկեանին։

Վերջինս քաշուած իւր գործերից, իւր անձը նուիրել է հայ գրականութեան և պատմութեան բարգաւաճման գործին։

Տեսնողները ասում են, որ Գարեգնի երկասիրութիւնը ապագայում մեծ լոյս է սփռելու հայութեան տարեդրի վերայ։

Ահա Գարեգնի պատասխանը Ռուբէնին։

Չեմ հաւանում հարցասիրական ձգտմանդ. ես, դու, թէ ուրիշ բանասէրներ են կազմել „Կապոյտ“ գրքի տեղեկագիրը՝ մեզ քնչ փոյթ, մենք մեր պարտքն ենք կատարել, ուրիշ ոչինչ։

ԾԵ.

Բուսականին տարինները են գլորուել և մեր սըրտակից հոգեհարազատ բարեկամների՝ Գարեգինի, Սրվիկի և Ռուբէնի հետքերն իսպառ անյայտացել են։

Մօտիկ անցեալում սուրբ Էջմիածին ուխտ եկած մի Բ. քաղաքացի պատմել է, որ, իբրև թէ, Սարգիս աղայ Զէլէբեանը տաճկական բերդերից մէկում մեռել է, թէ նրա տունը, տեղը, կալ ու կալուածքը Ղայմաղամ Օսման էֆէնդու մատնութեամբ յարքունիս է գրաւուած, թէ Աւետիքը՝ մօրը թաղելուց յետոյ՝ հեռացել է Բ. քաղաքից և ինքն է այժմ շարունակում տաճկահայ գաւառներում իբր փեսայ Ռուբէնի և նրա ընկեր Մելքիսեդեկեանի գործը, թէ Սեղբոս աղայ Գաւազեանը մինչև հիմա բանտարկուած է, իբրև իբր որդու փախստեանը մասնակից, թէ Նշան Փալչիկճեան պատուելին ցայսօր էլ ձեռք չի քաշել իբր դպրոցից ու նարգիլէից և թէ փողոցների անցքերում կանգնած՝ մինչև ծունկը խոնարհ երկրպագութիւն է անում տաճիկ և հայ աղաներին։

Սուրբ Աթոռի ուխտաւորն աւելացրել է, որ մեծ Մխիթար մարգարէութիւնը կատարուել է և միշտ կատարման տևողականութեան մէջ է. տարի չըլինի, որ չարալիշատակ Սարգիս աղայ Զէլէբեանի

շինած մզկիթի մէջ մի քանի թուլամիտ հայեր չընդունեն իսլամական ուղղափառ կրօնը։

Մի բան էլ պատմել է ուխտաւորը, ասել է, որ Ուռբէնի և Գարեգնի ցանած սերմն այսօր բուսնում և աճում է Տաճկահայերի մէջ և ամենուրեք գրագիտութիւնը սկսել է սկսանջ դառնալ հայաբնակ տեղերում։ Իսկ եթէ ժամանակ առ ժամանակ քուրդ ցեղապետների կողմից այս և այն գաւառներում բարբարոսութիւններ ու գեղծումներ կատարուում են, այդ, իբր թէ, առաւելապէս արտաքին քաղաքագիտութեանց արգասիք, քան թէ տեղական պարմանների հետևանքներ են։

ՎԵՐՋ

Ն. ջոկ
295

ՀԵՂԻՆԱԿԻ ԱԹԱՍՈՒԹ

		Ռ.	կ.
1	„ՍՕՍ և ՎԱՐԴԻԹԵՐ“ վէպ (երկրորդ տիպ)	1	50
2	„ԱՂԱՍԻ“ թատերդուքիւն (սպառուած)	—	—
3	„ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ՀԱՄՔԱՐԻ ՄԱՍԻՆ“ թարգմանուքիւն (սպառուած)	—	—
4	„ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔ ՀԻՆ ՀԱՑԱՍՏԱՆԻ“ թարգմանուքիւն (սպառուած)	—	—
5	„ՂԱՐԱԲԱՂԻ ՏԻՐԱՄԱՑՐ ՄԱՐԻԱՄՍԱՆ ԱՂՋԿԱՆՑ ԴՊՐՈՑԻ ԲԱՑՈՒՄԸ“ (սպառուած)	—	—
6	„ԱԴՈՒԼԵԱՑ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԻ ԲԱՑՈՒՄԸ“ (սպառուած)	—	—
7	„ԿՈՒՈՒԱԾԱՂԻԿ“ վէպ (սպառուած)	—	—
8	„ՀԱՑԻ ԽՆԴԻՐ“ վէպ	—	80
9	„ՇԱՀԷՆ“ վէպ	1	—
10	„ՑԵՑԵՐ“ վէպ	1	—
11	„ԲՂԴԷ“ վէպ	1	20
12	“ՍԿԻԶԲՆ ԵՐԿԱՆՑ“ վէպ	1	20

Բոլոր իմ աշխատուքիւններս բացի „ՍՕՍ և ՎԱՐԴԻԹԵՐ“-ից վաճառուում են բացառապէս ինձ մօտ։

Հասցէ՝ Ծփխիս, Ներսիսեան դպրանոց։

Գումարով առնողներին 30% զիջում կը լինի։

Ճանապարհածախքն առնողի վերայ է։

